



ՆԱՅԱՍԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

NATIONAL
LIBRARY OF ARMENIA

ԲԱՆԲԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ

BULLETIN

OF ARMENIAN LIBRARIES

2023 (2)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

*ԲԱՆԲԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ
ԳԻՏԱՄԵԹՈՂԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ*

2023 (2)

ԵՐԵՎԱՆ
«ԳԻՐՔ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2023

NATIONAL LIBRARY OF ARMENIA

***BULLETIN OF ARMENIAN LIBRARIES
SCIENTIFIC-METHODICAL JOURNAL***

2023 (2)

**YEREVAN
“GIRK” PUBLISHING HOUSE
2023**

НАЦИОНАЛЬНАЯ БИБЛИОТЕКА АРМЕНИИ

***ВЕСТНИК БИБЛИОТЕК АРМЕНИИ
НАУЧНО-МЕТОДИЧЕСКИЙ ЖУРНАЛ***

2023 (2)

**ЕРЕВАН
ИЗДАТЕЛЬСТВО «ГИРК»
2023**

ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է 2015 ԹՎԱԿԱՆԻՑ
ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՏԱՐԵԿԱՆ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ
Հրատարակությունը երաշխավորված է Հայաստանի
ազգային գրադարանի գիտական խորհրդի կողմից

Գլխավոր խմբագիր՝
Չուլյան Աննա

Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Պատասխանատու խմբագիր՝
Ղազարյան Հայկանուշ

Ավդոյան Լևոն
Զարգարյան Տիգրան
Էլիագյան Գայանե
Լիզունովա Իրինա
Համբարձումյան Հայկ
Հովհաննիսյան Գայանե
Կուչմա Իրինա

Մուրադյան Խաչիկ
Տեր Արարատ Պողոսյան
Ռեպանովիչ Անջելա

Սահակյան Վահե
Սուքիասյան Գագիկ

«Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի տնօրենի
տեղակալ գիտական գծով
Պատմական գիտությունների դոկտոր
Տեխնիկական գիտությունների թեկնածու
Քիմիական գիտությունների թեկնածու
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Բանասիրական գիտությունների թեկնածու
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հանրահասանելի գիտության և տեղեկատվության փոր-
ձագետ
Պատմական գիտությունների դոկտոր
Պատմական գիտությունների թեկնածու
Տեխնիկական գիտությունների դոկտոր, մարքեթինգի
դոկտոր
Սոցիոլոգիական գիտությունների թեկնածու
Մանկավարժական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ

Տեխնիկական խմբագիր՝
Զոհրաբյան Սառա

Ավետյան Նորա
Բոյաջյան Անի
Հայրապետյան Ներսես
Շիրինյան Աննա
Տոնոյան Ռուզան

Բանբեր Հայաստանի գրադարանների գիտամեթոդական հանդեսի հրատարակությունը շարունակվում է «Հայաստանի ազգային գրադարան» ՊՈԱԿ-ի գիտխորհրդի 2021 թվականի հունիսի 10-ի նիստի որոշման համաձայն: 2023 թվականի երկրորդ թողարկումը ներառում է հոդվածներ հետևյալ թեմատիկ ուղղություններով՝ Գրադարանային կառավարում և ծառայություններ, Ընթերցանության խթանում, Թվային XXI դար. մարտահրավերներ, Թվային բովանդակության կառավարում, Ժառանգության պահպանություն և հանրահռչակում, Մատենագիտություն, Միջուղի տպագիր ժառանգության պահպանություն և հանրահռչակում, Գրախոսություններ: Հանդեսը նախատեսված է գրադարանագիտության, մատենագիտության, թանգարանագիտության, հումանիտար գիտությունների ոլորտի մասնագետների համար:

ISSN 1829-4685

**PUBLISHED SINCE 2015
FREQUENTLY: TWICE A YEAR**

The publication is guaranteed by the Scientific Council
of the National Library of Armenia

Editor-in-Chief

Chulyan Anna

Candidate of Sciences in Philology, Associate
Professor

EDITORIAL BOARD

Responsible Editor

Ghazaryan Haykanush

Avdoyan Levon
Zargaryan Tigran
Eliazyan Gayane
Lizunova Iryna
Hambardzumyan Hayk
Hovhannisyan Gayane
Kuchma Iryna
Mouradian Khatchig
Fr. Ararat Poghosyan
Repanovici Angela

Sahakyan Vahe
Sukiasyan Gagik

Deputy Director for Science of the “National
Library of Armenia” SNCO
Doctor of Sciences in History
Candidate of Sciences in Technology
Candidate of Sciences in Chemistry
Doctor of Sciences in History, Professor
Candidate of Sciences in Philology
Doctor of Sciences in Philology, Professor
Open Science and Open Access Expert
Doctor of Sciences in History
Candidate of Sciences in History
Doctor of Engineering Sciences, Doctor of
Marketing
Doctor of Sciences in Sociology
Doctor of Sciences in Pedagogy, Professor

EDITORIAL STAFF

Technical Editor

Zohrabyan Sara

Avetyan Nora
Boyadjian Ani
Hayrapetyan Nerses
Shirinyan Anna
Tonoyan Ruzan

The publication of the scientific methodical journal (2015-2019) the Bulletin of Armenian Libraries continues according to the decision of the Scientific Council of the National Library of Armenia from June 10, 2021. The articles of the second issue of 2023 can be found in the following sections: Library Management & Services; Reading Promotion; The Digital XXI Century. Challenges; Digital Content Management; Heritage Preservation & Promotion; Bibliography; Diaspora Printing Heritage Preservation & Promotion, Reviews. The journal is meant for experts in the fields of library science, bibliography, museology and humanities.

Главный редактор
Чулян Анна

Кандидат филологических наук, доцент

РЕДАКЦИОННАЯ КОЛЛЕГИЯ

Ответственный редактор
Казарян Айкануш

Авдоян Левон
Заргарян Тигран
Элиазян Гаяне
Лизунова Ирина
Амбардзумян Айк
Оганнисян Гаяне
Кучма Ирина
Мурадян Хачик
Иерей Арарат Погосян
Репанович Анжела
Саакян Ваге
Сукиасян Гагик

Заместитель директора ГНКО «Национальная библиотека Армении» по научной деятельности
Доктор исторических наук
Кандидат технических наук
Кандидат химических наук
Доктор исторических наук, профессор
Кандидат филологических наук
Доктор филологических наук, профессор
Эксперт по Открытой науке и Открытому доступу
Доктор исторических наук
Кандидат исторических наук
Доктор технических наук, доктор по маркетингу
Кандидат социологических наук
Доктор педагогических наук, профессор

РЕДАКЦИОННЫЙ СОВЕТ

Технический редактор
Зограбян Сара

Аветян Нора
Бояджян Ани
Айрапетян Нерсес
Ширинян Анна
Тоноян Рузан

Издание научно-методического журнала «Вестник библиотек Армении» продолжается согласно решению Ученого совета Национальной библиотеки Армении от 10 июня 2021 года. Статьи, включенные во второй выпуск 2023 г., представлены в следующих разделах: Библиотечный менеджмент и обслуживание; Продвижение чтения; Цифровой XXI век: вызовы эпохи; Управление цифровым контентом; Сохранение и популяризация наследия; Библиография; Сохранение и популяризация печатного наследия Диаспоры, Рецензии. Журнал предназначен для специалистов в области библиотечного дела, библиографии, музееведения и гуманитарных наук.



Հարգելի՛ գործընկեր, սիրելի՛ ընթերցող,
Ձեր դատին է ներկայացվում «Բանբեր Հայաստանի գրադարանների» գիտամեթոդական հանդեսի 2023 թվականի երկրորդ թողարկումը: Հանդեսի նպատակն է ներկայացնել ժամանակակից գրադարանային ոլորտի զարգացումները և միջազգային փորձը, արդի հիմնախնդիրները, նորարարությունները, ինչպես նաև ընդունված միջազգային ձևաչափերն ու գործիքակազմը, կառավարման համակարգերի և տեխնոլոգիաների ներդրման փորձառությունը:

Հանդեսում ամփոփված հոդվածները ներկայացված են հետևյալ թեմատիկ ուղղություններով. Գրադարանային կառավարում և ծառայություններ, Ընթերցանության խթանում, Թվային XXI դար. մարտահրավերներ, Թվային բովանդակության կառավարում, Ժառանգության պահպանություն և հանրահռչակում, Մատենագիտություն, Միջուկի տպագիր ժառանգության պահպանություն և հանրահռչակում, Գրախոսություններ:

Այս տարի առաջին անգամ հանդեսում ներառվել է «Գրախոսություններ» խորագրով թեմատիկ ուղղությունը: Հրավիրում ենք հրատարակիչների, բանասերների և գրականագետների՝ Հայաստանում և արտերկրում հրատարակված գրքերի վերաբերյալ իրենց աշխատանքներն ու կարծիքներն այս բաժնում հրատարակելու: Բաժինը գրահրատարակչական միտումները նոր տեսանկյուններից ուսումնասիրելու և հետաքրքիր դիտարկումներով ու վերլուծություններով կիսվելու բացառիկ հնարավորություն է ընձեռում:

Սիրով տեղեկացնում ենք, որ «Բանբեր Հայաստանի գրադարանների» գիտամեթոդական հանդեսը արդեն գրանցված է EBSCO միջազգային բարձր վարկանիշ ունեցող գիտական հրատարակությունների հարթակում: Գրանցումը EBSCO հարթակում հնարավորություն կտա ապահովել հանդեսի տեսանելիությունը և հասանելիությունը ինչպես հայաստանյան, այնպես էլ միջազգային լսարանի համար:

Լիաժողով ենք, որ «Բանբեր Հայաստանի գրադարանների» գիտամեթոդական հանդեսը հնարավորություն կտա գրադարանային ոլորտի երիտասարդ և փորձառու հետազոտողներին ոչ միայն հրապարակելու իրենց հետազոտությունների արդյունքները, այն կարևոր հարթակ կդառնա միջազգային կապերի հաստատման և նոր գաղափարների ու մտքերի փոխանակման համար:

«Բանբեր Հայաստանի գրադարանների» էլեկտրոնային հանդեսի գլխավոր խմբագիր
Բ.Գ.Թ., դոցենտ Աննա Զուլյան

NOTE FROM THE EDITOR-IN-CHIEF

Dear colleagues and readers,

We present to you the second edition of the 2023 scientific methodical journal “Bulletin of Armenian Libraries.” The journal’s objective is to showcase development of the modern library sector, international practices, current issues, innovations, and international standards. It also aims to share experiences related to the implementation of management systems and technologies.

The journal features articles categorized into the following thematic directions: Library Management and Services, Reading Promotion, Digital XXI Century. Challenges, Digital Content Management, Heritage Preservation and Promotion, Bibliography, Diaspora Printing Heritage Preservation and Promotion, Reviews.

This year, for the first time, the journal has introduced a new thematic direction titled “Reviews.” We invite publishers, philologists, and literary experts to contribute their works and opinions on books published in Armenia and abroad within this newly introduced “Reviews” section. This section offers a distinctive opportunity to explore publishing trends from new perspectives, allowing contributors to share interesting observations and analyses.

We are delighted to announce that the scientific-methodical journal “Bulletin of Armenian Libraries” has been successfully registered on the EBSCO platform, known for international high-ranking scientific journal publications. Being registered on the EBSCO platform will enhance the visibility and accessibility of the journal, making it available to a wider audience, both within Armenia and internationally.

We genuinely hope that the “Bulletin of Armenian Libraries” scientific-methodical journal will not only provide an opportunity for young and experienced library researchers to publish their research findings but also serve as a significant platform for fostering international relations and facilitating the exchange of new ideas and thoughts.

E-journal “Bulletin of Armenian Libraries” Editor-in-Chief,
Anna Chulyan, Ph.D., Associate Professor

СЛОВО ГЛАВНОГО РЕДАКТОРА

Уважаемые коллеги, дорогие читатели,

Вашему вниманию представлено второй выпуск научно-методического журнала «Вестник библиотек Армении» 2023 года. Цель данного издания – представить прогресс современной библиотечной сферы, международный опыт, актуальные проблемы, инновации, а также принятые международные форматы и инструментарий, опыт внедрения систем и технологий управления.

Статьи, включенные в данный выпуск, представлены в следующих разделах: Библиотечный менеджмент и обслуживание; Продвижение чтения; Цифровой XXI век: вызовы эпохи; Управление цифровым контентом; Сохранение и популяризация наследия; Библиография; Сохранение и популяризация печатного наследия Диаспоры, Рецензии.

В этом году в журнале впервые включено тематическое направление «Рецензии». Приглашаем издателей, филологов и литературоведов публиковать в этом разделе свои работы и мнения о книгах, изданных в Армении и других странах. Раздел предоставляет уникальную возможность изучить новые точки зрения в контексте издательских трендов и поделиться интересными наблюдениями и выводами.

Рады сообщить, что научно-методический журнал «Вестник библиотек Армении» уже зарегистрирован на платформе международных высокорейтинговых научных изданий EBSCO. Регистрация на платформе EBSCO обеспечит видимость и доступность журнала как для армянской, так и для международной аудитории.

Мы искренне надеемся, что научно-методический журнал «Вестник библиотек Армении» предоставит возможность молодым и опытным исследователям библиотечной сферы возможность не просто публиковать результаты своих исследований, но и станет важной платформой для установления международных связей и обмена новыми идеями и мыслями.

Главный редактор электронного журнала
«Вестник библиотек Армении»
к.ф.н., доцент Анна Грайровна Чулян

<https://doi.org/10.52027/18294685-ngb2023.2>

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ՆԵՐՍԵՍ
Հայաստանի ազգային գրադարան

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ
(ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈՐՁ)

Բանալի բառեր՝ գրադարանային օրենսդրություն, ՅՈՒՆԵՍԿՕ, ԻՖԼԱ, հանրային գրադարան, հանրահասանելիություն, հանրային գրադարանի հոչակագիր, գրադարանի ֆինանսավորում:

Keywords: library legislation, UNESCO, IFLA, public library, open access, public library manifesto, library funding.

Աշխարհում գրադարանային օրենսդրությունը հիմնականում ձևավորվել է 20-րդ դարի երկրորդ կեսին: ՀՀ գրադարանների և գրադարանային գործի մասին օրենքը «կարգավորում է գրադարանների ստեղծման, գործունեության կազմակերպման և ֆինանսավորման հարաբերությունները, ինչպես նաև սահմանում է գրադարանների տեսակները, գործառույթները, գրադարանային հավաքածուների հաշվառման, համալրման, պահպանության և հանրային գրադարանի հավատարմագրման կարգը, գրադարանների և գրադարաններից օգտվողների իրավունքներն ու պարտականությունները և ապահովում գրադարանային գործի զարգացման իրավական հիմքերը» [ՀՀ օրենքը «Գրադարանների և գրադարանային գործի մասին», 2012]: Առանձին երկրներում գրադարանային օրենքները կարգավորում են միայն ազգային գրադարանի աշխատանքը կամ հանրային գրադարանների գործունեությունը: Գրադարաններին վերաբերող օրենքների թվում են հրատարակությունների պարտադիր օրինակի մասին օրենքները, որոնք անհրաժեշտ հիմք են ստեղծում երկրի տպագիր և թվային ժառանգության պահպանության համար: Մասամբ գրադարաններին են վերաբերում նաև հեղինակային օրենքի ոլորտը կարգավորող օրենքները: Հոդվածում մենք անդրադարձել ենք միայն երկրի գրադարանային գործին վերաբերվող օրենքներին, այն էլ միայն դրանցում հանրային գրադարանների վճարովի կամ անվճար ծառայությունների, ինչպես նաև գրադարանների ֆինանսավորման վերաբերյալ հարցերի առնչությամբ:

Առաջին հայացքից թվում է, որ հանրային գրադարանների համակարգի ձևավորումը ակնհայտ քայլ կլինեք ցանկացած երկրի համար, որտեղ կարևորվում են կրթությունը և գրագիտության խթանումը: Սակայն դա այդպես չէ: Հանրային գրադարանների զարգացմանը, հավանաբար, խոչընդոտել է այն, որ դրանք ճանաչվել են որպես կրթության և սոցիալական բարեկեցության օջախներ պարտադիր կրթության հայեցակարգից և ժամանակակից պետության իրավական դաշտի ստեղծումից շատ ավելի առաջ: Բացի դրանից, հանրային գրադարանների ստեղծումը և պահպանությունը հիմնականում որպես տեղական ինքնակառավարման համայնքային ծրագրի մաս է դիտվում:

Կրթությունը, ի վերջո, ինքնանպատակ չէ. անհատը պետք է ոչ միայն մուտք ունենա դեպի գրավոր խոսք իր ֆորմալ կրթության ընթացքում, նաև պետք է ունենա իր փորձն ընդլայնելու միջոցներ դպրոցից և համալսարանից հետո, և դա անպայմանորեն պահանջում է ունենալ տպագիր նյութերի կազմակերպված հավաքածուներ: Եթե գրադարանը էական է դպրոցի

կամ քոլեջի համար, ապա այն էական օժանդակություն է նաև շարունակական կամ ցկյանս ոչ ֆորմալ կրթության համար:

Կարելի է կարծել, որ հանրային գրադարանների օրենսդրական բազան համեմատաբար պարզ լուծելի խնդիր է, և որ այդ գրադարաններն ինքնաբերաբար պիտի անվճար լինեն բոլորի համար: Գրեթե համընդհանուր ընդունված մոտեցում է, որ կրթությունը պետք է պարտադիր լինի բոլորի համար, և որ այն պետք է անվճար լինի մինչև որոշակի սահմանակալի: Ճիշտ է, ծախսերը կարող են արգելակող գործոն լինել, սակայն քիչ երկրներ կան այսօր, որոնք իրենց ռեսուրսների մի զգալի մասը չեն հատկացնում կրթության ապահովմանը:

Այս ենթադրություններից և ոչ մեկն իրականում ճիշտ չէ: Հանրային գրադարանների համակարգերի ստեղծումը, ի տարբերություն առանձին վերցրած հանրային գրադարանների, միայն վերջերս է կարևորվել: Առաջադեմ երկրները, այդ թվում՝ նույնիսկ մշակութային և կրթական հարուստ ավանդույթներ ունեցող, հանրային գրադարանների վերաբերյալ օրենսդրություն չունեն: Օրինակ՝ Ավստրիան, Ֆրանսիան, Բելգիան, Իսպանիան և Իտալիան: Նույնիսկ այն երկրներում, որտեղ հանրային գրադարանների մասին օրենսդրությունը վաղուց հաստատված է, ժամանակակից պայմաններում այն նկատելիորեն հնացել է և թերի է:

1990-ական թվականներին և 2000-ականների սկզբին եվրոպական շատ երկրներում գրադարանային ոլորտը կարգավորող օրենքների ընդունման իսկական ջբերք էր դիտվում. Ռուսաստանի Դաշնությունում (1994), Լիտվայում և Ուկրաինայում (1995), Շվեդիայում (1996), Լատվիայում և Ֆինլանդիայում (1998), Ալբանիայում և Դանիայում (2000), Չեխիայում (2001) և բազմաթիվ այլ երկրներում նման օրենքներ ընդունվեցին [Barrova, 2009, 85]:

Եվրոպական գրադարանային քաղաքականության ներդաշնակեցման և համաձայնեցման հիմնական մարմինը EBLIDA-ն է՝ Գրադարանների, տեղեկատվության և փաստաթղթերի ասոցիացիաների եվրոպական բյուրոն¹:

Այն անկախ ասոցիացիա է, որը միավորում է Եվրոպայում գրադարանների, տեղեկատվության, փաստաթղթերի և արխիվների ասոցիացիաները և հաստատությունները: EBLIDA-ն ունի մոտ 120 անդամ՝ գրադարանային ասոցիացիաներ և հաստատություններ՝ 32 երկրներից, որոնք ներկայացնում են Եվրոպայի 65.000 հանրային գրադարանների շահերը:

EBLIDA-ն գործունեություն է ծավալում եվրոպական գրադարանային օրենսդրության, ներառյալ հեղինակային իրավունքի և արտոնագրման, հասարակության վրա գրադարանների ազդեցության և Եվրոպայում կայուն զարգացման նպատակների մշակման ուղղությամբ:

EBLIDA-ն աջակցում է թվային դարաշրջանում տեղեկատվության անարգել հասանելիությանը և նպաստում արդար, ժողովրդավարական և կայուն հասարակության մեջ արխիվների և գրադարանների դերի բարձրացմանը:

1998 թ. հունիսին Եվրոպայի Խորհուրդը «Եվրոպական մշակութային կոնվենցիան» ստորագրած երկրներում գրադարանային օրենսդրության վերաբերյալ մի հարցարան տարածեց, որի նպատակն էր պարզել Եվրոպայում գրադարանային օրենսդրության ընդունման աշխարհագրությունը, վիճակը և բնույթը: Ստացված արդյունքների հիման վրա մշակվեցին համապատասխան սկզբունքներ և մոտեցումներ, որոնք ավելի ուշ ընդունվեցին IFLA-ի և EBLIDA-ի կողմից [COUNCIL OF EUROPE/EBLIDA GUIDELINES ON LIBRARY LEGISLATION AND POLICY IN EUROPE, 2000]:

Ստորև աղյուսակը ներկայացնում է գրադարանային օրենքի վերաբերյալ 22 եվրոպական երկրներից ստացված հարցման արդյունքները: 22 երկրից 16-ում գրադարանային ոլորտը կարգավորվում էր գրադարանների մասին օրենքի համաձայն: Հարցման մասնակիցներին երկու հարց էր տրվել անվճար գրադարանային սպասարկման ռազմավարության վերաբերյալ: Առաջին հարցը վերաբերում էր գրադարանի տարածքների անվճար մուտքին: Ներկայացված 22 երկրներից 13-ում գրադարանի անվճար մուտքը երաշխավորված է օրենսդրու-

¹ Տե՛ս <https://www.eblida.org/> կայքը:

թյամբ: Գրադարանային ծառայությունների անվճար հասանելիությունը ապահովված է 22-ից 15 երկրի օրենսդրությամբ: Այս թվերը ցույց են տալիս, որ պետությունները իրական շահագրգռվածություն ունեն գրադարանների և գրադարանային ծառայությունների ֆիզիկական հասանելիության հարցում: Գրադարանների անվճար մուտքի և գրադարանային ծառայություններից անվճար օգտվելու իրավունքը էական պահանջ է հանրային գրադարանների համար, որը գրադարանների համար հիմք է ստեղծում իրականացնելու իրենց առաքելությունները կրթության, երկարաժամկետ ուսուցման, թվային տեղեկատվության և քաղաքացիական հասարակության զարգացման ոլորտում:

Միայն 3 երկիր՝ Ավստրիան, Կիպրոսը և Ֆրանսիան, գրադարան այցելելու և նրա ծառայություններից օգտվելու մասին հատուկ օրենսդրություն չունեն: Սա չի նշանակում, որ գրադարանները գումար են գանձում իրենց տարածքներից և ծառայություններից օգտվելու համար, քանի որ հանրային գրադարաններից անվճար օգտվելու իրավունքը կարող է արտոնվել տարբեր նորմատիվ ակտերով և իրավական փաստաթղթերով ու կանոնակարգերով:

Եվրոպական շատ երկրներում (Բուլղարիա, Հունգարիա, Գերմանիա, Իտալիա, Լատվիա, Ֆինլանդիա, Ֆրանսիա և այլն) գրադարանում աշխատանքի անցնելու համար գրադարանային մասնագիտական կրթություն և մագիստրոսական դիպլոմ է պահանջվում [Library Legislation and Policy in Europe: Results of a Questionnaire]:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԵՐԿՐՆԵՐ, ՈՐՏԵՂ ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ Է ՊԱՀԱՆՋՎՈՒՄ

№	Եվրոպական երկրներ	Օրենք
1	Ավստրիա	Ոչ
2	Բուլղարիա	Այո
3	Գերմանիա	Ոչ
4	Դանիա	Այո
5	Էստոնիա	Այո
6	Իսպանիա	Այո
7	Իտալիա	Ոչ
8	Լատվիա	Այո
9	Լեհաստան	Այո
10	Լիտվա	Այո
11	Լյուքսեմբուրգ	Ոչ
12	Կիպրոս	Այո
13	Հունգարիա	Այո
14	Նիդերլանդներ	Այո
15	Նորվեգիա	Այո

№	Եվրոպական երկրներ	Օրենք
16	Շվեդիա	Այո
17	Չեխիա	Այո
18	Պորտուգալիա	Ոչ
19	Ռումինիա	Այո
20	Սլովակիա	Այո
21	Ֆինլանդիա	Այո
22	Ֆրանսիա	Ոչ

Բոլոր երկրներում էլ կան հանրային գրադարաններ, որտեղ գրքերը տրամադրվում են ընդհանուր ընթերցանության համար՝ կա՛մ անվճար, կա՛մ փոքր վճարի դիմաց կամ բաժանորդագրության կարգով: Աշխարհում հազարավոր գրադարաններ են հիմնադրվել բարեգործական, կրթական, սոցիալական և կրոնական կազմակերպությունների և անհատների կողմից: Շոտլանդական ծագմամբ ամերիկացի արդյունաբերող, բարերար Էնդրյու Կարնեգին (1835-1919) իր կարողության մեծ մասը (մոտ 90 %) ներդրեց մշակույթի, գիտության և կրթության ոլորտներում՝ ֆինանսավորելով տարբեր համալսարաններ, գրադարաններ, թանգարաններ: Նրա ֆինանսավորմամբ ԱՄՆ-ում, Մեծ Բրիտանիայում, Կանադայում, Ավստրալիայում և մի քանի այլ անգլիախոս երկրներում 1883-1929 թթ. ավելի քան 2.500 հանրային և համալսարանական գրադարան կառուցվեց:

Հանրային գրադարանների գործունեության ուսումնասիրությունը մեզ հիմք է տալիս պնդելու, որ հանրային գրադարանների՝ որպես մշտական գործող հաստատությունների գործունեության ապահովման համար անհրաժեշտ է իրավական հիմքեր ստեղծել: Հենց այդ բանի անհրաժեշտությամբ թելադրված՝ 19-րդ դարի երկրորդ կեսին և 20-րդ դարի սկզբին աշխարհի շատ երկրներում հանրային գրադարանների մասին օրենքներ ընդունվեցին:

Տարբեր երկրների «Գրադարանների մասին» օրենքներն ունեն գրադարանային գործառույթների որոշակի ընդհանրություններ՝ դրանք հավաքում, պահպանում են փաստաթղթեր և տեղեկույթ՝ անկախ նյութական կրիչներից, նյութերը տրամադրում են օգտագործման՝ վճարովի կամ անվճար, գրադարանները լինում են պետական և մասնավոր սեփականության: Ներկայում շատ երկրների օրենսդրությունը կարգավորում է Ազգային գրադարանի՝ որպես առանձնահատուկ կարգավիճակ ունեցող հաստատության, գործունեությունը, իրավունքները և պարտականությունները:

Եվրոպական միության երկրներում յուրաքանչյուր երկիր ինքնուրույն է կարգավորում իր գրադարանային ոլորտը: Համաձայնեցվում են միայն գրադարանային ծառայությունների մատուցման սկզբունքները, որոնք արտացոլված են Եվրոպայի Խորհրդի և ԻԲԼԻԴԱ-ի կողմից 2000 թվականին ընդունված Եվրոպայում գրադարանային օրենսդրության և քաղաքականության վերաբերյալ հանձնարարականներում [COUNCIL OF EUROPE/EBLIDA GUIDELINES ON LIBRARY LEGISLATION AND POLICY IN EUROPE]: Ճիշտ է դրանք պարտադիր կիրառման ուժ չունեն, սակայն օգնում են որևէ երկրում բարձր պաշտոններ զբաղեցնող պաշտոնյաներին, քաղաքական գործիչներին և գրադարանային և տեղեկատվության ոլորտի համար պետական քաղաքականություն մշակող և իրավական նորմեր սահմանող պատասխանատուներին ավելի լավ պատկերացնել ոլորտի խնդիրները: Օրինակ, Գերմանիայում, որտեղ գրադարանային գործի ոլորտը կարգավորվում է ոչ թե դաշնային մակարդակում ընդունված

օրենքներով, այլ միայն տեղական օրենքներով, գրադարանային ծառայությունների և տեղեկատվության, կրթության և մշակույթի ստացման հնարավորությունը հավասարապես հասանելի է բոլոր քաղաքացիների համար՝ անկախ նրանց եկամուտից, կարգավիճակից, տարիքից և սեռից:

Մեր երկրում կարգավորված է հանրային գրադարանի կարգավիճակ ստանալու կարգը, որը տրվում է ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից՝ 5 տարի ժամանակով [ՀՀ կառավարության որոշում «Հանրային գրադարանների հավատարմագրման կարգը և վկայականի ձևը սահմանելու մասին», 2013]: Համաձայն մշակված կարգի՝ «Գրադարանը կարող է հավատարմագրվել և ստանալ հանրային գրադարանի կարգավիճակ, եթե համապատասխանում է «Գրադարանների և գրադարանային գործի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթներին»: Կարգավիճակ ստանալու համար սահմանված են համապատասխան պահանջներ, որոնց թվում գրադարանի իրավաբանական անձի կարգավիճակը հաստատող վկայականն է, գրադարանային հավաքածուի և գործունեության տարածքի առկայությունը, ֆինանսական ապահովվածությունը, որակավորված անձնակազմի առկայությունը և այլն [ՀՀ օրենքը «Գրադարանների և գրադարանային գործի մասին», 2012]:

Ցանկացած երկրում, որտեղ դիտարկվում է հանրային գրադարանային ծառայության կազմակերպումը, վստահաբար արդեն իսկ կան տարբեր տիպի բազմաթիվ գրադարաններ՝ համալսարանական, դպրոցական, մանկական, պետական գերատեսչությունների, բժշկական և տեխնիկական և, իհարկե, ազգային և հանրային գրադարաններ: Հարկ է հիշել, որ հանրային գրադարանները ամբողջ համայնքի համար են, և կոչված են բնակչությանը սպասարկելու ըստ նրանց բնակության վայրի, մինչդեռ մյուս բոլոր գրադարանները բնակչության մի հատվածի, մասնագիտական առանձին խմբերի ընթերցողական հատուկ կարիքները բավարարելու համար են:

Սահմանված է նաև հանրային գրադարանների կողմից մատուցվող անվճար և վճարովի ծառայությունների ցանկը [ՀՀ մշակույթի նախարարի հրամանը «Հանրային գրադարանների կողմից մատուցվող ծառայությունների ցանկը սահմանելու մասին», 2013]: Հանրային գրադարաններում ընթերցողական տոմսերի տրամադրումը, գրադարանային փաստաթղթերի որոնման մասին խորհրդատվությունը, կույր և թույլ տեսողությամբ անձանց, ինչպես նաև սակավ շարժունակ անձանց գրադարանային-տեղեկատվական սպասարկումը կատարվում է անվճար: Մնացած մատուցվող ծառայությունները կարող են կատարվել նաև վճարովի հիմունքներով:

Միևնույն ժամանակ, անհրաժեշտություն կա գրադարանների համագործակցության և գրադարանային որոշակի գործառնությունների համակարգման համար, որը կարելի է լավագույնս կազմակերպել ազգային գրադարանի շուրջ: Գրադարանային նյութերի մատենագիտական նկարագրման և դասակարգման, ինչպես նաև միջգրադարանային բաժնույթի գործառնությունները շատ կարևոր են բոլոր գրադարանների համար: Հետևաբար, ազգային գրադարանը պետք է ուղիղ կապ ունենա հանրային գրադարանների աշխատանքը համակարգող ղեկավար մարմնի հետ:

Այստեղից ակնհայտ է դառնում գրադարանային օրենսդրության դրույթների իրականացման համար պատասխանատու կենտրոնական մարմնի ստեղծման անհրաժեշտությունը: Արդյոք այն պետք է լինի անկախ մարմին, թե՛ պետական գերատեսչության հետ կապված կամ ենթակա: Մա պետական մակարդակով որոշելու հարց է: Երկրում հանրային գրադարանների կենտրոնացված կառավարումը կենտրոնական իշխանությունների հոգաձության մաս դարձնելը ակնհայտ առավելություններ ունի, այն է՝ ունենալ գրադարանային բաժին և վերահսկող մարմին, որը պետք է ավելի քան խորհրդատվական գործառնություն ունենա:

Երկրում հանրային գրադարանների ղեկավարման կենտրոնական մարմինը կառավարման ժամանակակից ձևերից է, որը հաճախ է օգտագործվում զարգացող երկրներում: Մեր երկրի սեփական փորձով գիտենք նման մարմնի անհրաժեշտությունը: 1990-ական թվա-

կաններին Հայաստանում տեղական ինքնակառավարման համակարգին անցման շրջանում համայնքային գրադարանները տեղական իշխանությունների գործառնություններին հանձնելը մեծ սխալ եղավ երկրի գրադարանների համար: Այն պայմաններում, երբ երկիրը տեղական ինքնակառավարման փորձ չունի, ինչպես ասում են, ամեն ինչ պետք է գրոյից սկսեր, գրադարանները անփորձ և որ գլխավորն է՝ ծակ գրպանով տեղական ինքնակառավարման մարմիններին հանձնելը դառն փորձություն եղավ: Եթե 1991 թ. երկրում գործում էր 1327 համայնքային (քաղաքային և գյուղական) ինքնուրույն և մասնաձյուղ գրադարան, ապա 2022 թ. երկրում գործում էր ընդամենը 661 համայնքային գրադարան [Հայաստանի գրադարանները 2022 թվականին, 2023, 4]: Գրադարանների անկումը դեռևս շարունակվում է, քանի որ մեր երկրում գրադարանների զարգացման հստակ հայեցակարգ և զարգացման ծրագիր չկա և պատկան մարմինները նոր գրադարանի մոդելը դեռևս չունեն:

Եթե օրենսդրության կիրարկման համար գրադարանային ցանցի վերահսկողական գործառնությունը վերապահվում է պետական կառավարման մարմիններին, ապա այն չպետք է հանձնվի որևէ այլ մարմնի՝ բացի կրթության և մշակույթի բնագավառում պետական քաղաքականության համար պատասխանատու նախարարությունից: Նախարարության կազմում վերապատրաստված գրադարանավարներ ներառող բաժինը իրեն վերապահված խորհրդատվական և ստուգողական գործառնություններով կարևոր դեր ունի երկրում գրադարանային գործի կազմակերպման և վերահսկողության համար: Համայնքային գրադարանների ապակենտրոնացված համակարգը կարող է հաջողություն ունենալ միայն տեղական ինքնակառավարման կայացած վարչատարածքային մարմիններ ունեցող երկրներում, ինչպիսիք են Ֆրանսիան, Գերմանիան, Իտալիան, Նիդերլանդները և այլ երկրներ:

1949 թվականի մայիսի 16-ին Փարիզում ՅՈՒՆԵՍԿՕ-ն ընդունեց առաջին միջազգային հռչակագիրը հանրային գրադարանի անհրաժեշտության և գործառնությունների վերաբերյալ:

Այդ փաստաթուղթը հռչակում էր ՅՈՒՆԵՍԿՕ-ի հավատը հանրային գրադարանի նկատմամբ որպես ժողովրդական կրթության և միջազգային փոխըմբռնման աճի և դրանով իսկ խաղաղության խթանման կենդանի ուժ: Հետագայում 1994 [ՅՈՒՆԵՍԿՕ-ի հանրային գրադարանի հռչակագիրը 1994 թ., 1997, 13-16] և 2022 թթ. ՅՈՒՆԵՍԿՕ-ն և ԻՖԼԱ-ն ևս երկու անգամ համատեղ հռչակագիր են ընդունել հանրային գրադարանի մասին:

Հանրային գրադարանը ժամանակակից ժողովրդավարության արդյունք է և համընդհանուր կրթության նկատմամբ ժողովրդավարության հավատի գործնական ցուցադրում՝ որպես ցկյանս գործընթաց:

Թեև հանրային գրադարանը հիմնականում նախատեսված է մեծահասակների կրթական կարիքները սպասարկելու համար, սակայն հանրային գրադարանը պետք է նաև լրացնի դպրոցների աշխատանքը երեխաների և երիտասարդների ընթերցանության ճաշակը զարգացնելու գործում՝ օգնելով չափափառ դառնալ նրանց, ովքեր գնահատում են գիրքը և կարող են դրանից օգուտ քաղել:

Այս առաջին Հռչակագիրը սահմանում էր հանրային գրադարանի նպատակները և թվարկում հանրային գրադարանի ծառայությունների մի մասը: Այնուամենայնիվ, այն չփորձեց զբաղվել մի խնդրով, որն արդեն գրավում էր հանրային գրադարանավարների և կրթության և գրագիտության տարածման հարցերով մտահոգ մասնագետների ուշադրությունը: Այն, որ գրադարանը պետք է հավասար հնարավորություն ընձեռի բոլոր քաղաքացիների համար՝ օգտվելու հանրային գրադարանների ծառայություններից: Այսինքն՝ օրենսդրությունը պետք է պարտադիր լինի և ընդգրկի օրենսդրության շրջանակում գտնվող ամբողջ դաշտը:

Օրենսդրությունը պետք է նախատեսի ավելին, քան գրադարանների միջև կամավոր համագործակցության հնարավորությունները. այն պետք է ապահովի ամբողջ երկրում գրադարանային ծառայության մատչելիությունը, թեև հանրային գրադարանը իրավաբանորեն մնում է տեղական ինքնակառավարման ներքո գործող հիմնարկություն:

Միայն օրենսդրությունը կարող է համապատասխան մարմիններին լիազորել ծառայություն մատուցել և համապատասխան ֆինանսական աջակցություն և արդյունավետ վարչարարություն ապահովել՝ համաձայն ազգային ստանդարտի: Միայն օրենսդրությունը կարող է սահմանել այդ մարմնի գործառույթները, ստեղծել պայմաններ, որոնցում նա կարող է իրականացնել իր գործառույթները և զարգացում ապահովել:

Ազգային գրադարանային օրենսդրությունը պետք է ներառի հետևյալ տարրերը.

- Ծախսերի արտոնում՝ առանց առավելագույն շեմ սահմանելու,
- Գրադարանի աշխատանքում պետք է միայն որակյալ և պատրաստված գրադարանավարներ ներգրավել և գրադարանի գործունեությունը թույլատրել միայն այն դեպքում, երբ ծառայությունն իրականացնելու համար հասանելի են համապատասխան որակավորում ունեցող պրոֆեսիոնալ գրադարանավարները,
- Գրադարանային ծառայության մատուցում ամբողջ բնակչությանը,
- Միջգրադարանային բաժնույթ գրադարանների միջև, որպեսզի տարածաշրջանի ռեսուրսները հասանելի լինեն բոլորի համար,
- Գրքային միացյալ հավաքանին պետք է ընդգրկի յուրաքանչյուր տեսակետ՝ առանց որևէ մեկին վնասելու,
- Ազգային օրենսդրության մոտեցումները պետք է ուղղված լինեն անվճար սպասարկմանը:

1955 թվականին Գրադարանային ասոցիացիաների միջազգային դաշնության հանրային գրադարանների մշտական հանձնաժողովը հուշագիր հրապարակեց հանրային գրադարանների ծառայությունների զարգացման վերաբերյալ, որի մեկ բաժինը նվիրված էր օրենսդրությանը:

(ա) Տեղական իշխանության համապատասխան մարմինները պետք է լիազորված լինեն հանրային գրադարաններին հատկացված միջոցները ծախսելու համար,

(բ) Տեղական ծախսերի չափը չպետք է սահմանափակվի. տեղական իշխանությունները պետք է կարողանան ծախսել այնքան, որքան ցանկանում են և կարող են,

(գ) Հանրային գրադարանի նպատակները, որոնց համար կարող են ծախսվել միջոցները, պետք է սահմանվեն այնպես, որ չսահմանափակեն զարգացումը,

(դ) Տեղական իշխանությունները պետք է իրավասու լինեն համաձայնություններ կնքելու այլ տեղական իշխանությունների հետ՝ ծառայության ամբողջական կամ որևէ մասի տրամադրման համատեղ սխեմաների համար և նպաստելու համագործակցության և փոխօգնության խնայողական ծախսերին,

(ե) Յուրաքանչյուր տեղական իշխանություն պետք է նշանակի գրադարանային կոմիտե, որն անմիջականորեն պատասխանատու է տեղական խորհրդի համար,

(զ) Յուրաքանչյուր տեղական ինքնակառավարման մարմին պետք է իրավասու լինի նշանակելու աշխատակազմ, որը պետք է աշխատանքի ընդունվի տեղական ինքնակառավարման այլ պաշտոնյաների համար կիրառելի պայմանների և կանոնակարգերի համաձայն,

(է) Մատուցվող բոլոր ծառայությունների օգտագործումը պետք է անվճար հասանելի լինի բոլոր բնակիչներին,

(ը) Թեև յուրաքանչյուր տեղական իշխանություն ծառայություններ է մատուցում հիմնականում իր բնակիչների և նրանց համար, ովքեր աշխատում կամ սովորում են իր տարածքում, այնուամենայնիվ տվյալ տարածքից դուրս ապրող անձինք, եթե ցանկանում են, նույնպես պետք է կարողանան օգտվել գրադարանի ծառայություններից:

Գրադարանային ծառայությունները պետք է անվճար հասանելի լինեն բոլորին, անկախ նրանց բնակության վայրից:

Տեղական իշխանության մարմինները պետք է հնարավորինս արագ, օրենքով սահմանված կարգով ապահովեն հանրային գրադարանների ծառայությունների կատարումը [Public library legislation: a comparative study by Frank M. Gardner, 1971, 19]:

Տեղական և կենտրոնական իշխանությունների փոխհարաբերությունները

Ընդհանուր առմամբ ընդունված է, որ հանրային գրադարանը տեղական համայնքային ծառայություն է: Սակայն այս մոտեցումը ավելի ու ավելի պակաս է համապատասխանում ոլորտի զարգացման ներկա տեսլականին՝ կապված գրադարաններում տեղեկատվության արտադրության և տեխնոլոգիական զարգացումների սրընթաց աճի հետ:

Պատասխանը պետք է փնտրել տվյալ երկրի տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հանրային գրադարանների կառավարման մեջ: Որոշ երկրներում ստեղծվել է ազգային հսկողության տակ գտնվող հանրային գրադարանային ծառայություն՝ իրենց գործառույթները հետագա փուլերում տեղական ինքնակառավարման մարմիններին փոխանցելու պայմանով:

ՀՀ բնակչության գրադարանային սպասարկման պարտավորությունը ապահովվում է «ՀՀ տեղական ինքնակառավարման մասին» 2002 թ. մայիսի 7-ին ընդունված օրենքով, որի՝ «Համայնքի ղեկավարի գործունեությունը կրթության, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառում» վերնագրված 41-րդ հոդվածում սահմանվում է. «...կազմակերպում և կառավարում է համայնքային ենթակայության դպրոցների, մանկապարտեզների, ակումբների, մշակույթի տների, **գրադարանների**, կրթական և մշակութային այլ հիմնարկների ու կազմակերպությունների գործունեությունը, դրանց շահագործման և նորոգման աշխատանքները» [ՀՀ օրենքը «ՀՀ տեղական ինքնակառավարման մասին», 2002]: Ցավոք, սա բավարար հիմք չի ապահովում, և բնակչության գրադարանային սպասարկումը տեղական ինքնակառավարման մարմինների համար պարտադիր գործառույթ չի դիտվում:

Գրադարանների ֆինանսավորումը

Ընդունված է, որ հանրային գրադարանների ֆինանսական աջակցությունը պետք է լինի հանրային միջոցներից, այսինքն՝ հարկումից, բնակչության կողմից մուծվող հարկերի հաշվին: Ընդհանուր առմամբ տիրապետող մոտեցումն այն է, որ գրադարանային ծառայությունը պետք է անվճար լինի օգտագործողի համար, թեև գործնականում միշտ չէ, որ այդպես է: Զարգացող երկրների մեծ մասում հանրային գրադարանները ազգային մակարդակով մեծ աջակցություն են ստանում, որը հնարավորինս լրացվում է տեղական մակարդակով աջակցությամբ՝ հաշվի առնելով զարգացող երկրների մեծ մասում տեղական սահմանափակ հարկային հնարավորությունները:

Աշխարհի երկրներում գրադարանային օրենսդրությունը տարբեր բնույթ ունի: Շատ երկրներում թույլատրող բնույթի օրենսդրությունը փոխարինվել է պարտադիր օրենսդրությամբ: Տեղական իշխանության համապատասխան մարմիններից այժմ պահանջվում է, այլ ոչ թե թույլատրվում է հանրային գրադարանային ծառայությունների տրամադրումը: Որոշ երկրներում, օրինակ, Միացյալ Թագավորությունում, Ֆինլանդիայում և Շվեդիայում, պարտադիր դրույթն անհրաժեշտ չէ, քանի որ այդ երկրներում հանրային գրադարանների ծածկույթը վաղուց ավարտված է և բնակչությանը հասանելի: Նորվեգիայում օրենսդրական ակտով պարտադիր դրույթ է ամրագրված, իսկ Դանիայում բոլոր համայնքների համար հանրային գրադարաններ հիմնադրելու ժամկետ է սահմանված: Կանադայում և Միացյալ Նահանգներում այս դրույթը պարտադիր չէ, խնդիրն այլևս ոչ թե գրադարանային սպասարկման ապահովումն է, այլ դրանց կենսունակությունը, ինչը կարելի է ընդհանուր առմամբ շեշտել բոլոր երկրների մասին:

Օանդթանանք մի քանի երկրների օրենսդրական փորձին:

Դանիա. Դանիայի հանրային գրադարանները մունիցիպալ հաստատություններ են, որոնք գործում են գրադարանային ծառայությունների վերաբերյալ օրենքի համաձայն: Դանիայում գործում է 97 հանրային գրադարան՝ ավելի քան 500 մասնաճյուղերով և սպասարկ-

ման կենտրոններով [Public library legislation: a comparative study by Frank M. Gardner, 1971, 74-93]:

Երկրում կա 6 տարածաշրջանային գրադարան: Այդ գրադարանները աջակցում են տեղական համայնքային գրադարաններին՝ նրանց տրամադրելով կամ նրանց համար գրքեր և գրադարանային այլ նյութեր ձեռք բերելով, որոնք սովորաբար դրանց արժեքի կամ այլ պատճառներով առանձին հանրային գրադարանները հնարավորություն չունեն ձեռք բերել: Այս գրադարանների գործունեության շնորհիվ Դանիայի բոլոր քաղաքացիները տեղեկատվության և գիտելիքի ազատ և հավասար հասանելիության հնարավորություն ունեն՝ անկախ նրանից, թե որտեղ են նրանք ապրում՝ մայրաքաղաք Կոպենհագենում, թե հեռավոր բնակավայրերում: Հայաստանի մարզային գրադարանների նմանողությամբ այս տարածաշրջանային գրադարաններն իրենց տարածքում ծառայում են նաև որպես տեղական հանրային գրադարան:

Գրադարանային ծառայությունների վերաբերյալ Դանիայի օրենքը ապահովում է հանրային գրադարանների գործունեության իրավական շրջանակը: Գրադարանային ծառայությունների մասին առաջին օրենքն ընդունվել է 1920 թվականին, որը հիմք հանդիսացավ Դանիայում ժամանակակից հանրային գրադարանների ստեղծման համար:

Երկրում գրադարանների ոլորտի զարգացման ծրագրերի համար պատասխանատու մարմիններից է Գրադարանային խորհուրդը, որը բաղկացած է 16 անդամներից: Նրանք ներկայացնում են Դանիայի գրադարանային ծառայության բոլոր ոլորտները և նշանակվում են Մշակույթի նախարարի կողմից: Նախարարը նրանց հետ խորհրդակցում է Գրադարանների մասին օրենքի գործողության բոլոր կարևոր հարցերով: Խորհրդի անդամները իրավունք ունեն տարբեր քննարկումներ նախաձեռնել, իսկ Խորհրդի նախագահը ազգային գրադարանի տնօրենն է:

Ֆինլանդիան բնակչության գրագիտության և կրթության մակարդակով աշխարհի առաջատար երկրների շարքում է: Ֆինլանդիայի բնակչությունը կազմում է 4.7 միլիոն մարդ: Երկրի պաշտոնական լեզուներն են ֆիններենն ու շվեդերենը: Երկրում կա 78 քաղաքային և 440 գյուղական բնակավայր [Public library legislation: a comparative study by Frank M. Gardner, 1971, 51-59]:

Գրադարանները ակտիվ ներգրավված են ֆիննական հասարակության հիմնական արժեքների՝ կրթության և իրավահավասարության իրականացման գործում: Գրադարանները ավանդաբար կարևոր դեր ունեն ոչ միայն որպես ֆիննական ժողովրդավարության և կրթության հիմնաքարերից մեկը, այլև մարդկանց առօրյա կյանքում: Գրադարանները պատկանում են բոլորին, քանի որ դրանք ֆիննասավորվում են բնակչության հարկային եկամուտներից:

Ֆինները մոլի ընթերցողներ և գրադարաններից օգտվողներ են: 2018 թվականին գրադարանների ընդհանուր տարեկան տացքը կազմել է 84.5 միլիոն միավոր (15.4 մեկ շնչի հաշվով), այցելությունները՝ 50 միլիոն (9 մեկ շնչի հաշվով), իսկ գրադարանների ինտերնետային ծառայություններից օգտվել են 38 միլիոն անգամ: Յուրաքանչյուր մունիցիպալիտետ ունի հանրային գրադարան (282), որոնցից շատերն ունեն նաև մասնաճյուղ գրադարաններ (437) և գրադարաններ անիվների վրա (135):

Գրադարանային ծառայությունների շարունակականությունն ու որակը պաշտպանված են օրենսդրությամբ: Հանրային գրադարանների մասին առաջին օրենքը ընդունվել է 1928 թվականին, իսկ վերջին տարբերակը ուժի մեջ է մտել 2016 թվականին [Public Libraries Act 1492/2016]: Օրենքը բաղկացած է 20 հոդվածից:

«Հանրային գրադարանների մասին» օրենքի նպատակն է

- ստեղծել կրթության և մշակույթի հասանելիության հավասար հնարավորություններ բոլորի համար,
- նպաստել տեղեկատվության մատչելիությանը և օգտագործմանը,

- աջակցել ընթերցանության մշակույթին և համակողմանի գրագիտության հմտություններին,
- նպաստել ցկյանս ուսուցմանը և կարողությունների զարգացմանը,
- նպաստել ակտիվ քաղաքացիական դիրքորոշմանը, ժողովրդավարությանը և խոսքի ազատությանը:

Այս նպատակների իրականացումը հիմնված է համայնքի պահանջարկի, բազմակարծության և մշակութային բազմազանության վրա:

Օրենքի 5-րդ հոդվածը սահմանում է Տեղական ինքնակառավարման մարմինների պարտականությունները, ըստ որի՝

(1) Տեղական իշխանությունները, այսինքն՝ մունիցիպալ մարմինները, պատասխանատու են հանրային գրադարանների գործունեության կազմակերպման համար: Նրանք կարող են հանրային գրադարանների աշխատանքը կազմակերպել ինքնուրույն՝ համագործակցելով մունիցիպալ մարմինների հետ կամ որևէ այլ եղանակով,

(2) Տեղական իշխանությունները, որպես իրենց պարտականությունների մաս, պետք է խորհրդակցեն բնակիչների հետ հանրային գրադարաններին առնչվող առանցքային հարցերի վերաբերյալ որոշումներ կայացնելիս՝ բնակիչներին հնարավորություն ընձեռելով մասնակցել և ազդել դրանց ընդունման վրա, ինչպես նշված է «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 27-րդ հոդվածում,

(3) Անհրաժեշտության դեպքում տեղական իշխանությունները պետք է համագործակցեն իշխանության այլ թևերի, գրադարանային ոլորտի դերակատարների և այլ մարմինների հետ:

Նորվեգիա. Տարբեր վարկանիշային ցուցակներով Նորվեգիան համարվում է աշխարհի ամենազարգացած և բարեկեցիկ երկրներից մեկը: 2016 թվականի մայիսի տվյալներով Նորվեգիան ուներ 5.213.985 բնակչություն, երկրի տարածքը կազմում է 385.207 քառ. կմ: Վարչականորեն երկրի տարածքը բաժանվում է 11 կոմսությունների (մարզեր) և 356 մունիցիպալիտետների (տեղական ինքնակառավարման մարմիններ): Նորվեգիայում կա 96 քաղաքային բնակավայր, որոնցից միայն երեք քաղաք 100 հազարից ավելի բնակչություն ունեն: Երկրում գերակշռում է գյուղական բնակչությունը: Բնակչության խտությունը մեծ չէ, այդ պատճառով խնդիրներ ունեն գրադարանային համակարգ ձևավորելու տեսակետից: Երկրում կա ավելի քան 1200 հանրային գրադարան, որոնց կեսը բաց է շաբաթական ոչ ավել քան 2 ժամ: Հինգ հարյուրից ավել գրադարանների տարեկան տացքը 1000 միավորը չի գերազանցում:

Երկրում գրադարանային գործը զարգացել է Միացյալ Թագավորության և ԱՄՆ գրադարանների օրինակով: Գրադարաններում կիրառվում է բաց դարակային սպասարկման համակարգը: Գրականությունը դասակարգվում է Դյուիի տասնորդական համակարգով:

Գրադարանների մասին առաջին օրենքը Նորվեգիայում ընդունվել է 1935 թվականին: Փոքր գյուղական գրադարաններում գրադարանավարի աշխատավարձը լրացվում էր պետական աջակցությամբ տրվող փոքր դրամաշնորհների (3000 կրոն) միջոցով: Կոմսություններում ստեղծված տարածաշրջանային գրադարանները ավելի մեծ դրամաշնորհ (5000 կրոն) էին ստանում, որն օգնեց անգամ Երկրորդ համաշխարհային պատերազմի շրջանում տարեկան մեկ նոր գրադարան հիմնադրել: Այնուամենայնիվ հանրային գրադարանները թույլ էին, իրար հետ չհամագործակցող և երկրում հանրային գրադարանների միասնական ցանց չձևավորվեց:

1947 թ. Նորվեգիայում գրադարանների մասին նոր օրենք ընդունվեց, որն ուժի մեջ մտավ 1949 թ. հուլիսին [Public library legislation: a comparative study by Frank M. Gardner, 1971, 60-74]: Ակտը կարևոր քայլեր ձեռնարկեց ազգային միասնական գրադարանային ծառայության ստեղծման գործում: Այն սահմանեց.

1. Յուրաքանչյուր մունիցիպալիտետի համար պարտադիր է հանրային գրադարան ունենալը,

2. Պարտադիր էր նաև, որ յուրաքանչյուր տարրական դպրոց պետք է ունենար դպրոցական գրադարանով,

3. Հանրային գրադարանների համար հաստատվեց չափորոշիչ, ըստ որի յուրաքանչյուր մունիցիպալիտետ մեկ բնակչի համար պարտավոր էր տարեկան ծախսել 0.25 կրոնից ոչ պակաս,

4. Պետական դրամաշնորհները սահմանվեցին հետևյալ կերպ: Փոքր հանրային գրադարանների համար առավելագույն պետական դրամաշնորհը սահմանվեց 3000 կրոնի չափով, այսինքն՝ տեղական բյուջեից տրամադրվող 6000 կրոնից ավելի տեղական ծախսերի դիմաց պետությունը 3000 կրոն սուբսիդավորում էր տրամադրում,

5. Տարածաշրջանային կենտրոնական գրադարանների հիմնական դրամաշնորհը ավելացվեց մինչև 8000 կրոն՝ գումարած տեղական դրամաշնորհների 20 տոկոսը աշխատավարձերի և գրքերի համար: Այստեղ առավելագույն գումարը կրկին ամրագրվեց՝ 10000 կրոն,

6. Առաջին անգամ նորվեգացի հեղինակներին աջակցելու նպատակով ստեղծվեց հատուկ հիմնադրամ, որը սահմանվեց հանրային գրադարաններին տրամադրվող պետական դրամաշնորհի 5 տոկոսի չափով:

Օրենքի ընդունումը հիմք դրեց Նորվեգիայում գրադարանների զարգացման համար: Գրադարաններին տրամադրվող պետական դրամաշնորհների գումարները բոլորովին մեծ չէին: Սակայն պետության կողմից գրադարանային ոլորտի սուբսիդավորումը օրենքի գործողության մեջ մտնելու հենց հաջորդ տարին նպաստեց տեղական բյուջեներից գրադարաններին հատկացվող գումարների ավելի քան կրկնակի աճին: Տարիների ընթացքում գրադարաններին տրամադրվող դրամաշնորհների գումարներն աճեցին, սակայն կենտրոնական և տեղական բյուջեներից հատկացումների համամասնությունը մնաց նույնը պետական աջակցությունը կազմում էր տրամադրված տեղական միջոցների 25 տոկոսի չափով: 1985 թ. Նորվեգիայում հանրային գրադարանների մասին նոր օրենք է ընդունվել, որի մեջ լրացումներ են կատարվել 2014 թվականին:

Շվեդիա. Շվեդիայի բնակչությունը մոտ 10 միլիոն է, որից 2.3 միլիոնը ունի օտար արմատներ: Երկրում կա գրադարանների լավ կազմակերպված համակարգ: Այն ներառում է 290 հանրային գրադարանային համակարգ, 20 երկրամասային (մարզային), մոտ 4000 դպրոցական գրադարան, 100 բժշկական և հիվանդանոցային գրադարան, 1 ազգային, 38 համալսարանական գրադարան, բացի այդ գործում են 3 սպասարկման կենտրոններ, ինչպես նաև մեկ պահեստարան-գրապահոց, որոնք կոչված են ապահովելու երկրի գրադարանային համակարգի կարիքները: Եվրոպայում առաջիններից մեկը Շվեդիայում է ընդունվել պարտադիր օրինակի մասին օրենքը (1661 թ.): Համաձայն ներկայում գործող օրենսդրության՝ յուրաքանչյուր հրատարակության յոթ օրինակ պետք է առաքվի՝ մեկը Ազգային գրադարան և մեկական օրինակ՝ Լունդի, Ուփսալայի, Ստոկհոլմի, Գյոթեբորգի, Ումեդի և Լինկյոփինգի համալսարանական գրադարաններ: Միայն Ազգային գրադարանը և Լունդի համալսարանական գրադարանն են պարտավոր ապագայի համար պահպանել ստացված բոլոր ավանդադրված հրատարակությունները, մինչդեռ մյուս գրադարաններին թույլատրվում է դրանք սպասարկման տրամադրել, ինչպես նաև դրանք դուրս գրել իրենց հավաքածուներից:

Նախքան 1997 թ. Շվեդիան միակ սկանդինավյան երկիրն էր, որտեղ գրադարանային ոլորտը կարգավորող օրենք չէր ընդունվել [Public library legislation: a comparative study by Frank M. Gardner, 1971, 94-104]: 1996 թ. Շվեդիայի պառլամենտը «Գրադարանային ծառայությունների մասին» օրենք ընդունեց, որը ուժի մեջ մտավ 1997 թ. հունվարի 1-ից:

Գրադարանային օրենքի հիմնական սկզբունքներն են.

- Յուրաքանչյուր տեղական մունիցիպալիտետ պետք է հանրային գրադարան ունենա
- Գրադարանները պետք է գրականությունը անվճար տրամադրեն
- Յուրաքանչյուր քաղաքացի պետք է կարողանա օգտվել հանրային գրադարանից

Օրենքը պահանջում էր, որ բոլոր 290 տեղական ինքնակառավարման մարմինները հանրային գրադարանների համակարգ ունենան և ֆինանսավորեն, ինչը նպաստեց այն բանին, որ Շվեդիայում շատ գրադարաններ հիմնադրվեցին, որոնք հավասարաչափ բաշխված են երկրի տարածքում: Բացի մունիցիպալ գրադարաններից կան նաև 20 մարզային հանրային գրադարաններ, որոնք աջակցում են տեղի գրադարաններին՝ կատարելով այնպիսի գործառույթներ, ինչպիսիք են միջգրադարանային բաժնույթը: Այս գրադարանները տրամադրում են նաև վերապատրաստման և մասնագիտական զարգացման այլ հնարավորություններ:

Երկրի ամբողջ գրադարանային համակարգի զարգացման համար իրավասու է Շվեդիայի մշակութային հարցերի ազգային խորհուրդը, որը կառավարության կողմից է նշանակված, և որի խնդիրն է ազգային մակարդակով աջակցել գրադարաններին: Խորհուրդը հավաքում է գրադարանային վիճակագրությունը, հրապարակում հաշվետվություններ և, ընդհանուր առմամբ, հսկում է երկրի գրադարանների վիճակը և զարգացումը: Շվեդական գրադարանային օրենքը պահանջում է, որ բոլոր տեղական մարմինները մշակեն և գրադարանների գործունեության տարեկան ծրագրեր ընդունեն: Շվեդիայում հանրային գրադարանների համակարգի վերաբերյալ վիճակագրությունը կանոնավոր հավաքվում է 1950 թվականից ի վեր, և մշտապես աշխատանքներ են տարվում բարելավելու վիճակագրության հավաքման եղանակները:

Վերջին տասնամյակում Շվեդիայի բնակչության կազմի դեմոգրաֆիական փոփոխությունները իրենց ազդեցությունն են թողել նաև մշակութային և գրադարանային քաղաքականության վրա, որն իր արտացոլումն է գտել նաև մասնագիտական շրջանակների քննարկումներում [Fredrik Hanell, Hanna Carlsson & Lisa Engström, 2023]:

Հանրային գրադարանները կարևոր դեր ունեն կրթության, հետազոտությունների, անհատի զարգացման և այլ կարևոր արժեքների խթանման գործում: Հասարակությունը չի կարող ծաղկել առանց պատշաճ կրթության և զարգացած կրթական և գրադարանային համակարգի:

Գրադարանային օրենսդրությունը որևէ երկրում կազմակերպված հանրային գրադարանների ցանցի ստեղծման հիմքն է: Այն ապահովում է գրադարանի կառավարումը և կայուն ֆինանսական հիմքեր է ստեղծում որակյալ գրադարանային սպասարկման համար: Օրենսդրությունը նաև ծառայում է գրադարանների այցելուների իրավունքների պաշտպանությանը: Տարբեր երկրների գրադարանային օրենսդրության ուսումնասիրությունը օգտակար է ՀՀ գրադարանային ոլորտը կարգավորող օրենսդրության մեջ անհրաժեշտ փոփոխություններ և լրացումներ կատարելու համար:

SUMMARY

Public libraries play an important role in promoting education, research, personal development and other important values. A society cannot flourish without proper education and a developed educational and library system.

Library legislation is the basis for creating a network of public libraries organized in any country. It ensures the management of the library and creates a stable financial basis for quality library services. The legislation also serves to protect the rights of library users. The study of the library legislation of different countries is useful for making necessary changes and additions to the legislation regulating the RA library sector.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայաստանի գրադարանները 2022 թվականին: Աշխատանքների վիճակագրական վերլուծություն / Կազմ.՝ Մարիամ Ասլանյան, Երևան, Հայաստանի ազգային գրադարան, 2023, 102 էջ:

2. ՀՀ կառավարության որոշում «Հանրային գրադարանների հավատարմագրման կարգը և վկայականի ձևը սահմանելու մասին» 28 փետրվարի 2013, 187-Ն [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://www.e-gov.am/gov-decrees/item/22570/>, 28.12.2023:
3. ՀՀ մշակույթի նախարարի հրամանը «Հանրային գրադարանների կողմից մատուցվող ծառայությունների ցանկը սահմանելու մասին», N 458-Ն, 18.07.2013 [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=84809>, 28.12.2023:
4. ՀՀ օրենքը «Գրադարանների և գրադարանային գործի մասին» 21 մարտի, 2012 [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=75198>, 28.12.2023:
5. ՀՀ օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին» 7 մայիսի, 2002 [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://www.arlis.am/documentview.aspx?docID=73271>, 28.12.2023
6. ՅՈՒՆԵՍԿՕ-ի հանրային գրադարանի հռչակագիրը 1994 թ. (Միջազգային գրադարանային փաստաթղթեր) / թարգմ.՝ Ներսես Հայրապետյան // Տեղեկագիր Հայաստանի գրադարանային միության, Երևան, 1997, էջ 13-16:
7. COUNCIL OF EUROPE/EBLIDA GUIDELINES ON LIBRARY LEGISLATION AND POLICY IN EUROPE, Strasbourg, 20 January 2000, [Electronic Publication] URL: [Council of Europe-EBLIDA Guidelines on Library Legislation and Policy](#) 10.01.2024.
8. Fredrik Hanell, Hanna Carlsson & Lisa Engström (2023) The public library as a political symbol: a post-political reading of the demise of the consensus-model in Swedish cultural policy, International Journal of Cultural Policy, [Electronic Publication] DOI: 10.1080/10286632.2023.2289174, 7.01.2024
9. Library Legislation and Policy in Europe: Results of a Questionnaire - Interim Report (Prepared by Ms. Apolline Sans, French Ministry of Culture) [Electronic Publication] URL: http://www.eblida.org/News/2020/EBLIDA_Library-Legislation-and-Policy-in-Europe.pdf, 28.12.2023.
10. Public Libraries Act 1492/2016 (Translation from Finnish) [Electronic Publication] URL: <https://www.finlex.fi/en/laki/kaannokset/2016/en20161492>, 7.01.2024.
11. Public library legislation: a comparative study by Frank M. Gardner, 1971, 285 p. [Electronic Publication] URL: <https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000025113>, 28.12.2023.
12. Багрова, И. Ю. Библиотечное законодательство зарубежных стран в конце XX – начале XXI в.: состояние и проблемы: Аналит. обзор по материалам зарубеж. англояз. и отечеств. лит. 2000-2005 гг. / И. Ю. Багрова // Библиотечное дело за рубежом: конец XX - начало XXI века: Сб. аналит. и справ. материалов/ Рос. гос. б-ка; Сост. Качалина В. В., Москва, Пашков дом, 2009, С. 85-112.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐԸ

Բանալի բառեր՝ Ազգային գրադարան, կայուն զարգացում, ՄԱԿ ԿԶՆ, ներառականություն, հայերենի նշանակալից, տեղեկատվական գրագիտություն, տեղեկատվության մատչելիություն:

Keywords: National Library, sustainable development, UN sustainable development goals, inclusivity, Armenian language OCR, information literacy, information accessibility.

Հոդվածի նպատակն է դիտարկել Հայաստանի ազգային գրադարանի (Գրադարան) զարգացման հայեցակարգը ՄԱԿ-ի կայուն զարգացման օրակարգի համատեքստում: Առաջադրված խնդիրներից է՝ ուսումնասիրել ՀԱԳ-ի գործունեության նպատակները և թիրախները ազգային և միջազգային հարթություններում՝ հիմնված ներառականության սկզբունքի վրա:

Հայաստանի ազգային գրադարանը հանրային կարիքներին արձագանքող, երկրի նորարար քաղաքականության իրականացմանը, մրցակցային առավելությունների բարձրացմանն ու գիտելիքահենք հասարակության ձևավորմանը նպաստող հանրահասանելի հաստատություն է:

Իր գոյության հարյուր տարիների ընթացքում Հայաստանի ազգային գրադարանը ստեղծել է մարդկային գիտելիքների մեծ շտեմարան: Դա նշանակալի ձեռքբերում է, քանի որ ազգային ռեսուրսների ներդրումը բոլորին հասանելի համընդհանուր հավաքածուի վերածելու համար պահանջվեց ավելի քան մեկ դար: Գրադարանի գիտելիքի հավաքածուն յուրահատուկ մտավոր արժեք է:

Սակայն ռեսուրսները հավաքագրելն ու պահպանելը ինքնին բավարար չէ: Գրադարանի առաքելությունն իրականացնելու համար անհրաժեշտ է օգտագործել դրա ամբարած գիտելիքի հսկայական հավաքածուն: Այս հիմնարար սկզբունքն ամրագրվել է Գրադարանի գործունեության տարբեր ուղղությունների համար. Ծառայություններն ու ծրագրերը պետք է լինեն մատչելի և կիրառելի:

Համաշխարհային համավարակի և պատերազմի պայմաններում աշխատելու բերումով, հաշվի առնելով ճգնաժամի հարուցած հնարավոր մարտահրավերները, Գրադարանը վերանայեց իր ռազմավարական առաջնահերթությունները և ապագա նպատակները:

Զարգացման համաշխարհային շրջանակ ստեղծելու նպատակով 2017 թվականին Միավորված ազգերի կազմակերպությունը ներկայացրեց Կայուն զարգացման նպատակները (ԿԶՆ)՝ հայեցակարգ, որի բաղկացուցիչ 17 փոխկապակցված նպատակները ուրվագծում են կոնկրետ թիրախներ և ցուցանիշներ՝ ծառայելով որպես կայուն ապագայի առաջընթացի չափման ուղենիշներ: Դրանք արդիական են հանրության յուրաքանչյուր շահագրգիռ կողմի, այդ թվում՝ գրադարանների համար: Գրադարանային ոլորտը զարգացման 17 նպատակներում ինտեգրելը հիմնված է մի հիմնարար նախադրյալի վրա. Առանց տեղեկատվական հասանելիության այս նպատակներից ոչ մեկին հնարավոր չէ հասնել: Գրադարանները տեղեկատվական դաշտի հիմնական մատակարարներն են և ԿԶՆ ուղղությամբ աշխատող անհատներին և կազմակերպություններին տեղեկատվության հասանելիություն ապահովելու համար ունեն կարևոր նշանակություն [Barbara Lison, Alexandra Hinz, 2023]:

Ինչպե՞ս են գրադարաններն աջակցում ԿԶՆ-ներին [Libraries and the Sustainable Development Goals a storytelling manual, 2018]: Գրադիտության խթանումից մինչև տեղեկատվության անվճար հասանելիություն. գրադարանները նաև ապահով, հյուրընկալ տարածքներ են յուրաքանչյուր համայնքում:

Տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) հասանելիության, ինտերնետ կապի և հմտությունների միջոցով գրադարանները զարգացնում են թվային ներառականությունը: Գրադարանների առաքելության կարևորագույն գործառնություններից է նորարարության և ստեղծարարության խթանումը, համաշխարհային գիտելիքի հասանելիությունը՝ ներկայիս և ապագա սերունդների համար:

Կայուն ապագայի առաջընթացի համար ԿԶ յուրաքանչյուր նպատակի կարևորագույն բաղադրիչը հանրության ներառականության սկզբունքն է: 21-րդ թվային դարում շատ ծառայություններ հետզհետե տեղափոխվում են առցանց տիրույթ, ինչի բերումով բնակչության մի զգալի մաս գուցե թե չկարողանա օգտվել որոշակի ծառայություններից, ինչպես նաև կարող են վտանգվել հանրության հետ սոցիալիզացման՝ շփման հնարավորությունները: Ուստի կարևոր է լրացնել սերունդների միջև առաջացած բացը և ընդլայնել թվային կարողությունների ընդգրկումը:

Գրադարանի առաքելության առանցքային ուղղություններն ուղղակիորեն համընկնում են ՄԱԿ-ի ԿԶՆ-երի հետ:

Հայաստանի ազգային գրադարանը լինելով հաճախորդակենտրոն կառույց՝ իր հայեցակարգային առաջնահերթություններում կարևորում է հասարակության թվային ներառումը: Թվային ներառականության սկզբունքը պայմանավորված է երեք հիմնական գործոններով.

1. Ազգային ժառանգությանը հանրության հասանելիություն
2. Կիրառականություն լեզվի /հայերենի/ ինտեգրում
3. Հատուկ կարիքներով անձանց հասանելիություն գրադարանի ծառայություններին, շտեմարաններին:

1. Ազգային ժառանգության հանրության հասանելիություն

Ժառանգությունը սերտ կապված է հիշողության, արժեքների, հավատալիքների ու ավանդույթների հետ, որոնք փոխանցվում են տեղի, ժամանակի, մարդկանց ու համայնքի պատմությունների միջոցով: Գրեթե անհնար է որևէ բան անվանել «ժառանգություն»՝ նախապես չճանաչելով դրա մարդկային, սոցիալական կապերը: Այս սկզբունքի երկու հիմնական նպատակներն են. պահպանել տպագիր ժառանգությունը և ապահովել դրա հասանելիությունը: Այս նպատակներին հասնելու համար հարկ է ինչպես հանրության մեջ, այնպես էլ կառավարական շրջանակներում բարձրացնել փաստագրական ժառանգության կարևորության գիտակցումը: Կարևորագույն նպատակն է առավել համապատասխան միջոցներով համաշխարհային նշանակության փաստագրական ժառանգության պահպանումն ապահովելը, ազգային ու տարածաշրջանային նշանակության տպագիր ժառանգության պահպանումը խրախուսելը, ինչպես նաև հնարավոր ամենամատչելի տեխնոլոգիաների կիրառմամբ այս ժառանգությունը հնարավորինս շատ մարդկանց հասանելի դարձնելը ինչպես երկրի ներսում, այնպես էլ Հայաստանի սահմաններից դուրս: Թվային փոխակերպումը Գրադարանի ռազմավարական կարևորագույն ուղղություններից է. ազգային տպագիր ժառանգության թվայնացումը, մշակումը, համապատասխան շտեմարաններում դրանց գեոտեղումը հասարակությամբ ընձեռում է ազգային ժառանգության հետ հաղորդակցվելու հնարավորություն:

Թվային գործիքակազմի հասանելիությունը, կիրառման կարողությունները, իրազեկվածությունը հանրության ներառականության կարևորագույն բաղադրիչներից են: Գործիքակազմը բազմազան է. կայքեր և հարթակներ, սոցիալական մեդիա, բջջային հավելվածներ: Հայաստանի 54-74 տարիքի բնակչությունը զգալիորեն պակաս է օգտվում ինտերնետից, քան

25-54 տարեկան մարդիկ, ինչը փաստում է գրադարանի ծառայություններից օգտվողների վիճակագրությունը: Գրադարանը նախատեսում է միջսերնդային ուսուցման կիրառմամբ անդրադառնալ տարեց բնակչության թվային ներառմանը: Թվային կարողությունների պակասը պայմանավորված է ոչ միայն տարիքային խնդիրներով, այլև սոցիալական անապահովության և ցածր կրթական մակարդակի պատճառով:

Տպագիր ժառանգության պահպանումն ու դրան հասանելիության ավելացումը փոխկապակցված են: Օրինակ՝ թվայնացված նյութերը կարող են հասանելի լինել շատ մարդկանց, իսկ հասանելիության պահանջարկը կարող է խթանել պահպանման աշխատանքները: Մեկ այլ կարևոր նախադրյալ է տպագիր ժառանգության մասին իրազեկվածության բարձրացումը, մասնավորապես այդ ժառանգության այն առումները, որոնք համաշխարհային հիշողության տեսանկյունից նշանակալի են: Հանրահռչակման տեսանկյունից կարևոր է տպագիր ժառանգության վրա հիմնված արտադրանք մշակելն ու դա լայն տարածման համար հասանելի դարձնելը՝ միաժամանակ ապահովելով բնօրինակների պահպանման ու անվտանգության լավագույն պայմանները:

Տպագիր ժառանգությունը պետք է լինի երկրի մշակութային և գիտական քաղաքականության ոլորտում հետագա օրենսդրության և որոշումների կայացման դինամիկ մաս, ինչպես նաև դրա առաջնահերթությունների, որոնք թույլ կտան զարգանալ սոցիալական փոփոխություններին, տեխնիկական նորարարություններին ու աշխարհաքաղաքական միտումներին համընթաց:

2. Կիբերտիրություն լեզվի /հայերենի/ ինտեգրում

Կիբերտարածությունը, հանդես գալով իբրև ճանաչման ու ընկալման նոր ուղիներ պահանջող ամբողջական միջավայր, բարդ փիլիսոփայական, մշակութային, սոցիալական, լեզվական մոտեցումների միջոցով մարդու ինտելեկտի, լեզվի զարգացման և հետազոտության համար անսահմանափակ հնարավորություններ է տալիս:

Լեզվական բազմազանությունը գոյություն ունի հարափոփոխ, դինամիկ միջավայրում: Ինչպես փաստում է 2021 թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ի Լեզուների համաշխարհային զեկույցը, այսօր աշխարհում խոսվող մոտ 7000 լեզուների մոտ կեսը կարող է անհետանալ [UNESCO World Atlas of Languages: summary document, 2021]: Համացանցը, որն այժմ տեղեկատվության փոխանակման հիմնական միջոցն է, բազմալեզվության խթանման գործում առանցքային դեր ունի: Ըստ նույն զեկույցի՝ աշխարհի լեզուների ներգրավվածությամբ կիբերտիրություն անգլերենն առաջինն է՝ հաշվի առնելով ներկայացվածությունն ըստ հետևյալ չափանիշների. 1. Ինտերնետից օգտվողներ ըստ լեզվի, 2. Կայքերի բովանդակության լեզուներ, 3. Վիքիպեդիայի հոդվածների տարածում տարբեր լեզուներով, 4. Լեզուների հավելվածներ, 5. Ձայնային ներառական գործիքներ:

Հայերենը, լինելով աշխարհի ամենահին, զարգացած ու հարուստ լեզուներից մեկը, արտացոլում է հայ ժողովրդի կյանքը, դարավոր պատմությունը՝ հնագույն ժամանակներից ցայսօր: Իր բազմադարյա ընթացքում այն անցել է զարգացման տարբեր փուլեր: Մեր օրերում հայերենը բախվում է կիբեր մարտահրավերների. թվային տիրություն տպագիր ժառանգության հասանելիությունը սահմանփակվում է հայերենի նշաճանաչման խնդրի առկայությամբ: Եղած ծրագրային ապահովումները կամ հարթակները (Abby FineReader, simple software, ocrnow, tesseract-ocr, expert-pdf) նշաճանաչման բարձր որակ են ապահովում բացառապես թվածին նյութերի պարագայում: Հայ գրատպության պատմության ու աշխարհագրության առանձնահատկության (առաջին հայերեն գիրքը տպագրվել է Վենետիկում, հաջորդիվ՝ աշխարհի տարբեր երկրներում, տարբեր տպարաններում) բերումով հայերեն տպագիր նյութերի տառատեսակները հիմնականում տարաբնույթ են:

Հայաստանի ազգային գրադարանը աշխարհի հայատառ տպագիր ամենամեծ պահոցն է: Փաստաթղթերն իրենց բնույթով, տառատեսակներով, տեքստերի խտությամբ ու այլ հատկանիշներով բազմազան են, ինչը բարդացնում է թվայնացված նյութի նշաճանաչման գործընթացը: Թվայնացված նյութերը (ավելի քան 13 մլն. էջ) համապարփակ ներկայացված են հիմնականում «Հայ գիրք», «Հայ մամուլ», «ՀԱԳ թվային պահոց» շտեմարաններում:

Հայերենի նիշերի օպտիկական ճանաչումն (OCR) ու ձեռագիր տեքստի ճանաչումը (HTR) լավագույնս փորձարկում է ֆրանսիական Կալֆա ընկերությունը: Միջոցների սակավությամբ ու ծավալների մեծությամբ պայմանավորված՝ Գրադարանի հնարավորությունները սահմանափակ են: 2021 թ. Փորթմայնդ հայաստանյան ընկերությունը ստեղծեց հայերենի համար նշաճանաչման ծրագրային ապահովում: Գրադարանի մասնագետների հետ ծագիրն ութ ամիս փորձարկվեց: 2022 թ. Գրադարանը և Փորթմայնդ ընկերությունը կնքեցին համագործակցության հուշագիր, որի շրջանակում Գրադարանին հայերեն տպագիր նյութերի թվայնացված տարբերակները նշաճանաչելու հնարավորություն ընձեռվեց՝ բացառապես հանրությանը հասանելի դարձնելու նպատակով: Այս պահին Գրադարանի թվայնացված պաշարներից նշաճանաչված է մոտ 15%-ը, նախատեսվում է ավելացնել նշաճանաչման գործընթացի արագագործությունն ու բարձրացնել դրա որակը:

Հաջորդիվ նախատեսում ենք բարելավել նշաճանաչված հայերեն տեքստերի ինդեքսավորումը, ինչը կապահովի հայերենը կիրառական ներգրավելուն: Մեծապես կավելանա հայերենի ազդեցությունը տեքստային միջնորդավորված հաղորդակցման տարաբնույթ գործընթացներում:

1. Որոնողական համակարգի ինդեքսավորում,
2. Տեքստի ճանաչում,
3. Խոսքի ճանաչում,
4. Ազգային կորպորա,
5. Առցանց թարգմանչի հիշողության տվյալների բազաներ (Թարգմանական հիշողություն),
6. Հակագրագողության համակարգերի տվյալների բազաներ,
7. Լեզվի ծրագրակազմ հաշմանդամություն ունեցող անձանց համար:

3. Հատուկ կարիքներով անձանց հասանելիություն գրադարանի ծառայություններին, շտեմարաններին

Կայուն զարգացման 2030-ի օրակարգը կոչ է անում ներառական և հավասար որակի կրթության համար ստեղծել հնարավորություններ և խթանել բոլորի համար հարատև կրթություն (ԿՁՆ 4): Էլեկտրոնային ներառման խթանումը հիմնալի միջոց է սոցիալական և թվային ներառմանը նպաստելու և հասնելու համար՝ հասարակության տարբեր հատվածներում տարեց քաղաքացիների համար ավելի շատ սովորելու հնարավորություններ ապահովելով:

Գրադարանի նոր կայքի ճարտարապետությունն ու գործառնականությունը նախագծելիս հաշվի է առնվել առաջատար գրադարանների փորձը: Հենանիշավորման գործընթացի արդյունքում ընտրվեցին տարբեր գրադարանների կայքերի լավագույն հնարավորությունները, ինչը ներկայացված է Գրադարանի նոր կայքում <https://nla.am/>՝ կառուցվածք, գունային սխեմա, թույլ տեսողությամբ մարդկանց համար աջակից գործիքակազմ:

2023 թ. Գրադարանը դարձավ Մատչելի գրքերի կոնսորցիումի (Accessible Books Consortium) անդամ, ինչը հնարավորություն ընձեռեց իրականացնել Համաշխարհային մտավոր սեփականության կազմակերպության (WIPO) ծրագրերից մեկը՝ տպագիր գրքերը փոխակերպել մատչելի ձևաչափերի և հասանելի դարձնել հատուկ կարիքներով անձանց համար: Մատչելի ձևաչափերի փոխակերպման ծրագրային ապահովումներով աշխատելու և տար-

բեր ձևաչափերի ու դրանց համար կիրառվող սարքերի առանձնահատկություններին տիրապետելու համար Գրադարանի մասնագետները նախագծի շրջանակում վերապատրաստվել են. EPUB3, DAISY տեքստ, DAISY աուդիո (սինթետիկ խոսք), DAISY աուդիո (մարդկային շարադրանք), Բրայլի պատրաստի ֆայլեր (BRF), լայնաֆորմատ ֆայլեր /EPUB3, DAISY text, DAISY audio (synthetic speech), DAISY audio (human narration), Braille ready files (BRF), Large print files/: Տպագիր արտադրանքը մատչելի ձևաչափերի փոխակերպումը հնարավոր դարձավ 2022 թվականի սեպտեմբերի 1-ին, «Կույրերի, տեսողությունից հաշմանդամություն ունեցող կամ ընթերցողության ֆունկցիայի այլ դժվարություններ ունեցող անձանց համար հրատարակված ստեղծագործությունների մատչելիությունը դիտարկելու մասին» Մարաքեշի պայմանագրի ուժի մեջ մտնելուց հետո: Թեև Պայմանագիրը վավերացնելու համար «Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը (2006) չի փոփոխվել, այդուհանդերձ Հայաստանի գրադարանները կարող են պատրաստել և հաշմանդամություն ունեցող անձանց տրամադրել մատչելի ձևաչափով պատճեններ (այդ թվում՝ սահմաններից դուրս)՝ առանց իրավատերերից թույլտվություն խնդրելու: Դա պայմանավորված է նրանով, որ Հայաստանի Սահմանադրությամբ Հանրապետության կողմից վավերացված միջազգային պայմանագրերն ունեն անմիջական ազդեցություն, ինչը նշանակում է, որ պայմանագիրն ինքնաբերաբար դառնում է օրենք՝ առանց օրենսդրության կիրառման անհրաժեշտության:

Ի թիվս տարբեր նախաձեռնությունների և միջոցառումների՝ հատուկ կարիքներով մարդկանց համար Գրադարանի առաջին հարկում նախատեսվում է ստեղծել Աջակից ընթերցասրահ՝ համապատասխան տեխնիկայով, կահույքով ու ժամանակակից անհրաժեշտ միջոցներով հագեցած: Ընթերցասրահը նաև դիտարկվում է որպես լսարան՝ հատուկ կարիքներով մարդկանց ժամանակակից տեխնոլոգիաներին ծանոթացնելու և մատչելի ձևաչափերից օգտվելու հմտություններն ու կարողությունները բարձրացնելու համար:

ԿԶՆ-երի իրականացման համար անհրաժեշտ են համակարգված նախաձեռնություններ և գործողություններ.

- Բարձրացնել գրադարանների տեսանելիությունը և անձնական զարգացման ու սոցիալական բարեկեցության վրա դրանց ազդեցությունը,
- Երաշխավորել բոլորի համար տեղեկատվության, մշակույթի և գիտելիքի հասանելիություն,
- Նախագծել, պլանավորել և տրամադրել նոր ծառայություններ՝ նկատի ունենալով 2030 թ. օրակարգի հեռանկարը՝ գրադարանների զարգացման, հավաքածուների, տեղեկատու արտադրանքի և ծառայությունների ընդլայնման համատեքստում,
- Տվյալների վերամոդելավորում, ստեղծում և շահագործում ԿԶՆ-ի վրա հիմնված գրադարանային նախագծերի պատշաճ գնահատման համար՝ ավելի ճշգրիտ և վերօգտագործելի տվյալների միջոցով: Ազդեցության հետազոտությունները պետք է վերլուծեն հասարակության, հաստատությունների ու անհատների վրա գրադարանային նախագծերի ազդեցությունը:

Կայուն ապագայի առաջընթացի համար ուղենշված գործընթացների ու գործողությունների հաջող իրականացումը պահանջում է նախնառաջ թվային հմտությունների զարգացում՝ ազգային ժառանգության առցանց հասանելիությունը և հանրության ներառականությունը ապահովելու համար:

Գրադարանը կշարունակի տպագիր ժառանգության թվայնացման միջոցով բարելավել թվային բովանդակության որակն ու ձևաչափերը՝ խթանելով հասարակության թվային մտածելակերպը, գիտելիքները, հմտություններն ու կարողությունները:

SUMMARY

The National Library of Armenia, a vital public institution, has played a crucial role in accumulating a vast database of human knowledge over its century-long existence. Emphasizing the importance of making its collections accessible and usable, the library has adapted its priorities in response to challenges posed by the pandemic and war. Aligning with the United Nations' Sustainable Development Goals (SDGs) introduced in 2017, libraries, including the National Library of Armenia, contribute significantly by promoting literacy, ensuring free information availability, and fostering safe and inclusive spaces. The integration of libraries into the SDGs is rooted in their role as primary suppliers of information, supporting the broader goals of sustainable development.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Barbara Lison, Alexandra Hinz LIBRARIES EXIST TO SERVE THE SUSTAINABLE DEVELOPMENT GOALS: AN INTERVIEW WITH BARBARA LISON. 03.07.2023, [Electronic Publication] URL: <https://blog.degruyter.com/libraries-exist-to-serve-the-sustainable-development-goals-an-interview-with-barbara-lison/>, 10.11.2023.
2. Libraries and the Sustainable Development Goals a storytelling manual, 2018, [Electronic Publication] URL: <https://www.ifla.org/wp-content/uploads/2019/05/assets/hq/topics/libraries-development/documents/sdg-storytelling-manual.pdf>, 10.11.2023
3. UNESCO World Atlas of Languages: summary document, 2021, [Electronic Publication] URL: <https://unesdoc.unesco.org/ark:/48223/pf0000380132/PDF/380132eng.pdf.multi.>, 10.11.2023.

**ԳՐԱԴԱՐԱՆԻ ԵՎ ԳՐԱԴԱՐԱՆԱՎԱՐԻ ԴԵՐԻ ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄԸ
ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ**

Բանալի բառեր՝ գրադարանային գործ, գրադարանավար, գրադարան, գրադարանագիտություն, տեղեկատվական հոսք, նոր տեխնոլոգիաներ, 21-րդ դար, գիտելիք, մարտահրավերներ և հնարավորություններ:

Keywords: librarianship, librarian, library, library science, information flow, new technologies, 21th century, knowledge, challenges and opportunities.

Դեռևս հնագույն ժամանակներից պետությունների հզորությունը չափվել է բնական պաշարների հարստությամբ, տարածքի մեծությամբ, բնակչության թվաքանակով, տնտեսական, ռազմական, մշակութային, կրթական և այլ համակարգերի և հատկորոշիչների զարգացվածությամբ: Թվարկածներից առանձնացնելով մշակութային բաղադրիչը՝ վստահաբար կարող ենք փաստել, որ վերջինիս պահպանման, փոխանցման, առավելապես զարգացման տեսանկյունից անգնահատելի դերակատար է հանդիսանում գրադարանը, որը ազգերի պատմության՝ դարերից փոխանցվող գրի ու գրքի պահպանման կարևորագույն պահոցներից է հանդիսանում: Ռուս մատենագետ, գրադարանավար, արվեստի պատմության և մանկավարժական գիտությունների թեկնածու Բորիս Վոլոդինը գրում է. «Գրադարանը, որպես հատուկ գործառնություն կատարող հաստատություն, ի հայտ եկավ մարդկային քաղաքակրթության զարգացման որոշակի փուլում: Այն հայտնվեց մի դարաշրջանում, երբ մարդը սկսեց ուսումնասիրել ֆիզիկական և զգայական իրական աշխարհը...: Գրադարանների պատմությունն, այսպիսով, ունի որոշակի ելակետ: Առաջին գրադարանների ի հայտ գալը որպես գրավոր փաստաթղթեր հավաքող և պահպանող հաստատությունների, պայմանավորված էր մարդկանց կյանքում որոշակի փոփոխություններով և գրավոր խոսքի փոխանցման անհրաժեշտությամբ» [Володин, 2004, 5]:

Պետությունը հզոր է ուժեղ գիտակցականությամբ: Գրադարանի աշխատանքը գաղափարական տեսանկյունից կրում է դաստիարակչական և լուսավորչական բնույթ, քանի որ գիրքը վիթխարի ուժ է: Հետևաբար, գրադարանների դերը մեծ ազդեցություն ունի կրթության զարգացման գործընթացում: Գրադարանը, հանդիսանալով պետական կառուցվածքային միավոր, իր գործունեության շրջանակներում ոչ միայն անմասն չի մնում կրթության զարգացման միտումներից, ավելին, թելադրողի դերում է վերջինիս փոխանցման համատեքստում: Գրադարանները մեր օրերում ձեռք են բերել նոր հնչեղություն՝ վերածվելով խոշորագույն տեղեկատվական կենտրոնների: Հարահոս փոփոխվող աշխարհում, սրընթաց արագությամբ զարգացող տեխնոլոգիական-տեղեկատվահաղորդակցային միտումները յուրաքանչյուր զարգացող պետության ստիպում են որդեգրել կրթության որակը բարձրացնող ռազմավարություններ: Սա ցուցիչ է, որ գրադարաններն այս գործընթացում ունեն հատուկ նշանակություն: Համապատասխանաբար, գրադարանի կրթական գործառնությունը ընթերցողի տեղեկատվական պահանջները բավարարելու համատեքստում է: Բացի ակադեմիական, պարտադիր կրթական ծրագրերի իրականացման պարագայում գրադարանի տրամադրած տեղեկատվության կարևորությունից, այն նշանակալի է նաև անհատի ինքնազարգացման տեսանկյունից, որտեղ վերջինիս առջև բացվում է աշխարհի անսահմանությունն ու այն ճանաչելու անձայրածիր հնարավորությունը: Այս փոփոխություններն, իհարկե, իրենց մեջ մեծ մարտահրավերներ են պարունակում գրադարանների համար, սակայն, պետք է հավասարաժեշտ գնահատել բոլոր հնարավորությունները, անցկացնել կարիքների գնահատում, աշխատել

վերցնել այն նորն ու ժամանակակիցը, որը գրադարանն ավելի գրավիչ, հետաքրքիր ու հուսալի կդարձնի ընթերցողի համար:

21-րդ դարի հասարակությունների համար գրադարաններն ունեն չափազանց մեծ դերակատարում: Գրադարաններն են ապահովում ցանկացած ոլորտի վերաբերյալ տեղեկատվական հասանելիություն՝ մշակութային, տնտեսական, կրթական, սոցիոլոգիական, քաղաքական և այլն: Գրադարանը տեղեկատվություն մատակարարող կարևոր կառույցներից է հանդիսանում: Ի տարբերություն դասական, ավանդական գրադարանի՝ ժամանակակից աշխարհում գրադարանները ծառայությունների լայն շրջանակ են առաջարկում՝ ներառելով թվային ռեսուրսների ահռելի շտեմարաններ: Ըստ էության, գրադարանը անհատի գրագիտության և ինքնագարգացման համատեքստում մեծ գործոն է հանդիսանում, ինչը ողջ կյանքի ընթացքում է ուղեկից լինում նրան: Կարող ենք փաստել, որ վերը նշած դասական գրադարանին տեղեկատվական առաջընթացը բերել է «ինքնության ճգնաժամի»: Այս երևույթը պարունակում է և՛ հնարավորություններ, և՛ մարտահրավերներ: Հարկավոր են այնպիսի ռեսուրսներ, արդյունավետ ռազմավարություն, ճիշտ ընտրված մարտավարություն, որոնք մարտահրավերները կարողանան դարձնել հնարավորություններ:

21-րդ դարում գրադարանը, հանդիսանալով մշակութային օջախ, ներկայանում է ավելի լայն հնարավորություններով՝ գրավիչ դառնալով ցանկացած նախասիրության ընթերցողի համար, ունենալով ամենահարմարավետ պայմանները՝ դառնում է մշտական վայր ուսումնասիրություններ և հետազոտություններ կատարելու, շնորհանդեսներ անցկացնելու, կինոդիտման համար՝ վերածվելով մինչև անգամ հանգստի սենյակներում ազատ ժամանակ անցկացնելու հնարավորության: Սա էապես փոխում է գրադարանավարի՝ հին պատկերացումներն ունենալու կարծրատիպը: Այս համատեքստում տեղին է տեխնիկական գիտությունների թեկնածու, գրադարանավար, ճարտարագետ Տիգրան Զարգարյանի հետևյալ միտքը. «Տեխնոլոգիական զարգացումներին համահունչ ձևավորվում է գրադարանավարի նոր կերպարը՝ դրսևորվելով որպես

- տեղեկատվական գիտության բնագավառի փորձագետ, ով տիրապետում է տվյալների որոնման ու արտածման, գիտելիքի կառավարման, տեղեկատվության նախագծման ու մատուցման մեթոդաբանությանը,
- կառավարիչ, ով համակարգում է տարբեր ծրագրեր՝ նախագծելով ապագայի գրադարանի դերը և զարգացման հեռանկարները հարափոփոխ աշխարհում,
- բարձր տեխնոլոգիաների մասնագետ,
- ստրատեգիական պլանավորող» [Զարգարյան, 2016, 5]:

Գրադարանավարի գործունեության մասին բելգիացի գրող, մտածող, փաստաթղթագետ, մատենագետ, իրավաբան և խաղաղության առաջամարտիկ Փոլ Օտլեն գրել է. «Գրադարանավարը կազմակերպում և ղեկավարում է գրադարանը: Գրադարանավարը միաժամանակ դաստիարակող է հանդիսանում մարդու գիտելիքի, աշխատանքի, կառավարչի և կազմակերպողի: Բարձրագույն նպատակը, որ գրադարանավարը պետք է ձգտի դնել իր առջև, սովորել հասկանալն է, թե ինչ կարող է անել գիրքը: Գրադարանավարը պետք է առաջնորդվի երեք գաղափարով՝ 1) մտավոր գաղափարների. մշտապես հիշել, որ գիրքը, հատկապես գրադարանը վերաբերում են գիտական արժեքների, էսթետիկայի, բարոյական և հոգևոր ոլորտներին, 2) տեխնիկական գաղափարների. ձգտել նրան, որ ցանկացած աշխատանքի մեկնարկ իրականանա տեխնիկապես հագեցած, լավագույն մեթոդների, նյութերի, գործիքակազմի, անձնակազմի առկայությամբ և դրանով հասնել առավելագույն արտադրողականության, 3) սոցիալական գաղափարների. ձգտել շոշափելի, իրական հասարակական աշխատանքի, ցանկանալ մեծ թվով մարդկանց աշխատանքից օգուտ քաղել, աշխատել հասարակության բարելավման ուղղությամբ...» [Օտլեն, 2004, 143]: Գրադարավար-ընթերցող երկմիասնության մասին խոսույթն անմասն չի մնում վերջիններիս առնչվող իրավունքների և պարտականությունների կատարման հանգամանքից, որը յուրաքանչյուր պետությունում ամ-

րագրվում և սահմանվում է գրադարանների մասին օրենքների շրջանակներում: Սա հիշեցում է էթիկական վարմունքի, աշխատանքային մշակույթի մի շարք առանձնահատկություններին տիրապետելու անհրաժեշտության մասին: ՀՀ-ում դրանք ամրագրված են «Գրադարանների և գրադարանային գործի մասին» օրենքի հետևյալ կետերով.

«Գրադարանի ծառայություններից օգտվողների իրավունքները՝

1. Գրադարանի ծառայությունից օգտվողներն իրավունք ունեն՝

1) օգտվելու գրադարանի հավաքածուից՝ սույն օրենքով, այլ օրենքներով և իրավական ակտերով սահմանված կարգին և գրադարանից օգտվելու կանոններին համապատասխան (բացառությամբ օրենքով սահմանված դեպքերի)

2) օգտվելու միջգրադարանային բաժնույթի ծառայություններից

3) անվճար ստանալու տեղեկույթ գրադարանային հավաքածուներում ընդգրկված պահանջվող փաստաթղթի վերաբերյալ

4) օգտվելու գրադարանի ընտրության և մատչելիության իրավունքից՝ իր պահանջմունքներին և հետաքրքրություններին համապատասխան:

2. Ֆիզիկական սահմանափակումներ ունեցող անձինք իրավունք ունեն գրադարանային ծառայություններից օգտվելու համապատասխան սպասարկման այլ միջոցներով:

Գրադարանի ծառայությունից օգտվողների պարտականությունները՝

1) Գրադարանի ծառայությունից օգտվողները պարտավոր են պահպանել գրադարանի ծառայություններից և գրադարանային հավաքածուից օգտվելու կանոնները

2) Գրադարանի հավաքածուին և (կամ) այլ գույքին վնաս պատճառելու դեպքում գրադարանի ծառայությունից օգտվողը վերականգնում է գրադարանի հավաքածուն և (կամ) այլ գույքը կամ փոխհատուցում դրանց շուկայական արժեքի չափով: Գրադարանային հավաքածուներից օգտվելու կանոնները խախտելու դեպքում գրադարանի ծառայությունից օգտվողը պատասխանատվություն է կրում օրենքով սահմանված կարգով» [ՀՀ օրենքը «Գրադարանների և գրադարանային գործի մասին», 2012]:

Յուրաքանչյուր պետություն, որն ունի մշակութային ժառանգություն, պարտավոր է պատշաճ կերպով զբաղվել դրա պահպանմամբ: Ուստի, գրադարանը ևս մի պահոց է, ինչին պետք է ուշադրություն դարձնել պետական բարձր ատյանների շրջանակներում, քանի որ հենց գրադարաններում են ամփոփված քաղաքականության, տնտեսության, մշակույթին և մի շարք այլ ոլորտներում պետության զարգացմանն օժանդակող տեղեկատվական աղբյուրները: Գրադարանների պահպանման համար անհրաժեշտ են մի շարք ռեսուրսներ՝ ի թիվս մարդկային, տարածքային, ֆինանսական, տեխնիկական հագեցվածության, ժամանակային և մի շարք այլ ռեսուրսների, որոնք ժամանակի թելադրանքով դառնում են ավելի բազմազան, պահանջում ավելի մեծ ներդրում և ջանք: Առանց վերոնշյալ ռեսուրսների՝ գրադարանները չեն գործում կամ գործում են ավելի թույլ և դանդաղ ռիթմով և ամենակարևորը՝ կորցնում են իրենց գրավչությունը գլխավոր շահառուների՝ ընթերցողների շրջանում: Այս ամենի հանրագումարում գրադարանի իրականացրած գործունեությունը արդյունավետության տեսանկյունից դառնում է շատ ցածր և ցավալի է, սակայն իրականություն, որ բեռ է դառնում պետության համար: Ուստի, հարկ է ամենամեծ պատասխանատվությամբ մոտենալ գրադարանային գործին՝ որպես հասարակական պատ և հանրօգուտ աշխատանքի:

Գրադարանային գործը տեղեկատվական հոսքերի թելադրանքով օրեցօր դառնում է ավելի բազմազան, դրա լույսի ներքո պահանջում է կիրառելու նոր գործիքակազմ և առաջնորդվելու ժամանակի զարգացմանը համընթաց:

21-րդ դարում, ակնհայտ է, գրադարանավարի աշխատանքն այն չէ, ինչ նախկինում էր: Այսօր նրա գործառույթների շրջանակն այնքան է ընդլայնվել, որ սպասարկողից վերաճելով դարձել է մենեջեր-կառավարիչ: Գրադարանավարը գրադարանում քաղաքականություն է մշակում, ապահովում արագ հասանելի, ամփոփ տեղեկատվություն:

Փոլ Օտլեն գրում է. «Գրադարանի զարգացումը գնացել է գրքի, մշակույթի և հոգևոր զարգացմանը զուգահեռ: Նրա զարգացումն ուղղակիորեն ազդել է ընդհանուր հասարակական մտքի և գիտական հետազոտությունների վրա: Գրադարանների ստեղծումն ու գործունեությունը զարգացավ գրքերի և ընթերցողների քանակի ավելացման շնորհիվ, մարդկանց ստիպելով հավաքելու գրքերի մեծ քանակություն, ավելի ու ավելի համախմբված չդժվարացնելով գրքերի հասանելիությունը» [Օտլե, 2004, 73]:

Գրադարանավարը մասնագետ է, որը գլխավոր պատասխանատուներից է համարվում փաստաթղթային տեղեկատվական բովանդակության փոխանցման, արխիվացման գործում: Գտնվելով գրադարանում, գրադարանավարը, անկախ իր կամքից, գտնվում է ինքնագարգացման գործընթացում՝ ամբարելով տեղեկատվության նոր պաշարներ ամենատարբեր բնագավառներում: Հայ խոշորագույն գրադարանագետների, մատենագետների և բանասերների այս ոլորտում մեծագույն ավանդ ունեցած երախտավորների անունները շատ են՝ Գրիգորիս Գալեմքարյան, Գարեգին Զարբհանյան, Թեոդիկ, Ամալյա Կիրակոսյան, Քնարիկ Կորկոտյան, Բալաբեկ Մելյան, Արմենակ Միրզոյան, Նինել Ոսկանյան, Օհան Չուբարյան, Սենեքերիմ Տեր-Հակոբյան և այլն:

Ի հակադրություն արդեն իրականացած և ապագայում սպասվող փոփոխությունների ու զարգացումների՝ գրադարանավարի աշխատանքի առանցքում չեն լինում փոփոխություններ: Գրադարանային գործի առաքելությունն ու աշխատանքի առանցքը մնում է հաստատուն, պարզապես նոր գործիքակազմի կիրառությամբ է այն գործառնվում: Սրա արդյունքում գրադարանավարի աշխատանքը կարելի է դասել ամենաբարդ մասնագիտություններից մեկի շարքում, որն անդադար ունի զարգացման, ինքնակատարելագործման կարիք: Ի հակադրություն այն փաստին, որ գրադարանավարի աշխատանքը բարդագույն մասնագիտություններից է դարձել, նշենք, որ որպես մարդասիրական՝ այն մշտապես է եղել այդպիսին: Մա մի ճյուղ է, որն իր նպաստն է բերում երկրի մտավոր, հոգևոր, մշակութային և այլ ոլորտների զարգացման տեսանկյունից, ապահովում հասարակության բարձր իրավագիտակցություն, պատրաստում որակյալ և մրցունակ մասնագետներ, ուսումնասիրում գրադարանային գործի կազմակերպման հիմունքները, ապահովում գրադարանային գրացուցակներ, պլանավորում, նորմավորում, կազմակերպում, հաշվառում և մի շարք այլ կարևորագույն գործառնություններ ապահովում սույն ոլորտի գործունեության համար:

Քաղաքակրթության զարգացման գլխավոր ցուցիչներից կարող ենք համարել նաև գրադարանների ստեղծումը: Հայտնի է, որ դեռևս հնագույն ժամանակներից մարդկության համար կարևոր է եղել սեփական գրի պահպանումը, փոխանցումը սերնդեսերունդ, որը կարող էր լինել իրենց գոյության ապացույցներից ամենաարժանահավատը:

Ազգային ժառանգությունը լավագույնս պահպանելու համար հարկ էր ստեղծել գրադարաններ, որտեղ գետեղված կլինեին ազգի պատմության ամբողջ հիշողությունը: Ժամանակակից աշխարհում գրադարանը խաղաղության, ներդաշնակության և կարգապահության միջավայր է հանդիսանում: Այն մարդու համար ինքնաիրացման հրաշալի հարթակ է, վայր, որն առաջին հերթին մարդուն ավելի մոտ է դարձնում գիտակրթական նպատակների իրականացմանը, կայունացմանն ու դրսևորմանը: Գրադարանի առաքելությունը չի ավարտվում միայն ընթերցողի՝ գիտական գործունեության ճանապարհին լուծումներ տալու շրջանակով, այլ լավագույն գործընկերներից է հանդիսանում մշակութային հաստատությունների հետ, որոնց միջև համագործակցությունը ավելի կուռ և ամուր է դարձնում միմյանց միջև գործունեության կազմակերպումը:

Գրադարանային գործի վերաբերյալ ուսումնասիրություններն անգամ նույնը չեն, մասնագիտական գրականության մեջ, ինչն ավելի հնարավոր է դարձնում գրադարանի՝ նորարար դառնալու, նորովի ներկայանալու հանգամանքը: Գրադարանային գործի վերաբերյալ խոսույթը, լեզվամտածողությունն է փոփոխվել, ի դեմս մի շարք նոր հասկացությունների՝ նորարար, թվային գրադարաններ, գրադարանային մարքեթինգ, գրադարանային-տեղե-

կատվական աղբյուրներ, տեղեկատվական հոսքեր և այլն: Գրադարանային ոլորտը պահանջում է համակարգային և հատուկ մոտեցում, որն ունակ կլինի կրթելու և պատրաստելու ժամանակի պահանջներին և չափորոշիչներին բավարարող մասնագետներին: Տեխնոլոգիական դարաշրջանում յուրաքանչյուր ոլորտ բխվում է մարտահրավերների, որոնք իրենց մեջ նաև մեծ հնարավորություններ են պարունակում: Գրադարանային ոլորտը ևս, անմասն չմնալով, թվային դարաշրջանում ենթարկվել է մի շարք կերպափոխումների:

Սույն հոդվածով ներկայացրել ենք առաջարկներ, որոնք կօժանդակեն և կգարգացնեն ոլորտը.

- Մասնագիտական առաջխաղացմանն ուղղված հստակ քայլեր,
- Յուրաքանչյուր մասնագիտական քայլին ուղղված հատուկ գործառնությունների սահմանում,
- Ներհայաստանյան վերապատրաստումներին ուղղված գործուն քայլեր, որոնք ավելի լայնամասշտաբ հնարավորություն կտան գրադարանավարին ավելի կատարելագործելու և ընդլայնելու մասնագիտական-տեղեկատվական կարողություններն ու հմտությունները,
- Միջազգային չափորոշիչներին համապատասխան վերապատրաստումների կազմակերպում՝ ըստ ուղղության պահանջարկի՝ օրինակ սպասարկման, գրացուցակների կազմման, գրադարանային մարքեթինգի, գրքերի վերականգնման և այլն, որոնք կարող են լինել և՛ կարճաժամկետ, և՛ միջնաժամկետ, և՛ երկարաժամկետ ձևաչափով,
- Գրադարաններում աշխատանքային համագգեստի կրման պարտադիր պայման,
- Մասնագիտական շարժունություն, որպեսզի տեղեկատվություն մատակարարող այլ օղակներ ևս լինեն,
- Արտասահմանյան նոր համագործակցությունների հաստատում,
- Պետական բուհերում գրադարանային-տեղեկատվական աղբյուրներ վերնագրով մագիստրոսական ծրագրերի ուսուցման առարկայաշարերի ներդրում և զարգացում, ինչպես բակալավրիատի, մագիստրոսական ծրագրերի, այնպես էլ հետբուհական կրթության շրջանակներում սույն ուղղությամբ խթանող հնարավորությունների: Այս համատեքստում նշենք, որ ՀՀ-ում գործում է ՀՀ ԳԱԱ Գիտակրթական միջազգային կենտրոնի «Գրադարանային- տեղեկատվական աղբյուրներ», Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի Կուլտուրայի ֆակուլտետի «Գրադարանագիտություն», Էջմիածնի Վարդգես Համազասպյանի անվան պետական քոլեջի «Գրադարանային գործ» և Մխիթար Մեբաստացի կրթահամալիրում գործող «Գրադարանային գործ» կրթական ծրագրերը,
- Աշխատանքի կարիքների գնահատման հստակ և ստույգ չափորոշիչների սահմանում,
- Պետության կողմից աջակցություն և օժանդակիչ մշակութային զարգացմանն ուղղված բոլոր իրատեսական նախաձեռնությունների՝ ի թիվս պետական աջակցության ծրագրերի, ժամանակի պահանջին բավարարող ոլորտի մասնագետների կրթում, գիտաժողովների կազմակերպում, գրադարանային աղբյուրագիտության մասնագետների պատրաստում, միջազգային փորձի փոխանակում և այլ գործոններ,
- Գրադարանային գործի պատմության և վերջինիս առնչվող հարակից թեմաների հետազոտությունների ու ուսումնասիրությունների խթանում,
- Գրադարանավարին մոտիվացնող աշխատանքային, ստեղծագործական բարենպաստ միջավայրի ստեղծում, որը վերջինիս կմղի արարելուն և հավելյալ բարիք ստեղծելուն, աշխատակազմի անընդհատական վերապատրաստման,
- ՀՀ-ում գրադարանային գործի ուղղությունը զարգացնող ՀԿ-ների գործունեության խթանում,
- Գրադարանային ոլորտի մասնագետների՝ գիտելիքների մատուցման դիմաց տրվող աշխատավարձի չափի լրջորեն վերանայում:

SUMMARY

The relevance of this article is due to the fact that the information explosion, the digital age presents us with a completely different set of tools, provided services and mechanisms, and the development of activities with a new logic. The article refers to the significance and role of the library sector in the life of 21st century societies. In the era of information explosion, one of the greatest challenges of the library sector is the influence of artificial intelligence, which reduces the importance of the human factor. Thus, the circumstance of the librarian carrying out a function in the library is reduced incomparably, despite the fact that the reader gets any information he needs, saving space and time. This conjuncture gives rise to deep thinking among representatives of the library sector. In this case, each library should study the international experience, prospectively repeating what is useful, which will only improve the latter's work. This should be done taking into account a number of features of what kind of library we are dealing with, national, academic, scientific, children's, etc.

However, with good library management, the right strategy and the necessary resources, it is possible to turn challenges into favorable conditions, taking advantage of new and limitless opportunities.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Զարգարյան Տ., Հայաստանում թվային գրադարանի ստեղծման պատմությունից // «Բանբեր Հայաստանի գրադարանների» գիտամեթոդական հանդես, Երևան, «Գիրք» հրատարակչություն, 2016, № 1, 2-7 էջ, [Էլեկտրոնային հրատարակչություն] URL: <https://arar.sci.am/dlibra/publication/289581/edition/265885/content> 04.09.2023:
2. ՀՀ օրենքը «Գրադարանների և գրադարանային գործի մասին» // Ընդունված է 2012 թվականի մարտի 21-ին: [Էլեկտրոնային հրատարակչություն] URL: <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=75198>, 21.09.2023:
3. Володин Б.Ф. Всемирная история библиотек, Санкт-Петербург, Издательство «Профессия», 2004, 432 с. [Электронный ресурс] URL: <http://surl.li/pdngu>, 10.10.2023.
4. Отле П. Библиотека, библиография, документация, Москва, ФАИР-ПРЕСС, 2004, 350 с. [Электронный ресурс] URL: <https://shorturl.at/tHNX2>, 11.01.2024.
5. The Librarians role in promoting good governance. [Electronic Publication] URL: [The Librarians' role in promoting good governance. \(linkedin.com\)](#) 01.11.2023.

<https://doi.org/10.52027/18294685-sag2023.2>

ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՍԻՐՈՒՆ
Գեղարքունիքի միջնակարգ դպրոց

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆԸ՝ ՈՐՊԵՍ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ

Բանալի բառեր՝ գրադարան, գրադարանավարներ, համաշխարհային մարտահրավերներ, համագործակցություն, նոր գաղափարներ, պատգամ:

Keywords: library, librarians, global challenges, cooperation, new ideas, message.

Մեծ է ընթերցանության կարևորությունը, նրա դերն ու նշանակությունը ժողովուրդների, ազգերի, հասարակությունների զարգացման մեջ: *Ընթերցանության խթանմանը և գրագիտության զարգացմանը հասնելու համար պետք է ունենալ հստակ նպատակներ.*

1. Ինտեգրվել համաշխարհային գրադարանային ցանցի աշխատանքներում՝ տեղեկանալով նորություններին, առաջընթաց զարգացումներին, առկա մարտահրավերների հաղթահարման ուղիներին,
2. Նպաստել գրագիտության զարգացմանը՝ օգտագործելով դեպի ընթերցանություն տանող հնարավոր ուղիները,
3. Անմասն չմնալ համացանցային գոեհկաբանության վերացմանն ուղղված աշխատանքներից,
4. Տեղեկացված լինել կլիմայական փոփոխություններին վերաբերող հարցերին, բարձրաձայնել խնդիրները, կարևորել մարդկային գործոնի ազդեցությունը այդ համատեքստում՝ այդ թեմաներով լույս տեսած բրոշյուրների, հոդվածների ընթերցանության խթանման միջոցով, գրքերի քննարկումների, զրույցների, թեմատիկ գրադարակների ստեղծման օգնությամբ,
5. Մասնակից լինել գլոբալ տաքացման հետևանքով առաջացած խնդիրների հաղթահարմանը՝ որպես երկրների մշակութային համագործակցության առաջնահերթություն,
6. Մշակութային ժառանգության պահպանության մեջ ունենալ խնդիրների բարձրաձայնման հնարավորություն,
7. Հաշվի առնելով միջազգային փորձը և հիմք ընդունելով դրանք՝ առկա խնդիրների բարձրաձայնումը, տեղեկացվածության աստիճանի ապահովումը դարձնել առաջնահերթություն,
8. Բնապահպանական մի շարք խնդիրների հաղթահարմանն ուղղված աշխատանքներին ընթերցողների մասնակցության ապահովումը՝ հենց դպրոցական նստարանից սկսած, դարձնել գործելակերպ,
9. Ամեն գնով նպաստել երկրի զարգացման արագ տեմպերին, որի դեպքում կկարողանանք ինքներս հոգավ մեր կարիքները, լուծել առաջացած խնդիրները՝ առանց որևէ մեկի հետ հույս կապելու,
10. Հետևել մարդասիրական վեհ գաղափարների պահպանմանը,
11. Հասնել գրադարանների դերի ու նշանակության, ոլորտային խնդիրների բարձրաձայնման, լուծման ուղիների առաջաջաման հնարավորության,

12. Հետևել գրադարանային ներուժի համախմբմանը, գրադարանների՝ որպես ռեսուրս կենտրոնների ձևավորմանը, նորարար գրադարանների փորձի ուսումնասիրմանն ու տեղայնացմանը

Խնդիրները.

1. Փորձել ներգրավվել համաշխարհային գրադարանային ցանցի աշխատանքներին,
2. Հասնել գրագիտության շարունակական զարգացմանը՝ օգտագործելով բոլոր հնարավոր ուղիները,
3. Մեր ներդրումն ունենալ համացանցային գոեհկաբանության եթե ոչ վերացման, ապա, գոնե նվազեցման մեջ:
4. Այդ թեմաներով լույս տեսած բրոշյուրների, հոդվածների ընթերցանության խթանման միջոցով, գրքերի քննարկումների, զրույցների, թեմատիկ գրադարակների ստեղծման օգնությամբ նպաստել կլիմայական փոփոխություններին վերաբերող տեղեկությունների իրազեկմանը՝ մասնակից լինելով խնդիրների հաղթահարմանը:
5. Հնարավոր բոլոր միջոցներով՝ ելնելով մեր երկրի ընտրած ռազմավարությունից, նպաստել երկրների մշակութային համագործակցությանը:
6. Մշակութային ժառանգության պահպանությանը մեջ ունենալ սեփական դերը
7. Ծանոթանալ միջազգային փորձին և հիմք ընդունելով դրանք՝ բարձրաձայնել առկա խնդիրները:
8. Հասցնել ընթերցողների գիտակցությանը, որ բնապահպանական խնդիրները բոլորինս են:
9. Հույս չկապել որևէ մեկի հետ և խնդիրների լուծման ուղիներ փնտրել:
10. Մարդասիրական վեհ գաղափարների պահպանումը դարձնել առաջնահերթություն:
11. Նպաստել գրադարանների դերի ու նշանակության բարձրացմանը:
12. Դառնալ գրադարանային համախմբված ներուժի անդամ՝ շարունակական փոխհամագործակցությամբ:

Կան ընթերցանության խթանման և գրագիտության զարգացման բազմաթիվ ուղիներ.

1. Թեմատիկ գրադարակների ստեղծում

Աշխատանքն ինքնին հետաքրքիր է, բնականաբար, այս ամենը պետք է արվի ժամանակակից մոտեցումներով: Եթե տարիներ առաջ թեմատիկ գրադարակները ստեղծում էինք ընթերցասրահում կամ գրադարանի մի անկյունում, այժմ դա արվում է նաև վիրտուալ եղանակով: Առաջինի դեպքում գրադարան հաճախողներն էին միայն հաղորդակից լինում տվյալ թեմային, վիրտուալ եղանակի դեպքում մենք նաև հնարավորություն ունենք ավելի շատ ընթերցողների ներգրավել դեպի ընթերցանության հորձանուտ:

2. Գրքի քննարկումների կազմակերպում

Այն ընթերցանության խթանման կարևոր բաղադրիչներից մեկն է, ինչը թույլ է տալիս ծանոթանալու նոր լույս տեսած գրքերի հետ, առավել խորը ուսումնասիրելու ազգային ու համաշխարհային գրականության տիտանների ստեղծագործությունները, վեր հանելու քննարկվող գրականության մեջ առաջ քաշված նոր և արդիական գաղափարները, անդրադառնալու ժամանակակից հիմնախնդիրներին, բարձրաձայնելու դրանք: Գրքի քննարկումների ընթացքում պետք է ոչ միայն կարողանանք շեշտը դնել մարդասիրական գաղափարների տարածմանը, լավ կամ վատ արարքի հանդեպ ապրումակցման անհրաժեշտությանը, միջանձնային հարաբերությունների խելացի կառուցմանը, սպորտի միջազգային նշանակությանը, այլև, օրինակ՝ ինտեգրել սպորտն ու գրադարանը՝ նպաստելով առաջընթաց զարգացման և ընթերցանության անքակտելի կապի բացահայտմանը:

3. Ֆլեշմոբ-վիկտորինաների կազմակերպում տարաբնույթ թեմաներով
 4. Առանձին գրքերի վերաբերյալ փոքրիկ՝ մի քանի վայրկյանանոց տեսանյութերի պատրաստում (ուղղորդված ընթերցանության խթանման հրաշալի միջոց է)
 5. Անդրադարձ ստեղծագործող երեխաների ստեղծագործություններին՝ ուղղորդում և խրախուսում
 6. Գրքերի ցուցահանդեսների կազմակերպում
 7. Տարատեսակ տեսանյութերի պատրաստում՝ «Միրենք բնությունը», «Հայրենասիրությունն սկսվում է ծննդավայրից», «Պայքարենք համացանցային գոեհկաբանության դեմ» և այլ շարքերից
 8. Կարևոր օրերի վերաբերյալ (հոբելյանների, հոբելյարների, պետական և ազգային տոների ու տոնակատարությունների) միջոցառումների նախապատրաստում և անցկացում:
 9. Ճանաչողական այցերի կազմակերպում
 10. Համագործակցություն տարբեր գրադարանների միջև (ինչպես հանրապետության ներսում, այնպես էլ՝ արտերկրում)
 11. Գրադարանի գրքային ունեցվածքի համալրում: Ի թիվս համալրման տարաբնույթ ձևերի՝ կարելի է գործածել նաև սեփական նախաձեռնությամբ իրականացվողները, ինչն ունի մի շարք առավելություններ: Օրինակ՝ մեր գրադարանում, ընթերցողների հետ միասին, որոշեցինք ինքներս էլ անմասն չմնալ գրադարանի գրքային ունեցվածքի համալրմանն ուղղված աշխատանքների կազմակերպումից: Արդյունքում՝ բոլորս միասին սկսեցինք դաշտ գնալ, հավաքել դեղաբույսեր, փաթեթավորել, ծնողների օգնությամբ վաճառել և գրքեր գնել՝ գրադարանի գրքային ունեցվածքը համալրելու համար: Այս ձեռնարկի իրագործումից մենք ունեցանք.
 - ա) Ընթերցողների թվի ավելացում: Ձեռք բերեցինք ոչ միայն նոր գրքեր, այլև ավելացավ ընթերցողների թիվը, քանի որ աշակերտներից շատերն անպայման ուզում էին ընթերցել իրենց ընկերների աշխատանքի արդյունքով ձեռք բերված գրքերը,
 - բ) Երեխաների միջև ավելի սերտացած փոխհարաբերություններ,
 - գ) Իրենց աշխատանքի կարևորության գիտակցումով մեծացող երեխաներ (այն խթան կհանդիսանա երեխաների կյանքում հետագա գործունեության ծավալման համար),
 - դ) Երեխաների միջև առողջ համագործակցության ապահովում,
 - ե) Դեղաբույսերի գործածության ավելացում (բոլորն էլ գիտեին դեղաբույսերի օգտակարության մասին, սակայն ոչ բոլորն ունեին դաշտ գնալու և դեղաբույս հավաքելու հնարավորություն՝ հատկապես տարեցները, ովքեր իրենց երկարակեցության և առողջ ապրելու գրավականը համարում էին հենց դեղաբույսերի գործածությունը),
 - զ) Նոր գաղափարների առաջաջում:
- Մեր պարագայում՝ քանի որ մեր գյուղը գտնվում է բարձրլեռնային գոտում, երեխաների, դեռահասների, պատանիների համար ժամանցի վայրեր չկան, և ձմեռն էլ շատ երկար է տևում, ընթերցողներիս հետ հաճախ ենք վայելում դաշտից մեր հավաքած դեղաբույսերով՝ դադձով, ուրցով, մասուրով, սրոհունդով, երիցուկով պատրաստված թեյերը և կազմում նոր ծրագրեր
12. Գրադարանային առօրյայի հետաքրքիր կազմակերպում (այստեղ ևս մեծ դեր ունեն նորովի մոտեցումները):
- Գրադարանային աշխատանքի հիմնական ուղղվածության հիմքում գերակա ուղղությունների պահպանումը (հայրենասիրական դաստիարակությունը, անդրադարձը համաշխարհային գրական հարուստ ժառանգությանը՝ բանաստեղծների ու արձակագիրների ստեղծագործություններին ու հոբելյաններին, մարդասիրական վեհ գաղափարներին հետամուտ լինելը, զլոբալ մարտահրավերներին արձագանքելը) կնպաստի ոչ միայն աշխատանքների արդյունավետությանը, այլև՝ երկրների զարգացմանն ուղղված քայլերի մշակմանն ու արդիականացմանը, փոխադարձ փորձի փոխանակմանը (կորոնավիրուսային համավա-

րակն ապացուցեց, որ ամբողջ երկրագունդը մի ամփի մեջ է և ունի բոլորիս ու յուրաքանչյուրիս հոգածության կարիքը):

Շատ կարևոր է գրադարանային աշխատանքի ընթացքում կարմիր թելով անցկացնել մարդկային այնպիսի որակների դաստիարակումը, ինչպիսիք են ազնվությունն ու արդարությունը, նվիրումն ու հավատարմությունը, համագործակցությունն ու փոխօգնությունը և, ընդհակառակը, վատ վերաբերմունք ձևավորել դավաճանության, ստի, կեղծիքի, նախանձի և այլ մերժելի երևույթների հանդեպ՝ յուրաքանչյուրիս ցավն ու ուրախությունը բոլորինս դարձնելով, դժվարությունները միասնաբար հաղթահարելով:

Վերոնշյալ գործողությունները համակարգված և արդյունավետ կազմակերպելու համար ավելի է կարևորվում գրադարանային վերապատրաստումների, համագործակցության, փոխօգնության և պատկան մարմինների կողմից վերահսկողության դերը: Այս ամենով հանդերձ՝ մենք շատ անհրաժեշտ ենք համարում միջազգային փորձի ուսումնասիրումը գրադարանների գործունեության, ընթերցանության խթանման ուղղությամբ, կարևորագույն նորությունների մշակումը և տեղայնացումը մեր երկրում, ինչը նորովի մոտեցումների հնարավորություն կտա մի շարք ոլորտներում: Այժմ վիրտուալ հնարավորությունները շատ մեծ են և մենք չպետք է բաց թողնենք դրանցից ոչ մեկը՝ զարգացնելու մեր երկիրը, ուշադրություն դարձնելու ամեն մի աննշան թվացող բնագավառի. մեր զինվորն իր կյանքը չի խնայել ու չի խնայում հայրենիքի պաշտպանության գործում:

Հայ գրքի տպագրության 510-ամյակին նվիրված՝ «Ժառանգության պահպանություն՝ հանուն կայուն ապագայի» գիտաժողովի անցկացումը ցույց տվեց, որ մեզ համար կարևոր է փոխադարձ համագործակցության հնարավորությունների ստեղծումը ոչ միայն մեր հանրապետությունում գործող գրադարանների, այլև արտերկրյա գրադարանների միջև: Իսկ գրադարանային համագործակցության ուղիների մշակումը, փոխադարձ այցելությունների կազմակերպումը, ծանոթացումը միջազգային փորձին՝ գրադարանային ոլորտում, շփումը գործընկերների հետ միայն խթան կհանդիսանա գրադարանային ոլորտի զարգացումն ապահովելու համար: Դա կարևոր է երկուստեք՝ գիտության տարբեր ճյուղերի ուղղությամբ առաջընթաց քայլերի ապահովման համար: Համագործակցության միջոցով, օրինակ՝ աստղաֆիզիկայի, բնապահպանության, կլիմայական փոփոխությունների, ռազմաարդյունաբերության, գյուղատնտեսության, զբոսաշրջության և այլ բնագավառներում, մենք կհասնենք ցանկալի և ողջունելի արդյունքի: Տեղին է հիշատակել հայությանն ուղղված՝ իրենց ապագան կառուցելու համախմբման կոչի պատգամը. «Ով հա՛յ ժողովուրդ, քո միակ փրկությունը քո հավաքական ուժի մեջ է» [Զարենց, 1968, 427] ակրոստիքոսի ձևով, երկրորդ տառերի հաջորդականությամբ գրել է հայ ժողովրդի մեծագույն բանաստեղծներից մեկը՝ Եղիշե Զարենցը իր «Պատգամ» բանաստեղծության մեջ՝ խորհրդային իշխանություններից թաքցնելով իր պատգամը, որն էլ հանդիսացավ նրան մահվան դատապարտելու պատճառներից մեկը:

Այսօր մեզ հարկավոր է չարենցյան պատգամը՝ գլոբալ իմաստով (գոյատևման, պայքարելու, համագործակցելու, զարգանալու, բարգավաճելու...) և ուղղված ոչ միայն հայ ժողովրդին. Ո՛վ ժողովուրդներ, մեր միակ փրկությունը մեր հավաքական ուժի մեջ է, քանի որ կան բազմաթիվ մարտահրավերներ, գլոբալ խնդիրներ, ահաբեկչության կազմակերպիչներ և հովանավորներ, որոնց դեմ պայքարելը միայնակ դժվար է՝ ցանկացած (զարգացած և ոչ զարգացած, ժողովրդավար և ոչ այնքան ժողովրդավար) պետությունների, ժողովուրդների ու ազգերի համար:

Նոր տեխնոլոգիաների կիրառությունները, 21-րդ դարի թռիչքային զարգացումները, արհեստական ինտելեկտի գոյությունը մեր՝ գրադարանային ոլորտի համար ունենալու են և՛ դրական, և՛ բացասական ազդեցություններ: Եվ պետք է քրտնաջան ու հետևողական աշխատանք տանել ետ չմնալու առաջընթաց զարգացումից՝ միևնույն ժամանակ օգտագործելով մեր ավանդական ու արդյունավետ մեթոդներն ու հնարները՝ հասնելու ցանկալի արդյունքի:

Համատեղելով մեր և արտերկրյա մեր գործընկերների կարողություններն ու հմտությունները, ի մի բերելով անցյալի փորձը, նոր ուղիների փնտրտուքը դարձնելով առաջնահերթություն, հետամուտ լինելով մեր ձգտումների ու նպատակների իրականացմանը, նպաստելով հնարավորինս շատ գրադարանների միջև համագործակցության հաստատմանը՝ կարող ենք գրադարանային վերը նախանշված բազմաթիվ ուղղությունները հասցնել նոր հանգրվանի: Ամեն դեպքում՝ համախմբումը, նվիրումը, աշխատասիրությունը, պրպտելու, նորն ու առաջավորը փնտրելու ջիղի, բավարար կամքի առկայությունը մեզ համար այլընտրանք չունի՝ կողմնակի ոչ ադեկվատ կարծիքներին դիմագրավելու և հակառակում համոզելու կարողունակության, տարաձայնությունների, տեխնիկական խնդիրների հաղթահարման համատեքստում:

SUMMARY

By combining the abilities and skills of ours and our partners abroad, bringing together the past experience, making the search for new ways a priority, pursuing the realization of our aspirations and goals, promoting the establishment of cooperation among as many libraries as possible, we can bring a number of library directions outlined above to a new milestone. In any case, consolidation, dedication, hard work, the vein to strive, to search for new and advanced, sufficient will has no alternative for us, in the context of overcoming disagreements and technical problems, the ability to face inadequate external opinions and convince otherwise.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Չարենց Ե., Երկերի ժողովածու 6 հատորով, հատոր 4, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1968, 626 էջ:

<https://doi.org/10.52027/18294685-ghh2023.2>

ՀՈՎՀԱՆՆԻՄՅԱՆ ԳԱՅԱՆԵ

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան

ՀԱՅՈՑ ԳՐԱՎՈՐ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՀԱՄԱԼԻՐ ԹՎԱՅՆԱՅՈՒՄԸ՝
ՈՐՊԵՍ ՊԵՏԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՐԱՎԱԿԱՆ

Բանալի բառեր՝ արդյունաբերական հեղափոխություն, գրավոր ժառանգություն, հաղորդակցություն, փաստագրված հիշողություն, լեզվական կորպուսներ, լեզվական գիտակցություն, ինքնագիտակցություն, ինտեգրում:

Keywords: industrial revolution, written heritage, communication, documented memory, language corpora, linguistic consciousness, self-consciousness, integration.

Հայոց գրավոր մշակույթ ասելով հասկանում ենք այն ամբողջ գրավոր ժառանգությունն ու արդի իրողությունը, որը կապվում է հայ ժողովրդի հետ՝ ձևավորման վաղ շրջանից մինչև մեր օրերը, վիմագիր արձանագրություններից մինչև երկաթագիր ձեռագրեր, զարդագիր մանրանկարներից մինչև տպագիր գրքեր և պարբերականներ: Գրավոր խոսքի զարգացումով է պայմանավորված կոնկրետ լեզվով խոսող հանրության հավաքական հիշողության փաստագրումն ու հանրային միասնական ձևավորումը: Վաղ գրային ժամանակներից սկսած, գրավոր են ազդարարվել իրավունքներն ու դրանց սուբյեկտները, դաշինքներն ու օրենքները, գրավոր խոսքն է ապահովել գիտելիքի հստակությունն ու սերունդների կրթության շարունակականությունը, դրանով են նախապատրաստվել հեղափոխությունները: Ավելին, ժամանակի և տարածության խոչընդոտները բացառելու համար, դեռ անտիկ ժամանակներում իշխանավորներն օգտվում էին միևնույն տեքստը տարբեր լեզուներով ներկայացնելու հնարից: Եվ այդ ջանքերն արդարացրել է ժամանակն ու մարդկության պատմական գիտակցությունը:

Համաշխարհային արդյունաբերական հեղափոխությունները ազդարարվել են գիտական խոշոր հայտնագործություններով և դրանց ազդեցությամբ՝ հաղորդակցության միջոցների թռիչքաձև զարգացումներով [Information and Communication Technology (ICT) Industry in the Fourth Industrial Revolution: Prospects and Challenges for Workers in Asia-Pacific, n.d.]: Առաջին արդյունաբերական հեղափոխությունը, որն սկսվեց XVIII դարի կեսերին, բնութագրվում է տնտեսության ագրարայինից արդյունաբերականի անցումով, և հաճախ կապվում է մեխանիկայի բնագավառում Իսահակ Նյուտոնի կատարած բացահայտումների հետ: Սակայն պետք է ընդունել, որ լուսավորության դարաշրջանը չէր սկսվի առանց XV դ. Գուտենբերգի տպագրության գյուտի, որը լայն տարածում գտավ XVI դարում [Johannes Gutenberg's Greatest Accomplishments - World History Edu, n.d.]: Արտադրության մեքենայացումը, երկաթի և ածխի արդյունահանման մեքենայացումը, գոլորշու էներգիայի և տպագրության գյուտը աշխուժացրին հասարակության հաղորդակցությունն ու կառուցվածքը: Զարգացան այն տարածաշրջանները, որոնք կարողացան ավելի արագորեն ներդնել նոր տեխնոլոգիաները: Հայ ժողովուրդն այստեղ մեծապես շահեց, երբ Հակոբ Մեղապարտը Վենետիկում հիմնեց առաջին հայալեզու տպարանը և 1512 թ. սկիզբ դրեց հայ տպագիր մշակույթին [Հայոց Մշակույթ - mfa.am, n.d.]: Դա նշանակում էր նոր՝ հզոր թարգմանչական շարժում, հայալեզու կրթության տարածում, մտավորականության ձևավորում, գաղափարական աճ, և լեզվի արդիականա-

ցում ու ստանդարտացում, որն այն դարձնում էր հասանելի և մատչելի հայ ժողովրդի ավելի լայն, այն ժամանակ արդեն աշխարհասփյուռ զանգվածների համար:

Երկրորդ արդյունաբերական հեղափոխությունը (1870-1914) հիմնականում պայմանավորված էր ներքին այրման շարժիչի, էլեկտրական էներգիայի և դրանց կիրառությամբ զարգացած արտադրության և հաղորդակցության միջոցներով, որոնք խթանեցին զանգվածային հաղորդակցությունը: Եվ կրկին, ծավալային և որակական գերազանցություն ստացան այն երկրները, որոնք առաջինը ներդրեցին նորարարական տեխնոլոգիաները: Մինչդեռ, բնական մեծ պաշարներ և մշակութային դարավոր ժառանգություն ունեցող ժողովուրդները հայտնվեցին կախյալ գաղութային վիճակում [Overview of the Second Industrial Revolution, n.d]: Հայ ժողովրդի համար սրանք եղան ազատագրական կոիվների ու գոյապայքարի տասնամյակներ, որոնք ավարտվեցին առաջին համաշխարհային պատերազմում տված դաժան կորուստներով և իր բնակության տարածքում կախյալ պետականության հաստատումով:

Երրորդ՝ հաշվողական տեխնոլոգիաների բերած հեղափոխությունը, մեկնարկը առավ քսաներորդ դարի երկրորդ կեսին, և էլեկտրոնիկայի, տեղեկատվական տեխնոլոգիաների և համացանցի ժայթքումային տարածմամբ ազդարարեց նոր փոփոխությունների սկիզբը, որոնց միջով այսօր անցնում է հայ ժողովուրդը՝ սփռված աշխարհով մեկ և իր պետության ներսում: Եվ եթե Հակոբ Մեղապարտի տպագրության գյուտը հայերենը դրեց այդ շարքի երրորդ տասնյակում, ապա այսօր՝ թվայնացված հաղորդակցության անցած լեզուների շարքում հայերենը, ըստ մի շարք թվայնացված տեղեկատուների, յոթերորդ տասնյակում է: Օրինաչափորեն, այս տվյալը բացատրվում է Հայաստանի՝ SS ոլորտում գրանցած առաջընթացով, ըստ որի այն ևս պետությունների ցանկի յոթերորդ տասնյակում է [UNECE, n.d.]

Ուշադրության արժանի է այն փաստը, որ բոլոր ժամանակներում, լեզվի պահպանության և զարգացման մեծագույն գրավականն եղել է և կա դրա գրավոր կրիչը. ո՞ր չափով, որ այն ծառայեցվել է լեզվի օգտագործմանը և տարածմանը, ա՞յդ չափով էլ պահպանվել ու զարգացել է լեզուն: Գրավոր կրիչի և ինքնին գրելու հարմարավետությունից է կախված նաև այդ լեզուն գործածող և կրող մարդկանց քանակը:

Միանգամայն հստակ է, որ տեխնոլոգիական ծառայությունների արագացման, հիբրիդային պատերազմների մեր դարաշրջանում, աճող հայ սփյուռքի ու պաշտոնապես վտանգված համարվող արևմտահայերենի անխուսափելի փոփոխության պարագայում, հայոց փաստագրված լեզվական գիտակցության թվային համակարգումը կարող է բազմակի նշանակության արդյունքներ ապահովել պետության տնտեսության, կառավարման, արտաքին և ներքին քաղաքականության, սփյուռքահայության կենտրոնացման, կրթության և մի շարք այլ ոլորտներում: Անհրաժեշտ է հավաքել պիտակավորված, լեզվաբանորեն լիարժեք մշակված թվային կորպուսներ, ժամանակին համընթաց և հաստատված՝ ինստիտուցիոնալ կարգով ապահովել դրանց շարունակական կայուն զարգացումն ու գործածությունը հիշյալ նպատակներով: Լեզվական կորպուսների կամ շտեմարանների գիտակրթական համակարգի ներդրումը ՀՀ բուհերից որևէ մեկում շեշտակի զարգացում կբերի՝ բացելով նոր հետազոտական և արդյունաբերական ոլորտներ թե՛ SS ոլորտին, թե՛ տեղիս և գլոբալ գիտելիքի իրազեկ կիրառությանը որոշումների ու գործադիր ոլորտներում, և թե՛ կրթության արդիականացմանը: Բնականաբար, նման լայնածավալ և շարունակական գործընթաց սկսելը միմիայն հնարավոր է պետական հոգածության և շահագրգիռ մասնակցության պարագայում:

Տարաբնույթ հաղորդակցությունն ու որոշումները սպասարկող տեղական գիտելիքի լեզվական կազմակերպումը թվային եղանակով վճռորոշ է պետական միավորին ամրակուռ բնույթ հաղորդելու հարցում: Այն մի կողմից նպաստում է մարդու իրավունքների և ժողովրդավարական արժեքների տարածմանը՝ փոխարինելով ազդեցության թելադրման բռնի և ֆիզիկական եղանակները ավելի փափուկ՝ տեղեկատվական, հոգեբանական, արժեքաբանական ներգործման միջոցներով:

Պատահական չէր, որ քսաներորդ դարակեսին տնտեսական գաղութացման անկմանը անմիջապես փոխարինելու եկան նույն սուբյեկտների կողմից ներդրված լեզվական գաղութացման մեխանիզմները՝ այժմ արդեն թվային հաղորդակցության և գիտության ոլորտին իրենց լեզվական գերշխանությունը թելադրող քաղաքականության տեսքով: Օբյեկտիվության համար չնոռանանք նշել, որ ցանկացած գերշխանություն տարածվում է իր ունեցած արժանիքների շնորհիվ, և բացի գաղութացումից՝ բերում է զարգացում: Հենց այս տրամաբանությամբ, ձեռք ձեռքի տված ՏՏ և անգլերենի տիրապետությունը, իր բոլոր վնասներով հանդերձ, բազմազանեց հեռահաղորդակցությունը, դյուրին դարձրեց գիտության ստանդարտացումը և արդյունքների տարածումը:

Սակայն փոքր ազգի առաջին հերթին պետական շահերի տրամաբանությունից ելնելով՝ դժվար չէ նկատել, որ օտար լեզվի գերակայությունը գիտության ոլորտում մեկուսացնում և գիտական մտածողությունից օտարում է մայրենի կամ տեղի պետական լեզուն: Այս մտահոգությունն ունեն անգամ այնպիսի բազմամիլիոնանոց լեզվական համայնքներ և պետություններ, ինչպիսիք են իսպանախոս [Bordons & Gomez, 2004], ֆրանսախոս երկրները, գերմաներենը, ռուսերենը²: Բացի գիտական մտածողության օտարումից՝ փոքր և վտանգված լեզուների հետ միասին վտանգվում է այն մշակութային և պատմական գիտելիքն ու գործունեությունը, որն աննկատ, կամ ավելի ճիշտ՝ ճանաչողության հարցով զբաղվող մասնագետի աչքին միայն տեսանելի կերպով կրում է դարավոր գիտելիք ու փորձ, մտածելակերպի ռացիոնալացում, ուղղակի տեղեկություն իր ժամանակի, տեղանքի և ժողովրդի արժեհամակարգի մասին: Հայ վիմագրությունն այդպիսի բազում օրինակներ ունի:

Ճանաչողական լեզվաբանությունը նաև մի հայտնի դրույթ ունի այն մասին, որ յուրաքանչյուր լեզու հարուստ է կենսագործունեության կամ բնությունը նկարագրող այն բառապաշարով, որը բնորոշ է այդ լեզվակիր մշակույթին: Հայոց գրավոր մշակույթը, սկսած սեպագրերից մինչև վիմագիր արձանագրություններ, երկաթագիր ձեռագրեր և զարդագիր մանրանկարչություն, ապա և տպագիր գործունեությունն աշխարհի չորս ծագերում այդ հարստության ապացույցն են: Այսօր սակայն, այս մշակույթը բավարար կերպով ներկայացված չէ համաշխարհային հաղորդակցության նոր՝ *թվանշագիր ցանցում (digital networks)*:

Ահավասիկ, մենք այժմ մտել ենք չորրորդ արդյունաբերական հեղափոխության փուլ, որը երրորդի շարունակությունն է թվային, կենսաբանական և գիտելիքահեն այլ տեխնոլոգիաների սերտաճման առումով, նշանավորվում է արհեստական բանականության, տեսահաղորդակցության և կենսատեխնոլոգիաների զարգացումով: Այս հեղափոխությունը «խելացի տեխնոլոգիաների» և «իրազեկ որոշումների» հեղափոխություն է, որոնց կայացմանը ի սպաս են դրվում համացանցային գիտելիքը, թվային հիշողությունը, փաստագրված մտքի և զգացմունքների ալգորիթմական օրինաչափությունները և փոքր գործառնությունների ավտոմատացված կառավարումը: Ահա թե ինչու հայերեն գրավոր լեզվական գիտակցության և հաղորդակցության թվային շարունակական մշակմամբ ստեղծված շտեմարանների և խոշոր լեզվական տվյալների մոդելավորումն ու դրանց նպատակային գործածությունը իրազեկ որոշումների հրամայականն է մեր ժողովրդի և պետության կյանքի բացարձակապես բոլոր ոլորտների համար:

Այս հրամայականի գիտակցումով էր, թերևս, որ հանրապետությունում մի քանի նախաձեռնություններ սկիզբ առան, միմյանցից անկախ, բայց ոչ պատահաբար՝ գրեթե միաժամանակ [Hovhannisyán, Tufekchyan, 2014]: Հայաստանի ազգային գրադարանում սկիզբ դրվեց գրավոր մշակութային ժառանգության թվայնացմանը, որը ռեսուրսային բազա է ստեղծում այդ տեքստերի՝ որպես բնական լեզվի և աշխարհի հայալեզու պատկերի կամ հայոց լեզվական գիտակցության մշակման համար: Նշենք, որ այդ ռեսուրսային բազային են պատկանում նաև օտար լեզուների հայերեն թարգմանությունները: Միևնույն ժամանակահատվածում ՀՀ

²Տե՛ս https://iling-ran.ru/web/ru/news/210826_kibrik կայքը:

Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և Եվրամիությունից համաֆինանսավորվող Էրազմուս + «Դոկտորական կրթության բարեփոխումը Հայաստանում՝ ակադեմիական համայնքի, արդյունաբերության պահանջներին և ԵՄ փորձին համապատասխան» (ArmDoct) ազգային ծրագրի նախաձեռնությամբ մի շարք բարձրագույն կրթական հաստատություններ ձեռնամուխ եղան մշակելու արտադրական արդյունքներին ուղղված նոր հետազոտական միջգիտակարգային ուղղություններ³։ Ծրագրին մասնակցող Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի մասնագիտական խումբը ներկայացավ հասարակական հաղորդակցության լեզվական թվայնացմանը նվիրված «Կիրառական լեզվաբանություն» մասնագիտության նոր՝ բնական լեզվի մշակման ուղղությունը զարգացնելու առաջարկով։ Դրա մյուս թևը կարելի է համարել պատմամշակութային ժառանգության թվայնացմանը նվիրված՝ «Թվային հումանիտար գիտություններ» մասնագիտության ներդրման երկրորդ նախաձեռնությունը՝ այսպիսով ամբողջացնելով հայ գրավոր ժառանգության և ներկա զարգացումների թվային կառավարման հայեցակարգը։ Այս երկու ուղղություններն ունեն մեկ ընդհանրություն, որը սակայն, թույլ չի տալիս նաև դրանք նույնացնել։ Այդ ընդհանրությունը լեզուն է՝ առաջին դեպքում շարունակաբար առկայացող խոսքի, իսկ երկրորդում՝ անփոփոխ արձանագրված և պատմական ժառանգության կարգավիճակով։

Թեև կան գրավոր և բանավոր հայերենի թվայնացման մի քանի նախաձեռնություններ, լեզվական շտեմարանների առկայության առումով հայերենը զիջում է աշխարհի մի քանի տասնյակ լեզուների, որոնք սրընթաց կերպով ինտեգրվում են համացանցային հաղորդակցության և գիտելիքի փոխանակմանը։ Դրանցից առաջինը Արևելահայերենի ազգային կորպուսն է՝ ԱՐԵՎԱԿ-ը [Արևակ կորպուսի կայքէջ]։ ԱՐԵՎԱԿ-ի նախագիծը գործարկվել է 2006 թվականին, սակայն այն 2009 թվականից հետո չի թարմացվել, ուստի չի կարող գործածվել որպես արդի լեզվական գիտակցության գործնական խնդիրների լուծման աղբյուր։ 2009 թ. մարտի դրությամբ ԱՐԵՎԱԿ-ն ընդգրկում է մոտ 110 մլն. բառամթերք։

Մյուս նախաձեռնությունը «Հայերենի ծառադարան»-ն է։ «... նախագիծը մաս է կազմում Universal Dependencies (UD) – «Համընդհանուր կախվածություններ» հարթակի, որը, տիպաբանական և կիրառական հետազոտական նպատակներով, քերականությունների ձևայնացման և տեքստերի լեզվաբանական ծանոթագրման միասնական մեթոդ է առաջարկում բնական լեզուների մեքենական մշակման համար» [Յավրումյան, Դանիելյան, 2020, 234]։ Ծառադարանը պարունակում է շուրջ 100 հազար բառամթերք և 5 հազար շարահյուսական ծառ [Հայերենի ծառադարանի կայքէջ]։

Հաջորդը «Ազգային արագացման հանրային նախաձեռնությունն» է [Ազգային արագացման նախաձեռնության կայքէջ], որն «իրականացնում է հայերեն լեզվով մեքենայական սարքերի հետ հաղորդակցության գործիքների՝ արհեստական ձայնի սինթեզի TTS (Text to Speech), խոսքի ճանաչման ASR (Automatic Speech Recognition), մեքենայական թարգմանության NMT (Neural Machine Translation) մշակումը»։ Հարկ է նշել, որ այս նախաձեռնությունը պատրաստակամություն էր հայտնել համագործակցելու և հուշագիր է ստորագրել Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի հետ՝ նախադեպ ստեղծելով ՀՀ համալսարանական միջավայրում բնական լեզվի կայուն-շարունակական աշխատանքներ ապահովելու առումով։ Վերջապես, այս համագործակցության միջոցով Վ. Բրյուսովի անվան պետական համալսարանի անգլերենի հաղորդակցման և թարգմանության ամբիոնի հետազոտական խումբը 2022-2023 թթ. ներքին դրամաշնորհային ծրագրով նախաձեռնեց և իրականացրեց «Հայերեն-անգլերեն գուգահեռ կորպուսների ստեղծման հիմունքների և չափանիշների մշակում» նախագիծը⁴։ Այդ

³ Տե՛ս <https://armdoct.com/> կայքում։

⁴ Տե՛ս https://brusov.am/hy/content/teghi_unecav_hayeren-angleren_zugaher_korpusneri_steghtsman_himunqneri_chapanishneri_ev_gortsiqneri_pordzarakan_hetazotu/#sthash.rNa9j7n1.dpbs կայքում։

ծրագրի մտահղացումն ուներ մի քանի խնդիր՝ հետազոտելու և գաղափարներ փորձարկելու կասկադային կառուցվածք, որը ներառում էր թեմայի գիտական, կրթական, մեթոդական, տեխնիկական, ուսուցողական և էթիկական հարթությունները, ուներ մեթոդաբանական և արտադրական բաղադրիչներ: Այս մոտեցումները, միմյանց լրացնելով, ապահովեցին ծրագրի սահուն ընթացքը և հաջող ավարտը, քանի որ գիտելիքի տարածման բարձր արագությունների միջավայրում, և հայերենի նման գոյապահպանական խնդիրների առերեսված փոքրաթիվ լեզուն միայն համալիր լուծումներով է կարող հաղթահարել ապագայի մարտահրավերները: Վ. Բրյուսովի անվան համալսարանում իրականացված, կրթական լուրջ բաղադրիչ պարունակող այդ ծրագիրը [Երկլեզու հավասարեցման կուրսային աշխատանքների մեթոդական ուղեցույց] փորձառական հետազոտություն էր ավանդական լեզվական կրթության բազայի վրա նորարար՝ թվային թարգմանությունների բաղադրիչներ ներդնելու առումով: Խմբի միացյալ ուժերով մշակվեց այն գիտական մեթոդաբանությունը, որով և հետազոտական խումբն իրականություն դարձրեց առաջին հայացքից անկարելի թվացող նախաձեռնությանը՝ «Թարգմանչական գործ» մասնագիտության շրջանակում առցանց էլեկտրոնային հարթակի օգնությամբ հավաքել ավելի քան 1000 էջ հայերեն և անգլերեն զուգահեռված տեքստեր՝ ներգրավելով մոտ 100 ուսանողի և 40 տարբեր տարիքի և թվային հմտություններ ունեցող դասախոսի:

Զուգահեռաբար, եվրոպական փորձի փոխառման նպատակով ԲՊՀ անգլերենի թարգմանության ամբիոնում գործարկվեց նաև Լյուվենի Կաթոլիկ համալսարանի հետ թարմացված MUST կամ «Ուսանողական բազմալեզու թարգմանություններ» ծրագրի համաձայնագիրը, ըստ որի եվրոպական համալսարանների ուսանողների կողմից զուգահեռ հավասարեցման մեթոդով կատարված թարգմանությունները [Granger & Lefer, 2023] ներդրվում են արհեստական մտքի ձևավորման հիմքում և ստեղծվում են թվային գրուցրնկերներ: ԲՊՀ-ում նման հայերեն հարթակի առկայությունը մեծ գիտակրթական առաջընթաց կապահովի նաև լեզվական շտեմարանների կամ կորպուսների մշակման ուղղությամբ:

Ծրագրի միջոցներով իրականացվեցին նախատեսված բոլոր անելիքները, արդյունքները ներկայացվեցին մի քանի տեղական և միջազգային հրապարակումներում [Հովհաննիսյան, 2023; Հովհաննիսյան, Այդինյան 2022; Hovhannisyan, 2023]: Այն, մասնավորապես մեծ հետաքրքրություն առաջացրեց առաջատար գիտական հրատարակչություններում, որոնցից մեկի հետ հետազոտության արդյունքների հրատարակման համաձայնագիր է ստորագրվել: Համալսարանական ուսանողության կրթության ճիշտ կազմակերպման պարագայում կարելի է ավանդաբար լեզվաբանական այս ոչ մեծ համալսարանում էլ տեղակայել հայերենի բազմալեզու զուգահեռներով կորպուսների մշակման, հետազոտման և արդյունքում ստացված տեղեկությունների բաշխման գիտաարտադրական հաստատությունը: Այն կդառնա հայերենի հաղորդակցության նոր դարբնոց, որտեղ կկոփվի նոր մտածողությամբ օժտված երիտասարդ մասնագետների սերունդը, կգոյանան հաղորդակցության վերլուծության և հիմնավոր գիտելիքի օգտակար պաշարներ, կգեներացվի մտավոր և հոգևոր արժեքների նոր ներուժ:

Ի՞նչ կտան մեզ լեզվական շտեմարաններն ու դրանք մշակող մասնագետները: Նախևառաջ, իրազեկ անվտանգություն, որն սկսվում է մշակութային ժառանգության համակարգված պահպանությունից և համաշխարհային համանման գիտելիքի շտեմարանների հետ դրանց փոխգործուն ինտեգրումից, լեզվական հաղորդակցության գրավոր և բանավոր արտադրանքը համակարգված կերպով տնօրինելուց և ըստ նպատակորվածքի մշակելուց: Նման իրազեկ ինտեգրում համաշխարհային տեղեկատվական հոսանքներին ու գիտական հարթության վրա հավասար մասնակցի իրավունքով ներկայությունը միշտ քաղաքական շահի իր ածանցյալներն ունի, ինչպես անվտանգային, այնպես էլ կառուցողական համագործակցության բնագավառներում:

Այնուհետև, հայ ժողովուրդը և լեզվաբանական աշխարհը կստանան հայոց լեզվի երկու ճյուղերի արդիական պատկերի մասին համապարփակ և փաստագրված տեղեկություն՝ այս-

տեղից բխող լեզվաքաղաքական որոշումների հնարավորությամբ հանդերձ: Համացանցային հաղորդակցության բացարձակապես բոլոր ոլորտներում մեծացող ներգրավվածություն, իրավահավասար մասնակցություն և այսպիսով, հայոց լեզվի երկու ճյուղերի գործածության հավասարվող իրավունքներ, հատկապես սփյուռքի հայության համար՝ լեզվամշակութային պաշտպանվածություն:

Երրորդ, մենք լիարժեք իրազեկություն ձեռք կբերենք մեր լեզվական հիշողության և գիտակցության մեջ ամբարված տեղեկությունների և գիտելիքի (ներառյալ փաստագրված բանահյուսությունը, ձեռագրերն ու վիմագրությունը) նկատմամբ: Դրանից ստացված հնարավորությունը հավասար է արդի աշխարհաքաղաքական միջավայրում սեփական տեղի և նշանակության մասին գիտելիքի լիարժեք տիրապետում և տնօրինություն, դրանցից բխող բոլոր առավելություններով հանդերձ տեղական որոշումների և միջազգային ներկայացվածության, դիվանագիտության, տնտեսության, կապիտալի և այլ բնագավառներում:

Ի՞նչ ենք կորցնում մենք հայոց լեզվի՝ համակարգային թվայնացումը և գործուն լեզվական շտեմարանների կառուցումը հետաձգելով: Առաջին հերթին՝ ապագայում մեր լեզուն ազատորեն, կյանքի բոլոր ոլորտներում գործածելու հնարավորությունը: Խոսողների թվի նվազումը կհանգեցնի փոխանցվող ազգամշակութային գիտելիքի և դրանով պայմանավորված ինքնության շրջանակը, քանի որ հայերենը կմնա լավագույն դեպքում կենցաղային՝ նեղ շրջանակներում գործածվող լեզու: Կոդարի զարգանալ հայալեզու կրթության անհրաժեշտությունը, գիտությունը, գիտակցությունը, ինքնագիտակցությունը, ազգային սուրբեկտայնությունը: Չունենալով լեզվի թվային համատարած փաստագրված տվյալներ՝ մենք ժամանակի ընթացքում կկորցնենք պատմական և մշակութային կապն անցյալի հետ: Վերը նշված երևույթներն սկսվում են հաղորդակցական, քաղաքական և տնտեսական սահմանների նեղացումով և հաջորդող մեկուսացման սպառնալիքով, որն արդեն իրողություն է:

Լեզվի վտանգումը կասեցնելու ջանքերը պետք են հիմա, քանի դեռ հարաճուն այդ վտանգը անդառնալի մշակութային և քաղաքակրթական փոփոխությունների չի հանգեցրել: Մեկուսացման գնալով նեղացող օղակը ճեղքելու և հայության լեզվամշակութային տարրալուծման գործընթացները կասեցնելու համար պետք է հրատապ կերպով պաշտոնական հայերենն իր ճյուղերով, որպես լիարժեք քաղաքական-տնտեսական և մշակութային միավորի՝ ազգային գործածության լեզու, կապել համաշխարհային գործընթացներին, բարձրացնել նրա շրջանառությունը նախ SS աշխարհում, ապա վերը նշված բոլոր հարթություններում՝ հանուն հայության վերածնունդի:

SUMMARY

At different stages of the development of civilization, the languages that could make the transition to the new technologies of science and communication have flourished and developed. The article discusses several conceptual issues dedicated to the issue of the continuity of Armenian written culture and introduces the steps towards the digitization of Armenian, both taken and anticipated. Armenian written culture, from epigraphy to the present state, is the result of the concerted efforts of scientists who are dedicated and deeply aware of the challenges thrown by time and their supporting governors and businessmen. We must create conditions so that our language gets the opportunity to adapt to the changes dictated by the environment and new media and promote it to develop in the new digital conditions of communication because it is the direct repository of our linguistic consciousness and self-awareness. In the first part of the article, parallels are drawn between the Industrial Revolution and the stages of written culture development. The second part presents the projects and initiatives that have been launched toward the digitization processing of the Armenian language and corpora.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ազգային արագացման նախաձեռնության կայքէջ [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://hayq.ican24.net/hyemnt/index.php>, 29.10.2023:
2. Արեւակ կորպուսի կայքէջ [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <http://www.eanc.net/am/composition/>, 29.10.2023:
3. Երկլեզու հավասարեցման կուրսային աշխատանքների մեթոդական ուղեցույց, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://docs.google.com/document/d/1bwjxW5muT4ycdb82EUaxHUG8o01PKWOC/edit#https>, 05.12.2023:
4. Հայերեն ծառադարանի կայքէջ [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <http://armtreebank.yerevann.com/>, 29.10.2023:
5. Հայոց մշակույթ - Mfa.am. (n.d.). [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://www.mfa.am/hy/culture/>, 17.11.2023:
6. Հովհաննիսյան Գ. Հաղորդակցման գրական տեսակը և դրա արդի զարգացումները. մարդաբանական մոտեցում // Գրականության և մշակույթի արդի հիմնախնդիրները, Պրակ ԺԴ, Լինգվա, Երևան, 2023, էջ 188 - 201.
7. Հովհաննիսյան, Գ. Արամ Հայրապետյանի «Բնական խոսքի ընդհանրական ներկայացման մի տարբերակի մասին» աշխատության գրախոսություն // Լեզու և լեզվաբանություն, ՀՀ ԳԱԱ ԼԻ, Երևան, 2023, էջ 72-76:
8. Հովհաննիսյան, Գ., Ալիկյան Ս. Թվայնացված գրականությունից մինչև լեզվական շտեմարաններ. դրանց նշանակությունը, հեռանկարներն ու մարտահրավերները // Բանբեր Հայաստանի գրադարանների: Գիտամեթոդական հանդես: Հատուկ թողարկում, Երևան: «Գիրք» հրատարակություն, 2023. էջ 66 – 70, [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://doi.org/10.52027/18294685-hga2023.sp.>, 17.11.2023:
9. Յավրույան Մ., Դանիելյան Ա. Համընդհանուր կախվածություններ և հայերենի ծառադարանը // Լրաբեր հասարակական գիտությունների, 2020, էջ 231-244:
10. Bordons, M., & Gomez, I. (2004, July 1) Towards a single language in science? A Spanish view. *Serials: The Journal for the Serials Community*, 17 (2), 189-195. [Electronic Publication] URL: <https://doi.org/10.1629/17189>, 17.11.2023.
11. Granger, S., & Lefer, M.-A. (2023). Learner translation corpora: Bridging the gap between learner corpus research and corpus-based translation studies. *International Journal of Learner Corpus Research*, 9 (1), 1-28. [Electronic Publication] URL: <https://doi.org/10.1075/ijlcr.00032.gra>, 05.12.2023.
12. Homepage | UNECE. (n.d.) [Electronic Publication] URL: <https://unece.org/>, 17.11.2023.
13. Hovhannisyan, G. Enhancing Student Learning Through Parallel Language Corpus Creation. Video presentation, “The Problem of Learning in Morocco,” Marrakech, Morocco, 2023.
14. Hovhannisyan, G. The Architecture of Language Personality // Individual and Contextual Factors in the English Language Classroom, Springer, Cham, 2022, pp. 79-95.
15. Hovhannisyan, G., Tufekchyan, M. Armenian and English Language Documentation and Description. Yerevan, P. Sevak publishing, 2014, 129 pages.
16. Information and Communication Technology (ICT) Industry in the Fourth Industrial Revolution: Prospects and Challenges for Workers in Asia-Pacific. (n.d.). [Electronic Publication] URL: https://www.researchgate.net/publication/324167731_Information_and_Communication_Technology_ICT_Industry_in_the_Fourth_Industrial_Revolution_Prospects_and_Challenges_for_Workers_in_Asia-Pacific, 17.11.2023.
17. Johannes Gutenberg’s Greatest Accomplishments – World History Edu. (n.d.). [Electronic Publication] URL: <https://www.worldhistoryedu.com/johannes-gutenberg-accomplishments-technology-bible/>, 17.11.2023.
18. Overview of the Second Industrial Revolution. (n.d.). ThoughtCo. [Electronic Publication] URL: <https://www.thoughtco.com/second-industrial-revolution-overview-5180514>, 17.11.2023.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՆՅՈՒԹԵՐԻ
ԹՎԱՅՆԱՑՄԱՆ ՆՈՐ ՓՈԻԼԸ (OCR)**

Բանալի բառեր՝ գրադարան, թվայնացում, շտեմարան, նիշերի օպտիկական ճանաչում, տեքստային փաստաթուղթ, որոնելիություն, արհեստական բանականություն:

Keywords: library, digitization, database, optical character recognition, text document, searchability, artificial intelligence.

Նիշերի օպտիկական ճանաչման (OCR) առաջին համակարգերը հայտնվել են առաջին համակարգիչների հետ գրեթե միաժամանակ: Այդ ժամանակից ի վեր OCR-ն անցել է բազմաթիվ փոփոխությունների միջով, որոնցից հիմնականը ճանաչման ալգորիթմներում օգտագործվող տարբեր նիշերի դասակարգիչների փոխարինումն էր արհեստական նեյրոնային ցանցերով (ANN): Փաստաթուղթը կա՛մ սկանավորվում է, կա՛մ լուսանկարվում: Ծրագիրը պետք է ճանաչի նիշերը ու թողարկի տեքստը՝ որպես տվյալներից բաղկացած տեքստային փաստաթուղթ, որը համակարգիչը հասկանում է հատուկ ծրագրավորված ալգորիթմների օգնությամբ: Դրանց մեծ մասն օգտագործվում է արհեստական բանականության ոլորտում: Համակարգիչը ճանաչում է պատկերի օրինաչափությունները, որի դեպքում նախշերը նիշեր են: Նշաճանաչումը՝ Նիշերի օպտիկական ճանաչման համակարգերը կամ OCR համակարգերը (Optical Character Recognition) նախատեսված են թվային փաստաթղթերում որոնումներ կատարելու և փաստաթղթերի թվային պատկերները ավտոմատ կերպով համակարգիչ մուտքագրելու համար: Տվյալներն արդյունահանվում և վերափոխվում են սկանավորված թղթերից, լուսանկարներից և միայն պատկերի համար նախատեսված PDF-ից՝ օգտագործելով OCR գործիք: OCR ծրագրաշարը նկարներից տառեր է հանում, դրանք վերածում բառերի, այնուհետև նախադասություններ է հավաքում՝ թույլ տալով մուտք գործել և փոփոխել բնօրինակ տեքստը: Այն նաև վերացնում է տվյալները ձեռքով մուտքագրելու անհրաժեշտությունը: OCR համակարգերը ֆիզիկական, տպագիր փաստաթղթերը վերածում են մեքենային ընթերցելի տեքստի: OCR-ը սովորաբար օգտագործվում է օրինական կամ պատմական փաստաթղթերը PDF փաստաթղթերի վերածելու համար, որոնք այնուհետև կարող են խմբագրվել, ձևաչափի փոփոխության ենթարկվել և որոնվել այնպես, կարծես դրանք գրված են բառի մշակման միջոցով: Սա բացառիկ հնարավորություն է հայերենի համար՝ ինտեգրվելու կիրքերտիրոյթ: Նշենք, որ հակառակ դեպքում տարիներ են պետք, որ Google-ը ամբողջությամբ ինդեքսավորի հայերեն տեքստերը: Համացանցը նկարը, որպես տեքստ չի կարող ինդեքսավորել:

Ո՞րն է նիշերի օպտիկական համակարգի ներդրման նպատակը

Յուրաքանչյուր նոր համակարգի ներդրում ենթադրում է որոշակի նպատակի հետապնդում: Այսօր, երբ աշխարհը հսկայական քայլերով առաջ է գնում թվայնացման ոլորտում, նիշերի օպտիկական համակարգի ներդրումն ունի ռազմավարական նշանակություն: Նպատակը շատ պարզ է՝ նկարված տեքստը վերածել փնտրովի տեքստի, մեր դեպքում բարձրացնել գրադարանի շտեմարաններում որոնելիության մակարդակը, ներդնել նոր, արդյունավետ հնարավորություններ գիտական հանրության որոնողական աշխատանքներում և գիտական արդյունքի հանրայնացման գործում, կանխել գիտական առաջընթացը խոչընդոտող գրագողությունը, հետևել հետազոտությունների կառավարման և հանրահասանելի գիտության բնագավառում համաշխարհային փորձին՝ գործընթացի կազմակերպման, առաջնահեր-

թությունների որոշման և այլ հարցերում: Գրադարանային փաստաթղթերի թվային ձևաչափերի օպտիկական նիշերի ճանաչման ծրագրերի արդյունավետությունը չափվում է նիշերի ճանաչման բարձր ցուցանիշով /98-100 տոկոս/: Հետազոտողների 90%-ից ավելին աշխատում է մամուլի հետ, ու քանի որ շրիֆտները շատ տարբեր են, նշանաչման պրոցեսը ևս շատ բարդ է: Սկանավորված թղթային փաստաթղթի OCR մշակումից հետո տեքստը կարող է խմբագրվել բառի մշակման միջոցով, ինչպիսիք են Microsoft Word-ը կամ Google Docs-ը:

OCR-ի առավելությունները

1. OCR տեխնոլոգիայի հիմնական առավելություններն են ժամանակի խնայողությունը և սխալների նվազումը: Այն նաև թույլ է տալիս տվյալները սեղմել zip ֆայլերի մեջ, մի բան, որը իրական տպագիր էջը չի կարող իրականացնել:

2. Տվյալները կարող են որոնվել օպտիկական նիշերի ճանաչման միջոցով: Սկանավորված ֆայլերը, որոնք փոխարկվել են մեքենաընթեռնելի ֆայլերի, կարող են պահվել ցանկացած ձևաչափով, որը կարող է որոնվել կազմակերպության ներքին սերվերում կամ գլոբալ հասանելի դարձնել ինտերնետում:

3. OCR-ն օգնում է պատկերը վերածել տեքստային փաստաթղթի, որի բովանդակությունը պահվում է որպես տեքստային տվյալներ:

4. OCR-ը հաճախ օգտագործվում է արհեստական բանականության այլ համակարգերի հետ համատեղ: Արհեստական բանականության նման տեխնոլոգիան օգնում է գրադարանների ավելի լավ մարքեթինգային և գործառնական որոշումներ կայացնել, որոնք խնայում են գումարը և բարձրացնում ընթերցողների գոհունակությունը:

5. Նիշերի օպտիկական ճանաչումը (OCR) հզոր գործիք է, որը կարող է ճանաչել ցանկացած լեզվի ծրագիր: OCR-ի այս հնարավորությունը, երբ համակցված է Unicode ստանդարտի և թարգմանչական ծրագրաշարի հետ, ինչպիսին է Google Translate-ը, թույլ է տալիս յուրաքանչյուր սկանավորված և թվայնացված փաստաթուղթ թարգմանել ցանկացած այլ լեզվով: Վերացնում է նաև մարդկային թարգմանիչների կարիքը և նրանց ժամանակատար ջանքերը:

6. OCR ծրագրաշարը կարող է ճանաչել տեքստը պատկերներում, տեքստ հանել լուսանկարներից և պահպանել տեքստային ֆայլերը հետևյալ ձևաչափերով՝ JPG, JPEG, PNG, BMP, tiff, PDF և այլն:

OCR-ի կիրառումները

1. Տպագիր նյութերի էլեկտրոնային պատկերների միջոցով որոնման դյուրին և ձկուն համակարգի ստեղծում

2. Պատմական նյութերի որոնելիության ստեղծում, ինչպիսիք են գրքերը, սեղմագրերը, ամսագրերը, թերթերը և այլն

3. Կույր և թույլ տեսողություն ունեցող օգտվողների համար թղթերի վերծանում, որոնք պետք է բարձրաձայն կարդալ նրանց համար

4. OCR-ն օգնում է պատճենել տեքստերը պատկերներից կամ որևէ այլ ֆայլից և խմբագրել հին փաստաթուղթը, որպեսզի այն պարունակի թարմացված տեղեկատվություն: Սա նշանակում է, որ դուք կարիք չեք ունենա գրել բոլորովին նոր տեքստային ֆայլ

5. Պատկերները տեքստի վերածելուց հետո կարող եք դրանք պահել անմիջապես Microsoft Word-ի փաստաթղթում՝ օգտագործելով Save As Document ֆունկցիան: Այսպիսով, դուք կարող եք պատկերները վերածել տեքստի Microsoft Word-ում և օգտագործել դրանք այլ կարիքների համար

6. Պարզապես կարող եք PDF ֆայլերը փոխարկել այլ ձևաչափի՝ օգտագործելով OCR փոխարկիչ: Սա նշանակում է, որ մեզ միայն անհրաժեշտ է ճիշտ ծրագրակազմ, որը կարող է նկարներից տեքստ հանել, այնուհետև վայրկյանների ընթացքում գտնել այն, ինչ փնտրում ենք:

OCR համակարգը Հայաստանի ազգային գրադարանում

Այսօր աշխարհի գրեթե բոլոր գրադարաններն ունեն իրենց շտեմարանները՝ տարբեր բովանդակություններով, ձևաչափերով, ընդգրկվածությամբ: Յուրաքանչյուր գրադարան առաջարկում է իր ծառայությունները՝ աշխատելով ներգրավել առավել մեծ թվով ընթերցողների: Թվայնացումը 21-րդ դարի պահանջն է և թույլ է տալիս փրկել հարյուրամյակների պատմություն ունեցող, երբեմն անգամ միակ նմուշի նյութերն ու ձեռագրերը: Թվայնացման շնորհիվ բազմաթիվ արժեքավոր ամսագրեր, թերթեր, գրքեր պահպանվում են ու փոխանցվում հաջորդ սերունդներին, իսկ ընթերցողները բազմապատկվում են ու երիտասարդանում, ընդ որում՝ աշխարհի տարբեր կողմերից:

Հայաստանի ազգային գրադարանը, որպես աշխարհում հայերեն տպագիր ժառանգության խոշորագույն պահոց, ստեղծում է բոլոր հնարավոր պայմանները՝ հայ տպագիր գիրքն ու մամուլը մեկ ընդհանուր դաշտում ամփոփելու և ներկայացնելու համար: Այս նպատակին են ծառայում նաև տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները, գրադարանային ավտոմատացման համակարգերը, որոնք օժտված են հայ տպագիր ժառանգությունը հավաքագրելու և ամբողջացնելու անսահմանափակ հնարավորություններով:

Գրադարանային հավաքածուների թվայնացումն այսօր Հայաստանի ազգային գրադարանի կարևորագույն գործառնություններից է, սակայն թվայնացման գործընթացն ինքնին ժամանակի ընթացքում կրել է փոփոխություններ: Նյութերի պարզ թվայնացումն այսօր չի կարող բավարարել ընթերցողների պահանջները: Խիստ կարևորվում է թվայնացված նյութի մեջ որոնման համակարգի ներդրումը:

Տեղեկությունը արդյունավետ գտնելու, այն գնահատելու և իր շահերին ծառայեցնելու կարողությունը յուրաքանչյուր մարդու համար դառնում է անհրաժեշտություն: Նոր հասարակության գլխավոր արժեքը դառնում է ոչ թե ինքնին տեղեկությունը, այլ դրանից օգտվելու հմտությունը:

Հայաստանի ազգային գրադարանը 2011 թվականից իրականացնում է իր հավաքածուներում առկա հայերեն և հայատառ հատվածներ պարունակող գրքերի, եզակի արժեք ունեցող հայ պարբերական մամուլի թվայնացման և դրանք համացանցում հասանելի դարձնելու աշխատանքները: Ներկայում լրիվ տեքստային շտեմարաններում հաշվվում է գրքերի և պարբերականների ավելի քան 12 միլիոն թվայնացված էջ: 2022 թ. ապրիլին Հայաստանի ազգային գրադարանի և «Փորթմայնդ էյ էմ» ՓԲԸ-ի միջև կնքվել է համագործակցության պայմանագիր: Հայաստանի ազգային գրադարանը ձեռք է բերել բացառիկ իրավունք՝ ապահովելու ՀԱԳ էլեկտրոնային շտեմարաններում հասանելի ավելի քան 12 միլիոն թվայնացված էջ հայատառ տեքստերի նիշերի օպտիկական ճանաչումը (OCR):

Նպատակը՝ նկարված տեքստը վերածել փնտրովի տեքստի, բարձրացնել Հայաստանի ազգային գրադարանի շտեմարաններում որոնելիության մակարդակը, ներդնել նոր, արդյունավետ հնարավորություններ գիտական հանրության որոնողական աշխատանքներում և գիտական արդյունքի հանրայնացման գործում, կանխել գիտական առաջընթացը խոչընդոտող գրագողությունը, հետևել հետազոտությունների կառավարման և հանրահասանելի գիտության բնագավառում համաշխարհային փորձին՝ գործընթացի կազմակերպման, առաջնահերթությունների որոշման և այլ հարցերում:

Ինչպես արդեն նշել ենք հետազոտողների 90% և ավելին աշխատում է մամուլի հետ, ու քանի որ տառատեսակները շատ տարբեր են, նշաճանաչումը ևս շատ բարդ գործընթաց է: Հայ

պարբերական մամուլի պատմությունը սկսվում է 1794 թվականից, երբ Մադրասում Հայր Հարություն Շմավոնյանի ջանքերով հրատարակվում է «Ազդարարը»: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հայ ազգն ունեցել և այսօր էլ ունի մեծ սփյուռք, և որ ազգային ինքնությունը և լեզուն պահպանելու լավագույն միջոցներից մեկը եղել են պարբերականները, զարմանալի չէ, որ գործնականում հայկական բոլոր համայնքներում տպագրվել են բազմաթիվ լրագրեր, շաբաթաթերթեր, հանդեսներ: Կապված հրատարակչական բարդությունների և ֆինանսների սղության հետ՝ այդ պարբերականների մեջ զգալի թիվ են կազմում ձեռագիր և խմորատիպ հրատարակությունները [Զարգարյան, Ղազարյան, 2017, № 3, 291-292]:

Հայաստանի ազգային գրադարանի «Հայկական շարունակական հրատարակությունների համահավաք գրացուցակ»-ը ներառում է 1794 թվականից մինչև մեր օրերն աշխարհի տարբեր ծագերում հրատարակված հայատառ պարբերականները և շարունակական հրատարակությունները: Շարունակական հրատարակությունները, ըստ հրատարակության բնույթի, բաժանված են՝ թերթ, ամսագիր, տարեգիր, տեղեկագիր, էլ. թերթ և էլ. ամսագիր: Հայատառ օտարալեզու մամուլը, ինչպես նաև խմորատիպ, ապակետիպ, ձեռագիր չբազմացված, միօրյա հրատարակությունները ևս ներառված են շտեմարանում:

Հայաստանի ազգային գրադարանը, պահպանելով հեղինակային իրավունքի նորմերը, իրականացնում է աշխարհասփյուռ հայ մամուլի լրակազմերի թվայնացումը և դրանք հասանելի է դարձնում համացանցում: Հայ մամուլի խոշորագույն պահոցները աշխարհում համարվում են Հայաստանի ազգային գրադարանը և Վիեննայի Մխիթարյան միաբանությունը: Մակայն մամուլի եզակի նմուշներ են պահվում նաև Պոլսո Պատրիարքության Օրմանեան մատենադարանում, Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության մատենադարանում, Երուսաղեմի Կյուլպենկյան մատենադարանում, Զմմաթի վանքի մատենադարանում, մասնավոր հավաքածուներում: Համատեղ թվայնացման աշխատանքներում Հայաստանի ազգային գրադարանը սերտորեն համագործակցում է բոլոր այս կառույցների հետ՝ ստանալով թվայնացված մամուլի այն նմուշները, որոնք բացակայում են Հայաստանի ազգային գրադարանի հավաքածուներում [Նույն տեղում, 297]:

Լրակազմերի թվային պատճենների առկայությունը լուծում է պարբերական մամուլի երկարաժամկետ պահպանության խնդիրը, քանի որ բնօրինակի փոխարեն հնարավոր է դառնում կազմակերպելու ընթերցողների սպասարկումը թվային պատճենների օգնությամբ, ինչպես նաև իրականացնելու մամուլի վնասված էջերի արտատպումը բարձր որակի թվային պատճենից:

Այսպիսով, Հայաստանի ազգային գրադարանում նշաճանաչում են ստանում հին և նոր թվայնացված պարբերականների, հավելվածների, պարբերականների հոբելյաններին նվիրված հրատարակությունները, ատենախոսությունները, սեղմագրերը, ՀԱԳ հրատարակությունները, Հայագիտական հավաքածուն (Armenica): «Հայկական շարունակական հրատարակությունների համահավաք գրացուցակ»-ում «Կարդալ առցանց» հղման ներքո դրված PDF-ները ocr.pdf-ով փոխարինման աշխատանքների ժամանակ կատարվում են հետևյալ աշխատանքները՝ լրացվում են բացակայող էջերը, համարները, շտկվում են անհամապատասխանությունները, փոխարինվող անունները բերվում են պատշաճ տեսքի: Հայկական գիտական միտքը հանրահասանելի դարձնելու համար նշաճանաչում են ստանում ատենախոսություններն ու սեղմագրերը: Նշաճանաչում ստացած ատենախոսությունները, սեղմագրերը, ՀԱԳ հրատարակությունները և Հայագիտական հավաքածուն (Armenica) տեղադրված են Հայաստանի ազգային գրադարանի թվային պահոցում Հայաստանի ազգային գրադարանը մասնակցում է նաև ABC ուսուցում՝ մատչելի ձևաչափով գրքերի վերաբերյալ (ABC training on accessible format books) վերապատրաստման դասընթացի, որի ավարտից հետո պետք է ստեղծել շտեմարան, որտեղ կտեղադրվեն կույրերի և տեսողության խնդիրներ ունեցող օգտվողների համար հատուկ ձևաչափով գրքեր՝ OCR համակարգի կիրառմամբ:

SUMMARY

Optical character recognition (OCR) is the process of converting an image of text into a machine-encoded text format. For example, when we scan a form or document, the computer saves the scan as an image file. A text editor cannot be used to edit, search, or count words in an image file. OCR helps convert an image into a text document and content is stored as text data. Optical character recognition (OCR) provides the added functionality of being able to edit and search these documents. Such data can be used for analysis, optimization, process automation and productivity improvement. It saves time and reduces errors.

We inform our thousands of users that the OCR-passed digital collections of old and new digitized periodicals, editions dedicated to the anniversaries of periodicals are replenished thanks to daily hard work. As of 26.10.2023 #armocr #ocr has received around 93,691 PDFs or 1,496,939 pages: newspaper, magazine, abstracts, NLA publication. These repositories can serve as a unique online library of educational resources.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Զարգարյան Տ., Ղազարյան Հ. Հայկական շարունակական հրատարակությունների համահավաք գրացուցակը // Լրաբեր հասարակական գիտությունների 2017, № 3, էջ 289-300:

<https://doi.org/10.52027/18294685-iti2023.2>

ТИКУНОВА ИРИНА ПЕТРОВНА
Российская государственная библиотека

ИНТЕРНЕТ-ТЕХНОЛОГИИ В РАБОТЕ ОБЩЕДОСТУПНЫХ БИБЛИОТЕК: АНАЛИЗ ПРАКТИКИ

Ключевые слова: библиотечная цифровизация, библиотечное дело в Российской Федерации, веб-сервисы, дистанционное библиотечное обслуживание, интернет-ресурсы, интернет-технологии, электронные информационные ресурсы, общедоступные библиотеки, Российская государственная библиотека.

Keywords: library digitalization, librarianship in the Russian Federation, public libraries, web services, remote library services, Internet resources, Internet technologies, electronic information resources, Russian State Library.

Современный этап цивилизационного развития характеризуют происходящие во всех социальных сферах системные изменения, центральной причиной которых является стремительное и повсеместное внедрение цифровых технологий. Как социальный институт, современные библиотеки подвержены значительному влиянию этих процессов, поэтому проблемное поле библиотечной цифровизации находится в фокусе научного интереса современных научных библиотечных центров в нашей стране и за рубежом. Начиная с 2015 г., эта тема является одним из приоритетных направлений научно-исследовательской работы в Российской государственной библиотеке (РГБ) [Научные исследования, 2023, 36–37, 44]. В 2021 г. Центр по исследованию проблем развития библиотек в информационном обществе (ЦИПРО) РГБ завершил специальное исследование состояния и перспектив развития цифровизации общедоступных библиотек на этапе построения цифровой экономики [Самарин, Тикунова, 2022, 706–712].

Основным методом сбора данных был избран метод анализа нормативных документов, а также научных публикаций в профессиональной печати за 2010–2021 гг., отраженных в отечественных и зарубежных базах данных (далее БД): eLibrary ООО «Научная электронная библиотека» (<https://elibrary.ru/defaultx.asp?>), «КиберЛенинка» российской компании «Итеос» (<https://cyberleninka.ru/>), «Библиотечное дело и библиография» РГБ (http://infoculture.rsl.ru/RSKD/asp/XDB/user_ifc.htm?BB@@), Library, Information Science & Technology Abstracts (EBSCO Publishing), Scopus (Elsevier) и другие. Для выявления дополнительных данных был применен интернет-поиск, в результате которого на сайтах специализированных научных журналов, а также на сайтах, посвященных библиотечной сфере, была собрана научная информация о развитии библиотечной отрасли, прежде всего в США за период от начала XXI в. и до настоящего времени. Для сбора эмпирических данных был применен метод научного наблюдения, с помощью которого было изучено более сотни официальных сайтов российских и зарубежных общедоступных библиотек.

Выбор этих групп библиотек обоснован их ролью в национальных библиотечных системах. Современные национальные библиотеки (далее НБ), оставаясь главным информационным ресурсом для научных исследований, все шире раскрывают двери рядовому пользователю, все более ориентируются на его информационные потребности [Тикунова, 2019, 133–134]. Такая стратегия деятельности вытекает из осознания того, что НБ является не только хранителем и распространителем информации, но и ведущим культурным институтом, национальным музеем книги и книгопечатания и потому обязана сделать свои книжные сокровища более доступными широким кругам населения. Выбор общедоступных государственных библиотек Российской Федерации в качестве объектов исследования опосредован тем, что эти библиотеки имеют значительную ресурсную базу (информационную, технологическую, научную, кадровую) и являются методическими центрами.

В отличие от муниципальных библиотек они предназначены для обслуживания информационных потребностей населения всей страны (федеральные библиотеки) или отдельных субъектов России (центральные библиотеки субъектов Российской Федерации). Реализация этой функции невозможна без развития дистанционного обслуживания.

Для обработки полученных данных был использован целый комплекс аналитических методов, позволяющих проанализировать статистические данные и терминологическую систему, осуществить аналитико-синтетическую обработку документного потока, рассмотреть исследуемую проблему с точки зрения системного и культурологического подходов.

Анализ полученных в ходе исследования данных позволил определить тренды библиотечной цифровизации, которые во многом совпадают с мировыми трендами развития цифровой экономики, среди которых следует выделить интернетизацию. Современные ученые рассматривают интернетизацию как процесс активного внедрения интернет-технологий и веб-сервисов для формирования необходимого условия развития цифровой экономики – виртуальной составляющей информационного пространства современного социума [Попова, 2009, 47].

Создаваемая как всемирная система объединённых компьютерных сетей для хранения и передачи информации, современная информационно-коммуникационная сеть «Интернет» – это широко распространённая информационная инфраструктура – коммуникационная и контентная платформа глобального масштаба. Интернет-технологии, обеспечивая информационные коммуникации, предоставляют возможность:

- мгновенной передачи данных (видео–, аудио– или текстовой информации) в любых цифровых форматах в режиме реального времени;
- использовать разные компьютерные устройства для приема и передачи данных;
- получать удаленный доступ к цифровым данным других владельцев или провайдеров информации на условиях этих владельцев или провайдеров;
- одновременного совместного создания и использования информационных ресурсов [Шрайберг, 2014, 19–21].

Проведенное исследование показало, что современные общедоступные библиотеки, претендующие на роль социального института, гарантирующего свободный и всеобщий доступ к знаниям, информации и культуре, активно внедряют современные интернет-технологии и веб-сервисы.

При этом взаимодействие библиотеки и сети Интернет можно рассматривать с нескольких позиций:

- библиотека как пользователь интернет-технологий и веб-сервисов,
- библиотека как точка доступа к сети Интернет,
- библиотека как создатель (производитель) интернет-контента.

Триединство выполнения этих ролей, их взаимосвязь и сбалансированное взаимопроникновение являются необходимыми и обязательными условиями выполнения библиотечным социальным институтом своих социальных функций – сохранение и трансляция документированного знания [Тикунова, 2009, 98–99].

Библиотека как пользователь интернет-технологий и веб-сервисов

Анализ, собранных в ходе исследования данных показал, что интернет-технологии проникли практически во все направления библиотечной деятельности.

При формировании фондов используются поисковые системы ресурсов интернета для изучения рынка книжной продукции и информационных услуг; с помощью веб-сервисов электронной торговли оформляют заказ, проводят электронные аукционы, тендеры, конкурсы на приобретение изданий и подписку ресурсов, оплачивают приобретение новых документов или доступа к лицензионным ресурсам; копируют открытые электронные ресурсы свободного доступа, размещенные в информационно-коммуникативной сети Интернет.

Для организации хранения и обеспечения сохранности документов собственного библиотечного фонда (в том числе электронных информационных ресурсов собственной генерации) библиотечные учреждения внедряют Интернет вещей или дистанционный контроль в автоматизированных хранилищах. Для хранения создаваемых современными библиотеками электронных мультимедийных ресурсов (виртуальных выставок, видеозаписей мероприятий, и других цифровых данных) применяются облачные технологии.

Занимаясь каталогизацией документов собственного библиотечного фонда, многие библиотеки заимствуют библиографические записи из внешних ресурсов. Для формирования фактографических и библиографических БД, прежде всего краеведческой тематики, которые являются неотъемлемой частью справочно-поискового аппарата, библиотеки используют Интернет-ресурсы, находящиеся в общественном достоянии.

Наиболее широко и в последние годы особенно активно интернет-технологии и веб-сервисы используются в организации библиотечного обслуживания. Можно выделить два основных вектора внедрения этих цифровых технологий: для обслуживания пользователей в помещении библиотеки и для организации обслуживания в дистанционном режиме.

Использование интернет-технологий для обслуживания пользователей в помещении библиотеки позволяет реализовать самую простую роль, выполняемую всеми библиотечными учреждениями, подключившимися к сети Интернет – **«Библиотека как точка доступа к Интернет-ресурсам и веб-сервисам»**. С этой целью библиотеки организуют для своих пользователей автоматизированные рабочие места, оснащенные браузерами для доступа к сети Интернет. При этом крупные библиотеки используют проводное (оптоволоконное) подключение, небольшие библиотеки – беспроводные способы подключения, например, через спутниковые модемы, мобильную связь. Большинство государственных общедоступных библиотек (федеральных и центральных библиотек субъектов России) дополнительно предоставляют для пользователей, пришедших со своими гаджетами, возможность подключения к сети Интернет с помощью беспроводных Wi-Fi-технологий. Кроме того, для обслуживания пользователей в помещении библиотеки организуется бесплатный доступ не только к бесплатным и открытым Интернет-ресурсам, но и к дорогостоящим лицензионным БД других агрегаторов. Для оказания помощи в поиске и оценке сетевых информационных ресурсов, облегчения навигации в сети Интернет библиотеки составляют вебографические путеводители, снабжая их экспертной (рекомендательной) оценкой.

Большинство библиотек, нацеленных на максимально возможное удовлетворение информационных и социокультурных потребностей своих пользователей, а также на сохранение и развитие специфики библиотечного сервиса, не ограничиваются реализацией роли «Библиотека – точка доступа к сети Интернет». Для обслуживания пользователей, пришедших в помещение библиотеки, с помощью интернет-технологий организуются услуги межбиблиотечного абонемента и электронной доставки документов, в том числе: ведется поиск документов через электронные каталоги (далее ЭК) и БД других библиотек и информационных центров, оформляется онлайн-заказ электронных версий изданий, ведется контроль за выполнением заказа, осуществляется информирование об этапах выполнения заказа. В дополнение к этому создаются виртуальные читальные залы других библиотек или точки доступа к Национальной электронной библиотеке с правом доступа к документам, находящимся под действием авторского права.

Одним из направлений интенсивного внедрения интернет-технологий в работе общедоступных библиотек является дистанционное обслуживание пользователей. Выход в интернет-среду позволяет реализовать модель библиотеки без границ, которая с одной стороны, обеспечивает пользователям широкий доступ к информационным ресурсам и услугам, в том числе других библиотек и информационных центров, в режиме 24/7, а с другой стороны – позволяет увеличить количество собственных потенциальных пользователей [Тикунова, Новосибирск, 2021, 34]. При этом круг потенциальных пользователей библиотеки может ограничиваться только проблемами языковой коммуникации и отсутствием доступа к сети Интернет. Кроме того, применение интернет-технологий для организации дистанционного обслуживания позволило эффективнее реализовывать принципы доступности, оперативности, экономичности и самообслуживания [Тикунова, Самара, 2021, 17]. В связи с этим в рамках проведенного исследования изучению организации дистанционного обслуживания на веб-сайтах библиотек было уделено особое внимание. На первом этапе исследования были обследованы официальные сайты 24 НБ 22 стран мира, в том числе 19 европейских библиотек, 2 североамериканские, 2 – из Австралии и Океании и 1 библиотека из Азии. На втором этапе были просмотрены официальные сайты российских государственных общедоступных библиотек, в том числе 8 федеральных библиотек Министерства культуры Российской Федерации и центральных библиотек всех 85 субъектов России (далее – ЦБ) [Тикунова, 2022, 19–20].

В настоящее время все без исключения российские государственные общедоступные библиотеки применяют цифровые технологии в организации дистанционного обслуживания через

свои официальные сайты, аккаунты социальных сетей, каналы интернет-платформ. Отдельные, наиболее технологически развитые библиотеки с этой целью разрабатывают и предлагают своим пользователям мобильное приложение.

Исследование показало, что дистанционное обслуживание с применением интернет-технологий и веб-сервисов развивается в общедоступных библиотеках по нескольким направлениям:

- обеспечение доступности собственных информационных ресурсов;
- предоставление справочного обслуживания;
- информирование пользователей о библиотеке, ее ресурсах и услугах;
- организация дистанционных услуг социокультурного характера.

Организация доступа к электронным информационным ресурсам является наиболее распространенным видом дистанционных услуг. Можно выделить два основных вектора реализации этой задачи: доступ к собственным ресурсам и доступ к сетевым ресурсам других владельцев или агрегаторов.

На сайтах библиотек был выявлен десяток дистанционных услуг, обеспечивающих доступность информационных ресурсов. Анализ этих услуг показал, что доступность собственных ресурсов определяется библиотеками по-разному. ЭК и коллекции оцифрованных документов, не охраняемых авторским правом, доступны на сайтах подавляющего числа библиотек любому пользователю интернета, на некоторых сайтах – даже без регистрации. Доступ к электронным библиотекам и другим электронным коллекциям большинство библиотек предоставляли на своем официальном сайте только тем, кто имел читательский билет и прошел дополнительную регистрацию на сайте. На сайте НБ Испании пользователи могли даже прослушивать записи музыкальных произведений из фонда аудиодокументов. В ходе обследования сайтов российских библиотек был выявлен еще один вариант обеспечения дистанционного доступа к электронным ресурсам на веб-сайте библиотеки – через подключение к Справочно-информационному интернет-порталу государственных услуг Российской Федерации «Госуслуги». В результате граждане России, имеющие учетную запись в этой системе, получали бесплатный доступ к оцифрованным документам библиотек.

Анализ собранных данных показал, что библиотеки на своих сайтах организуют дистанционный доступ к сетевым информационным ресурсам других владельцев или агрегаторов. Практически все библиотеки на своих официальных сайтах размещают информацию об общедоступных и свободных (бесплатных) авторитетных интернет-ресурсах.

Следующую сервисную группу составили услуги, обеспечивающие доступ к документам из библиотечного фонда. Достаточно распространена дистанционная услуга заказа (бронирования) документов из фондов библиотеки. В 2020 г. эту услугу предоставляли на своих сайтах практически все обследуемые НБ и около трети всех ЦБ субъектов РФ. Среди российских библиотек одни организовывали заказ книг из фонда абонементов, другие – из фондов читальных залов, третьи – на кафедре выдачи по выбору самого пользователя.

10. Սուքիասյան Գ. Հայկական գրատպության 510-ամյակը (1512-2022 թթ.) // Հայագիտական հանդես, Երևան, ՀՊՄՀ, 2022, № 1, էջ 15-30:
11. Վերանորոգվել է Շուշիի գրադարանը // Հոգևոր հայրենիք, Երևան, 2011, թիվ 2, էջ 8:

ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՈՉ ԳՐՔԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ԱՐՎԵՍՏԻ ԲԱԺՆՈՒՄ

Բանալի բառեր՝ Հայաստանի ազգային գրադարան, արվեստի բաժին, հավաքածու, Խ. Աբովյան, բացիկ, լուսանկար, բնօրինակ նկար, օրացույց, հրատարակություն:

Keywords: National Library of Armenia, Art Department, collection, Kh. Abovyan, postcard, photo, original picture, calendar, publication.

Խաչատուր Աբովյանը իր գործունեությամբ նոր դարագլուխ է բացել ոչ միայն հայ գրականության, այլև բովանդակ հայ գեղարվեստական մշակույթի համար: Աբովյանը նոր ճանապարհ է բացել հայկական ամբողջ գեղարվեստի համար՝ ժողովրդի կյանքի ու ժամանակի հետ սերտորեն կապված ռեալիստական արվեստի ճանապարհը:

Աբովյանի հայրենասիրական գաղափարները տոգորել են արվեստագետներին, Աբովյանի ռեալիզմը ժառանգել են նաև հայ դրամատուրգիան և արվեստը: Միջնորդաբար, թե անմիջականորեն, իրենց վրա Աբովյանի ազդեցությունն են կրում հայ կերպարվեստի շատ ու շատ գործեր: Ստեղծագործական վերաբերմունք կյանքի երևույթների հանդեպ, անձնագոհ սեր դեպի հայրենիքն ու ժողովուրդը, վսեմ ու անխախտ սկզբունքներ. այն ամենը, ինչով բնութագրվում է Աբովյանի կյանքն ու ստեղծագործությունը, հավասարապես հոգեհարազատ է բոլոր արվեստագետներին՝ գրող, թե երաժիշտ, նկարիչ, թե դերասան [Ժամանակակիցները Խ. Աբովյանի մասին, 1941, 58]:

Արվեստի միջոցով Աբովյանի նվիրական կերպարի լուսաբանումը եղել և մնում է հայ դասական, ինչպես նաև ժամանակակից դրամատուրգների, կոմպոզիտորների, նկարիչների և քանդակագործների ընդգրկումն ու մեծ կարևորություն ներկայացնող թեմաներից մեկը: Ավելի քան մեկ դար առաջ մեծ լուսավորիչը կռահեց, իր կյանքով ու գործով գեներացրեց գաղափարներ, որ այսօր էլ ոգեշնչում են ժողովրդին: Ահա թե ինչու Աբովյանի կերպարն ու ստեղծագործությունը ներշնչանքի աղբյուր են եղել մեր արվեստագետների համար: Զուր չէ, որ Աբովյանի թեման այնքան շատ է զբաղեցրել մեր քանդակագործներին, երաժիշտներին, նկարիչներին, թատրոնին: Մեր անցյալի գրողներից թերևս ոչ ոք այնքան չի հուզել մեր արվեստագետներին, որքան Աբովյանը [Անմահ ավանդներ, 1955, 3-4]:

Հայաստանի ազգային գրադարանի արվեստի բաժնում խնամքով պահպանվում է Խ. Աբովյանին նվիրված ոչ գրքային հրատարակությունների ֆոնդ՝ բնօրինակ նկարներ, լուսանկարներ, ազդագրեր, բացիկներ, պաստառներ, օրացույցներ, ուղեցույցներ և այլ բացառիկ նյութեր:

Անդրադառնալով այն հարցին, թե ով և երբ է վրձնել Խ. Աբովյանի դիմանկարը, մեզ ծանոթ դիմանկարը Աբովյանի^օնն է, թե^օ ոչ, հարազա^օտ է, թե^օ կասկածելի... այդ հարցերը շատերին են հետաքրքրել: Այդ բոլոր հարցերի պատասխանը տալիս է բանասիրական գիտությունների դոկտոր, արվեստագետ Պիոն Հակոբյանը: Մեզ հասած առաջին յուղանկար-դիմանկարը ստեղծվել է մոտավորապես 1831 թ. աշնանը դորպատյան նկարիչ Լյուդվիգ ֆոն Մայդելի կողմից Աբովյանի կենդանության օրոք:


Պիոն Հակոբյանը գրում է. «Աբովյանի ողբերգական անհետացումից երեք ամիս անց, 1848 թ. հուլիսի 4-ին, ընդունված կարգով Երևանի գավառական խնամակալությունը, նրա թողած անձնական իրերի կարևոր մասը պատշաճ արձանագրությամբ պահ է տալիս կնոջը՝ Էմիլիե Լոգենին: Համապատասխան ցուցակի 16 և 38-րդ կետերից իմացվում է, որ դրանց մեջ է եղել նաև գրողի ձեռագիրը և որ խիստ կարևոր է՝ դիմանկարը՝ «Портрет Христофора

Абовяна»: Այս դիմանկարը Աբովյանի կնոջ մոտ էր մնացել մինչև նրա մահը: Վավերագրով հաստատված է, որ Աբովյանի որդին՝ Վարդանը 1861 թ. հունվարի 19-ին Դորպատից վերադառնում է Հայաստան և մորն այլևս կենդանի չի գտնում: Աբովյանի ձեռագրերը մնացել էին աղջկա՝ Ադելաիդայի տանը՝ անմխիթար վիճակում, շատը ցրված ու կորած, դիմանկարն անհետացած: Վարդանը անմիջապես տեր է կանգնում հոր գրական ժառանգությանը և կարգի բերում ձեռագրերը: 15 տարի կորած համարվելուց հետո Վարդանին հաջողվում է վերադարձնել հոր յուղանկարը ինչ-որ պարոնից, սակայն անմխիթար վիճակում՝ եզրերը մաշված և պատառոտված» [Հակոբյան, 1967, 45]:

Նոր դիմանկարը վերականգնելու համար Վարդանը խնդրում է նկարիչ Գևորգ Բաշինջադյանի աջակցությունը: Աբովյանի դիմանկարը վերականգնելու համար Գ. Բաշինջադյանը պատառոտված ծայրերը ուղղում է, անջատված մասերն իրար մոտ բերում և, ապա, ամբողջը կպցնում ամուր ստվարաթղթի վրա, իսկ բաց մնացած տեղերը լրացնում սև ներկով:

Նկարն այնուհետև սրբություն է դառնում Աբովյանի որդու, ապա նաև թոռների համար: Նրանք 1938 թ. օգոստոսին գրողի ձեռագրերի հետ պապի պատկերը նվիրում են Հայաստանի գրական թանգարանին (Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան), ուր և պահվում է մինչ օրս:

Հայաստանի ազգային գրադարանի արվեստի բաժնի լուսանկարների հավաքածուում պահպանվում են Խ. Աբովյանի բացառիկ 2 բնօրինակ նկար՝ Հրաչյա Ռուխկյանի գրաֆիկական աշխատանքը և ևս մեկը: Վերջինը բացառիկ նմուշ է, որը առկա է միայն Հայաստանի ազգային գրադարանում: Ամենայն հավանականությամբ դրա հեղինակը ռուս սովետական նկարիչ, ռեժիսոր Նիկոլայ Տիտովն է՝ ծնված 1950 թ. Մոսկվայում: Այլ մանրամասներ նկարի մասին, ցավոք, չկան: Երբ է նկարվել, և ինչն է եղել Աբովյանին նկարելու դրդապատճառը՝ անհայտ են:



Խ. Աբովյանի դիմանկարից արված լուսանկարները հարյուր-հազարավոր օրինակներով տպվում են դասագրքերում, գրական-պատմական հետազոտություններում և առհասարակ շատ տարածված են մեր շրջանում: Այս գործի համար պետք է շնորհակալ լինենք Դորպատում ապրող բժիշկ, Վարդան Աբովյանի ընկեր Լևոն Տիգրանյանին, քանի որ նա է Վարդան Աբովյանին համոզել տրամադրել իրեն յուղանկարը և հենց այդ լուսանկարի շնորհիվ է, որ մենք չենք կորցրել մեր հանճարի միակ նկարը:

Տպագրական եղանակով առաջին անգամ Աբովյանի դիմանկարը հրատարակվել է 1890 թվականին Ալիշանի «Այրարատ» աշխատության մեջ: Դրանից յոթ տարի հետո՝ 1897 թ., վերատպվում է Մոսկվայում լուսանկարիչ Բարկանովի կողմից: Վերջինս դիմանկարի եզրերի պատառոտված մասերը կրկնակի վնասելուց խուսափելու համար դրել է ձվաձև շրջանակի

մեջ, ինչն էլ բավականին հաջող է ստացվել: Աբովյանի նկարի այս երկու տպագիր տարբերակները գրեթե չեն տարբերվում իրարից և այնուհետև շատերն են այս օրինակներից լուսանկարել ու արտատպել⁶:

Հայաստանի ազգային գրադարանում պահպանվում են Աբովյանի առաջին յուղանկարից արված բազմաթիվ լուսանկարներ՝ տարբեր չափերի և ֆորմատների: Լուսանկարների մեջ մեծ արժեք է ներկայացնում Աբովյանի մահվան հարյուրամյակի առիթով 1848 թ. լույս տեսած ազդագրի լուսանկարը, որից Գրադարանը ունի 2 տարբեր չափերի լուսանկար և մեկ մեծ պաստառ: Այստեղ պատկերված են Խ. Աբովյանի հայրական տունը, Էջմիածնի Մայր տաճարը, Արարատը, 1828-1829 թթ. ռուս-թուրքական պատերազմից մի դրվագ, «Վերք Հայաստանի» և «Պարապ վախտի խաղալիքի» գրքերի տիտղոսաթերթերը, հայ գրողներ Ստ. Նազարյանը, Մ. Նալբանդյանը, Պ. Պոռոջյանը, Դ. Աղայանը և մեջբերված են Խ. Աբովյանի որոշ մտքեր:



Հայաստանի ազգային գրադարանի արվեստի բաժնում կա նաև Աբովյանին նվիրված բացիկների հարուստ հավաքածու:

Առհասարակ, Խաչատուր Աբովյանի մասին շատերի պատկերացումները սկսվում ու ավարտվում են «Վերք Հայաստանի» վեպի մեկ նախադասությամբ. «Օրհնվի էն սհաթը, երբ ոսի օրհնած ոտը Հայոց լիս աշխարհը մտավ...» [Աբովյան, 2002, 121]:

Սակայն քիչ է հայտնի, որ Աբովյանը հարում էր Ներսիսական կուսակցությանը, որը դժգոհ էր հայոց եկեղեցու և, առհասարակ, հայերի հանդեպ ցարական Ռուսաստանի քաղաքականությունից:

«Զիրականացան հայ ժողովրդի քաղաքական ակնկալությունները, որոնց համար ռուսները քաղաքական հույսեր էին ներշնչում ռուս-պարսկական և ռուս-թուրքական վերջին պատերազմների ժամանակ՝ հայերի աջակցությունը ստանալու նպատակով» [Հակոբյան, 2013, 87]: Ներսիսականներն ամեն ինչ անում էին Թբիլիսիի հայոց դպրոցը ռուսական ազդեցությունից դուրս պահելու ուղղությամբ:

Այն, որ Խաչատուր Աբովյանն առաջինն էր, ով Դորպատի համալսարանի պրոֆեսոր Ֆրիդրիխ Պարրոտի⁷ գլխավորած արշավախմբի հետ Արարատ լեռան գագաթը բարձրացավ, գիտենք բոլորս: Սակայն այնքան էլ չի խոսվում այն մասին, թե այդ համարձակ քայլն ինչ է արժեցել Խաչատուր Աբովյանին:

⁶ ԳԱԹ-ում պահվում է այդօրինակ մի լուսանկար՝ որոշ շտկումներով արտանկարված Աբովյանի Երկերի մոսկովյան հրատարակությունից, Հեռավոր Արևելքի Ամուրյան երկրամասի Նիկոլայ-Ուսսուրիյսկ քաղաքում հիմնավորված հայագի լուսանկարիչ Ա. Մ. Բուդաղյանցի արվեստանոցում:

⁷ Ֆրիդրիխ Պարրոտ, 1791-1841, բնագետ, բժիշկ, Արարատ բարձրացած առաջին մարդը:

1829 թ. սեպտեմբերի 27-ին, երրորդ փորձից հետո, ժամը 15:15-ին, պրոֆեսոր Պարրոտին և էջմիածնական Աբովյանի գլխավորած 6 հոգանոց խմբին հաջողվում է բարձրանալ սրբազան լեռան գագաթը: Նրանք մոտ 45 րոպե են անցկացնում Արարատի գագաթին, Պարրոտը երկրաբանական չափումներ է անում, որոշում լեռան բարձրությունը: Աբովյանը լեռան գագաթին տնկում է իր հետ բերած փայտե խաչը, ապա արշավախումբը բռնում է վերադարձի ճանապարհը: Փորձելով ինչ-որ բան հետը վերցնել և ոչինչ չգտնելով՝ Աբովյանը թաշկինակի մեջ մի սառույցի կտոր է փաթաթում, ապա հավիող այդ սառույցի ջուրը լցնում շիշն ու վերցնում իր հետ [Հակոբյան, 1997, 125]:

Արարատի գագաթը հաղթահարելուց հետո, սակայն, բոլորին տարակուսանքն է պատում, անգամ Պարրոտին. լեռան գագաթին Նոյի տապանը չկար: Բայց ինչպե՞ս էր դա հնարավոր. ժողովուրդը գիտեր, որ ջրհեղեղից հետո այդ տապանը կանգնած է Արարատի գագաթին: Դրան հավատում էին վերելքի բոլոր մասնակիցներն անխտիր: Բայց այդ դեպքում ո՞ւր էր անհետացել տապանը, և ինչպե՞ս է, որ ոչ ոք չէր իմացել: Մի թե սխալվել են, հավատացել են մի բանի, որը չի եղել: Հատկապես վախեցած ու տարակուսած էին նրանց ուղեկցող շինականներից երկուսը, որոնք մինչև գագաթ բարձրացել էին:

Պարրոտը փորձում է առաջ քաշել միակ հնարավոր վարկածը՝ տապանը չի անհետացել, շարունակում է մնալ սարի գագաթին, պարզապես ծածկված է սառույցի հաստ շերտով: Հետևաբար՝ անտեսանելի է: Այս վարկածն ավելի է սարսափեցնում շինականներին. փաստորեն, իրենք սրբապղծություն են արել՝ կանգնելով տապանի վրա: Դրա պատասխանն էլ Աբովյանն է գտնում, թե՛ իրենք կանգնած են եղել ձյան ու սառույցի վրա, ոչ թե անմիջականորեն տապանի: Հետևաբար՝ իրենց արածն ամեննին սրբապղծություն չէ [Նույն տեղում, 126]:

Էջմիածին վերադառնալով՝ Աբովյանը հանդիպում է տխուր մի իրականության. «Արյունոտված սրտով ես կրկին հանդիպեցի Էջմիածնի սև պատերին, որոնք ինձ երբեք այնքան սարսափելի չէին թվացել, ինչպես այդ ժամանակ: Ինձ համար աներևակայելի տանջանքներով անցավ ամբողջ շաբաթը: Համարյա ամեն օր ես կանչվում էի՝ այն ժամանակ դեռևս հզոր և ամբողջ եկեղեցու և, նույնիսկ, ազգի վրա անսահմանափակ իշխանություն ունեցող սինոդի սարսափելի դատաստանին [Պիոն Հակոբյան, 69]:

Հայ մամուլը ևս դատաստան էր պահանջում Աբովյանի դեմ, որը Արարատյան վերելքներով «պղծել» էր ազգային սրբությունները [Նույն տեղում, 69]:

Այդ առիթով Աբովյանը խոստովանում է. «Մեկի հանդիմանությունները, սպառնալիքները, հրահանգները, մյուսի խոստումները՝ այդ օրվանից հինգ տարի անց եպիսկոպոսական աստիճան և տեղ տալու վերաբերյալ, ոչինչ, ոչինչ չէր սարսափեցնում, չէր հրապուրում ինձ: Սարսափելի հուսահատությունը դժոխային ուժով համակեց ինձ» [Աբովյան, 1956, 134]:

Նա ներկայանում է սինոդին և հայտնում հոգևոր կոչումը թողնելու իր վճիռը:

«Սինոդը միաբանության ցուցակից ջնջելով իմ անունը, նզովք կարդաց՝ օրհնության փոխարեն: Խլեցին իմ բոլոր իրերը՝ մինչև վերջին թելը, թողնելով միայն վրայիս հագուստը: Վայ նրան, ով դրանից հետո նույնիսկ համարձակվեր ինձ ողջունել: Մութ գիշերին, առանց մի կուպեկի, դուրս եկա վանքից ու գիշերն անցկացրի փեսայիս տանը՝ Վաղարշապատում» [Նույն տեղում, 134]:

Հոգեկան ծանր ապրումների մեջ Աբովյանը վերադառնում է ծնողների տուն: Եվ ահա 1830 թ.-ի գարնանը ստացվում է Պարրոտի նամակը Աբովյանի անունով. «Միրելի՛ բարեկամ, Ձեր վիճակը որոշված է, կատարվել է՝ ինչ ցանկանում էիք: Անհամբեր սպասում եմ Ձեր ուրախ գալստյանը» [Հակոբյան, 1967, 75]:

Աբովյանի՝ Դորպատում պետական կրթաթոշակով սովորելու թույլտվությունը շատ երկար ճանապարհ է անեցել: Աբովյանը պետք է նախ՝ ստանար կաթողիկոսի համաձայնությունը, ինչը տրվել էր մեծ դժվարությամբ: Սակայն դա էլ բավական չէր: Պարրոտն արել էր անկարելին՝ ստացել էր Դորպատի համալսարանի ռեկտորի, ապա Լուսավորության նախարար-

րի, Կովկասի փոխարքայի և, վերջապես, կայսր Նիկոլայ I-ի անմիջական թույլտվությունը: Ի դեպ, կայսրն անձամբ է իր ձեռքով ստորագրել Աբովյանին կրթության հնարավորություն տալու դիմումը:

Պարրոտի և Աբովյանի վերելքը Արարատի գագաթ մշտապես եղել է հայ արվեստագետների ուշադրության կենտրոնում: Բազմաթիվ նկարներից պետք է հատկապես առանձնացնել Էդ. Իսաբեկյանի փառահեղ նկարը, որի կրկնօրինակները նույնպես կան Հայաստանի ազգային գրադարանի ալբոմային հավաքածուներում:

Հայաստանի ազգային գրադարանի արվեստի բաժնի օրացույցների հավաքածուում առկա է Խ. Աբովյանի պատկերով 3 օրացույց՝ 1957 թ. «Երևան» կուլտուրական միության կենտրոնական վարչության հրատարակած, 1973 թ. Թեհրանում հրատարակված (կազմ. Տաճատ Պողոսեան), և 2009 թ. ՀՀ Մշակույթի նախարարության հրատարակած:

Առհասարակ, սխրագործությունն է եղել Աբովյանի կյանքն ու գործունեությունը: Աբովյանը մեր ժամանակակիցն է, ոչ միայն որպես մեծ հայրենասեր, վսեմ գաղափարների տեր մտածող, այլև իբրև մեծ արվեստագետ՝ իր ռեալիստական գրչով, կյանքի հանդեպ կրքոտ վերաբերմունքով, ստեղծագործական հանդուգն որոնումներով, իր ինքնատիպ ու անկրկնելի արվեստով, այլ խոսքով, իր այն որակով, որին այսօր նորարարություն անունն են տալիս: Հետևաբար, Աբովյանը եղել և մնալու է հավերժ իր ինքնատիպությամբ և արվեստով:

SUMMARY

The article presents the non-book publications dedicated to Khachatur Abovyan in the art department of the National Library of Armenia. The first original oil painting of the great enlightener was made around 1831. In autumn by the Dorpat artist Ludwig von Meidel. Later, hundreds and thousands of examples were drawn and printed from that blueprint, which are widely used among Armenians. In addition to a large collection of photographs, the art department of the National Library of Armenia preserves exclusive original paintings, postcards, calendars, guides devoted to Abovyan, which are of great value for study.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Անմահ ավանդներ // Սովետական արվեստ, Երևան, 1955, № 5, 10-րդ տարի, էջ 3-4:
2. Ժամանակակիցները Խաչատուր Աբովյանի մասին, կազմ. Ն. Մուրադյան, Երևան, Արմֆան, 1941, 128 էջ:
3. Աբովյան Խ. Վերք հայրենասերի, Երևան, Զանգակ, 2022, 376 էջ:
4. Աբովյան Խ. Երկերի լիակատար ժողովածու, հտ. 7, Երևան, ԳԱԱ հրատ., 1956, 524 էջ:
5. Հակոբյան Պ. Խ. Աբովյանը և երաժշտությունը, // Սովետական արվեստ, Երևան, 1955, № 5, 10-րդ տարի, էջ 6-12:
6. Հակոբյան Պ. Աբովյանի անհայտացման հին վարկածի նոր «մեկնաբանումը» // Լրաբեր հասարակական գիտությունների, Երևան, 1977, № 5, էջ 61-73:
7. Հակոբյան Պ. Խաչատուր Աբովյան. Կյանքը, գործը ժամանակը, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1967, էջ 798:
8. Հակոբյան Պ. Խաչատուր Աբովյանի կյանքի և ստեղծագործության Երևանյան շրջանը (1843-1848), Երևան, Ա.հ., 2013, 27 էջ:
9. Հակոբյան Պ. Խաչատուր Աբովյանի կենսագրության առեղծվածները, Էջմիածին, Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 1997, 486 էջ:
10. Հակոբյան Պ. Խաչատուր Աբովյանի տուն-թանգարան / Ուղեցույց, Երևան, Հայաստան, 1976, 14 էջ:

ԳՐԻԳՈՐ ԽԱԼԴԱՐՅԱՆՑԸ ԵՎ ՏՊԱԳՐԱԿԱՆ
ԳՈՐԾԸ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ

Բանալի քառեր՝ Հովսեփ Արղության, Գրիգոր Խալդարյան, Մարգար Երևանցի, Մարուքյան, հրատարակչություն, տպարան, գաղութ, Պետերբուրգ, Նոր Նախիջևան, Աստրախան:

Keywords: Hovsep Arghutyan, Grigory Khaldaryan, Margar Yerevantsi, Maruqyan, publishing house, printing house, colony, Peterburg, Nor Nakhichevan, Astrakhan.

Սույն հոդվածի **գիտական** կարևորությունը, **ճանաչողական** նշանակությունն ու **արդիականությունը** պայմանավորված է հայագիտական հիմնահարցերի դիտարկմամբ և ուսումնասիրությամբ, ինչպես նաև սփյուռքի գաղթօջախներում ծավալվող կրթամշակութային ու գրատպության գործունեությունն օրյելտիվ և փաստացի ներկայացնելն ու հանրայնացնելը հատկապես այսօր խիստ անհրաժեշտ է:

Հոդվածի **նպատակը** պայմանավորված է հայ գրքագիտության և տպագրության վերաբերյալ արդի գիտության պահանջով: Ռուսաստանում 18-19-րդ դարերի հայկական տպագրության պատմական և փաստատեղեկատվական դերի հետազոտումը հայ գրքի և տպագրության պատմության կարևոր և անհրաժեշտ հարցերից մեկն է ժամանակակից հայ գրքի և տպագրության տեսության համատեքստում: Այստեղից էլ հետևում է նրա հետազոտման անհրաժեշտությունը. անհրաժեշտ է ներկայացնել ռուսահայ տպագրության կատարած դերը, տեղեկատվական, պատմական, կրթական, մշակութային նշանակությունը ու վերլուծել նրա զարգացման ուղիները, տարբեր տեսանկյուններով բնութագրել ռուսահայ տպագրությանն առնչվող պատմական, աղբյուրագիտական, բանասիրական, գրքագիտական, մատենագիտական ուսումնասիրությունները:

Հայ ժողովրդի կյանքը այնպես է դասավորվել, որ անկախ իրենց կամքից սկսել են աշխատել, ստեղծագործել իրենց հայրենիքի սահմաններից դուրս: Ստեղծել են մշակութային օջախներ՝ կրթության, գիտության, արվեստի, գրատպության կենտրոններ: Այդ օջախներից յուրաքանչյուրի գործունեությունը նպաստել է ինչպես հայ ժողովրդի, այնպես էլ տվյալ երկրի ժողովրդի հասարակական զարգացման գործընթացին: Այդ կենտրոնները նաև աչքի են ընկել իրենց ինքնատիպությամբ և հայ ժողովրդի պատմության կերտման մեջ իրենց դրական դերն են ունեցել: Ռուսաստանը զերծ չի մնացել այդպիսի օջախներ ստեղծելուց: 18-րդ դարը հայ ժողովրդի հաստատվելու ժամանակաշրջանն է Ռուսաստանում: Այդ ժամանակ հոգևորականները մեծ կապեր են ունեցել իշխանավորների հետ և կարողացել են օգնել հայ ժողովրդին:

Հովսեփ արքեպ. Արղությանը լավ գիտակցում էր՝ Ռուսաստանում մշակութային օջախներ ունենալով՝ հայ ժողովուրդը կպահպաներ իր հավատը և չէր գնա միսիոներների հետևից: Նա իր կողքին ուներ Հովհաննես Աղազարի Լազարյանի նման հարուստ հայ և Եկատերինա Բ-ի թույլտվությունը երկրում ստեղծագործելու և կայանալու համար:

Ռուսաստանի հայկական գաղթավայրերում 18-րդ դարի երկրորդ կեսին նախապայմաններ են ստեղծվում հասարակական և մշակութային ակտիվ գործունեության համար: Ստեղծված նախապայմաններից էր հայերի տնտեսական և քաղաքական դերի աճը: Բացվում են հայկական դպրոցներ, տպագրվում են հայերեն գրքեր:

Առաջին հայկական տպարանը Ռուսաստանում Գրիգոր Խալդարյանի տպարանն է, որը 1780 թ. Լոնդոնից Պետերբուրգ էր բերվել ռուսահայերի հոգևոր առաջնորդ, արքեպիսկոպոս Հովսեփ Արղությանի և բարերար, քաղաքական գործիչ Հովհաննես Աղազարի Լազարյանի հովանավորությամբ: Նրանք նշանավոր հասարակական գործիչներ էին և լավ էին հաս-

կանում ազգային լեզվով հրատարակչությունների նշանակությունը: Նրանք հասկանում էին ինչքան կարևոր է տպարանը մեր լեզվի պահպանության գործում:

Նոր Զուղայի գրասեր և հարուստ վաճառականներից մեկը՝ Գրիգոր Խոջամալի որդի Խալդարյանը [Հայկական սովետական հանրագիտարան, 1974, 705] ծնվել է 1732 թ.: Նա բավական երկար ժամանակ ապրելով Լոնդոնում, այնտեղ մի անգլիացի փորագրիչ վարպետի պատրաստել է տալիս հայերեն նոր տեսակի տպագրական տառեր: Նա թարգմանիչ էր, հրատարակիչ, բառարանագիր: Խալդարյանը փորձել է իրականացնել հայկական տպարան հիմնելու և գրքեր հրատարակելու իր երազանքը: Նա իր տպարանը սկզբից հիմնում է Լոնդոնում և 1780 թվականին հրատարակում է հայ լուսավորչական եկեղեցու մասին մի գիրք «Դաւանութիւն հաւատոյ» գիրքը [Լևոնյան, 1958, 163]: Սակայն տպարանը Լոնդոնում շատ կարճ կյանք է ունենում և այն տեղափոխվում է Պետերբուրգ:

Խալդարյանի տպարանը, տեղափոխվելով Պետերբուրգ, մեծ դեր է խաղում հայ մշակութային կյանքում: Նրա աջակիցներն էին կինը և Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը: Արղությանը խրախուսում է նրան և խոստանում է ամեն կերպ աջակցել նրա ազգօգուտ գործին: Նա ոչ միայն օժանդակում էր թերի տառերն ու պատկերները լրացնելու, ծախսերը հոգալու գործում, այլև ձեռք է բերում հրատարակության անհրաժեշտ գրքեր, համապատասխան խմբագրման ենթարկում և առաքում Պետերբուրգ: Միաժամանակ Արղությանը իր ընկերների միջոցով գրքերը տարածում էր Ռուսաստանի բոլոր հայաբնակ վայրերում: Անգամ ուղարկում էր երկրից դուրս ապրող հայերին: Ստացված գումարը ուղարկում էր Խալդարյանին՝ տպարանի պետքական ծախսերը հոգալու:

Խալդարյանը նկատելով, որ իր տառերի տեսակները քիչ են, Լոնդոնից հրավիրում է իր ծանոթ փորագրիչ վարպետին և խոշոր տառեր պատրաստելու պատվեր տալիս: Այստեղ տպարանը լույս է ընծայում շուրջ 16 անուն գիրք 9 տարվա ընթացքում:

1. Այբբենարան, 1781
2. Կրթութիւն քրիստոնէական, 1782
3. Ժամագիրք, 1783
4. Ներսէս Շնորհալի: Յիսուս որդի, 1785
5. Չամչեան Միքայել Աբրահամի: Պատմութիւն Սուրբ գրոց, 1785
6. Չամչեան Միքայել Աբրահամի: Պատմութիւն Սուրբ գրոց: Հատոր Բ, 1785
7. Սկզբունք քաղաքական ուսմանց, 1785
8. Աւետարան ճաշու: Տօնացոյց: Երկրորդ հատոր, 1786
9. Իլիա Մինեդիս: Վէմ գայթակղութեան, 1786
10. Ղազար Ջահկէցի: Աստուածադէրս, 1786
11. Ներսէս Շնորհալի: Աղոթք, 1786
12. Տարեցոյց և օրացոյց, 1986
13. Եղիշէ: Պատմութիւն Վարդանանց, 1787
14. Ժամագիրք, 1787
15. Գրիգոր Խալդարեանց, Ներսէս Շնորհալի: Գիրք որ կոչի Շավիղ լեզուագիտութեան, հաւատով խոստովանիմ, 1788
16. Կղեկատրա Սարաֆեան: Բանալի գիտութեան, 1788
17. Ներսէս Շնորհալի, Ներսէս Լամբրոնացի: Ընդհանրական դրուատ պատմագրաբար, 1788

1783 թվականին տպագրվում է մի ժամագիրք, որի հիշատակարանի մեջ Խալդարյանը պատմում է, թե ինքը վաղուց ցանկություն է ունեցել սեփական տպարան ունենալ: Դա է պատճառը, որ գնացել է Լոնդոն, տասը տարի մնացել, զանազան փորագրիչ վարպետների

դիմել, որ հայերեն տառերի ձուլման կադապարներ պատրաստեն: Այդ ամենի համար մեծ գումարներ է ծախսել և եկել Պետերբուրգ տպարան հիմնել [Լևոնյան, 1958, 163]:

1785 թ. լույս է տեսնում «Պատմութիւն սուրբ գրոց», նույն թվականին տպագրվում է «Յիսուս որդին»:

1785 թ. Հ. Արղությանը Աստրախանից և Նոր Նախիջևանից ամեն կերպ օգնում և ապահովում է տպարանի անխափան աշխատանքը: Մական տպարանի հեռու գտնվելու պատճառով լուրջ դժվարություններ է լինում թե՛ նյութեր պատրաստելու և ուղարկելու մեջ, թե՛ գրքերի իրացնելու գործում: Ահա սա էր պատճառը, որ Արղությանը սկսած 1785 թվականից ամեն կերպ համոզում էր Խալդարյանին տպարանը տեղափոխել Աստրախան կամ Նոր Նախիջևան: 1785 թ. Արղությանը նամակ է գրում Խալդարյանին մի քանի ձեռագրեր առաքելու մասին և հավելում. «Ախ եթե ինձ մերձ լինեիր, շատ ինչ յառաջանալոց էր և վասն անմահ էր մնալոց տպագրատունդ այդ: Բայց զինչ արարից, հեռի էս որպես յինէն, նմանապես և իր բազմութենէ... հայցեմ այնպէս հոգա և կարգաւորեայ վասն տպարանիդ, որ զկնի մահու քոյ և մեր մի խափանեսցի, այլ յաւիտեան յիշատակ մնասցէ անուն քոյ... որ ջանքդ իզուր չլինիցի: Ոհ, թէ մօտանայիր ինձ ասա կամ ի Նախիջևան [Բարխուդարյան, 1967, 220]»: Այսպիսի նամակ մի քանի անգամ է Արղությանը գրել Խալդարյանին: Նա ամեն կերպ համոզում էր տպագրիչին տպարանը տեղափոխելու և խոստանում էր համապատասխան վարպետներով ապահովել տպարանը՝ ավելի լավ աշխատելու: Խոստանում էր, որ տպարանը մինչև մահ կմնար տպագրիչի անվամբ և ոչ մի նեղություն չեն տա նրան: Արղությանը անգամ Խալդարյանի կնոջն է նամակ գրում՝ Կատարինէ Զաքարովնային: 1786 թ. նոյեմբերին Արղությանը նամակով դիմում է կնոջն ազդել ամուսնու վրա՝ տպարանը տեղափոխելու: Նա մանրամասնորեն բացատրում է տեղափոխման կարևորությունը:

Հ. Արղությանը հարավային Ռուսաստանում, որտեղ հայկական գաղթօջախներ կային, տպարան ստեղծելու եռանդուն գործունեություն էր ծավալում: Ահա այս բուռն գործունեության ժամանակ 1787 թ. օգոստոսին մահանում է Գ. Խալդարյանը՝ թողնելով տպարանը պարտքերի մեջ [Բարխուդարյան, 1967, 221]:

Տպագրված բոլոր գրքերը ծառայում էին երկու նպատակի համար. դասագրքեր, ձեռնարկներ, բառարաններ՝ մանուկների համար և ռուսաց լեզուն ուսուցանելու նպատակով, աշխատություններ՝ ուղղված երկու ժողովուրդների պատմությանն ու մշակույթին փոխադարձ ծանոթանալուն: Գ. Խալդարյանի հայ-ռուսերեն բառարանը, որը կրում էր «Գիրք, որ կոչի շաւիղ լեզուագիտութեան» խորագիրը: 1788 թ. հրատարակվում է Կլեոպատրա Մարաֆյանի «Գիրք, որ կոչի բանալի գիտութեան» ուսույց-բառարանը, որը նախատեսված էր և՛ կրթություն ունեցող երեխաների, և՛ բնակչության տարբեր խավերի համար [Բարխուդարյան, 2010, 289]: Նրա գրքում կան գեղեցիկ արտահայտություններ, որոնք մինչև հիմա օգտագործվում են՝ առաջին խոսակցություն՝ первый разговор, հավիտենական կյանք՝ вечная жизнь, երկնային թագավորություն՝ царство небесное և այլն:

Գարեգին Լևոնյանը գրում է. «Ինչպես երևում է, Խալդարյանց պարոն Գրիգորը մի քիչ էլ «գրոց» մարդ է եղել. իր տպագրած գրքերի վերջին երեսներում, երբ ազատ տեղ է մնացել, շարել և տպագրել է տվել անգլերենից թարգմանած իր փոքր աշխատությունները: Այդպիսիներին մենք տեսնում ենք «Սուրբ Գրոց պատմութեան» վերջում, որ «առ ի լնլոյ զպարապ տեղիս եղաք բան ինչ յաղագս իրավանց թարգմանեալ ի Անգլիացոց լեզուէ հայ բարբառ ի պարոն Գրիգորէ Խալդարեանց կոչեցելոյ»: Դարձեալ մի նման գործ մենք տեսնում ենք «Վեմ գայթակղութեան» գրքի վերջում, որ «առ ի լնլոյ զպարապ տեղիս» տպագրված է «Բան ինչ յաղագս նախանձաւորութեան» [Լևոնյան, 1958, 164]:

1788 թ. լույս տեսած գիրքը, որ կոչվում էր «Գիրք, որ կոչի բանալի գիտութեան», այս ինքնուսույց ձեռնարկը փաստորեն առաջին դասագիրքն էր ռուսահայ գաղթօջախների տարածքում և որպես այդպիսին զգալի դեր կատարեց հայոց լեզուն պահպանելու գործում:

Գրքի լույս ընծայման կապակցությամբ «Սանկտ-Պետերբուրգիե վեդեմոստի» թերթում նույն թվականին է 1788 թ.-ին տպագրվեց մի հայտարարություն, որով ծանուցում էր, թե Ելիզավետա Սարաֆովան (Մովսես Սարաֆյանի կինը և Մարիամ Կլեոպատրիայի մայրը) վաճառում է մի գիրք, որի արժեքը առանց կազմի 2 ռուբլի է, իսկ կազմով 2 ռուբլի 50 կոպեկ:

Այն ժամանակ տպագրված գրքերի վաճառքը շատ դժվար է եղել: Տպագրված հրատարակությունների տարածումը լավ կազմակերպված չլինելով՝ գրքերը մնացել են տպարանի պահեստներում և գոյացել են ահագին պարտքեր, որոնց տակ ճնշվել է Խալդարյանցը և սկսել է ելք փնտրել ազատվելու: Հովսեփ արքեպիսկոպոս Արդուրյանը, տեսնելով այս վիճակը, իր թեմում գտնվող հարուստ անձնավորություններից հանգանակում է 1200 թուման, վճարում հրատարակչության պարտքերը: Նա առաջարկում է հրատարակչին տպարանը տեղափոխել Նոր Նախիջևան, նորակառույց Ս. Խաչ վանքը: Խալդարյանը համաձայնում է և ազատվելով պարտքերից, սկսում է պատրաստվել տեղափոխության: Սակայն մահը վրա է հասնում և միանգամից փակվում է նրա տպարանի հարցը (1787 թ.) [Նույն տեղում]:

Հովսեփ Արդուրյանի ջանքերով 1790 թվականին Պետերբուրգից Նախիջևանի Սուրբ Խաչ վանք տեղափոխվեց Գ. Խալդարյանի տպարանը: Այստեղ տպարանը գործեց հինգ տարի և այդ քիչ ժամանակում հրատարակեց քսան անուն գիրք: Տպարանը մեծ աշխուժություն մտցրեց Նոր Նախիջևանի մշակութային կյանքում: Այն կարևոր էր ոչ միայն այնտեղի հայերի համար, այլև ամբողջ երկրամասի համար: Տպարանը հարավային Ռուսաստանում առաջինն էր [Բարխուդարյան, 1985, 327]:

Արդուրյանն այդքան հեշտ չի տեղափոխում տպարանը: Տպարանի համար գումար ձեռք բերելու նպատակով ռուսահայերի հոգևոր առաջնորդը դիմում է նաև իր թեմի գաղթօջախների բնակչությանը: Նախ մեկնում է Աստրախան, ուր ժողովրդի տարբեր խավերը օգնում են գումարով: Նրա պատմելով սկզբից ազնվածին իշխանները, հետո օրինյալ ժողովուրդը: Հետո գնում է Ղզլար, Նոր Նախիջևան, որտեղ հայ ժողովրդի վիճակը չնայած ծանր էր, բայց կարողանում են որոշ դրամագլուխ նվիրաբերել: Արդուրյանը մեկնում է նաև Սարֆա, որպեսզի դիմի Հովհաննես Լազարյանի հովանավորությանը: Նրան նաև օգնության ձեռք են մեկնում հայ եղբայրներ Մարգար և Փիլիփոս Մարգարյանները:

Արդուրյանն ուներ մեկ այլ մտահոգություն: Նա լսել էր, որ Հովակիմ Լազարյանը ցանկանում է տպարանը գնել և Թադեոս վարդապետի հետ տեղափոխել Մոսկվա [Բարխուդարյան, 1967, 224]: Ռուսահայ առաջին տպարանի գործունեությունը անքակտելիորեն կապված է կոստանդնուպոլսեցի Թադեոս վարդապետ Մարուքյանի անվան հետ, որը զբաղվում էր և՛ մանկավարժությամբ, և՛ տպագրական գործով: Նա 1787 թ. Կ. Պոլսից էր հրավիրվել: Մարուքյանը արքեպիսկոպոսի քարտուղարն էր և հրատարակությունների հրատարակիչ: Ձեռնհաս այլ անձնավորություն չգտնվելով, Արդուրյանի պահանջով Թադեոս վարդապետը թողնում է Ս. Խաչ վանքի վարժարանը և մեկնում Պետերբուրգ: Այդ ժամանակվանից սկսած նա իր կյանքը անբաժանելիորեն կապում է Խալդարյանի տպարանի հետ, որտեղ խմբագրում և անմիջականորեն գլխավորում էր գրքերի հրատարակումը: Առանց Թ. Մարուքյանի ժրաջան աշխատանքի դժվար էր պատկերացնել տպարանի աշխատանքը: Այդ պատճառով էլ տպարանի հետ նա Պետերբուրգից գալիս է Նոր Նախիջևան, իսկ հետագայում նրա հետ տեղափոխվում Աստրախան: Պատահական չէր, որ ռուսական բանակի հետ Կովկաս մեկնելուց առաջ Հովհաննես Լազարյանի խորհրդով Հ. Արդուրյանը հատուկ կտակով տպարանը հանձնում է Թադեոս վարդապետին՝ իր մահվան դեպքում տնօրինությունը նրան անցնելու պայմանով: Մանուկների ուսուցման և թարգմանական հրատարակչական ասպարեզում արգասավոր աշխատանք էր ծավալել Մարգար Խոջենց Երևանցին: Նա Թ. Մարուքյանի հետ կրում էր հրատարակչական տպագրական գործի ծանրությունը: Եթե Թադեոս վարդապետը անձամբ աշխատում ու վարում էր տպագրական գործը, ապա Մարգար Երևանցին օտար գրականությունից կատարում էր թարգմանություններ, խմբագրում ու հրատարակության պատրաստում

աշխատությունները: Մարգար Երևանցին ժամանակի գրագետ ու գիտուն մարդկանցից էր, ազատորեն տիրապետում էր բազմաթիվ օտար լեզուների և նա Լազարյան ուսումնարանը Նոր Նախիջևանում բացելու մտադրության ջերմ կողմնակիցներից էր:

Արքեպ. Արղությանը, վախենալով տեղի հոգևորականների տգիտությունից և կարճատեսությունից, տպարանը պաշտոնապես դնում է հայկական մագիստրատի տնօրինության տակ: Դրանով ապահովագրում է տպարանի անխափան ու հարատև գոյությունը: Արդեն մնում էր միայն Խալդարյանի կնոջը՝ Կ. Ջաքարովնային համոզել, որ պարտամուրհակները ստանալուց հետո թույլատրեք տպարանը տեղափոխել: 1789 թ. հուլիսի 5-ի Կատարինե Ջաքարովնային գրած իր նամակում նա նշում էր, որ անգամ եթե ինքը մահանա, միևնույն է, այդ գումարը կվճարի Նոր Նախիջևանի մագիստրատը [Բարխուդարյան, 1967, 222]: Ջաքարովնայի նամակին զուգահեռ նա խնդրում է Հովհաննես Լազարյանին, որ կարողանա համոզել Ջաքարովնային՝ թույլ տա Թադեոս վարդապետին տեղափոխել տպարանը Նոր Նախիջևան:

Թադեոս վարդապետը 1790 թ. հունվար ամսին տպարանը հասցնում է Մոսկվա: Ինչպես տեղեկանում ենք Արղությանի օրագրերից, 1789 թ. Պետերբուրգից դուրս բերված տպարանը 1790 թ. հունվարին իրոք եղել է Մոսկվայում և միայն Ս. Խաչի վանքում տպարանի ու դպրոցի կարիքների համար կառուցվող 37 սենյակները ավարտին հասցնելուց հետո է հասել Նոր Նախիջևան [Հայ գրատպության 500-ամյակին և ԵՊՀ ՈԻԳՀ հիմնադրման 65-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու, 2013, 14]: Արղությանի խորհրդով, գարնան բացվելուն պես և գետերը նավարկելի դառնալուն պես, Թադեոս Մարությանը տպարանը բերում Մակարիա, հետո Դուբովկա, հետո Դուբովկայի և Դոնի միջև ընկած ճանապարհը, սայլով տեղափոխում է և նորից Դոն գետով հասցնում Նոր Նախիջևան: Մինչ տպարանը այդ երկար ճանապարհին էր անցնում, Արղությանը ավարտում է Ս. Խաչ վանքի 37 սենյակների շինությունը, որը հարկավոր էր տպարանի և դպրոցի համար [Բարխուդարյան, 1967, 222]: Տպարանը տեղ հասնելուն պես արդեն հունիս ամսին սկսում է տպագրությունը: Ըստ տպագրված գրքերի քանակի՝ տպարանի ամենաբեղուն տարիները եղել են հենց այստեղ՝ Նոր Նախիջևանում (1790-1795 թթ.): 1790-1795 թթ. տպարանում հրատարակվում է 21 անուն գիրք [Ղազարյան, 2005, 3]:

1. ԱՂԵՔՍԱՆԴԻ ՋՈՒՂԱՅԵՑԻ: ԱՂՕԹԱՄԱՏՈՅՑ: ՍԻՄԷՕՆ ԵՐԵՎԱՆՑԻ: ՋԲՕՍԱՐԱ Ն ՀՈԳԵԻՈՐ: Նոր Նախիջևան, տպ. Ս. Խաչ վանքի, 1790:
2. ՍԱՂՄՈՍԱՐԱՆ: Նոր Նախիջևան, տպ. Ս. Խաչ վանքի, 1790:
3. ՍՏԵՓԱՆՈՍ ՍԻԻՆԵՑԻ: ՈՂԲՔ ԵՒ ՀԱՌԱՉԱՆՔ: Նոր Նախիջևան, տպ. Ս. Խաչ վանքի, 1790:
4. ԺԱՄԱԳԻՐՔ: ՆՈՐ Նախիջևան, տպ. Ս. Խաչ վանքի, 1791:
5. ՍԱՂՄՈՍԱՐԱՆ: Նոր Նախիջևան, տպ. Ս. Խաչ վանքի, 1791:
6. ՂԱԶԱՐ ԶԱՀԿԵՑԻ: ԱՍՏՈՒԱԾԱՂԵՐՍ: Նոր Նախիջևան, Ս. Խաչ վանքի, 1792:
7. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԶՆԿԱՅԻ: ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ ԶԵՐԿՆԱՅԻՆ ՄԱՐՄՆՈՅՆ ԱՐԺՄԱՆ Է: Բ մասը չափածո: Նոր Նախիջևան, տպ. Ս. Խաչ վանքի, 1792:
8. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԵՐԶՆԿԱՅԻ: ՎԻՊԱՍԱՆՈՒԹԻՒՆ ԶԵՐԿՆԱՅԻՆ ՄԱՐՄՆՈՅ ՇԱՐԺՄԱՆ Է: Բ մասը չափածո: Նոր Նախիջևան, տպ. Ս. Խաչ վանքի, 1792:
9. ՅՈՎՍԵՓ ԱՐՂՈՒԹԵԱՆՑ: ԴՈՒՌՆ ՈՂՈՐ/ՄՈՒԹԵԱՆ: Նոր Նախիջևան, տպ. Ս. Խաչ վանքի, 1792:
10. ՏԱՐԵՑՈՅՑ ԵՒ ՕՐԱՅՈՅՑ: ՆՈՐ Նախիջևան, տպ. Ս. Խաչ վանքի, 1792:
11. ՂԱԶԱՐ ԶԱՀԿԵՑԻ: ԱՍՏՈՒԱԾԱՂԵՐՍ: Նոր Նախիջևան, տպ. Ս. Խաչ վանքի, 1793:
12. ՊԵՏՐՈՍ ՔԱԼԱՆԹԱՐԵԱՆ: ԲԺՇԿԱՐԱՆ ՀԱՄԱՌՕՑ: ԲԱՌԱՐԱՆ: Նոր Նախիջևան, տպ. Ս. Խաչ վանքի, 1793:
13. ՏԱՐԵՑՈՅՑ ԵՒ ՕՐԱՅՈՅՑ: Նոր Նախիջևան, տպ. Ս. Խաչ վանքի, 1793:

14. ՖՐԱՆԶԵՍՔՈՅ ՖԵՆԵԼՈՆ: ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԹԵԼԱՄԱՔԻ ՈՐԴԻՈՅ ՅՈՒԼԻՍ Ի: Հտ. Ա-Բ: Թարգմ.՝ Մարգար Երևանցու: Նոր Նախիջևան, տպ. Ս. Խաչ վանքի, 1793:
15. ԽՈՐՀՐԴԱՏԵՏՐ: Նոր Նախիջևան, տպ. Ս. Խաչ վանքի, 1794:
16. ՅԱԿՈԲ ՆԱԼԵԱՆ: ՀՈԳԵՇԱՀ, Նոր Նախիջևան, տպ. Ս. Խաչ վանքի, 1794:
17. ՊՕՂՈՍ ՏԻՐԻԿԵՅԻ ԹՈՐՈՍԵԱՆ: ԲԱՌԱՐԱՆ (թուրքիայերեն): Չափածո: Նոր Նախիջևան, տպ. Ս. Խաչ վանքի, 1794:
18. ՄԻՍԷՕՆ ԵՐԵՒԱՆՑԻ: ԳԻՐՔ ԱՂՕԹԻՅ: Նոր Նախիջևան, տպ. Ս. Խաչ վանքի, 1794:
19. ՖՐԱՆԶԵՍՔՈՅ ՖԵՆԵԼՈՆ: ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԹԵԼԱՄԱՔԻ ՈՐԴԻՈՅ ՅՈՒԼԻՍ Ի: Երկու հատորով: Հտ. Ա: Թարգմ.՝ Մարգար Երևանցու: Նոր Նախիջևան, տպ. Ս. Խաչ վանքի, 1794:
20. ՅՈՎՍԷՓ ԱՐԴՈՒԹԵԱՆՑ: ՔԱՐՈԶ: Նոր Նախիջևան, տպ. Ս. Խաչ վանքի, 1795:
21. ՖՐԱՆԶԵՍՔՈՅ ՖԵՆԵԼՈՆ: ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԹԵԼԱՄԱՔԻ ՈՐԴԻՈՅ ՅՈՒԼԻՍ Ի: Երկու հատորով: Հտ. Բ: Թարգմ.՝ Մարգար Երևանցու: Նոր Նախիջևան, տպ. Ս. Խաչ վանքի, 1795:

Այսպիսով 1790 թվականին սկսում է Խալդարյանի հիմնադրած տպարանի գործունեության երկրորդ շրջանը՝ Նոր Նախիջևանի Ս. Խաչ վանքում: Այս տարիներին, ինչպես վերը նշված է, Ռուսաստան է գալիս Մարգար Խոջենց Երևանցին: Վերջինս, Ջյուռնիայում լսելով Հովսեփ Արղությանի ծավալած մշակութային և լուսավորական շարժման մասին, գալիս է Ռուսաստան և արքեպիսկոպոսին ներկայացնում Ֆրանչեսկո Ֆենելոնի նշանավոր «Տելեմաքի» իր թարգմանությունը՝ շեշտելով, որ ի տարբերություն մյուս ազգերի, հայերը դեռևս չունեն «Տելեմաքի» թարգմանությունը:

1790 թվականին Արղությանի տպարանը հրատարակում է հետևյալ գրքույկները. «Կանոն Սաղմոսաց», «Գանձարան ախտականութեան», «Գիրք որ կոչի Աղոթամատոյց», «Գիրք աղօթից որ կոչի զբոսարան հոգևոր»: Նույն թվականին նորից լույս է տեսնում Ստեփանոս Օրբելյանի «Ողբ և հառաչանք»-ը: Գրքի սկզբում կա Էջմիածնի Կաթողիկե Մայր Տաճարի նկարը, որի տակ գրված է հետևյալ չափածո քառյակը.

«Տաճար լուսակերտ՝ յարկ ապավինի.

Ցատկագոյն պարծա նք Արամեան ազգի.

Ժողովեա՝ առ քեզ ըզմանկունքս քո.

Որք ի քէն մեկնեալ կան այժմ արտաքոյ» [Գևորգյան, 1954, 48]:

Գրքում կան նաև հայ թագավորական տների զինանշանների բացատրությունները:

1791 թ. լույս է տեսնում «Կարճառօտ ժամագիրք» և «Սաղմոսարան», որոնք տպագրվում են Հնդկաստանի Սուրաթ քաղաքում բնակվող Աղաբաբյան Ստեփանոսի և իր կնոջ Հռիփսիմեի ծախսերով: 1792 թ. լույս է տեսնում «Տետրակ համառօտ և լի իմաստանախոհ բանիւք Յովհաննէս Երզնկացոյ, որ և ասի Ծործորեցի»:

Ջուղայեցի բժիշկ Պետրոս Քալանթարյանի «Բժշկարան համառօտ»-ը, որը լույս է տեսել 1793 թվականին, Արղությանի տպարանի կարևոր հրատարակություններից մեկն է: Այն նորություն էր. բացատրում էր դեղեր պատրաստելու եղանակը: Աշխատությունը բաժանված է երկու մասի: Առաջին մասում նկարագրված են հիվանդությունները և դրված են դեղատոմսեր լատիներեն լեզվով, բայց հայերեն տառերով, իսկ երկրորդ մասը դեղերի բառարանն է [Գևորգյան, 1954, 39]: Նույն թվականին լույս է տեսել նաև Ֆենելոնի «Տելեմաք»-ը: Այն լույս է տեսել երկու հատորով: Երկրորդ հատորի վերջում կցված է հիշատակարան՝ հնդկահայերի նվիրատվության, Նոր Նախիջևանի Ս. Խաչ վանքի օծման, Արղությանի՝ 1793 թվականին դեպի Պետերբուրգ կատարած ճանապարհորդության, այնտեղ կայսրուհու կողմից ընդունվելու և ականակնու ադամանդյա խաչով և մանթիով պարգևատրվելու, Ղրիմ ճանապարհորդելու և այլ հետաքրքիր դեպքերի մասին:

1794 թվականին տպագրվում են երկու գրքեր՝ «Խորհրդատետր սրբազան պատարագի», որի երկրորդ մասը վերնագրված է «Գիրք աղօթից», և «Տետրակ համառօտ բառարանի»: Տետրակի առաջաբանը գրել է Թադեոս վարդապետը: Նրա հիշատակարանում խոսվում է գրքի մեկենասի, ինչպես նաև հնդկահայերի կողմից տպարանին ցույց տրված աջակցության մասին [Նույն տեղում]: 1796 թվականին Արդությանը որոշում է տպարանը տեղափոխել Աստրախան, քանի որ այնտեղ էր նրա մշտական պաշտոնատեղին: Արդությանը կարծում էր, որ մոտիկ լինելով տպարանին, կկարողանա ավելի լավ հետևել տպարանին և այն հաջողության կհասնի: Նույն թվականին տպարանը սկսում է իր բեղուն աշխատանքը և տպագրում է առաջին գիրքը: Աստրախանի տպագրական գործունեության վերաբերյալ ավելի ճիշտ տեղեկություններ կան Թադեոս վարդապետի նամակների մեջ, որոնք ուղղված էին Հովսեփ Արդությանին: Դա կայսրուհի Եկատերինա Երկրորդի հրովարտակն էր Պարսկաստանին: Գրքույկը տպագրվել է երկու լեզուներով՝ հայերեն և ռուսերեն, և բաղկացած էր 18 էջից: Ըստ Բարխուդարյանի որոնումների ռուսերեն տեքստի համար օգտագործվել է 1792 թվականից Աստրախանում գործող նահանգային տպարանի տառատեսակը: Այս տպագրությամբ է բացատրվում հայ բնակչության հետաքրքրությունը կայսերական հրովարտակի նկատմամբ:

Տպարանը նաև տպագրել է 1796 թվականի ապրիլի 5-ին Ղզլարում մի քարոզի տեքստ առանձին գրքույկով: Այստեղ տեղի հայերը հանդիսավոր մաղթանք են արել՝ նվիրված ռուսական բանակի դեպի Կովկաս ձեռնարկվող նոր արշավանքին [Բարխուդարյան, 1996, 207]:

Քարոզի տպագրությունից 3 ամիս անց՝ օգոստոսին, տպագրվում է «Ժամանակագրություն հասարակաց աղօթից /Ժամագիրք/»: Տպարանի Նոր Նախիջևանյան անվան՝ «Ի տպարանի Սուրբ Խաչ վանիցն»՝ Ս. Խաչ վանք լինելու փոխարեն գրվում է «Ընդ Յովանեալ Սբ. Աստվածածնայ եկեղեցւոյն ի յԱժդարիան» [Ենոքյան, 2018, 107]:

Նույն 1796 թվականին հրատարակվում է ևս մի գրքույկ՝ Հովսեփ Արդությանի «Կոնդակ օրհնութեան»: Բացի կոնդակից՝ գրքույկի մեջ տպագրվում է Արդությանի մի քանի նամակ, որը հասցեագրված էր հայ և ռուս գործիչներին, ինչպես նաև Զուբովի նամակը Հովսեփ Արդությանին:

Հաջորդ տարի տպարանը զբաղված էր երկու գրքերի տպագրական աշխատանքներով: Առաջինը՝ «Սաղմոսի մեկնիչ»-ն էր, որը պարունակում էր 13-րդ դ. հայ հեղինակ Վարդան Բարձրաբերդցու մեկնությունները: Այս տարիներին շատ դժվար է եղել աշխատեցնել տպարանը: Ավելի պարզ երևում է Թադեոս վարդապետի նամակներում: Իր առաջին նամակում Թադեոսը գանգատվում է թղթի պակասությունից և խնդրում է շտապ թուղթ առաքել Հովհաննես Լազարյանի ձեռնարկություններից: Բացի Թադեոս վարդապետից և Սարգսր Խոջենցից՝ տպարանում աշխատում էին մեկական գրաշար, տպագրիչ և կազմարար, նաև մի քանի օգնական ու աշակերտ: Ահա այս դժվարությունների պատճառով էլ «Սաղմոսի մեկնիչ»-ի տպագրությունը ավարտվում է 1798 թ. կեսերին, չնայած գրքի տիտղոսաթերթի վրա նշված է 1797: Երկրորդ գիրքը «Էֆիմերտե»-ն էր, որը պարունակում էր տոմարական զանազան տեղեկություններ, գուշակություններ, երազահան և այլն: Այն նույն դժվարությունների միջով է անցել, ինչպես առաջինը: 1798 թ. կանգ են առնում գրքի տպագրական աշխատանքները և վերսկսվում միայն զարնանը: Վերաբացվելուց հետո տպագրական աշխատանքների բազմաթիվ խնդիրների պատճառով տպարանը փակվում է 1799 թ. օգոստոսին:

Գրքերի տպագրության ուշացմանը խանգարում էր նաև Արդությանի հեռու լինելը: Արքեպ. Արդությանը Պետերբուրգում, կայսերական հրովարտակով, նշանակվել էր գրաքննիչ: Մինչ տպագրության անցնելը, պատրաստի մամուլը ուղարկվում էր Պետերբուրգ Արդությանին՝ գրախոսելու համար [Բարխուդարյան, 1996, 208]:

1797 թ. տպագրվում է նաև «Տարեցոյց և օրացոյց», որը արտապվել է Էջմիածնի տոնացույցից:

Հայկական տպարանի կարևոր խնդիրներից էր տպագրել և պրոպագանդել կառավարական այն միջոցառումները, որոնք ուղղված էին այլ երկրներից հայերին Ռուսաստան ներգրավելուն: 1797-1799 թթ. Պավել 1-ը հայերին վերաբերող մի շարք հրովարտականեր էր տվել: Ահա այդ պատճառով էլ որոշվել էր առանձին հրովարտականների գրքույկ տպագրել: Այն կոչվեց «Թարգմանություն պրիվիլեկացն հայոց», որն էլ հրատարակվեց 1800 թվականի աշնանը [Բարխուդարյան, 1996, 209]:

1. Ժամագիրք, 1796
2. Եկատերինա երկրորդ Հրովարտակ, 1796
3. Յովսեփ Արղությանց Խօսք ասացեալ ի Վերափոխման աստուածածնայ ցեկեղեցիոջն հայոց, 1796
4. Յովսեփ Արղությանց Կոնդակ Օրհնության: Պլատոն Զուբով: Նամակ Արքեպիսկոպոսին, 1796
5. Վարդան Բարձրաբերդցի Մեկնություն Սաղմոսայ Դավթի, 1797
6. Տարեցոյց և օրացույց, 1797
7. Էֆիմէրտէ, 1797-1799
8. Թարգմանութիւն պրիվիլեկացն հայոց, 1800

Գրքույկը լույս է տեսնում այն օրերին, երբ Հովսեփ Արղությանը որպէս կաթողիկոս գտնվում էր Աստրախանում: Հոկտեմբերի 7-ին հայերի իրավունքների և առանձնաշնորհումների վերաբերյալ կառավարական հրովարտակը հանձնելու առթիվ գումարած հատուկ ժողովում Կաթողիկոս Արղությանը հանդես է գալիս ճառով և ջերմ շնորհակալություն է հայտնում ռուսական կառավարությանը: Այդ ելույթի տեքստը ևս հետագայում հրատարակվում է:

Տպարանի գործունեությունը չի սահմանափակվում միայն գրքերի տպագրությամբ և ռուսական կառավարության հրամանագրերի թարգմանությամբ: Տպարանը իր աշխատանքների հետ զուգահեռ կազմակերպում է գրքերի առաքումը Հայաստան և հայկական այլ գաղութներ: Դեռևս 1788 թ., երբ տպարանը գտնվում էր Պետերբուրգում, այնտեղից հարյուրից ավելի գիրք ուղարկվել են այլ գաղութներ:

Տպարանը Աստրախան տեղափոխելուց հետո ավելի մեծացավ տեղի գաղութի դերը հայերեն լեզվով գրականության տարածման գործում: 1797 թվականին հոկտեմբերին Թադեոս վարդապետը տեղեկացնում է Հովսեփ Արղությանին, որ մի մեծ կապոց գիրք է ուղարկում ղզլարցի Գաբրիելի հետ: Կապոցում պարունակում էր 10 օրինակ «Սաղմոսի մեկնիչ», 6 օրինակ «Ժամագիրք», և 100 աղոթքներ «Տերողորմեայք»: 1798 թվականի հուլիսին նա հաղորդում, որ Նոր Նախիջևան է ուղարկել երկու արկղ գիրք և այդ նույն նամակով խնդրում է Կառապետ վարդապետին գրքերը շտապ ուղարկել Կոստանդնուպոլիս:

Թվում էր, թե ամեն բան կարգին է և արդեն տպարանը հունի մեջ է ընկել, աշխատանքները գնում են բնականոն կարգով: 1800 թ. դեկտեմբերին Թադեոս վարդապետը մահացավ, իսկ 1801 թ. մարտին մահացավ Հովսեփ Արղությանը: Այս կորուստները ծանր հետևանք թողեցին տպարանի վրա: Նրանք Ռուսաստանում առաջին հայկական տպարանի ղեկավարներն էին: Նրանց մահից հետո տպարանը չաշխատեց և նրանց մահով վերջ դրվեց Ռուսաստանում առաջին հայկական տպարանի աշխատանքներին:

Աստրախանում տպագրական աշխատանքները դադարում են, բայց ավելի քան 10 տարի անց՝ 1810 թ., Աստրախանի գլխավորապես գերմաներենի ուսուցչի տեղը զբաղեցնելու համար Աստրախան է ժամանում ավստրիացի ֆոն Վեյսբրոնները: Նա որոշում է շաբաթաթերթ տպագրել Աստրախանում երկու լեզվով: 1812 թվականին ձեռք է բերում ռուսական տպարանի սարքավորումներ իսկ հայկականի համար դիմում է կաթոլիկ եկեղեցու երեսփոխան Կղեմես Շահվերդյանին:

Կ. Շահվերդյանը և ֆոն Վեյսբրոնները ցանկանում են Խալդարյանի տպարանի սարքավորումները ձեռք բերել: Նրանք դիմում են հայկական կոնսիստորիայի ղեկավարությանը և մերժվում են: Իրական պատճառը այն էր, որ հայկական եկեղեցին բացասական վերբերմունք ուներ ճիզվիտների նկատմամբ: Նրանք ակտիվ ձևով հայերի մեջ տարածում էին կաթոլիկություն: Ահա սա էր պատճառ դառնում, որ շաբաթաթերթի՝ «Արևելյան ծանուցմունք»-ի, սկզբնական հրատարակությունները ռուսերենով էին՝ «Վաստոչնիե իզվեստիա», որի առաջին համարը եղավ 1813 թ. հունվարի 29-ին:

Այսպիսով Երկայնաբազուկ Արքեպիսկոպոս, Կաթողիկոս Արդուրյանի մահը վերջ դրեց Խալդարյանի տպարանի աշխատանքներին (1801 թ. մարտ):

Արքեպիսկոպոսի մահվանից հետո մի նամակի բովանդակությունից պարզ է դառնում, որ երջանկահիշատակ Արդուրյանը ցանկանում էր իր տպարանում տպել հայերեն Աստվածաշունչ շքեղ և պատկերազարդ, որի համար էլ փորագրել էր տվել պղնձի վրա մի քանի հարյուր պատկեր, խոշոր ծախսեր անելով դրա համար, սակայն Հնդկաստանից սպասվող գումարների ուշացման պատճառով այդ ցանկությունն անկատար մնաց: Բացի դրանից Հովսեփ արքեպիսկոպոսը եկավ Կովկաս և՛ տպարանը փակվեց, և՛ կորստի մատնվեցին այդ բոլոր երազանքները:

Արդուրյան Արքեպիսկոպոսի համար տպագրությունն իր ժողովրդի փրկությունն էր: Ահա թե ինչու էր Արդուրյանը գիշեր ու ցերեկ նվիրված աշխատում տպարանի ծաղկեցման համար: Նա աշխատում էր վերացնել անգամ չնչին տեխնիկական թերությունները: Արքեպիսկոպոսը մեծ նվիրումով էր աշխատում: Ահա այսպիսին էր Արդուրյան արքեպիսկոպոսի վերաբերմունքը դեպի տպագրական գործը:

Խալդարյանի տպարանը սկզբից ևեթ հայ ժողովրդի համար ծառայել է հոգևոր պահանջների համար: Հայաստանի սահմաններից դուրս գտնվող հայերն ունեցել են հոգևոր սնունդի կարիք: Ցանկացած տարածքում գտնվելով՝ նրանք պայքարել են առաքելական եկեղեցի ունենալու համար: Ռուսաստանում այդ գործի հոգևոր առաջնորդն էր մեզ հայտնի արքեպիսկոպոս Արդուրյանը:

Խալդարյանցի տպարանի շուրջ քսանամյա գոյության և արդյունավետ աշխատանքին ծանոթանալով ակներև է դառնում, որ նրա գործունեությունը Հովսեփ Արդուրյանը ծառայեցրեց ազգի հանրագուտ շահերին, ինչպիսի բաղձանք ուներ նա:

Արդուրյանի համար տպագրությունը միջոց էր ռուսահայերին կապելու հայոց եկեղեցուն, բարձրացնելու նրանց ազատագրական ոգին, ձևավորելու աշխարհայացքը:

Արդուրյանը տպարանի գործունեությունը ծառայեցրել է ազգի հանրային շահերին և ազատագրական շարժման նպատակներին: Հատուկ ընտրվում և հրապարակում էր գրքեր, որոնցում դրվատվում էր Հայաստանի անցյալն ու սերմանվում հայրենի երկիրը ազատագրելու գաղափարը: Տպագրված գրքերը տարածում էր Ռուսաստանի և օտար երկրների հայաշատ գաղութներում, նաև՝ Հայաստանում: Նա իր ներդրումը ունեցավ նաև հայ ազատագրական շարժման մեջ:

Հայ տպագիր գիրքը, այդ թվում նաև ռուսահայ տպագրությունը եղել է հայության ինքնահաստատման և գոյատևելու ձգտման արտահայտությունը: Այն իր ինքնատիպ դիմագծով պատվավոր տեղ է զբաղեցնում հայ մշակույթի գանձարանում:

Արդուրյանն ուժ ու եռանդ չէր խնայում տպարան ունենալու համար, որպեսզի այն ծառայեցներ լուսավորության գործին և դրանով լուծեր հիմնադրվելիք դպրոցներին դասագրքերով ապահովելու խնդիրը: Տպարանին անհրաժեշտ էր նաև հայերին սովորեցնելու ռուսերեն լեզուն, որն առօրյա կյանքում անհրաժեշտ էր լինելու:

Արդուրյանի նպատակն էր գրքի միջոցով հայությանը հաղորդակից դարձնել ժամանակին հուզող հարցերին: Այդ նպատակով էր նա ծավալել տպագրական գործունեությունը. նա ջանում էր տպագրված գրքերը տարածել Հայաստանում, Ռուսաստանի և օտար երկրների

հայաշատ գաղութներում: Նա սերտ կապեր էր պահում նաև Անդրկովկասի, Պոլսի և Հնդկաստանի հայկական գաղութների հետ, ուր նույնպես գրքեր էին առաքվում: Հայերեն գրքեր էին առաքվում ու իրացվում հնդկահայ գաղութներում: Դրան մասնավորապես նպաստում էր ազատագրական շարժման ու մշակույթի հարցերում Հ.Արղությանի և Շ.Շահամիրյանի միջև ստեղծված գործարար կապերը, ինչպես նաև հնդկահայ մեծահարուստների կատարած նվիրատվությունները: Լինելով հայրենասեր և ազգանվեր անձնավորություն նա հետևողական էր իր ձեռնարկած յուրաքանչյուր գործի նկատմամբ: Նրա նպատակը վեհ էր այդ պատճառով էլ անկախ ամեն դժվարության, հաջողություն ունեցավ:

SUMMARY

The first Armenian printing house in Russia was founded in 1780 by Grigor Khaldaryants, who moved it from London to St. Petersburg. After the death of Khaldaryants, in 1789, Hovsep Arghutyan, the spiritual leader of the Armenians of Russia, moved the printing house to New Nakhichevan, and in 1796, to Astrakhan. During its existence, the printing house published about forty-five books on religious, educational, and historical topics.

Getting acquainted with the twenty-year existence and effective work of the Khaldaryants printing house, it becomes obvious that his activity served Hovsep Arghutyan for the common interests of the nation, which he had a desire for. In the 18th century, one of the leaders of the Armenian diocese in Russia, Archbishop Hovsep Arghutyan, being in a foreign country, Hovsep Arghutyan, a representative of a stateless country, with his education and enlightened ideas, was able to unite the Armenian people and make them presentable. Printing was a way to connect Russian-Armenians to the Armenian Church, raise their liberating spirit, and shape their worldview.

The Armenian printed book, including Russian-Armenian printing, was the expression of Armenian self-assertion and striving for survival. It occupies an honorable place in Armenian culture with its unique face.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բարխուդարյան Վ. Մոսկվայի և Պետերբուրգի հայկական գաղութների պատմություն (18-րդ դ. կես 20-րդ դ. սկիզբ), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2010, 420 էջ:
2. Բարխուդարյան Վ. Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն (1779-1861), Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1967, 498 էջ:
3. Բարխուդարյան Վ. Նոր Նախիջևանի հայկական գաղութի պատմություն / 1861-1917/ Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1985, 499 էջ:
4. Բարխուդարյան Վ. Ռուսահայերի առաջին տպարանը // Պատմաբանասիրական հանդես, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 1967, № 4., էջ 220-229:
5. Գևորգյան Պ. Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը և հայ տպագրության գործը Ռուսաստանում 18-րդ դարում // Էջմիածին, Վաղարշապատ, Ամենայն Հայոց կաթողիկոսություն, 1954, № 11, էջ 45-49:
6. Ենոքյան Ա. Ռուսահայ առաջին տպարանի հրատարակությունները և դրանց նկարագարման առանձնահատկությունները: «Տպագրության Մարգարիտ» միջազգային գիտաժողով (19 սեպտեմբեր, 2017) նյութերից // Բանբեր 25, Երևան, ԵՊՀ, 2018, էջ 101-121:
7. Լևոնյան Գ. Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, Հայաստան, 1958, 253 էջ:
8. Հայկական Սովետական հանրագիտարան, 4-րդ հատոր, Երևան, ՀՍՀ, 1978, 720 էջ:
9. Հայ գրատպության 500-ամյակին և ԵՊՀ ՌԻԳԸ հիմնադրամ 65-ամյակին նվիրված միջազգային գիտաժողովի հոդվածների ժողովածու, Հատոր 4, Հասարակական գիտություններ: Պատմություն, Փիլիսոփայություն, հոգեբանություն, արևելագիտություն, մի-

ջազգային հարաբերություններ, քաղաքագիտություն, աստվածաբանություն / ԵՊՀ Ուսանողական գիտական ընկերություն, Երևան, ԵՊՀ, 2013, 392 էջ:

10. Ղազարյան Ռ. Հայ գրքի նշանավոր տպարանները և հայ պարբերականները եվրոպական և այլ երկրներում // Հոգևոր հայրենիք, 20 նոյեմբեր, Երևան, Գիրք, 2005, հոկտեմբեր, էջ 2; նոյեմբեր, էջ 3:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ
(2018-2023)**

Բանալի բառեր՝ պետական (ազգային) մատենագիտություն, հանձնարարական մատենագիտություն, անհատական մատենագիտություն, ընթացիկ և հետադարձ մատենագիտություն, գրանցային մատենագիտություն, մեթոդական նյութեր, օժանդակ ցանկեր, բնաբան, մատենաշար, թվածին գիրք:

Keywords: state (national) bibliography, recommendation bibliography, individual bibliography, current and retrospective bibliography, register bibliography, methodical materials, auxiliary lists, epigraph, series of books/publications, e-born book.

Յուրաքանչյուր գիտական հետազոտություն սկսվում է տպագիր, ձեռագիր, էլեկտրոնային հրատարակչական միավորների ընտրությունից և գրականության ցանկերի կազմման նախապատրաստական աշխատանքներից: Գրականության ցանկի ճիշտ ընտրությունից է կախված հետազոտողի առջև դրված խնդիրների սահմանումը, մեթոդաբանությունը, ակնկալվող արդյունքների արժանահավատությունը, չափելիությունը: Գրականության ցանկերը պատրաստելիս հետազոտողները օգտվում են ոչ միայն ավանդական քարտային գրացուցակներից, այլև ներկայում հասանելիության լայն աշխարհագրություն ապահովող էլեկտրոնային գրացուցակներից, քարտարաններից, առանձին թվային պահոցներից: Այդպիսի հնարավորություններ են ընձեռում Հայաստանի գրադարանների համահավաք, Հայ գիրք, Հայ մամուլ համահավաք գրացուցակները (սրանք որոշ առումով նաև առցանց գրադարաններ են), լրիվ տեքստային շտեմարանները, ՀԱԳ թվային պահոցը և այլն:

ՀԱԳ հրատարակչական գործունեությունը, որի սկիզբը դրվել է 1937 թվականին, ծավալվել է մի քանի ուղղություններով: Հոդվածում ներկայացնում ենք վերջին հինգ տարիների ՀԱԳ հրատարակությունների համապատկերը:

Գրադարանի հրատարակչական գործունեության գերակա ուղղությունը մատենագիտությունն է: Կարող ենք արձանագրել, որ ՀԱԳ-ում անցած 85 տարիների ընթացքում կազմվել են խորհրդային մատենագիտական դպրոցում արձանագրված հիմնական տեսակի մատենագիտական ժողովածուներ՝ ընդհանուր, պետական (ազգային), հանձնարարական, ոլորտային (բնագավառային), թեմատիկ, երկրագիտական (տարածաշրջանային), անհատական, ընթացիկ և հետադարձ, գրանցային, մատենագիտությունների մատենագիտություն [Справочник библиографа, 2005, 25]: Պետական մատենագիտության կազմման աղբյուրը պետության ներսում հրատարակվող տպագիր փաստաթղթի պարտադիր օրինակն է: 2017 թվականից ՀԱԳ-ին են փոխանցվել Ազգային գրապալատի գործառնությունները, այդ թվում՝ պետական, ընթացիկ և հետադարձ մատենագիտությունների կազմման աշխատանքները: Ընթացիկ մատենագիտությունը նոր լույս տեսած գրականության մատենագիտությունն է՝ ընթացիկ ժամանակահատվածի որոշակի կտրվածքով, օրինակ, ամենամսյա տվյալներով: Մատենագիտության այս տեսակի օրինակն է «Հայ տպագրության տարեգիրքը». պարբերաբար հրատարակվում են տարեգրքի համարները, իսկ հետադարձ մատենագիտության ժողովածուի օրինակ է «Գիրքը Հայաստանի Հանրապետությունում»: 2011-2020 հատորի աշխատանքները նյութերի հավաքման և կազմման փուլում են գտնվում:

Պետք է նկատել, որ թեև մատենագիտությունը առանձին գիտություն չի համարվում, այնուամենայնիվ, այն ևս որոշակի գիտելիքներ և հմտություն, իմացությունների և սկզբունքներ

րի ամբողջությունն պահանջող ասպարեզ է, որի մեջ չպետք է մտնեն նրան ոչ լավատեղյակ մարդիկ [Տէր Վարդանեան, 2019, 222]:

1988 թվականից ՀԱԳ-ը հատոր առ հատոր հրատարակում է հայերեն տպագիր գրքի ընդհանուր կամ ընդհանրական հետադարձ մատենագիտությունը [Հայ գիրքը 1512-1800 թվականներին, 1988; Հայ գիրքը 1801-1850 թվականներին, 1967; Հայ գիրքը 1851-1900 թվականներին, 1999; Հայ գիրքը 1901-1920 թվականներին, 2007; Հայ գիրքը 1921-1930 թվականներին, 2012]: Հայ գրատպության համատեքստում կարևորվում են տարբեր ժամանակաշրջաններում ստեղծված գրացուցակները կամ մատենագիտությունները, որոնք պատկերացում են տալիս հայկական գրատպության անցած ճանապարհի մասին [Զարգարյան, 2017, 461]: 2018 թ. հրատարակվել է այդ մատենագիտության 6-րդ հատորը [Հայ գիրքը 1931-1940 թվականներին, 2018]: Հատորը ունի ժամանակագրական-այբբենական կառուցվածք, այսինքն՝ նյութերը դասավորված են յուրաքանչյուր տարվա մեջ հեղինակի ազգանուն-անվան կամ գրքի խորագրի այբբենական կարգով: Ապահովված է Հայ գրքի մատենագիտության նախորդ հրատարակությունների շարունակականությունը թե՛ բովանդակային և թե՛ ձևական առումով: Հատորը կազմված է 1931-1940 թթ. ընդգրկող բուն մատենագիտությունից և օժանդակ ցանկերից: Գրքերի նկարագրությունը կատարված է տիտղոսաթերթի տվյալների հիման վրա՝ պահպանելով բնագրի ուղղագրությունը: Երբեմն մատենագիտական որոշ տեղեկությունների աղբյուր կարող են լինել նաև գրքի կազմը, տիտղոսաթերթի դարձերեսը, վերջնաէջը: Նման դեպքում նշումներ են արվում ծանոթագրություններում: Տպագրության վայրը և գրառման մյուս մասերը տրվում են ժամանակակից ուղղագրությամբ: Մատենագիտական հրատարակությունների պարտադիր բաղադրիչ են օժանդակ ցանկերը, որոնք հնարավորություն են տալիս տարբեր որոնիչներով փնտրումներ կատարել և գտնել անհրաժեշտ գրքի գրառումը: Այս հրատարակության մեջ առկա են հապավումների, անձնանունների, վերնագրերի, տպագրավայրերի և տպարանների, առարկայական, մատենաշարերի, օգտագործված գրականության ցանկերը: Բացի աշխարհի տարբեր տպագրավայրերում լույս տեսած հայերեն գրքերի մատենագիտական ամբողջական պատկերը ներկայացնելուց՝ այս ժողովածուն նաև վիճակագրական տվյալների արտածման հնարավորություն է տալիս: Այսպես, տպագրավայրերի ցանկը երևան է բերում տվյալ ժամանակահատվածում առավել ակտիվ տպագրավայրերը, մյուս՝ մատենաշարերի ցանկը ցույց է տալիս այս կամ այն մատենաշարով հրատարակված գրքերի համեմատելի քանակները: Մատենաշարերը հետաքրքիր կերպով արտացոլում են հասարակության կրթամշակութային դաստիարակության, տնտեսության ճյուղերի գրագետ կառավարման, պետական գաղափարախոսության տարածման ուղղությամբ պետական քաղաքականության միտումները: Այսպես, 1931-1940 թթ. պետությունը միջոցներ էր գործադրում ժողովրդի կրթական մակարդակի բարձրացման, գրագիտության տարածման, ժողովրդական տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման ուղղությամբ: Դրա արտահայտությունն է այն, որ մեծ տպաքանակներով հրատարակվում են և մյուս մատենաշարերից առանձնանում են «Դպրոցական գրադարան», «Մանկական գրադարան», «Հեռակա ուսուցման գրադարան», «Գյուղատնտեսական հանրամատչելի գրադարան» և այլ մատենաշարեր: Պետք է նկատել, որ «Հայ գիրքը 1931-1940 թթ.» մատենագիտության ժամանակային ընդգրկումը համընկնում է խորհրդային գրաքննության մամլիչի բուռն գործունեության տարիներին, երբ գրքերի մատենագիտական որոշ տվյալներ, գերազանցապես բռնադատված հեղինակների, խմբագիրների, ձևավորող նկարիչների և այլոց անուններ, հայտնվել են խորհրդային գրաքննության խոշորացույցի տակ: Թանձր թանաքով են ծածկվել գրողներ Եղիշե Չարենցի, Ակսել Բակունցի, Վաղարշակ Նորենցի, Վահրամ Ալազանի, ձևավորող-նկարիչ Տաճատ Խաչվանքյանի անունները: Հատորը կազմող մատենագետները համադրել են ոչ միայն Հայաստանի ազգային, այլև մյուս գրադարաններում առկա օրինակները, ուսումնասիրել են Ազգային գրապալատի հրատարակած տպագիր գրացուցակները և կատարել ճշգրտում-

ներ ու խմբագրումներ [Գիրքը Սովետական Հայաստանում, 1988; Տպագրության տարեգիր, 1925]: Հայ գրքի մատենագիտության հատորները յուրօրինակ մատենագիտական-հանրագիտական բնույթի հրատարակություններ են, որոնք առավել մեծ աշխարհագրական ընդգրկում ունեն և նպատակ ունեն ներկայացնելու աշխարհում հրատարակվող գրքերի ցանկը: Դրանք նաև ժամանակաշրջանի վավերական պատմություններն են՝ յուրօրինակ բացահայտումներով ու հետաքրքիր մեկնաբանություններով: Իհարկե, այս մատենագիտությունները ամբողջական լինել չեն կարող, քանի որ ոչ բոլոր հրատարակություններն են Հայաստանի հասնում, և հաճախ մատենագետները նրանց տպագրության մասին տեղեկություն անգամ չեն ունենում: Այս դեպքում անչափ կարևորվում են աշխարհի գրադարանների, հայկական հոգևոր-մշակութային, կրթական կենտրոններում գործող գրադարանների, մատենադարանների համահավաք գրացուցակների էլեկտրոնային տարբերակները կամ առանձին աշխարհագրական վայրերում հրատարակված գրքերի մատենագիտական ժողովածուները: Վերջինները որպես կանոն կազմվում են տվյալ տպագրավայրերում գոյություն ունեցող գրադարանային հավաքածուների հիման վրա և, վստահաբար, ներկայացնում են տվյալ տպագրավայրի գրահրատարակչական դաշտի ամբողջական պատկերը: Այդպիսի տեղային-աշխարհագրական մատենագիտական ժողովածուները կարող են նոր հրատարակությունների հայտնաբերման, նկարագրման, հայ գրքի ամբողջական-ընդհանրական մատենագիտությունների կազմման համար արժանահավատ սկզբնաղբյուրներ դառնալ: «Հրանտ Դինք» հիմնադրամի աջակցությամբ 2017-2018 թթ. Հայաստանի ազգային գրադարանի երկու աշխատակիցների աշխատանքային գործուղումը Ստամբուլի Աթաթուրքի գրադարան և նրանց ջանադիր աշխատանքը տեղում մատենագիտական բազմաթիվ բացահայտումների ուրախառիթ փաստեր արձանագրեց: Հայտնաբերվեցին գրքեր, այդ թվում՝ նաև հնատիպ գրքեր, որոնք նախորդ տարիների հայ գրքի մատենագիտությունների մեջ չէին արտացոլվել մի պարզ պատճառով. մատենագետները դրանք տեսնելու հնարավորություն չէին ունեցել: Այդ գրքերից մի քանիսի նկարագրությունները տեղ են գտել վերոնշյալ հրատարակության «Լրացումներ» բաժնում [Հայ գիրքը 1931-1940 թվականներին, 2018, 205]:

Տեղային-աշխարհագրական մատենագիտական ժողովածուները ընդհանրական մատենագիտությունների կազմման ժամանակ նաև դառնում են լրացուցիչ աղբյուրներ: Վերջին տարիներին այդպիսի կարևոր հրատարակություններ են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակությունների և Ստամբուլի վերոնշյալ գրադարանում պահպանվող հայերեն և հայատառ թուրքերեն գրքերի ծավալուն մատենագիտությունները [Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հայ գրատպության կենտրոն, 2021; Հայ գիրքը Թուրքիայում, 2022]: Այդ երկու մատենագիտական ժողովածուների կազմման աշխատանքներում ներգրավված են եղել Հայաստանի ազգային գրադարանի մատենագետները, որոնց մասնագիտական ներուժը ևս նպաստել է այդ արժեքավոր հրատարակությունների հաջողությանն ու կայացմանը: Դրանցում ներառված վավերագրերը իրենց ընդարձակ ու մանրամասն նկարագրություններով, վստահաբար, կարող են խիստ օգտակար լինել հայ գրքի ընդհանրական մատենագիտության հետագա հատորների կազմման աշխատանքներին: Մատենագիտությունների այս տեսակները ոչ միայն շատ հարցերում փոխլրացնող են, այլև հնարավորություն են տալիս մեկը մյուսով ստուգել, նաև տեղեկացնում են տվյալ տպագրավայրում հայկական գրական-մշակութային կյանքի, ազգային խնդիրների, դրանց լուծմանն ուղղված գործողությունների մասին:

2018 թ. Հայաստանի ազգային գրադարանը հետադարձ մատենագիտության մի բացառիկ հրատարակություն իրականացրեց՝ «Նորահայտ գրքեր և պարբերականներ» [Նորահայտ գրքեր և պարբերականներ, 2018]: Հրատարակությունը կազմված է հետևյալ բաժիններից՝ Հայերեն և հայատառ թուրքերեն գրքեր (1512-1930 թթ.), Հայերեն հատվածներ պարունակող այլալեզու գրքեր (1512-1850 թթ.), Պարբերականներ (1794-1970 թթ.), Հայադարան, Հավելված (գրադարանների ցանկ, որոնք հայ հնատիպ գրքի մատենագիտական ժողովածուում չեն նե-

րառվել որպես պահման վայր), վերնագրերի և օգտագործված գրականության ցանկեր: Հրատարակության մեջ ներառված են մատենագիտական համահավաք ցանկերից տարբեր պատճառներով դուրս մնացած հայերեն, հայատառ թուրքերեն և հայերեն հատվածներ պարունակող օտարալեզու գրքեր ու պարբերականներ: Աշխատանքը շարունակական է, և տպագրության պատրաստվող երկրորդ պրակը, անշուշտ, նոր իրողությունների լուսաբանման առիթ կտա, քանի որ դիտարկումները ցույց են տալիս, որ մինչ օրս լույս տեսած մատենագիտական ժողովածուներից դուրս են մնացել գրքերի ու պարբերականների բազմաթիվ անուններ [Նորահայտ գրքեր և պարբերականներ, 2018, 5]:

Հետադարձ մատենագիտական նշանակալի մի հրատարակություն է նաև «Հայ թարգմանական գրականություն» մատենագիտության Գ հատորը [Հայ թարգմանական գրականություն, 2021]: Ժողովածուն ընդգրկում է 2011-2020 թթ. ընթացքում Հայաստանի Հանրապետությունում լույս տեսած օտար լեզուներից թարգմանված գրքերը: Այն շարունակությունն է 2013 թ. Հայաստանի ազգային գրապալատի կողմից հրատարակված նույնանուն գրքի, որը ներառում էր 1920-2010 թթ. ընթացքում լույս տեսած թարգմանական գրականությունը: Վերջինս լույս է տեսել երկու գրքով՝ գիրք Ա. (1920-1970), գիրք Բ. (1971-2010): Քանի որ այս ժողովածուն համարվում է նախորդի տրամաբանական շարունակությունը, խմբագրական խորհուրդը որոշեց այն անվանել գիրք Գ (2011-2020): Նշված տարիներին կատարված թարգմանությունների նկարագրությունները դասավորված են ըստ գիտության բնագավառների: Օժանդակ ցանկերը բացահայտում են թարգմանական գրականության հրատարակությունների աշխարհագրական լայն ընդգրկումը, տպարանները, հեղինակների և թարգմանիչների անձնանունները: Այս հրատարակությունները թույլ են տալիս համեմատական վերլուծություններ կատարել և արտածել տվյալներ խորհրդային և անկախության շրջանի հայերեն թարգմանությունների թեմատիկայի, առաջնահերթությունների, գաղափարախոսական ուղղությունների, ինչ տիպի գրականության և կամ որ հեղինակին նախապատվություն տալու մասին: Այսպես, եթե խորհրդային տարիներին գեղարվեստական գրականության թարգմանություններում գերակշռում են ռուս դասական և ժամանակակից գրողների և կամ այլալեզու գրողների՝ ռուսերենով միջնորդավորված թարգմանությունները, ապա անկախության շրջանում, հատկապես 2010 թվականից հետո, թարգմանությունները կատարվում են առավելապես բնագրի լեզվից: Մեկ այլ միտում ևս նկատելի է. նույն հեղինակի կամ երկլեզու ստեղծագործող գրողի գործը թարգմանում են տարբեր թարգմանիչներ: Այս ամենը արձանագրված է մատենագիտության էջերում: Սույն մատենագիտական ժողովածուն հետազոտական նախաձեռնությունների անփոխարինելի աղբյուր կարող է դառնալ: Փնտրողը անպայման գտնում է իրեն հետաքրքրող նյութը:

ՀԱԳ գիտական-հրատարակչական գործունեության մի կարևոր դրսևորում է 2019 թ. նոյեմբերին հայ մամուլի առաջնեկ «Ազդարարի» 225-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածուն: Մխաված չենք լինի, եթե ասենք, որ գրադարանի գիտահետազոտական գործունեության անառարկելի փաստագրում դարձան թե՛ աշխարհագրական լայն ընդգրկում ունեցող ու հանրային մեծ արձագանք ստացած գիտաժողովը և թե՛ նրանում ներկայացված նյութերի ժողովածուի կազմումն ու հրատարակությունը [Հայ մամուլի դերը ազգային արժեհամակարգի ձևավորման և պահպանման գործում, 2020]: Պատահական չէր գիտաժողովի խորագիրը. ընտանիք, հայրենիք, եկեղեցի ամուր եռամիասնությունն է ի գործ ապահովելու պետության անվտանգային խնդիրների լուծումը, երկարատև կայունությունն ու խաղաղությունը, ժամանակաշրջանի մարտահրավերներին դիմակայելու ճանապարհների նախանշումը: Գիտաժողովի զեկուցումներում ընդգծվում էր այդ բոլոր խնդիրների լուծման մեջ հայ մամուլի, գրքի, կրթության, գրադարանների անառարկելի դերն ու նշանակությունը: 42 զեկուցաբերներից 32-ի հոդվածներն են ամփոփված հրատարակության մեջ: Ժողովածուն բաղկացած է երեք մասից՝ Զեկուցումներ, Ելույթներ, Հաղորդումներ: Հոդվածները ձևավոր-

ված են ներկայացված պահանջներին համապատասխան ձևաչափերով և ունեն անգլերեն ամփոփումներ:

Իսկ 2022 թ. սեպտեմբերին Հայ գրատպության 510-ամյակին նվիրված «Ժառանգության պահպանություն՝ հանուն կայուն ապագայի» խորագրով միջազգային գիտաժողովը թե՛ միջազգային գործընկերների, արտասահմանյան ճանաչված գրադարանավարների ու գրքագետների ընդգրկվածության մեծ աշխարհագրությամբ, թե՛ թեմաների բովանդակային ծավալներով իսկապես բացառիկ էր հայկական գրադարանային գործի պատմության մեջ: 2012, 2014, 2016 թվականներին ՀԱԳ-ը և Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչե և Թամար Մանուկյան» մատենադարանը կազմակերպեցին և անցկացրին հայկական գրադարանների համաժողովներ՝ «Անցյալի պահպանություն՝ հանուն ապագայի» խորագրով, որոնք հանրային մեծ արձագանք գտան: Համաժողովների ընթացքում բազմաթիվ բացահայտումներ եղան աշխարհի տարբեր գրադարաններում պահվող հայ հնատիպ և վաղ շրջանի գրքերի, արխիվային փաստաթղթերի, գաղթավայրերում «լքյալ» գրադարանների հաշվառման շուրջ, նոր միտումներ երևան եկան հայրենիք-սփյուռք մշակութային կապերի ամրապնդման ու զարգացման համար. հայ գրքի ու մամուլի ուսումնասիրության նոր նախաձեռնությունների սկիզբ դրվեց: Համաժողովների նյութերը հասանելի են թվային տարբերակով⁸:

2022 թ. «Ժառանգության պահպանություն՝ հանուն կայուն ապագայի» գիտաժողովի մեկնարկին լույս տեսավ նյութերի եռալեզու ժողովածուն, որն ընդգրկում է կազմակերպիչների ու հյուրերի ողջույնի խոսքը, մասնակիցների կենսագրությունները, զեկուցումների ամփոփումները: Սա նոր մշակույթ է ՀԱԳ գրահրատարակչական գործունեության մեջ, և, հուսանք, շարունակական կլինեն թե՛ նմանատիպ ներկայացուցչական գիտաժողովները, և թե՛ նյութերի բարձրաձաշակ հրատարակությունները: Գիտաժողովում հնչած զեկուցումները լույս տեսան 2019 թ. ընդհատված «Բանբեր Հայաստանի գրադարանների» էլեկտրոնային հանդեսի 2023 թ. վերահրատարակված Հատուկ թողարկման մեջ⁹:

Գրադարանի գիտական-մատենագիտական աշխատանքների լավագույն արտահայտություն է կենսամատենագիտությունների կազմումն ու հրատարակությունը: Այն բավական աշխատատար գործ է, պահանջում է բազմակողմանի գիտելիքներ ունեցող, որոնողական հմտությունների տիրապետող մատենագետների և խմբագիրների համատեղ աշխատանք: Վերջին տարիներին կենսամատենագիտությունների նկատմամբ աճել է և՛ գրադարանային աշխատողների, և՛ գիտական հանրության հետաքրքրությունը: Դա բացատրվում է նրանով, որ հետազոտող հանրության մեկ հրատարակության մեջ ներկայացվում են անհատի բոլոր հրատարակությունները, նրա մասին նյութերը, նրա և նրա հետ առնչված անձանց կենսագրական տեղեկությունները, նյութեր, որոնք հնարավորություն են ընձեռում հետևելու անհատի ստեղծագործական ընթացքին՝ պատճառահետևանքային դրսևորումներով: Անհատական մատենագիտությունների կազմման աշխատանքը ստեղծագործական հաճելի և օգտակար աշխատանք է, նոր բացահայտումների ընթացք: Ընդ որում, այդ բացահայտումները վերաբերում են ոչ միայն անհատի կյանքին և գործին, այլև գրադարանային ֆոնդերին, մինչ այդ անհայտ հրատարակությունների վերաբերյալ տեղեկատվության ձեռքբերմանը, գրադարանային ֆոնդերում բացակա գրքերի համալրմանը և այլն: Կենսամատենագիտությունները սովորաբար հրատարակվում են հոբելյանների առիթով: Հոդվածիս քննության ժամանակահատվածում Հայաստանի ազգային գրադարանում լույս տեսան Հովհաննես Թումանյանի, Վարդգես Սուրենյանցի և Եղիշե Չարենցի մատենագիտական ժողովածուները: Այս ժողովածուներում ընդհանուր են կենսամատենագիտական ժողովածուներին հատուկ մոտեցումները. նյութերը դասավորված են ժամանակագրական-այբբենական կարգով, բացված են բո-

⁸ Տե՛ս <https://www.flib.sci.am/arm/archive/image/conf.html>:

⁹ Բոլոր համաքննարկները տե՛ս <https://tert.nla.am/mamul/banbergrad/Table.html>:

վանդակությունները, առկա են օժանդակ ցանկեր, կենսագրական տվյալներ: Թումանյանի կենսամատենագիտությունը ընդգրկում է 2001-2020 թթ. հրապարակումները՝ ստեղծագործությունների ժողովածուներն ու առանձին գրքերով տպագրված գործերը, նրա մասին մենագրությունները, հոդվածները [Հովհաննես Թումանյան, 2020]: Թումանյանագետ, գրքի խմբագիրներից Սուսաննա Հովհաննիսյանը գրքի առաջաբանում անդրադառնում է ՀԱԳ-ի նախորդ Թումանյանի կյանքն ու գործը լուսաբանող մատենագիտական հրատարակությունների աղբյուրագիտական կարևոր նշանակությանը [Հովհաննես Թումանյան, 1961; Հովհաննես Թումանյան, 2009; Հովհաննես Թումանյան, 2008; Ованес Туманян, 2001]: Թումանյանի գրական ժառանգությունը շատ ծավալուն է, և կարոտ՝ մատենագիտական նորանոր ուսումնասիրությունների և հրատարակությունների: «Հովհաննես Թումանյան: Կենսամատենագիտություն (2001-2020)» հրատարակությունը նրա միայն հայերեն և ռուսերեն նյութերն է ընդգրկում: Ներկայում ընթացքի մեջ է Հովհաննես Թումանյանի ծննդյան 100-ամյակին նվիրված նյութերի մատենագիտական ժողովածուի կազմումը: Ժողովածուն ընդգրկելու է 1969 թ. հրատարակված գրքերը, հոդվածները, նամակները, ասույթները և այլ նյութեր: Համոզված ենք՝ այն մեծ բանաստեղծի գործունեության նոր էջեր կբացահայտի և գիտական շրջանառության մեջ նոր նյութեր դնելու հնարավորություններ կտա:

2010 թ. հայ մեծ գեղանկարիչ Վարդգես Սուրենյանցի ծննդյան 150-ամյակի առթիվ գրադարանում նախաձեռնվել և կազմվել էր նրա կենսամատենագիտությունը, որը տարբեր պատճառներով չէր հրատարակվել: Այն նոր նյութերով լրացվելուց (ավելացան նաև հոբելյանական հրապարակումները) և հիմնովին խմբագրվելուց հետո հրատարակվեց 2021 թ.՝ նկարչի ծննդյան 160-ամյակի և մահվան 100-ամյա տարելիցի առիթով [Վարդգես Սուրենյանց, 2021]: Այս մատենագիտությունը կառուցվածքով փոքր-ինչ տարբերվում է մյուս կենսամատենագիտություններից: Ներառված են ոչ միայն Սուրենյանցի կենսագրական տվյալները, նրա մասին հոդվածները, այլև նրա ցուցահանդեսների կատալոգների, ոչ գրքային հրատարակությունների ցանկերը, Ե. Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարանում պահվող նրա արխիվային նյութերը, գեղանկարչական ու գրաֆիկական աշխատանքների, գրքային նկարազարդումների ցանկերը, Հայաստանի ազգային պատկերասրահում և ազգային արխիվում պահպանվող վավերագրերը, նամակները: Այս մատենագիտական աշխատանքը իսկապես կարելի է համարել իրադարձային մեր մշակութային կյանքում, գրականագիտության և արվեստագիտության ոլորտներում և այն, լինելով նմանատիպ առաջին աշխատանք, անփոխարինելի սկզբնաղբյուր կդառնա Վարդգես Սուրենյանցի կյանքն ու գործը հետազոտողների համար:

1954 թ. Եղիշե Չարենցի արդարացումից հետո սկսեցին հրատարակվել և վերահրատարակվել նրա գրքերը, անտիպ երկերը, գրվեցին նրա ստեղծագործության մասին մենագրություններ, ուսումնասիրություններ, գրախոսություններ, գիտական հոդվածներ: Չարենցի երկերի հրատարակությունների և նրա մասին գրականության մատենագիտական ցանկեր կազմելու առաջին փորձը կատարել է Հայաստանի ազգային գրադարանը (Ալ. Մյասնիկյանի անվ. հանրապետական գրադարան): 1957 թ. բանաստեղծի ծննդյան 60-ամյակի առթիվ գրադարանի տեղեկատու-մատենագիտության բաժինը հրատարակել է մատենագիտություն, որում ընդգրկված են միայն հայերեն և ռուսերեն նյութերը (բացառություն են կազմում առանձին գրքերով հրատարակված ուկրաիներեն, քրդերեն, վրացերեն, ադրբեջաներեն նյութերը) [Եղիշե Չարենց. Բիբլիոգրաֆիա, 1957]: Նույն թվականին գրադարանի մեթոդական բաժինը հրատարակում է մեթոդական նյութեր գրադարանների համար: Չարենցի ստեղծագործության մասսայականացմանն ուղղված նյութերից բացի՝ այս հրատարակության մաս է կազմում նաև գրականության հանձնարարական ցանկը [Եղիշե Չարենց, 1957]: Չարենցի ծննդյան 80-ամյակի առթիվ գրադարանը դարձյալ երկու արժեքավոր հրատարակություն է ներկայացնում: Դրանք նախորդ երկու հրատարակությունները լրացնում են ոչ միայն ներառված նյու-

թերի քանակով, այլև նոր նյութերի անդրանիկ հրատարակությամբ՝ նոր հրատարակություններ, լուսանկարներ, ինքնագրերի պատճեններ և այլն [Եղիշե Չարենց-80, 1987; Եղիշե Չարենց, 1987]: Գրողի ծննդյան 100-ամյակի առթիվ նախաձեռնված նոր մատենագիտության հրատարակությունը հնարավոր եղավ իրականացնել միայն 25 տարի անց. 2022 թ. ՀԱԳ-ը հրատարակեց մատենագիտության Ա պրակը [Եղիշե Չարենց, 2022]: Այն ներառում է Չարենցի գրքերը (1914-2022), Չարենցի կազմած, խմբագրած, թարգմանած գրքերը (1922-1935), Չարենցի մասին գրքերը (1924-2022), վերնագրերի և անձնանունների ցանկերը, գրքերի լուսանկարներ: Մատենագիտության կազմման գործընթացում առաջացած խնդիրների մի մասին ընդարձակ անդրադարձը (Երկու խոսք) [Եղիշե Չարենց, 2022, 6-16] հաստատում է այն ճշմարտությունը, որ մատենագիտությունները ոչ միայն համակարգված, որոշակի կառուցվածքով և նպատակով ձևավորվող, որոշակի գիտական, ճանաչողական, քարոզչական արդյունք ակնկալող համահավաք, հանրագումարային հրատարակություններ են: Դրանք նաև հնարավորություն են տալիս պարզելու նախորդ հրատարակություններում առկա անճշտությունները, բացթողումները, վրիպումները, ուսումնասիրելու անթվակիր գրքերի հետ կապված խնդիրները: Մատենագիտությունների կազմման ընթացքում բացահայտվում են հեղինակի գրքերի՝ գրադարանի ֆոնդերում առկայության վիճակագրությունը, այս կամ այն հրատարակության բացակայությունը կամ եզակի օրինակով ներկայացված լինելը, գրքերի ֆիզիկական վիճակը, պահպանվածությունը, մինչ այդ անհայտ հրատարակությունների առկայությունը և այլն: Այստեղ ընդամենը մեկ օրինակ բերենք: Նար-Դոսի «Մահը» վեպը, հրատարակվել է 1934 թ. Հայպետհրատի Մոսկվայի տպարանում՝ առանձին գրքով: Պատասխանատու խմբագիրը Եղիշե Չարենցն է: Վեպը զետեղված է նաև Նար-Դոսի «Երկերի լիակատար ժողովածուի» 4-րդ հատորում. երկու դեպքում բովանդակությունը, ծավալը, էջերի քանակը նույնն է: ՀԱԳ հավաքածուում առանձին հրատարակությունը համարվում էր բացակա: Սակայն պարզեցինք, որ առկա 4-րդ հատորի 7 օրինակներից մեկը իրականում 4-րդ հատորը չէ, այլ առանձին հրատարակություն է, ու թեև շարվածքի ու տառերի չափերը, տպագրական նիշերի քանակները (46,080) նույնն են, երկու հրատարակությունները միմյանցից տարբերվում են կազմի և տիտղոսաթերթի ձևավորման տարրերով: Բացի դրանից, վերջին էջում նշված է նաև տպաքանակը՝ 2000 օրինակ: Սակայն, եթե 4-րդ հատորի 2000 օրինակից 500 օրինակը տպագրվել է Վիշխիմ գրելու և 1500 օրինակը՝ տպագրական թղթի վրա, ապա առանձին հրատարակության 2000 օրինակից Վիշխիմ գրելու թղթի և տպագրական թղթի վրա տպագրվել է հավասարապես 1000-ական օրինակ: Հավանաբար, Չարենցի խմբագրած գրքերի ֆիզիկական վիճակն է եղել պատճառը՝ տիտղոսաթերթերի վնասվածքները, խմբագիրների և մյուս պատասխանատուների անունների ջնջված լինելը և այլն, որ մատենագետները այս օրինակը համարել են 4-րդ հատորի օրինակներից մեկը, և Հայ գրքի մատենագիտության 6-րդ հատորից այն դուրս է մնացել: Ավելին, համեմատելով Խնկո Ապոր անվան մանկական գրադարանի և Մատենադարանի օրինակները՝ արձանագրում ենք, որ դրանք ևս տարբերվում են կազմի ձևավորման տարրերով. ազգային գրադարանի օրինակի կազմին գինը նշված է 6 ռ. 70 կ., իսկ վերը նշված գրադարանների օրինակներին՝ նշված է գինը՝ 6 ռ., կազմը՝ 1 ռ.: Երեք օրինակներն էլ տարբերվում են կազմերի գույներով: Սրանք փաստեր են, որոնք կարող են հետաքրքիր ուսումնասիրության նյութեր դառնալ թե՛ Նար-Դոսի գրական ժառանգության, թե՛ հայկական գրահրատարակչության պատմության, կազմարարական արվեստի ուսումնասիրության համար: Մատենագիտական աշխատանքին զուգահեռ կատարվում է նաև վերոնշյալ խնդիրների կարգավորման հետ կապված կարիքների գնահատում, խնդիրների ու ռիսկերի արձանագրում, տրվում են ընթացիկ լուծումներ: Կենսամատենագիտությունները տվյալ անհատի, նրա ապրած ժամանակաշրջանի հասարակական-քաղաքական կյանքի վայրիվերումների, հանրային տրամադրությունների վավերական պատմություններ են, իրողություններ, որոնց արձանագրումն ու նույնականացումն ապահովում են մատենագետները:

ՀԱԳ-ում ձևավորվում է մատենագիտական հրատարակությունների նոր մշակույթ. թողարկման է պատրաստվում Չարենցի մատենագիտության էլեկտրոնային տարբերակը, որը ոչ թե մատենագիտության տպագիր տարբերակի պատճենն է, այլ թվածին գիրք՝ նոր միջազգային հաշվառանիշով (ISBN), օպտիկական նիշերի ճանաչման գործընթաց անցած, վերանայված և լրամշակված հրատարակություն: Չարենցի գործերում առանձնակի տեղ են գրավում բնաբանները: Դրանք համարվում են ստեղծագործությունը կարդալու գիտության կարևոր բաղադրիչ: Էպիգրաֆ-բնաբանը ոչ միայն բանաստեղծության մուտքի դուռը զարդարող գեղեցիկ ցուցանակ է, այլև հուշարարություն-թելադրանք, բանաստեղծական ավանդույթները, մշակութային շերտերը իրար կամրջող իրողություն [Գրիգորյան, 1994, 2]: Հենց առաջին բանաստեղծական «Երեք երգ տխրադալուկ աղջկան» գրքին որպես բնաբան Չարենցը կցել է ֆրանսիացի բանաստեղծ Ալբեր Սամենի տողերը: Եղիշե Չարենցի մատենագիտության թվածին հրատարակության մեջ տեղ կգտնեն բնաբանների և մատենաշարերի ցանկերը: Բնաբանների ցանկում առկա է Բլոկի, Տերյանի, Սիամանթոյի, Տյուտչևի, Պուշկինի և այլ հեղինակների մոտ քառասուն բնաբան: Պակաս կարևոր չեն նաև մատենաշարերը, որոնցով հրատարակվել են Չարենցի երկերը, նրա կազմած, խմբագրած, նրա մասին գրքերը: Վիճակագրությունը ցույց է տալիս, որ հայերեն, ռուսերեն, չեխերեն, գերմաներեն, իտալերեն և այլ լեզուներով հրատարակությունների մեջ գերակշռում է «Պետհրատի էժանագին գրադարան» մատենաշարով լույս տեսած գրքերի թիվը: Եղիշե Չարենցի մատենագիտության Ա պրակը առանձնանում է պոլիգրաֆիական բարձրաճաշակ ձևավորմամբ: Օգտագործված է նրա Երկերի 1932 թ. հրատարակության՝ Տաճատ Խաչվանքյանի ձևավորումը: Գրքի կոշտ կազմը, կրկնակազմը, գունաբաշխումը, էջերի ակնահաճո ձևավորումը առավել տպավորիչ են դարձնում այս հրատարակությունը:

Այսպիսով, Հայաստանի ազգային գրադարանի վերջին հինգ տարիների հրատարակությունները գալիս են վերահաստատելու այն իրողությունը, որ գրադարանը իրապես ապահովում է մատենագիտական, մեթոդական ձեռնարկների կազմման և հրատարակության 85-ամյա ավանդույթների շարունակականությունը և հայկական գրահրատարակչական դաշտում ամրագրել է իր տեղն ու անշփոթելի ձեռագիրը: Միաժամանակ ուսումնասիրվում և օգտագործվում են մատենագիտությունների կազմման և հրատարակման աշխատանքներում արտերկրի գրադարանների առաջավոր և նորարար մոտեցումները, հրատարակությունների ձևավորման ժամանակակից մեթոդներն ու նյութերը: Ներկայում նախապատրաստական աշխատանքներ են տարվում գրադարանի տարբեր հավաքածուները ներկայացնող գիրք-ալբոմների շարքի հրատարակության ուղղությամբ:

SUMMARY

The publications of the National Library of Armenia for the last five years have come to reaffirm the fact that the library actually ensures the continuity of the 85-year-old tradition of compiling and publishing bibliographical and methodological manuals and has secured its place and unmistakable handwriting in the Armenian publishing field. At the same time, advanced and innovative approaches of foreign libraries, modern methods and materials for creating publications are studied and used in compiling and publishing bibliographies. Currently, preparations are being made for the publication of a series of book-albums representing the various collections of the library.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Գիրքը Սովետական Հայաստանում: Մատենագիտական ցանկ, Հատոր II, 1931-1940 = Книга в Советской Армении: Библиографический указатель / Մասնագիտական խմբ.՝ Ռ. Իշխանյան, Կազմ.՝ Լ. Ղազարյան, Թ. Մարգարյան, Երևան, ՀՍՍՀ պետական գրապատ, 1988, 953 էջ:

2. Գրիգորյան Ս. «Զքոյսդ ի քոյոց քեզ մատուցանեն» // Գրական թերթ, 1994, թ. 2, 25 մարտի, էջ 2:
3. Եղիշե Չարենց (1897-1937): Բիբլիոգրաֆիա, Երևան, Հայկ. ՍՍՌ պետ. ռեսպ. գրադարան, 1957, 95 էջ:
4. Եղիշե Չարենց: (Ծննդյան 60-ամյակի առթիվ): 1897-1957, Երևան, Հայկ. ՍՍՌ պետ. ռեսպ. գրադարան, 1957, 65 էջ:
5. Եղիշե Չարենց: Ծննդյան 80-ամյակը: (Մեթոդական ցուցումներ գրադարանավարների համար), Երևան, Հայկ. ՍՍՀ հանրապետ. գրադարան, 1977, 134 էջ:
6. Եղիշե Չարենց-80: Տարեգրություն, մատենագիտություն, ասույթներ, Երևան, Սովետ. գրող, 1977, 79 էջ:
7. Եղիշե Չարենց: Մատենագիտություն (1914-2022): Պրակ Ա. / Կազմ.՝ ՀԱԳ մատենագիտության և գրադարանագիտության բաժին, Գլխ. խմբ. և առաջաբ. հեղ.՝ Դ. Գասպարյան, Պատ. խմբ. և առաջաբ. հեղ.՝ Հ. Ղազարյան, Երևան, Գիրք, 2023, 448 էջ:
8. Զարգարյան Տ., Ղազարյան Հ., Գրիգորյան Մ. Հայ տպագիր ժառանգությունը պատմության հոլովույթում // Կաճառ, Երևան, 2017, էջ 459-470:
9. Հայ գիրքը Թուրքիայում = Türkiye'de Ermeni kitabı, Պրակ Ա. / Կազմ.՝ Ա. Վարդանյան, Խմբ. և առաջաբ. հեղ.՝ Տ. Զարգարյան, Մ. Գրիգորյան, Երևան, Անտարես, 2022, 514 էջ:
10. Հայ գիրքը 1512-1800 թվականներին. Հայ հնատիպ գրքի մատենագիտություն / Կազմ.՝ Ն. Ոսկանյան, Բ. Կորկոտյան, Ա. Սավալյան, Երևան, Հայկ. ՍՍՀ կուլտուրայի մինիստրություն, 1988, 864 էջ:
11. Հայ գիրքը 1801-1850 թվականներին / Կազմ.՝ Հայկ Դավթյան, Երևան, Հայկ. ՍՍՀ կուլտուրայի մինիստրություն, 1967, 536 էջ:
12. Հայ գիրքը 1851-1900 թվականներին / Կազմ.՝ Ն. Ոսկանյան, Ա. Սավալյան, Մ. Սողոմոնյան, Օ. Գյուլումյան, Ա. Սահակյան, Ս. Թադևոսյան, Երևան, Գիրք, 1999, 860 էջ:
13. Հայ գիրքը 1901-1920 թվականներին / Կազմ.՝ Օ. Գյուլումյան, Ա. Ադամյան, Ա. Թադևոսյան, Ա. Սավալյան, Մ. Սողոմոնյան, Ա. Սահակյան, Երևան, Գիրք, 2007, 818 էջ:
14. Հայ գիրքը 1921-1930 թվականներին / Կազմ.՝ Օ. Գյուլումյան, Ս. Գրիգորյան, Երևան, Գիրք, 2012, 788 էջ:
15. Հայ գիրքը 1931-1940 թվականներին / Կազմ.՝ Օ. Գյուլումյան, Ս. Գրիգորյան, Երևան, Գիրք, 2018, 928 էջ:
16. Հայ թարգմանական գրականություն (1911-2020): Մատենագիտություն: Գիրք Գ. / Կազմ.՝ Թ. Սինանյան, Ա. Ներսեսյան, Կ. Ասատրյան, Խմբ. և թող. պատասխանատու՝ Մ. Հակոբջանյան, Երևան, Գիրք, 2021, 252 էջ:
17. Հայ մամուլի դերը ազգային արժեհամակարգի ձևավորման և պահպանման գործում. ընտանիք, հայրենիք, եկեղեցի: Ազդարար 225: Նյութեր հայ մամուլի 225-ամյակին նվիրված գիտաժողովի (28-29 նոյեմբերի 2019թ.) / Կազմ.՝ Հ. Ղազարյան; Խմբ.՝ Ա. Խառատյան, Երևան, Գիրք, 2020, 317 էջ:
18. Հովհաննես Թումանյան: Կենսամատենագիտություն (2001-2020) / Կազմ.՝ Ա. Ամիրջանյան, Օ. Աղայան; Խմբ.՝ Ս. Հովհաննիսյան, Մ. Գրիգորյան, Երևան, Գիրք, 2020, 443 էջ:
19. Հովհաննես Թումանյան (1869-1923): Մատենագիտություն / Խմբ. և առաջաբ.՝ Էդ. Ջրբաշյան, Երևան, Հայկ. ՍՍՀ կուլտուրայի մինիստրություն, 1961, 386 էջ:
20. Հովհաննես Թումանյան: Կենսամատենագիտություն 1980-1989 թթ. / Կազմ.՝ Ա. Հովհաննիսյան; Խմբ.՝ Հ. Ղազարյան, Երևան, Գիրք, 2009, 216 էջ:
21. Հովհաննես Թումանյան: Կենսամատենագիտություն 1990-2000 թթ. / Կազմ.՝ Ա. Հովհաննիսյան; Խմբ.՝ Հ. Ղազարյան, Երևան, Գիրք, 2008- 2009, Մ. I (2008, 278 էջ), Մ. II (2009, 216 էջ):

22. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը հայ գրատպության կենտրոն. Հրատարակությունների մատենագիտություն 1772-1920 / Կազմ.՝ Մ. Գրիգորյան, Ս. Պետոյան, Գ. Գրիգորյան և ուրիշն.; Պատ. խմբ.՝ Գ. Տեր-Վարդանյան, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին հրատ., 2021, 744 էջ:
23. Նորահայտ գրքեր և պարբերականներ: Պրակ Ա. / Կազմ.՝ Ս. Պետոյան, Ռ. Ալեքսանյան; Խմբ.՝ Տ. Զարգարյան, Հ. Ղազարյան, Մ. Գրիգորյան, Երևան, Գիրք, 2018, 128 էջ:
24. Վարդգես Սուրենյանց: Կենսամատենագիտություն / Կազմ.՝ Ա. Աղամյան; Խմբ.՝ Դ. Մկր. Սարգսյան, Երևան, Գիրք, 2021, 170 էջ:
25. Տեր Վարդանեան Գ. Ստորումներ հայերեն տպագիր գրքի տեղային մատենագիտությունների մասին // Բանբեր Մատենադարանի, Երևան, Հտ. 28, 2019, էջ 218-243:
26. Տպագրության տարեգիր, Երևան, Գրապալատ, 1925-1994:
27. Ованес Туманян (1869-1923): Библиография / Сост. Э. Бабалян; Ред. И. Сафразбекян, Ереван, Гирк, 2001, 162 с.
28. Справочник библиографа. СПб., Профессия, 2005, 592 с.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԱՅԵՐԷՆ ՀՆԱՏԻՊ ԳՐՔԵՐԻ
ՁԵՌԱԳԻՐ ԵՒ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԻ «ԴԻՒՆԸ»*

Բանալի բառեր՝ ձեռագիր գրառումներ, հնատիպ գիրք, յիշատակարաններ, կնքադրոշմներ, մագաղաթեայ պատառիկներ:

Keywords: handwritten notes, ancient book, colophons, seals, scraps of parchment.

ա. Արժեքն ու անհրաժեշտությունը

Հայերեն հնատիպ գրքի մատենագիտությունը [Ոսկանեան, Կորկոտեան, Սավալեան, 1988, 864] տասնամեակներ շարունակ զգալի դերակատարում է ունեցել տպագիր գրքի պատմության համար: Սակայն այդ մատենագիտության մեջ ներկայացուած չեն հայ գրքի էջերում գետեղուած ձեռագիր զանազան գրառումները եւ գրադարանային նշումները, որոնց պակասն այսօր նկատելի է, եւ դրանց վերհանումը արժեքաւոր ու կարեւոր է ոչ միայն գրատպութեան, այլեւ ընդհանրապէս պատմութեան, մասնաւորապէս՝ մշակոյթի պատմութեան համար:

Տպագիր գիրքը ստեղծելիս հրատարակիչներն ու հեղինակները հիմնականում այն կազմել են՝ հետեւելով ձեռագրերի ստեղծման աւանդոյններին [Մանուկեան, Սարգսեան, 2022, 330]: Զարմանալի չէ այս իրողութիւնը, քանի որ «ԺԶ-ԺԹ դարերի ամբողջ ընթացքում մեր ձեռագիր եւ տպագիր գրքերը կենցաղավարել են կողք կողքի՝ համատեղ, ծառայել են նոյն նպատակներին, կատարել նոյն գործառոյթները: Անգամ՝ առանձին թերթեր կամ մասեր կորցրած պակասաւոր տպագիրները լրացուել-ամբողջացուել են ձեռագրերից ընդօրինակուած թերթերով, այլեւ՝ տպագիր գրքերից ձեռագրեր են օրինակուել. եւ այլն» [Տէր-Վարդանեան, 2022, 322]:

Մեր հնատիպ հրատարակութիւնները, բազմաթիւ այլ յատկանիշների շարքում, ձեռագիր գրքերից մասնաւորապէս փոխ են առել ազգային-մշակութային կերպարանք ստացած յիշատակարանային աւանդոյթը, որ տպագիր գրքերի մէջ գոյատեւել է նրանց հետագայ կեանքի ամբողջ ընթացքում: Տարբեր ժամանակների տէրերն իրենց պատկանած գրքերի մէջ գրանցել են պատմական եւ մշակութային արժեք ունեցող յիշատակարաններ եւ մանր յիշատակագրութիւններ, որոնք, անկասկած, հաւասարարժեք են իրենց ժամանակակից ձեռագրական յիշատակարաններին: Ինչպէս ձեռագիր մատենաներում, այնպէս էլ հնատիպ գրքերում յիշատակարաններն ու յիշատակագրութիւնները տարբերում են բովանդակային լայն բազմազանութեամբ. դրանցում կարելի է գտնել տարբեր ժամանակների պատմական, հասարակական, քաղաքական կյանքի մեծ ու փոքր իրադարձութիւնների մասին տեղեկութիւններ, տոհմական տարեգրութիւններ եւ նշանաւոր մարդկանց կենսագրական տուեալներ: Ինչպէս ձեռագրերում, հնատիպի դէպքում եւս այդ յիշատակարանների հեղինակները ոչ միայն տէրերն էին, այլեւ գնորդները, ստացողները, նորոգողներն ու նուիրատուները: Ըստ այդմ, մեր պատրաստելիք «Դիւանը»¹⁰ այսպիսի նիւթերի շնորհիւ ունենալու է ձեռագրական յիշատակարանների ստուար հատորներին մօտեցող արժեք:

Հնատիպ հրատարակութիւնների ունեցած ձեռագիր գրառումները, բացի տարբեր ուսումնասիրութիւնների համար աղբիւրագիտական արժեք ունենալուց, կարեւոր են նաեւ

¹⁰ Հայաստանի ազգային գրադարանում 2023 թ. սեպտեմբերի դրութեամբ կայ 2392 միաւոր հնատիպ գիրք:

գրքերի հետագայ ճակատագրի առումով. սրանք բացայայտելու են ընթերցողի վերաբերմունքն ու հետաքրքրությամբ հարգելու գրքի, նրա պարունակած բնագրի նկատմամբ:

Հնատիպ գրքի էջերում, բացի տարատեսակ ու տարաբնույթ ձեռագիր գրառումներից, հանդիպում են զգալի թույլ գրադարանային նշումներ, որոնք իրենց կարեւորութեամբ չեն զիջում յիշատակարաններին: Գրքերում առկայ գրադարանային նշումները (կնքադրոշմներ¹¹, գոյքահամարներ եւ այլն) օգնելու են պատկերացնելու տարաբնույթ (եկեղեցական, վանական, մասնաւոր, նաեւ դրանց ներկայ տեր) գրադարանների կառուցուածքն ու պարունակութիւնը՝ բովանդակային եւ քանակական առումներով: Ամեն առանձին գրքի իրարայաջորդ տերերի եւ նուիրատուների անունների բացայայտումով պարզուելու են նրանց գրքերի ապրած կեանքը, դրանց նկատմամբ եղած ընթերցողական պահանջմունքը, սրանց շնորհիւ՝ գրքի եւ մարդու կապի դրուագները, որով էլ պայմանավորուած հնարաւոր է լինելու դատողութիւններ անել հասարակական տարբեր խաւերի մէջ գրական մշակոյթի տարածման ծաւալների ու չափանիշների մասին:

բ. «Դիւանի» պատրաստման հակիրճ նկարագիրը

Այստեղ համառօտ ներկայացնում ենք մինչ օրս արուած աշխատանքը: Այսպէս՝

1. թերթում ենք հայերէն հնատիպ գրականութեան բոլոր օրինակները,
2. վրիպումներից խուսափելու նպատակով գրքերի ստուգումները իրականացնում ենք ըստ ժամանակագրական կարգի, հաջորդիւ արձանագրում ենք անհատական համարը եւ գոյքահամարը, այնուհետեւ հեղինակի անունը, եթէ այն առկայ է, ապա՝ խորագիրը, վերջում՝ տպագրութեան վայրը եւ տարեթիւր,
3. նոյն հրատարակութեան բոլոր օրինակները տեղադրում ենք ըստ պարունակած նիւթի՝ գրառումների ժամանակագրական կարգով¹². ըստ այսմ ձեռագրական, հնագրական, պատմական օժանդակ հնարաւոր բոլոր գիտելիքներով թուագրում ենք գրառումները,
4. ձեռագիր գրառումներ պարունակող գրքերի մէջ առկայ կնքադրոշմները, պիտակները եւ այլն նկարագրում ենք հնարաւոր համառօտ բնորոշումներով,
5. կնքադրոշմները¹³ վերծանում ենք հնարաւոր ճշգրտութեամբ, գուգահեռաբար համարակալում եւ հաւաքում յաջորդաբար՝ առանձին ցանկերով¹⁴,
6. գրառման կամ ներկայացուող նիւթի՝ գրքի մէջ զբաղեցրած տեղը (էջահամարը կամ թերթահամարը, անհրաժեշտութեան դէպքում նաեւ սկիզբն ու վերջը՝ էջ 5-10. ստորին լուսանց) անպայման նշում ենք, եթէ անգամ հրատարակութիւնն էջակալուած չէ, ապա այդ մասին ծանօթագրում ենք,
7. գրառումները հրատարակում ենք ընդունուած բնագրագիտական եղանակների կիրառմամբ՝ հարազատ մնալով բնագրի ուղղագրութեան՝ ուղղագրական շեղումները տալով ընդգծուած (*italic*), իսկ անհասկանալի եւ աղաւաղուած բառերին կից կոր փակագծերում նշելով ճիշտ ձեւերը,
8. վրիպած, չգրուած կամ ջնջուած գրերը վերականգնում ենք ուղղանկիւն փակագծերում,

¹¹ Գիտական տարբեր հաստատութիւնների եւ մասնաւոր անձանց:

¹² 2013 թուականից Հայաստանի ազգային գրադարանի հայերէն հնատիպ գրականութեան հաւաքածուն առանձնացուած եւ դասաւորուած է ժամանակագրական կարգով:

¹³ Միայն Հայաստանի ազգային գրադարանի տարբեր ժամանակների կնքադրոշմները 12-ն են, որ կիրառուել են գրադարանի ստեղծման՝ 1919 թուականից առ այսօր:

¹⁴ Առայժմ հաւաքել ենք կազմակերպութիւնների եւ անհատական հաւաքածուների մօտ 170 միաւոր կնքադրոշմ: Անհատ անձերի, հիմնականում հոգեւորականների, կնքադրոշմները կրկնակի, եռակի շատ են:

9. անվերականգնելի, անընթեռնելի բառերի փոխարեն դնում ենք երեք թեք գիծ՝ ///, կասկածելի ընթերցումներին կից կոր փակագծերում դնում ենք հարցական նշանը (?),

10. նիւթը կետադրում ենք արդի կանոնների համաձայն:

Ապագայում արդեն հրատարակուելիք «Դիւանի» հատորները կունենան նաեւ զանազան ցանկեր՝ Կազմակերպությունների, Անձնական հաւաքածուների, Տեղանունների, Նուիրատուների եւ Ստացողների, Վաճառողների եւ Գնորդների, Առք ու վաճառքի¹⁵, Ձեռագիր եւ հատկապէս մագաղաթեայ պատառիկներ ունեցող գրքերի¹⁶ եւ այլն:

Յուցիչ ցանկերի վերջնական քննութիւնը հնարաւոր է իրականացնել Հայաստանի ազգային գրադարանի հնատիպ գրականութեան եւ ոչ գրքային (քարտեզներ, հմայիլներ եւ այլն) հաւաքածուում առկայ ամբողջական նիւթը հաւաքելուց յետոյ, երբ աւարտին կհասցունեն էջադրման, ինչու չէ նաեւ սրբագրման աշխատանքները. մի խօսքով, երբ շարադրանքը վերջնական տեսք կունենայ:

Ստորեւ բերում ենք ապագայ աշխատութիւնից մի հատուած¹⁷:

3759-71, 1894-ԱՀ

ՇԱՐԱԿՆՈՑ

Կ. Պոլիս - 1699 թ.

Մէջքին տսնձած պիտակին. «5054 հայերեն»:

Տիտղոսաթերթը թափուած, լրացուած մեկ թերթով, մանուշակագոյն թանաքով բոլորգիր՝ «Շնորհօք ամենագօրին Աստուծոյ եւ ողորմութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի... Օգնեա՛ շոգիւ Սուրբ, Աստուած ճշմարիտ, զսկսեալս մեր դու հասոյ յաւարտ», մատիտով՝ «5054», «1894-ԱՀ», «3759-71»:

Էջ 45, 65, 73 վր. լս. սեւ թանաքով նոտրգիր՝ անընթեռնելի:

Էջ 78-9 ստ. լս. սեւ թանաքով նոտրգիր՝ «1876 ամենեքեան հաղորդեալ Քրիստոսի կենարար մարմարովն օգոստոսի /էջ 79/ ամենեքին խոստովանեալ եւ հարգեալ են ի կենարար մարմին ի Յիսուսի Քրիստոսի մարմն»:

Էջ 88-9 ստ. լս. սեւ թանաքով նոտրգիր՝ «Ամենեքեան հաղորդեալ են Քրիստոսի գերէզման Սոմոնոս քարէնէ /էջ 89/ Սեմոնոս քարէ Քրիստոսի կերեզման»:

Էջ 104-5 ստ. լս. սեւ թանաքով նոտրգիր՝ «1873 ամի 7ն յուլիսի նա կոչեցաւ Կալուստ Գիրիքոր Ասլան /էջ 105/ երկոքեան եւ նորա մայր Շամամ Կալոյեան»:

Էջ 105 վր. լս. սեւ թանաքով նոտրգիր՝ «ԶՊղայտոս պատասխանի ետ այսորիկ»:

Էջ 112-3 ստ. լս. թանաքով նոտրգիր՝ «/// Մարքարայ Կեւորքեան Տէր-Խաչայտուրեան /էջ 113/ ստ. լս. ի կրոց Հայոց Մնացայկան Կարապետեան, զերիցփոխան Մանուկ Մանուկեան»:

Էջ 168-9 ստ. լս. թանաքով նոտրգիր՝ «1873 ամի 25 յունիսի /// Կումրի տէր Հակոբ քահանայ մեռաւ. վայ սայթե՛/// ժողովուրթէնէ՛ մերմէ Դավիթ Պետրոսեան կամի /// /էջ 169/ ի նորին Բարձր արժանապատիւ Երէվանու ք/// բնակիչ բարէկարք տէր Կէորգ Թադի ///»:

Էջ 171. սեւ թանաքով նոտրգիր՝ «Այս Շարակնոցս նորոգուելին Ովանէսի գին Մարեան Գ. Սուրբ Երրորդութիւն երեկ անկամ եկաւ մեզ տեսաւ, մեք ճաշակեցանք մարմնաւ, որ նայ գերակրի անմահական սեղանօվն. ամեն: Ո՛վ քահանայ, ամենայն ժամ յիշեալ Ովանէսի կին Մարեան, Աստուած քեզ եւ մեզ յիշէ. ամեն: Նզովածայ էն կարդացողն, որ ոչ յիշէ կամ ջնջէ,

¹⁵ Այստեղ կարելորդում ենք նաեւ դրամական միաւորների տարատեսակները՝ ըստ տեղի եւ ժամանակի:

¹⁶ Վաղ շրջանի հնատիպերում հանդիպում ենք ձեռագրերի մագաղաթեայ թերթերի, որոնք առանձին նկարագրութեան եւ ուշադրութեան են արժանի. դրանք հիմնականում օգտագործուել են գրքի նորոգութեան նպատակով՝ որպէս պահպանակ կամ կազմաստառ (օրինակ՝ Ուրբաթագիրք, 1512 թ., Պարգատումար, 1513 թ.):

¹⁷ Բերուած հատուածը ընդգրկում է 1699-1702 թթ. այն տպագրերի համար արուած մեր աշխատանքը, որոնք առաւել ամբողջական են տալիս աշխատանքի ընդհանուր պատկերը:

նգովեալ լիցին, մասն եւ բաժին Յուքային եւ ընդ Կայէնին առցէ, ընդ Քրիստոսէ անմասն մնան, օրհնեալիս էն քահանայէն, որ յիշէ եւ ողորմի ասէ, Աստուած զձեզ ողորմի ամէն հոգոցն. Հայր մեր, որ յերկինս ասէ»:

Էջ 201 ստ. լս. սեւ թանաքով նոտրգիր՝ «1878 ամի օգոստոսի 6ին ///»:

Էջ 226 ստ. լս. սեւ թանաքով նոտրգիր՝ «Վարդան Խանոյեանէ (ստորագր). եւ Անտոնեան Յակոբ (ստորագր.)»:

Էջ 293 ստ. լս. սեւ թանաքով նոտրգիր՝ «Ի նորին բարձր պատիւ ///»:

Էջ 328 ստ. լս. սեւ թանաքով նոտրգիր՝ «Կնքայիայր Մանուկ աղա /// Յակոբ քահանայէ ///»:

Էջ 420. սեւ թանաքով նոտրգիր՝ «Յիշատակ է Շարական տէր Խաչատուրին եւ Յովանէսին, կողակից Մարիամին, որ տվինք յիշատակն Դաշտի Խաչի յեկեղեցոյ, տէր Մելքիսէթ քահանայիդ Աստուած մի բերան ողորմի ///»:

Էջ 469-70 թափուած, լրացուած մէկ թերթով սեւ թանաքով նոտրգիր՝ «Որ զլոյսն ի սկսբանէ հաստատեցէր վերըստին... եւ հեղմամբ արեան իւրեանց նորոգեցին զաշխարհս, դասաւորեալք ընդ անմարմնոց»:

Էջ 471ի ներքին լս. թափուած. լրացուած 3/4 թերթով, սեւ թանաքով նոտրգիր՝ «բազմութիւն... զոհութեամբ»:

Էջ 471. սեւ թանաքով նոտրգիր՝ «Հասուցէ Մանուկ Նազարէ ավէտօք ավէտօք կենդանեա եւ մեռաե/// Մարգար, Կել[ո]րքեան Մանուկ կաչար Սաֆար Պետրոսեան, կաչար Սաֆար Պետրոսեան, ///Աթօ Լազարեան, Կալուստ Պէ/// Հաղվերդե[ան], տէր Օհանէս Կէտր[զ]եան Թաթէոս»:

9982-57, 1656-ԱՀ

ՄԱՍԹԵՆՈՍ ՎԱՆԱՆԴԵՑԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ,
ՈՍԿԵԱՅ ԴՈՒՌՆ ԴՊՐԱՏԱՆ
Ամստերդամ - 1699-1700 թթ.

Ա. պահպանակի բ. երեսին. մատիտով շղագիր՝ «Մատթեոս Վանանդեցի»:

Անուանաթերթին. կապոյտ թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍԽՆՀ-ССՐ»:

Անուանաթերթի դարձերեսին՝ մանուշակագոյն թանաքով՝ «37+491.99-8», սեւ թանաքով շղագիր՝ «Ի գրոց Կարապետի Սերովբեանց, Հ^ր 70», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «Ի ՅԻՇԱՏԱԿ ԻԻՂԱԲԵՐ ՍԵՐՈԲԵԱՆ-ԻՆՃԻԿԵԱՆԻ 23 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1929 ԹՈՒՐԻ»:

9983-57, 1659-ԱՀ

ՄԱՍԹԵՆՈՍ ՎԱՆԱՆԴԵՑԻ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ,
ՈՍԿԵԱՅ ԴՈՒՌՆ ԴՊՐԱՏԱՆ
Ամստերդամ - 1699-1700 թթ.

Մէջքին սոսնձած պիտակին. թանաքով՝ «282»:

Ա. կազմաստառին սոսնձած պիտակին. մանուշակագոյն թանաքով՝ «I/1235»:

Ա. պահպանակի ա. երեսին. մատիտով՝ «տ. 282 / թ. 1256»:

Ա. պահպանակի բ. երեսին՝ «Թէոդիկի մատենադարանին կը նուիրէ սոյն գիրքը Մն. Նորիկեան. 26 օգոս., 9 սեպտեմբեր 1914, ի Նշան թաղ. կարմիր մատիտով՝ «100», մանուշակագոյն թանաքով քառանկին կնքադրոշմ՝ «ՀԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ / ՀԱՄԱՐ»:

Տիտղոսաթերթին. մանուշակագոյն թանաքով՝ «1235», մատիտով՝ «1659-ԱՀ», կարմիր թանաքով առանց շրջանակ կնքադրոշմ՝ «Printed in Turkey»:

8259-57, 486-ԱՀ
ԹՈՄԱ ՊԵՄԲԱՅԻ,
ՅԱՂԱԳՍ ՀԱՄԱՀԵՏԵԻՄԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ
Կ.Պոլիս - 1700 թ.

Ա. կազմաստառին սոսնձած պիտակին. «I/ 151»:

Ա. պահպանակի բ. երեսին. մատիտով՝ «486-ԱՀ», «1700 թ.»:

Տիտղոսաթերթին. մանուշակագոյն եւ կապոյտ թանաքով՝ «151 ստ.», կապոյտ թանաքով՝ «8259-57», մանուշակագոյն թանաքով բոլորակ կնքադրոշմ, որի մէջտեղում Միսն ու Մասիսը՝ ներքեւում «ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ / 1930 - ՌՅՀԹ.», շուրջբոլորը՝ «Հ. Ս. Խ. Հ. Լ. Ժ. Կ. ԷՋՄԻԱՍԽ ԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍԽՀ-ССՐ»:

Էջ 352. մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍԽՀ-ССՐ», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍՍՌ - АРМ ССՐ», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՀՄ»:

Բ. կազմաստառին. սեւ թանաքով նոտրգիր՝ «ԹՎին ՌՄԶ.ի (1831) մատիմ այս է գորութիւն գրուս, Աստուծոյ է Նիկողոսի որդիի Գաբէլ, էլի վեր առի, պարտ եմ Օվանէս որդիի Մարքարին եւ թանապաք գրիս, ///արեպէս մինչեւ /// տրին ///ատայ անպատճառ ///ամ այլեւ վայրութիւն չանեմ, հագեմ, չի ձգեմ, թէ հագիմ ձգեմ, չանեմ դու տն/// տիրացուս ///», կապոյտ թանաքով՝ «340 ///»:

8807-57, 487-ԱՀ
ԹՈՄԱ ՊԵՄԲԱՅԻ,
ՅԱՂԱԳՍ ՀԱՄԱՀԵՏԵԻՄԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ
Կ.Պոլիս - 1700 թ.

Ա. կազմաստառին սոսնձած պիտակին. մանուշակագոյն թանաքով՝ «I/535», մատիտով՝ «Հ^ր 201», սեւ թանաքով նոտրգիր՝ «Մաղաքի որդի Ըստեփան», մանուշակագոյն թանաքով՝ «2000»:

Ա. պահպանակի ա. երեսին. սեւ թանաքով նոտրգիր՝ «Նահապետի դուստր Պիրիճիտան ընծայեցաւ եւ ծնաւ աշխարհ ի թուին ՌՃԴ. (1741) Յունվարի ԲԷ. (27): Եօթն երեակն էր Դ., գիր տարուն էր Ը., վերադիրն էր ԲԲ. (22) եւ տանուտէրն էր Ադեղնատրն, եւ օրն էր չորեքշաբթ: Եւ դագուիսի Հիստէփն փաշային, որ ըսպաննեաց Թօրուն աղան, Ղուրպան աղան եւ Մօրատ օղլին, եւ վերջապէս փաշային վոնդած եւ թօփած օրն էր, եւ առաջնորդութեան Մահակ վարդապետին, եւ ես՝ Յօվսէփ վարդապետս գրեցի»:

Ա. պահպանակի բ. երեսին. սեւ թանաքով նոտրգիր՝ «Թին ՌՃՀԸ. (1729) ծնաւ Յովսէփն, Հոկտեմբերի Ա. որդի Նահապետին եւ Աննային, կնքահայրն է Եղիայն՝ Էգէկի որդի: Թին ՌՃՁԴ. (1735) Հօկտեմբերի Ա. ծնաւ Խաթունբէկին՝ դուստր Նահապետին եւ Աննային, կնքահայրն է Եղիայն՝ Էգէկի որդի: Թին ՌՃՁԵ. (1736) Օգոստոսի Բ. (20) ծնաւ Ճովանին՝ որդի Նահապետին եւ Աննային, կնքահայրն է Եղիայն՝ որդի Էգէկին: ՌՃԿԱ. (1712) եւ Յունվարի Զ. ծնայ եւ աշխարհ եկեալ եմ ես՝ Յակոբի դուստրս՝ Աննա: ԹՎին ՌՃԴԴ. (1745) Դեկտեմբերին Բ. ծնաւ[ւ] Սէխպուրն՝ որդին Հապետին եւ Աննային կրնկալըն ///»:

Տիտղոսաթերթին. մանուշակագոյն թանաքով՝ «535», կապոյտ թանաքով՝ «ստ.», մատիտով՝ «61», մատիտով՝ «8353, Հ^ր 261»՝ ջնջած, կապոյտ թանաքով՝ «8807-57», մատիտով՝ «487-ԱՀ», «1700, Կ.Պոլիս», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ

ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍԽՀ-ССՐ»:

Էջ 152 ստ. լս. սեւ թանաքով յոթնաթերթ բոլորակ կնքադրոշմ՝ անընթեռնելի, մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՀՄ»:

7858-56, 2043-ԱՀ
ԹՈՄԱ ԳԵՄԲԱՑԻ,
ՅԱՂԱԳՍ ՀԱՄԱՀԵՏԵԻՄԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ
Կ. Պոլիս - 1700 թ.

Մէջքին. «1013»:

Ա. փեղկին սոսնձած պիտակին. «24/Թ-75»:

Ա. կազմաստառին սոսնձած պիտակին. մանուշակագոյն թանաքով՝ «I/4444»:

Ա. պահպանակի ա. երեսին. մատիտով՝ «1426»:

Ա. պահպանակի բ. երեսին. մատիտով՝ «117», սեւ թանաքով՝ «Հ⁴ր 123, Հ⁴ր 1387»՝ ջնջած, «49», սեւ թանաքով նոտրգիր՝ «3 մանէթ, ընծայեալ Յարութիւն Չուդայեցի Նուպարովն Մօվս-ցովկիին 1807ին, Աստրախան», կապոյտ մատիտով՝ «Կ. Պոլիս, 1691»:

Տիտղոսաթերթին. մանուշակագոյն թանաքով՝ «1013=594», «4444», մատիտով՝ «2043-ԱՀ», «1691», մանուշակագոյն թանաքով եռանկիւն կնքադրոշմ, որի վերին անկիւնում աստղ եւ նրանից դուրս եկող ճաճանչներ՝ «ՊԵՏ / ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍՍՌ - АРМ ССР»:

Էջ 51 լս. սեւ թանաքով նոտրգիր՝ «Այսինքն եկեղեցին է քաւարանն մեր ըստ հաւատոց ազգիս հայոց»:

Էջ 338 ստ. լս. «Յիշեա՛ զՄկրտիչ Եզեան նորընծայ»:

ՄԻԱԿԱԶՄ (502, 503)
8328-57, 502-ԱՀ
ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ
Կ. Պոլիս - 1700 թ.

Ա. կազմաստառին. սեւ թանաքով նոտրգիր՝ «Գրեցաւ գիրս Հոկտեմբերի ԺԵ. (15) չօրեք-շափ[թ]ի Ե. սահաւտին»:

Ա. պահպանակի բ. երեսին. կապոյտ մատիտով՝ «419»:

Բ. պահպանակի ա. երեսին սոսնձած թղթին. մանուշակագոյն թանաքով շղագիր՝ «Գիրք մեկնութեան Յայտնութեանն Սրբոյ Յօհաննու աւետարանչի, Կ. Պոլիս 1700»:

Բ. պահպանակի ա. երեսին. մատիտով՝ «7438», կապոյտ թանաքով շղագիր՝ «Գիրք Մեկնության Հայտնությանն սրբո Յօհաննու աւետարանչի, Կ. Պոլիս, 1700, ալիգ.», մանուշակագոյն թանաքով շղագիր՝ «Խաչատուր վարդապետ Էրզրումցի, Մեկնութիւն յԵրզոց երզոցն Սոդոմոնի», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ / Հ. Հ.»:

Էջ 6. սեւ թանաքով բոլորակ կնքադրոշմ՝ «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ / ԱԲՐԱՀԱՄ»:

Էջ 7-11 ստ. լս. սեւ թանաքով նոտրգիր՝ «Յիշատակ եղաւ ի սուրբ Աթոռն Աղթամարայ սուրբ մատեանս Յայտ/էջ 8 /նութեան Յիսուսի Քրիստոսի եւ Երզ երզոց Սոդոմոնեան ի հանգուցեալ Յարութիւն վարդապետէ ի վայե/էջ 9/ լումն միաբանաց, ապա մի ոք համարձակեցէ իւրացուցանել /էջ 10/ կամ այլոց տալ եւ վաճառեցէ, եւ եթէ հանտկնեցէ, առցէ պատիծս ըստինքեան չար խորհրդոց, 1872»:

Էջ 126. մանուշակագոյն թանաքով բոլորակ կնքադրոշմ (կապորով)՝ «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ / ՅՕՀԱՆԷՍ»:

8327-56, 503-ԱՀ
ԽԱՉԱՏՈՒՐ ԷՐՁՐՈՒՄԵՑԻ,
ՀԱՄԱՌՕՏ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՐԳՈՅ ԵՐԳՈՅՆ ՍՈՂՈՍՈՆԻ
Կ.ՊՈԼԻՍ - 1700 թ.

Էջ 256. մանուշակագոյն թանաքով բոլորակ կնքադրոշմ՝ «ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՀԱՅՈՅ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԱՂԹԱՄԱՐԱՅ», մանուշակագոյն թանաքով ութանկին կնքադրոշմ՝ «ԽԱՉԱՏՈՒՐ / ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ / ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՅ / ՏԱՆՆ ԱՂԹԱՄԱՐԱՅ / ՌՅԺԳ. - 1864», մանուշակագոյն թանաքով շղագիր՝ «1889 Յունվ. 4: Ի յիշատակ յաւերժական մատենանս, ն. վեհափառութիւն տ. Խաչատուր կաթողիկոս Ռշտունցին ետ շինել եւ գետեղել ի թանգարանի / էջ 257 ս. Աթոռոյս, զոր ինքն կառոյց եւ ճոխացոյց բազմազան մատենիք, զորս ետ հաւաքել ի խորշից սենեկաց եւ / էջ 258 / գաւառաց, յորս մատենալ կային յապականութեան», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ԴՕՏ. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍՍՌ - АРМ ССР», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ԴՕՏ. ПУБЛ. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍԽՀ-ССР»:

Գ. պահպանակի ա. երեսին. սեւ թանաքով նոտրգիր՝ «37. Էլիազ Մխիթարով, որդիք նորայ՝ 1. Բաթօ, 2. Սահակ, 3. Սիմօն, որդիք Բաթօյին՝ 1. Գալուստ, 2. Համբարձում, 3. Օվնաթան: 38. Բաբայ Մելիքսեւով, որդիք նորայ՝ 1. Մանուկ, 2. Մելիքսեւ»:

Գ. պահպանակի բ. երեսին. մանուշակագոյն թանաքով շղագիր, հակառակ դիրքով՝ «Գրչափորձ, Գրիգորեան Ներսէս, Գրիգոր Իսկիրտացի, Կ.Պօլսոյ Պէշիքթաշ»:

Բ. կազմաստառին. սեւ թանաքով նոտրգիր, հակառակ դիրքով՝ «67. Յարութիւն քահանայ Տէր-Յակոբեան - 52, որդիք նորայ՝ 1. Հայրապետ - 29, 2. Գէորք - 16, 3. Յուսէփ - 13, ունի որդի Հայրապետ, Վահան - 5: 68. Տիրացու Ստեփանոս, տիրացու /// 32 եղբայր նորա Օհանէս - 22», «6, 19»:

ՄԻԱԿԱԶՄ (504, 505)
8269-57, 504-ԱՀ
ԽԱՉԱՏՈՒՐ ԷՐՁՐՈՒՄԵՑԻ,
ՀԱՄԱՌՕՏ ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ԵՐԳՈՅ ԵՐԳՈՅՆ ՍՈՂՈՍՈՆԻ
Կ.ՊՈԼԻՍ - 1700 թ.

Ա. կազմաստառին սոսնձած պիտակին. մանուշակագոյն թանաքով՝ «I/155»:

Բ. պահպանակի ա. երեսին. մատիտով՝ «52» ջնջած, «155», կապոյտ մատիտով՝ «54» ջնջած, սեւ թանաքով նոտրգիր՝ «Էնկիրցի Սուճույի որդի Յարութիւնն, Գրիգոր Յախբեան», «այբուբեն բ-յ. Մանուկ»:

Բ. պահպանակի բ. երեսին. մատիտով՝ «7739», «504-ԱՀ», մանուշակագոյն թանաքով ութանկին կնքադրոշմ՝ «ԽԱՉԱՏՈՒՐ / ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ / ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՅ / ՏԱՆՆ ԱՂԹԱՄԱՐԱՅ / ՌՅԺԳ. - 1864», մանուշակագոյն թանաքով բոլորակ կնքադրոշմ՝ «ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՀԱՅՈՅ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԱՂԹԱՄԱՐԱՅ», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ / Հ. Հ.», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ԴՕՏ. ПУБЛ. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍԽՀ-ССР», մանուշակագոյն թանաքով շղագիր՝ «Ի յիշատակ յաւերժական ն. վեհ. տ. Խաչատուր. կաթողիկոս յիւրմէ կողմանէ ընծայեաց ս. Աթոռոյս թանգարանի[ն], զոր ինքն էր կառուցանել, 1889 Յունվար 9»:

Տիտղոսաթերթին. մանուշակագոյն եւ կապոյտ թանաքով՝ «155 ստ.», կապոյտ թանաքով՝ «8268-57», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏԱԿԱՆ-ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ / Հ. Հ.»:

Տիտղոսաթերթի դարձերեսին. մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍՍՌ - АРМ ССР»:

Էջ 4 ստ. լս. սեւ թանաքով շղագիր՝ «Ի Գրիգոր վարդապետէ Շատախցոց յիշատակ եղաւ ի սուրբ Աթոռն / Էջ 5/ Աղթամարայ, ով որ չար մտօք հայեցի, երկու աջօք կուրացի»:

Էջ 17. «155», «8269-57», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍՍՌ - АРМ ССР», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍԽՀ-ССР»:

8270-57, 505-ԱՀ

ՄԵՎՆՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ

Կ. Պոլիս - 1700-1701 թթ.

Տիտղոսաթերթին. վերին լս. մանուշակագոյն թանաքով՝ «155 ստ», «8270-57», սեւ թանաքով ութանկիւն կնքադրոշմ՝ «ՍԱՐԿԱԻԱԳ ՄԵԼՔՈՆ 1191 (1742)»:

Տիտղոսաթերթի դարձերեսին. մատիտով՝ «225»:

Էջ 208 ստ. լս. մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍՍՌ - АРМ ССР», « ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍԽՀ-ССР», սեւ թանաքով ութանկիւն կնքադրոշմ՝ «ՍԱՐԿԱԻԱԳ ՄԵԼՔՈՆ 1191 (1742)»:

3621-51, 511-ԱՀ

ՄԵՎՆՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ

Կ. Պոլիս - 1700 թ.

Ա. պահպանակի բ. երեսին. մատիտով՝ «511-ԱՀ»:

Տիտղոսաթերթին. մատիտով՝ «3563», սեւ թանաքով շղագիր՝ «Յամի Տեառն 1815 զնելով ստացեալ եմ ի Բասրա, որ եմ Կարապետս Յովհաննէսեան», սեւ թանաքով լատինատառ՝ «Manase Sleganis 1771»՝ ջնջած:

9005-57, 1577-ԱՀ

ԳԻՐՔ ՄՏԱԾԱԿԱՆ ԱՂՕԹԻՑ

Կ. Պոլիս - 1701 թ.

Ա. պահպանակի բ. երեսին. մատիտով՝ «1577-ԱՀ»:

Էջ 3 մատիտով նոտրգիր՝ «Պետրոս վարդապետ Թիֆլիսեցի, Մտածական, Պոլիս, ՌՃԾ. = 1701», «ուն. 922». կապոյտ թանաքով՝ «3005-57», մանուշակագոյն թանաքով՝ «ուն 922», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ « ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍԽՀ-ССР»:

Էջ 128. մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍԽՀ-ССР»:

8073-57, 77-ԱՀ

ԹԷՕՓԻԼՈՍ ԱՅՍԻՆՔՆ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Լիվոռնո - 1701 թ.

Ա. պահպանակի ա. երեսին. կանաչ թանաքով՝ «24-ԱՀ»:

Ա. պահպանակի բ. երեսին. մատիտով՝ «77-ԱՀ», կապոյտ թանաքով՝ «8073-57»:

Տիտղոսաթերթին. վր. լս. կապոյտ թանաքով՝ «201 ստ», «24 ստ», մանուշակագոյն թանաքով բոլորակ կնքադրոշմ, որի մէջտեղում Միսն ու Մասիսը՝ ներքեւում «ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ / 1930 - ՌՅՀԹ.», շուրջբոլորը՝ «Հ. Ս. Խ. Հ. Լ. Ժ. Կ. ԷԶՄԻԱԾՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ԴՕՏ. ՍՍՍՐ. ԲԻԲԼԻՈՏԵԿԱ ԻՄ. Ա. ՄՅՇՆԻԿՅԱՆ / ՀՍԽՆ-ՍՍՐ»:

Չհ. էջ 3. սեւ թանաքով ութանկիւն կնքադրոշմ՝ «ԳԻՐՔՍ / ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԱ Է», մանուշակագոյն թանաքով բոլորակ կնքադրոշմ, որի մէջտեղում Միսն ու Մասիսը՝ ներքեւում «ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ / 1930 - ՌՅՀԹ.», շուրջբոլորը՝ «Հ. Ս. Խ. Հ. Լ. Ժ. Կ. ԷԶՄԻԱԾՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ»:

Էջ 239. սեւ թանաքով ութանկիւն կնքադրոշմ՝ «ԳԻՐՔՍ / ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾՆԱ Է»:

8100-57, 78-ԱՀ

ԹԷՕՓԻԼՈՍ ԱՅՍԻՆՔՆ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Լիվոնոն - 1701 թ.

Կազմաստառին սոսնձած պիտակին. «I / 691»:

Չհ. էջ 2. մատիտով՝ «201 ստ.», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ԴՕՏ. ԲԻԲԼԻՈՏԵԿԱ ԻՄ. Ա. ՄՅՇՆԻԿՅԱՆ / ՀՍՍՐ - ԱՐՄ ՍՍՐ»:

Էջ 3. չհ. սեւ թանաքով ութանկիւն կնքադրոշմ՝ «ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ ՏԷՐ ՊԵՏՐՈՍ ԹՎԻՆ ՌՃՂԵ. (1746)»:

7782-56, 79-ԱՀ

ԹԷՕՓԻԼՈՍ ԱՅՍԻՆՔՆ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Լիվոնոն - 1701 թ.

Ա. կազմաստառին սոսնձած պիտակին. մանուշակագոյն թանաքով՝ «I/4644», մատիտով՝ «81», «79-ԱՀ», սեւ թանաքով՝ «4644, մատիտով՝ «Ա/1+16», «Բ/1+25», «215b»:

Էջ 17. մանուշակագոյն թանաքով՝ «1688=5801», «7782-56», կապոյտ թանաքով բոլորակ կնքադրոշմ, որի մէջտեղում Միսն ու Մասիսը՝ ներքեւում «ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ / 1930 - ՌՅՀԹ.», շուրջբոլորը՝ «Հ. Ս. Խ. Հ. Լ. Ժ. Կ. ԷԶՄԻԱԾՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ԴՕՏ. ԲԻԲԼԻՈՏԵԿԱ ԻՄ. Ա. ՄՅՇՆԻԿՅԱՆ / ՀՍՍՐ - ԱՐՄ ՍՍՐ»:

Էջ. 30, 128 ստ. լս. կապոյտ թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ մէջտեղում բացուած զիրք, շուրջբոլորը՝ «ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ Հ. ՃԵՄ. Մ. Ա. Ս. ԷԶՄԻԱԾՆԻ / 1874-88»:

Էջ 222 ստ. լս. սեւ թանաքով երկաթագիր՝ «ՄԱԹԷՈՍԻՎ»:

8101-57, 80 (274)-ԱՀ

ԹԷՕՓԻԼՈՍ ԱՅՍԻՆՔՆ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Լիվոնոն - 1701 թ.

Էջ 3ի հիմքին սոսնձած թղթին. մանուշակագոյն թանաքով շղագիր՝ «Թէոփիլոս, այսինքն Խօսակց[ութիւն] Թէոփիլոսի ընդ վարդապետին. Ալիկօնայ, 1701», մատիտով՝ «80-ԱՀ»:

Էջ 3. սեւ թանաքով շղագիր՝ «1880 թ. ի գրոցն Ազիզ Էղազարեանցն», ստ. լս. հակառակ դիրքով, «Ճանպուլատ Խանումե...» մանուշակագոյն թանաքով՝ «552», կապոյտ թանաքով՝ «201»:

Էջ 4 վր. լս. «ստ. 201», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ԴՕՏ. ԲԻԲԼԻՈՏԵԿԱ ԻՄ. Ա. ՄՅՇՆԻԿՅԱՆ / ՀՍՍՐ - ԱՐՄ ՍՍՐ»:

Էջ 5. մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯЧИКЯНА / ՀՍԽՆՀ-ՍՍՐ», մանուշակագոյն թանաքով՝ «552», մատիտով՝ «129»:

Էջ 92 վր. լս. սեւ թանաքով նոտրգիր՝ «Ես՝ Յուսէփ գրեցի»:

Էջ 158 լս. սեւ թանաքով նոտրգիր՝ «Այբուբեն՝ ա-թ, ես Յակ.»:

Էջ 193 ստ. լս. «Ճանաչար[h] զնայցօղաց»:

Էջ 2. կապոյտ թանաքով՝ «1475-2005», մանուշակագոյն թանաքով քառանկիւն կնքադրոշմ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ, ՀԱՄԱՐ», սեւ թանաքով նոտրգիր՝ «Եւ օվ քուսանք եւ վարդապետ աստուածաբանք եւ ժողովուրդ»:

Էջ 14 լս. սեւ թանաքով նոտրգիր՝ «Աստուած անէ արթար մարթն, Աստուած անիծէ չար մարթն, է զնշան Քրիստոս Աստուած ///»:

Էջ 15. կապոյտ թանաքով՝ «1475-2005», մանուշակագոյն թանաքով քառանկիւն կնքադրոշմ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ, ՀԱՄԱՐ»:

Էջ 16. սեւ թանաքով նոտրգիր՝ «Հազար բարով», «Չէ այս անիծէիր ապապնահայ Ակօր-ջան եւ աչք Արութ /// ետես տալու ///»:

Վերջին էջ. սեւ թանաքով բոլորգիր՝ «/// յաւիտենական բարերար /// ամենակալ ստեղծիչ լուսոյ եւ յօրինիչ զիշերոյ, կեանքի, մահու եւ /// յոյս ակնունօղաց, ետ լայնամտութիւն տարա-կուսանաց, որ ամէն արուեստ իմաստութեան դարձուցանես յայգ զսատուեր մահու աննուագ ծագ/// /// արեգակն, քանզի ոչ /// օրէ ծածկող զփառս տէրութեան քոյ /// զիշերոյ, որում կրկնի ծու/// երկրպագութեան ամենայն եղելոց երկնաւորաց եւ երկրաւորաց եւ սանդար/// կամաց, որ լսես զհեծու/// յաղօթս խոնարհաց /// յոյսն դրուած ///», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯЧИКЯНА / ՀՍՍՌ - АРМ ՍՍՐ»:

Էջ 196 լս. «Յօսէփից օրա»:

8431-57, 1911-ԱՀ

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ,

ԳԻՐՔ ԱՂՕԹԻՑ

Կ.Պոլիս - 1701-1702 թթ.

Ա. կազմաստառին սոսնձած պիտակին. մանուշակագոյն թանաքով՝ «II/294»:

Ա. պահպանակի ա. երեսին՝ մատիտով՝ «Հմր 5», «Հմր 294», «4», կապոյտ մատիտով՝ «131», մանուշակագոյն թանաքով ուղղանկիւն կնքադրոշմ՝ «ՎԵՐԱԾԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ / ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻԷՐ / ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆԻՅ / 18 ՆՈՅԵՄ. 1918 Թ. ԹԻՖԼԻՍ»:

Ա. պահպանակի բ. երեսին. մատիտով՝ «1911-ԱՀ», «Գրիգոր Նարեկացի Կ. Պոլիս. 1701»:

Տիտղոսաթերթին. մանուշակագոյն թանաքով՝ «294 ստ.», մատիտով՝ «891.99/Գ-89», կա-պոյտ թանաքով՝ «8431-57», մանուշակագոյն թանաքով ուղղանկիւն կնքադրոշմ՝ «ՎԵՐԱԾԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ / ԱՆԴՐԱՆԻԿ ՆԻԷՐ / ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆԻՅ / 18 ՆՈՅԵՄ. 1918 Թ. ԹԻՖ-ԼԻՍ», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯЧИКЯНА / ՀՍԽՆՀ-ՍՍՐ»:

1302-50, 1912-ԱՀ

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ,

ԳԻՐՔ ԱՂՕԹԻՑ

Կ.Պոլիս - 1701-1702 թթ.

Ա. կազմաստառին սոսնձած պիտակին. մանուշակագոյն թանաքով՝ «II / 347»:

Ա. պահպանակի բ. երեսին. մատիտով՝ «891.99/Գ-89», «1912-ԱՀ»:

Տիտղոսաթերթին. մանուշակագոյն թանաքով՝ «347», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ / Հ. Հ.», նրք. լս. մատիտով՝ «243/Գ-89», մանուշակագոյն թանաքով՝ «1302-50»:

Էջ Բ. վր. լս. մանուշակագոյն թանաքով ութանկին կնքադրոշմ՝ «ԽԱՉԱՏՈՒՐ / ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ / ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅՈՅ / ՏԱՆՆ ԱՂԹԱՄԱՐԱՅ / ՌՅԺԳ. - 1864», մանուշակագոյն թանաքով բոլորակ կնքադրոշմ՝ «ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆ ՀԱՅՈՅ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԱՂԹԱՄԱՐԱՅ»:

Էջ թ ստ. լս. սեւ թանաքով նոտրգիր՝ «Այբուբեն՝ ա-պ»:

Էջ Ժ-ժա. վր. լս. սեւ թանաքով շղագիր՝ «Ի յիշատակ յաւերժական. Նորին վեհ. տ. Խաչատուր ս. կաթողիկոս զետեղել էտ զմատենանս ի թանգարանի ս. Աթոռոյս, / Էջ ժա / զոր ինքն կառոյց 1889 յունվար 2»:

Էջ ԼԲ. լս. մանուշակագոյն թանաքով նոտրգիր՝ «Այս Նարեկ Նշանին է»:

Էջ. զճիւզ, դճգ. մանուշակագոյն թանաքով նոտրգիր՝ «Այս Նարեկ Նշան Տէր-Կարապետեան»:

8434-57, 1913-ԱՀ,
ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ,
ԳԻՐՔ ԱՂՕԹԻՑ
Կ.Պոլիս - 1701-1702 թթ.

Ա. պահպանակի բ. երեսին. կապոյտ թանաքով շղագիր՝ «Ի 1879 ամի օգոստոսէն սկսեալ ցորենի խալվարն 44ից ռուբլուցն բարձրացաւ մինչ դեկտեմբեր 75 ռուբլի, հետզհետէ բարձրանալով մինչ ի ութսուն թիւ 90 խալվար ցորեն, 95 ալուր, որ գրում է այստեղ: Ի հազար ութ հարուր ութսուն ամի յունվարէն սկսեալ եղել մեծ թանգութիւն, ցորենի խալվարն ելաւ ինուսուն ռուբլի, զարու խալվար եօթանասուն ռուբլի, ալուրն ինուսունհինգ ռուբլի, Աստուած խնայէ դժուար միջոց է: Այս դժուար միջոցին ողորմած կայսր ուռուսաց ետ իւր ամբարներից փողոցի հացթուխներին ձեռամբ քաղաքի գրաւնի եւ խոստացաւ տալ բոլոր չքաւորացն իւրաքանչիւր համարով անձանց»:

Բ. պահպանակի բ. երեսին. մատիտով՝ «891.99/Գ-89», «1913-ԱՀ», «66»՝ ջնջած, մանուշակագոյն թանաքով՝ «5011», կապոյտ թանաքով՝ «8434-57»:

Տիտղոսաթերթին. կապոյտ թանաքով՝ «501 ստ.», սեւ թանաքով շղագիր՝ «Ի Ապարանի տեառն Նահապետի սրբազան կաթողիկոսի ամենայն հայոց եւ հայրապետ», մանուշակագոյն թանաքով՝ «Թ. 1701»:

Էջ Բ. վր. լս. մատիտով՝ «243», «1913-ԱՀ», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍՍՌ - АРМ ССР»:

Էջ գ. կապոյտ թանաքով՝ «8434-57», «Ցանք գրոց Նարեկայ»:

Չհ. էջ ԺԷ. սեւ թանաքով շղագիր՝ «Պարսից Մուգաֆերեդին շահն մայիսի 11ին 1900 ամին եկաւ Երեւան: 12ին ընդունելութիւն վեհափառ Մկրտիչ կաթողիկոսին, ժամի մէկին յուսադափ կարկուտ չտեսնուած մեծ վնաս այգեստանին եւ բուսոց, 13ին օրն շաբաթ շահն ճանապարուեց դեպի Ախստափայի վազգալն», մանուշակագոյն թանաքով՝ «501», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍՍՌ - АРМ ССР»:

Էջ իԷ. սեւ թանաքով շղագիր՝ «1873 ամի 28 յունվարի ես ձեռնադրուեցի ձեռամբ Մկրտիչ արքեպիսկոպոսի, Մկրտիչ քահանայ տէր Պողոսեան»:

Էջ ճԺԹ լս. սեւ թանաքով շղագիր՝ «Տէր Յիսուս Քրիստոս, տէր երկնի ու երկրի արարիչ ամենայն արարած[ոց]»:

Էջ ճԻԹ ստ. լս. սեւ թանաքով ութանկին կնքադրոշմ՝ «/// ԳՐԻԳ///»:

Էջ ԲԸ լս. սեւ թանաքով շղագիր՝ «/// յաւուրն լիս շաբաթ ի խոովութեան աշխարհի ուռուսաց կամ օսմանցվաց խօնակեցի թագաւորին եղեւ նոյն ամի»:

Էջ ԲԸԻԱ. սեւ թանաքով շղագիր՝ «Տէր Աստուածատուր Տէր-Մատթէոսեանց 1873 յ7ն հոկտեմբերի հանդիպեցաւ ի տուն /// (շարուակութիւնը վր. լս.ում, որը կտրած լինելու հետեւանքով անընթեռնելի)»:

Էջ ԲԸԴԶ. սեւ թանաքով շղագիր՝ «Պարոն Բեկ Մկրտիչեան Թորոսեանցս գրեցի 1867 ամի 3ն օգոստոսի ի սուրբ Աստուածածին այս թվին մեր»:

Էջ ԸԳ լս. սեւ թանաքով նոտրգիր՝ «Միմօն Տէր-Պօղոսեան»:

1303-50, 1914-ԱՀ
ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ,
ԳԻՐՔ ԱՂՕԹԻՑ
Կ. Պոլիս - 1701-1702 թթ.

Ա. կազմաստառին սոսնձած պիտակին. մանուշակագոյն թանաքով՝ «II/593»:

Ա. պահպանակի ա. երեսին. սեւ թանաքով շղագիր՝ «Յովակիմ Տէր-Գէորգով подписали этого вышеподписанный», «Эта кн[ига] принадлежит Теръ Кеворку Айвазовичу», հակառակ դիրքով՝ «Եփրեմ, Տէր Գէորգեան», շղագիր՝ «Այս գիրքը պատկանում է Գէորգ քահանայ Տէր-Գէորգեանին եւ իւր որդոյ՝ Սենիքերիմ Տէր-Գէորգեանցին: 1817 ամի 1 յունվարի»:

Ա. պահպանակի բ. երեսին. սեւ թանաքով շղագիր՝ «Աղօթք պատարագէն առաջ, 4. 5. 24. 33. 47. 52. 53. Աղօթք զկնի պատարագին, գլուխ 1. 5. 24. 67. 95: ԿԶ. աղօթք», «Մայիսի 14ին 1876 ամի Երեւանու միրավոյ ատեանն վճռեց մի ամիս ժամանակին Ասլան Սարգիսովն տայ ինձ 21 մանէթ 70 կոպեկ», «1878 ամի փետրվարի մէկին Յովակիմն տվեց 45 մանէթ Կասպար Էյլասովին իւր թամանտրուկի (մասին)», «1900 ամի 8ն ծնունդաւ 14/// Սրփուհի Մկրտիչեան տ[է]ր ///»:

Տիտղոսաթերթին. մանուշակագոյն թանաքով՝ «593», մատիտով՝ «1914-ԱՀ», մանուշակագոյն թանաքով՝ «1303-50», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍՄՀ-ССՐ»:

Էջ ԲԸԽԹ վր. լս. սեւ թանաքով շղագիր՝ «Ս[ենիքերիմ] ք[ահանայ] Տ[էր]-Գէորգեանց», լս. մատիտով շղագիր՝ «Աթանէս ք[ահանայ] Տ[էր]-Գ[էորգեանց]»:

8433-57, 1917-ԱՀ
ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ,
ԳԻՐՔ ԱՂՕԹԻՑ
Կ. Պոլիս - 1701-1702 թթ.

Ա. կազմաստառին սոսնձած թղթին. մանուշակագոյն թանաքով՝ «II/1494»:

Ա. կազմաստառին. սեւ թանաքով շղագիր, սլավոնաւոր՝ «Въ библиотеку Лазаревского Института приношени Ихъ Превосходительство Г.г. Попечителей Института. Молитвенная древняя Армянская книга, напечатанная въ Константинополе. Заглавіе по-Армянски: “Нарекъ” Боговдохновенное сочинение Св. Григория Нарекъанцы».

Բ. պահպանակի ա. երեսին. սեւ թանաքով շղագիր՝ «Յիշատակեցաւ մատեանս այս յարժանապատիւ Եփրեմ վարդապետէ՝ դպրայ Ստեփաննոս Դաւթեան Մերձանեանցն Գրիգորիոսյսեցոյ, ի 1836 թ. սեպ. 18, ի մայրաքաղաքն Ս. Պ. Բուրգ»:

Բ. պահպանակի բ. երեսին. մատիտով՝ «891.99/Գ.89», «1917-ԱՀ»:

Տիտղոսաթերթին. մանուշակագոյն եւ կապոյտ թանաքով՝ «34 ստ», «1497», «1494 ստ», «ԲԸԻԹ. (229) կիկագուկան խեղայք», մատիտով՝ «1917-ԱՀ», «56/1», մանուշակագոյն թանաքով՝ «8433-57», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «Հ.Խ.Ս.Հ. ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ

ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. П. БЛБ-КА АРМ ССР ИМ. А. МЯСНИКЯНА / ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՓՈՆԴ - ОБМЕННЫЙ ФОНД», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍԽՂ-ՍՍՐ»:

Էջ Բ.ի ստ. աջ անկիւնը թափուած. լրացուած թերթով, սեւ թանաքով բոլորգիր՝ «նորա... զաստուածայինն»:

Էջ Թ. թափուած. լրացուած մէկ թերթով, սեւ թանաքով բոլորգիր՝ «Բանք առ ի ապաքինութիւնս իրաց իրաց Աստուծոյ... Բանք առ ի յերջանիկ փայտն Ժամհարին»:

Էջ Ժա. թափուած. լրացուած մէկ թերթով, սեւ թանաքով բոլորգիր՝ «Ի խորոց սրտից խօսք ընդ Աստուծոյ. Բան Ա... կամաւորական նւեր բանական զոհիս ողջակիզեալ զօրութեամբ»:

Էջ 17. կապոյտ թանաքով՝ «8433-57», «1494», մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. ПУБЛ. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍԽՂ-ՍՍՐ»:

5409-56, 1918-ԱՀ
ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ,
ԳԻՐՔ ԱՂՕԹԻՑ
Կ.Պոլիս - 1701-1702 թթ.

Էջ Բ. մանուշակագոյն թանաքով՝ «5409-56»:

Էջ Ժ. ստ. լս. սեւ թանաքով ութանկիւն կնքադրոշմ (կապգրով)՝ «ՔՐԻՍՏՈՍԻ ԾԱՌԱՅ / ԳՐԻԳՈՐ ՎԱՐԴԱՊԵՏ ///»:

Էջ Ժա. սեւ թանաքով շղագիր՝ «[դա]տաստանի փրկութիւն ///»:

Էջ զճԺ. ստ. լս. սեւ թանաքով բոլորգիր՝ «Ո՛չ քամահիս»:

Չի էջ ա. սեւ թանաքով նոտրգիր՝ «Ես՝ աստապատեցի մահտեսի Դատոսի որդի Էվանէսըս առի այս Նարեկըս ի ձեռանէն այլազգաց, էն վախտըն էր, որ Քայիայ Իբրահիմ փաշէն շատ զօռով ասկար հալաքէց լազկի օսմանլու, մինչեւ ԺԵ. (15) հազար լէշկարով գնաց Սղնադին վերայ, շատ եկեղեցի թալանեցին, կուսանք, աշխարհականք շատ գերի արին, այս Նարեկըս գերի էր ընկել, Գ. դուռուշ տվի առի, այս չանր բանս Գէնջու քաղաքըն ելաւ, նեղութիւնն շատ կրեցին քրիստոնէան, ով որ այս աղօթայգիրըս կարթայ, աղայէլ առ միածին որդին, որ ազատել ըզմեզ եւ ըզձեզ ի ձեռանէն այլազգաց, աստ եւ ի հանդերձելումըն երկնից արքայութեանն արժանի արասցէ: Գրեցաւ ձեռացայգիրըս թվին ՌՃՀԹ.ին (1730) յուլիսի ամսոյս Զ.ին Քրիստոսի մարդայսիրութեանն փաքք. ամէն»:

Չի էջ Բ. սեւ թանաքով բոլորակ կնքադրոշմ՝ «ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ / ԾԱՌԱՅ ԹՕՎ-ՄԱ/Ս ՎԱՐԴԱՊԵՏ ՍՊԱՍԱԻՈՐ / ՍՈՒՐԲ ԱՌԱՔԵԼՈՅՆ / ՌՃԻԴ. (1675)»:

Էջ ճճ. ստ. լս. սեւ թանաքով շղագիր՝ «Խեչօից ապրելի ԺԳ.ին (13) զիններեցի»:

Էջ ճխգ. սեւ թանաքով նոտրգիր՝ «1824 ես՝ Պոլուզեան Սահակս եւ իմ որդէգիր Թօրօսս զայս սուրբ Նարեկս տուաք յիշատակ Սուրբ Աստուածածնայ եկեղեցոյ, ի վայելս քահանայից»:

Էջ ճճ. սեւ թանաքով շղագիր՝ «1860 ամի 4 յուլիսի Վարդանի ծնունդ», ստ. լս. «Այս Պօղոս», մատիտով շղագիր՝ «Տե՛ս անձեռնմխ.», սեւ թանաքով ութանկիւն կնքադրոշմ՝ անընթեռնելի, մանուշակագոյն թանաքով ձուածիր կնքադրոշմ՝ «ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ / ГОС. БИБЛИОТЕКА ИМ. А. МЯСНИКЯНА / ՀՍՍՌ - АРМ ССР»:

SUMMARY

The beginning of the Armenian printed book is a new era for Armenian writing and literature. It has completely inherited all the traditions of manuscripts. Remember that throughout the sixteenth and nineteenth centuries, printed and handwritten literature coexisted and served the public. Ancient books,

like manuscripts, have handwritten remarks by historical masters, library inventory numbers, and other different kinds of notes in the margins, on free pages. Seals hold equal significance to these.

In addition to being a unique source for printing, the compilation of handwritten and library notes found in the National Library's ancient books is also an excellent source for research on history in general, and culture history in particular.

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՑԱՆԿ

1. Մանուկեան Տ., Սարգսեան Ք. Մաշտոցեան Մատենադարանի հնատիպ գրքերի ձեռագիր եւ գրադարանային նշումները (ընդհանուր պատկեր) // Բանբեր Մատենադարանի, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ին-տ., հ^տ 34, Երեւան, 2022, էջ 330-349:
2. Հայ գիրքը, 1512-1800 թթ. / կազմ.՝ Ն. Ոսկանեան, Ք. Կորկոտեան, Ա. Սավալեան, խմբ.՝ Ռ. Իշխանեանի, Երեւան, ՀՍՍՀ պետական գրադարան, 1988, 864 էջ:
3. Տէր-Վարդանեան Գ. Հայերէն հնատիպ գրքերի ձեռագիր գրառումների եւ գրադարանային նշումների Դիւանի կազմութեան ծրագիրը // Բանբեր Մատենադարանի, հ^տ 34, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ին-տ., 2022, Երեւան, էջ 321-329:

**ՀԱՅԵՐԸ ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐՑԱԽՈՒՄ**

Բանալի բառեր՝ Արցախ, Շուշի, հայեր, վիճակագրական տվյալներ, պատերազմներ, գրադարաններ, գրքերի ճակատագրեր, համեմատական վերլուծություններ:

Keywords: Artsakh, Shushi, Armenians, statistical data, wars, libraries, fate of books, comparative analysis.

Հայագիտության պատմության մեջ և ժամանակակից գիտական ուսումնասիրություններում առանձնահատուկ տեղ ու նշանակություն ունի Արցախը [Ալիշան, 1993, 121]՝ պատմամշակութային ու հոգևոր կենտրոն Շուշիով: Շուշիի Բերդը կամ Բերդաքաղաքը կառուցվել է Վարանդայի Մելիք-Շահնազարի ցուցումով ու խորհրդով՝ 1752 (կամ 1754) թվականին: Սակայն բերդաքաղաքի պատմությունը կապված է դեռ միջնադարում հիշատակվող Շինաքար բերդանվան հետ (IX դ.)՝ որպես վտանգներից պաշտպանվող ապահով լեռնատեղ: Հետագայում անվանակոչվել է Քարագլուխ, Քարագլխի բերդ, այնուհետև Շուշի բերդ՝ կապված հարևան Շոշ գյուղի անվան հետ: Գեղեցիկ տեղավայրում կառուցված բերդը կոչվել է նաև **Շուշա** անունով. այդ անունը բերդի պարսպի վրա պահպանվում է մինչ օրս: Պատմական գիտությունների դոկտոր Պ. Մեյրանյանի մեկնաբանությամբ՝ Շուշի քաղաքի անունը ծագել է իրանական «շուշա» բառից, որը թարգմանաբար նշանակում է «ապակի» [Сейранян, 1997, 36, 87]: XIX դարում **Շուշա-ն** եղել է Անդրկովկասի տնտեսական ու մշակութային խոշորագույն քաղաքներից մեկը, կարևոր կենտրոն՝ Թիֆլիսից հետո: Մինչև XX դարի սկզբները այստեղ գործել են մի շարք գրադարաններ ու կրթական հաստատություններ՝ խթանելով հասարակական կյանքի հոգևոր զարգացմանը:

Պատմատեղեկատվական ու վիճակագրական տարբեր տվյալներով Շուշիում և ընդհանրապես հայկական Արցախում մշտապես ապրող բնակիչների մեծագույն մասը կազմել են հայերը և միայն: Այդ են հաստատում դարերի ընթացքում Արցախում ստեղծված հայկական մշակութային ժառանգության բազում կոթողները՝ Ամարասը, Գանձասարը, Գոչավանքը, Դադիվանքը և հոգևոր այլ կենտրոններ [Բարսեղյան, 2011, 80]: Աղբյուրների համաձայն միայն 1860 թ. կազմված ընտանեկան ցուցակների տվյալներով Շուշիում բնակվել է 17.484 մարդ, որից 9533-ը՝ հայեր, 1873-ին՝ 22.086 մարդ, այդ թվում՝ 12.476 հայեր [Տեր-Գասպարյան, 1963, 73]: Իսկ 1886 թ. հայ բնակչության թիվը Շուշիում կազմել է 27 հազար [Сейранян, 1997, 16]: Ըստ 1904 թ. Ս. Պետերբուրգում լույս տեսած Բրոկհաուզ-Եֆրոնի հանրագիտարանի, որտեղ Շուշին հիշատակված է **Շուշա**, դարասկզբին այստեղ բնակվել է 25.656 մարդ (այդ թվում՝ 13.282 տղամարդ և 12.374 կին), որից 56.5%-ը՝ հայեր, 43.2%-ը՝ թաթարներ, մնացածները՝ ռուսներ ու հրեաներ [Шуша (ЭС), 1904, Т. 79, 25]:

Հետագայում, սակայն, 1918-1920 թթ. Շուշիում կատարվում է մեծ ողբերգություն. նպատակ ունենալով հաստատել մուսուլմանական իշխանություն, 1918 թ. սեպտեմբերի 25-ին թուրքական բանակը մտնում է Շուշի և 1920 թ. մարտին ենթարկում հրի ու սրի: Տարբեր գնահատումներով զազանաբար սպանվում են 10-30 հազար հայ բնակիչներ: Այդպիսով, պատմական դաժան ճակատագրի հետևանքով Շուշին՝ Ղարաբաղի սիրտը, դադարում է տնտեսական ու մշակութային կենտրոն լինելուց...

Այստեղ տեղին է հիշել 1915 թ. Հայոց մեծ եղեռնը, որին զոհ գնացին ավելի քան 1.5 մլն հայեր: Հարկ է նշել, որ Հայոց եղեռնի մասին վկայող ուսումնասիրությունները շարունակվում են հրատարակվել նաև Հայաստանից դուրս [Перинчек, 2011, 256]:

Խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Շուշիի բնակչության թվի վերաբերյալ կան հետևյալ տվյալները. 1923 թ. կազմել է 6000, 1926-ին՝ 5100 բնակիչ [Сейранян, 1997, 16-17]: Իսկ 1959 թ. մարդահամարի տվյալներով՝ 6100 հայ բնակիչ [Տեր-Գասպարյան, 1963, 75]: Ուսումնասիրությունը ցույց է տվել նաև, որ մինչև արցախյան ազատագրական առաջին պատերազմը, Ադրբեջանին բռնակցված Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի ամբողջ բնակչության թիվը 1979 թ. կազմել է 162.000, այդ թվում՝ 123.000 հայեր և 37.000 ադրբեջանցիներ [Брук, 1986, 785]: Այս փաստը արձանագրել են նաև օտարազգի հեղինակները 1996 թ. Բելգիայում և Ռուսաստանում լույս տեսած գրքում՝ նշված պատերազմի պատճառները, ընթացքը և արդյունքները վերլուծելիս [Спорные границы, 1996, 19]:

Այս բոլոր տվյալները փաստացիորեն վկայում են իրենց պատմական հայրենիքում դաբերով ապրած, հարուստ մշակույթ ստեղծած և մի քանի անգամ գերազանցող հայության թվակազմի մասին: Ավելին, 1990-ական թթ. ի վեր՝ մինչև 2020 և 2023 թթ. պատերազմները ազատագրված Արցախում ոչ մի ադրբեջանցի չի ապրել:

Տպագրական գործը Շուշիում հիմք է դրվել հայ տպագրության սկզբնավորումից (Վենետիկ, 1512 թ.) ավելի քան երեք դար հետո: Շուշիում լույս տեսած առաջին գիրքը Հարություն Ջուղայեցի Դավթյանի «Պատմություն Սուրբ Գրոցն» է (1828 թ.), իսկ առաջին պարբերականը 1874 թ. տպագրված «Հայկական աշխարհն» է: Շուշիում են տպագրվել բազմաթիվ և բազմաճյուղ հայալեզու գրքեր ու պարբերականներ, ինչպես նաև օտարազգի հեղինակների գործերի հայերեն թարգմանություններ: Բավական է նշել, որ Շուշիում են առաջին անգամ տպագրվել Բայրոնի «Շիլլոնի կալանավորի» (1837 թ.), Գոգոլի «Տարաս Բուլբայի» (1886 թ.) և Ֆիրդուսի «Ռոստամ և Սոհրաբ» («Շահնամ») վեպի (1893 թ.) հայերեն առաջին թարգմանությունները: Շուշիում են գործել նաև մի շարք մասնավոր տպարաններ, որոնք մինչև XX դարի սկզբները նույնպես աչքի են ընկել հայ գրքի ու տպագրական արվեստի զարգացմամբ և ունեն գրքագիտական հետաքրքրություն:

Անհրաժեշտ է նշել, որ Շուշու պատմամշակութային դերն ու նշանակությունը վերաիմաստավորվել ու մեծ գնահատականի է արժանացել XXI դարի առաջին տասնամյակներին՝ Հայկական գրատպության 500, 510 և Շուշիի գրատպության 190 ամյակներին նվիրված գիտաժողովներում: Այդ բոլորի մասին լույս են տեսել գիտական բազմաթիվ հրապարակումներ ու ժողովածուներ [Հայկական տպագրության 500-ամյակը (1512-2012), 2010; Շուշին՝ հայկական, 2014; Սուքիասյան, 2022, №1; Սուքիասյան, 2013; Սուքիասյան 2018, №11 և այլն], որոնք իրենց հերթին ավելի են հարստացնում *արցախագիտության* հարցերով զբաղվողների պատմա-տեղեկատվական ու մշակութաբանական պատկերացումները:

Հայկական գրադարանների և գրքերի ճակատագիրն արցախյան պատերազմներում:

Համաձայն մեր ուսումնասիրությունների՝ 1980-ական թթ. վերջերին և 1990-ական թթ. արցախյան ազատագրական պատերազմի ընթացքում ռազմական գործողությունների հետևանքով կործանվել են ավելի քան 220 գրադարաններ, իսկ գրքային ֆոնդերը ենթարկվել են թալանի կամ հրդեհվել...[Սուքիասյան, 2013, 97-98]: Հետպատերազմյան շրջանում՝ XX դարավերջին և XXI դարասկզբին գրադարանային-տեղեկատվական ու գրահրատարակչական գործը Արցախում թևակոխում է նոր փուլ. չնայած մեծ կորուստներին՝ վերականգնվում, համարվում և զարգացման նոր ընթացք են ստանում տարատեսակ գրադարաններ, գիտակրթական ու մշակութային հաստատություններ:

Սակայն Արցախյան **նոր** պատերազմի (2020 թ. սեպտեմբերի 27-նոյեմբերի 9) հետևանքով ադրբեջանցիների հսկողության տակ են մնում հարյուրավոր հայկական գրադարաններ, որոնց ֆոնդերի ընդհանուր գումարը կազմել է 617.000 միավոր գրականություն [Սուքիասյան,

2022, №1, 24], ինչպես նաև «Կաճառ» գիտական կենտրոնի գրադարանային ֆոնդերը և փաստաթղթատեղեկատվական բազմազան նյութեր, որոնց գոյության մասին ցավոք տեղեկություններ չկան: Ադրբեջանցիների բարբարոսական քաղաքականությունը շարունակվում է 2023 թ., երբ մայիսի 10-ին նրանք ամբողջովին ավերում են 1932 թ. կառուցված Հադրուբի գրադարանի շենքը: Ավելին, 2023 թ. սեպտեմբերի 19-20-ին, ադրբեջանական բանակը հարձակվում է Արցախի Հանրապետության վրա և ամբողջությամբ բռնազավթում: Սկսվում են հայերի բռնի տեղահանումները Մարտակերտի, Մարտունու, Ասկերանի շրջաններից ու մայրաքաղաք Ստեփանակերտից դեպի Հայաստան: Բռնազավթի դաժան տեսարանները հեռարձակվել են մի շարք լրատվամիջոցներով («Հ1», «5 TV», «Շանթ», «PTP», «Արմենիա», «HTB»): Նախորդ պատերազմից հետո Արցախում մնացած 120 հազար հայ բնակչությունից Հայաստան արտագաղթածների թիվը ՄԱԿ-ի տվյալներով նոյեմբերի 2-ին կազմել է 100.500: Այդպիսով, դադարում է կրթական, գիտական, տնտեսական և մշակութային կյանքը Արցախում: Վտանգի տակ են հայտնվում արցախյան գրադարանները, բռնազավթած մշակութային ողջ ժառանգությունը:

Այսպես, 2021 թ. վիճակագրական տվյալներով Արցախում գործող գրադարաններից Մ. Մաշտոցի անվան հանրապետական գրադարանի ֆոնդը կազմել է 176.766 միավոր, Հովհ. Թումանյանի անվան հանրապետական մանկական գրադարանի ֆոնդը՝ 50.097 միավոր, Ստեփանակերտի Մուրացանի անվան քաղաքային գրադարանին՝ 48.277 միավոր, Մարտակերտի կենտրոնական գրադարանին՝ 23.434 միավոր, Մարտունու կենտրոնական գրադարանին՝ 17.509 միավոր, իսկ Ասկերանի կենտրոնական գրադարանի ֆոնդը՝ 10.522 միավոր [Հայաստանի գրադարանները, 2022, 95-96]: Իհարկե, սրանք դեռ ամբողջը չեն, եթե նկատի ունենանք 2022-ի չհրապարակված տվյալները, ինչպես նաև բուհական, դպրոցական և անձնական (ընտանեկան) գրադարանների գրքային հավաքածուները: Սակայն փաստ է, որ նշված գրադարանների ֆոնդերի ընդհանուր գումարը կազմել է 326.605 միավոր: Ի մի բերելով մեր ուսումնասիրությունների ընթացքում գրանցված բոլոր տվյալները [Սուքիասյան, 2022, №1, 24-25], կարելի է նշել, որ միայն 2020 և 2023 թթ. պատերազմների պատճառով գրքային մշակույթի կորստի ընդհանուր գումարը կազմել է ավելի քան 2 մլն:

Այս ամենը վկայում են Ադրբեջանի շարունակվող հակահայկական ու հայատյաց քաղաքականության մասին. մի կողմից ձգտելով կորցնել հայկական մշակութային ու պատմական հիշողությունը Արցախում, մյուս կողմից՝ շրջանցելով հեղինակային և միջազգային բոլոր օրենքներն ու կոնվենցիաները, անգամ խախտելով 2012 թ. Աստանայում գրադարանավարների միջազգային ֆորումի շրջանակում իրենց իսկ ստորագրած հուշագիրը [Սուքիասյան, 2012, № 4, 6]:

Հարց է առաջանում, արդյո՞ք խորհրդային շրջանում Ադրբեջանին բռնակցված Լեռնային Ղարաբաղում՝ Արցախում գոյություն է ունեցել ադրբեջանական մշակույթ: Համեմատական ուսումնասիրությունը ցույց է տալիս՝ ոչ: Այդ մասին են վկայում ու հաստատում հենց ադրբեջանցի հեղինակները: Այսպես, 1966 թ. Մոսկվայում «Библиотеки СССР» ժողովածուում տպագրված հոդվածում ադրբեջանցի պատմաբան Աբուլքար Խալաֆովը գրել է. «Մինչև հեղափոխությունը (1920 թ.) ներկայիս Ադրբեջանի տարածքում չի եղել ազգային գրահրատարակչություն» [Халафов, 1966, вып. 33, 17]: Հետևաբար չի եղել նաև ազգային լեզվով գրականություն, ինչը, մեր կարծիքով, հոգևոր կյանքի զարգացման և գրագիտության մակարդակի բարձրացման կարևոր ցուցանիշներից մեկն էր նախկին հանրապետություններում: Ի դեպ, մինչև 1923 թ. Ադրբեջանում գրականությունը հրատարակվել է հիմնականում հին արաբական տառերով (այբուրենով) [Султанов, 1959, 21]: Այն դեպքում, երբ մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունը հայերն ու վրացիները ունեցել են ազգային լեզվով մեծ գրականություն: Օրինակ՝ «1913 թ. հայերեն լեզվով լույս է տեսել 263 անուն գիրք 404 հազար տպաքանակով, իսկ վրացերեն լեզվով՝ 296 անուն 478 հազար տպաքանակով» [Драудин, 1934, 168]:

Բացի Ա. Խալաֆովի հոդվածից, 1930 թ. Բաքվում լույս է տեսնում Ա. Սուլթանովի «Ադրբեջանի կուլտուրական շինարարության 10 տարին» հայալեզու գրքուկը՝ ընդգրկելով 1921-1930 թվականները [Սուլթանով, 1930, 28]: Այս հրատարակության մեջ, որը լույս է տեսել 3000 տպաքանակով, փաստական հիմնավորումներով ցույց է տրված Ադրբեջանի քաղաքական-մշակութային կյանքի իրական պատկերը՝ ոչ մի խոսք չասելով հայկական մշակութային ժառանգությամբ հարուստ Լեռնային Ղարաբաղի մասին: Ըստ Ա. Սուլթանովի՝ «Պրոլետարական հեղափոխությունը գտավ Ադրբեջանի աշխատավորներին անչափ հետամնաց, անկուլտուրական վիճակում, որտեղ բնակչության գրագիտության տոկոսը 11.2%-ից բարձր չի կազմել» [Նույն տեղում, 3]: Այդպիսի ցածրակարգ վիճակը պատճառաբանվել է կրթության բացակայությամբ, որը արդյունք էր ցարական և հատկապես մուսաֆաթական կառավարությունների վարած քաղաքականության: «Արմատավորիր կրոնը և փակիր դպրոցները». այսպես է եղել մուստաֆաթական կառավարության քաղաքականությունը՝ նշել է հեղինակը [Նույն տեղում, 7]:

Աղբյուրից տեղեկանում ենք, որ Ադրբեջանի կուլտուրական շինարարության զարգացման գործում և բնակչության գրագիտության մակարդակը բարձրացնելու նպատակով առաջնակարգ նշանակության է տրվել **«ուսումնական հիմնարկների թուրքացմանը»** [Նույն տեղում, 16-17]: Որպես հեղափոխական իրադարձություն, խնդիր է դրվել «թուրքերեն այբբենի» (այբուբենի) ընդունումը, այդ լեզվով «դասագրքեր հրատարակելը» և «թուրքական կադրեր պատրաստելու» գործի խթանումը: Անհրաժեշտ ուշադրություն է ցույց տրվել աղջիկներին (մանավանդ թրքուհիներին - Ա. Սուլթանով)՝ գրավելու բոլոր կրթական հիմնարկները: Ըստ Սուլթանովի՝ «1919-1920 թթ. սովորող թուրքերի թվից 106.712 հոգուց թրքուհիները կազմել են 24.5% կամ 26.243 հոգի»: Իսկ «5-ամյակի վերջում պլանավորվել է բոլոր տեսակի ուսումնական հիմնարկների մեջ առնել 184.845 կին, որոնցից 103.490 թրքուհի: Միայն խորհրդային շինարարության սխտեմն է, որ կարողացել է ամենայն լայնությամբ դնել թրքուհիներին ամեն տեսակի ուսումնական հիմնարկներ քաշելու հարցը, նրանցից ստեղծելով հարյուր հազարավոր ակտիվ գործիչ-մարտիկներ՝ սոցիալիստական շինարարության համար», - ընդգծել է Ա. Սուլթանովը: Արդեն 1929-30 թթ. գործող 174 բարձրագույն և միջնակարգ դպրոցներում 20.757 սովորողներից 1207-ը եղել են թրքուհիներ [Նույն տեղում, 9-12]: Հետաքրքիր է նաև նշել, որ 1929-30 թթ. բոլոր բարձրագույն դպրոցներն ընդունված ուսանողների 52%-ը կազմել են թուրքերը [Նույն տեղում, 16]: Վիճակագրական տվյալներով՝ ադրբեջանական բուհերում աշխատողների մեծագույն մասը նույնպես կազմել են թուրքերը: Այսպես, թուրք դասախոսների քանակը Ադրբեջանի պետական համալսարանում կազմել է 45.6%, Պոլիտեխնիկական ինստիտուտում՝ 21.1%, Գյուղատնտեսական ինստիտուտում՝ 28.2%, Մանկավարժական ինստիտուտում՝ 90.3%, Գիտահետազոտական ինստիտուտում՝ 51%: Այդ կադրերը, ըստ Սուլթանովի, համարվել են Ադրբեջանում կուլտուրական հեղափոխությունն անցկացնող առաջին ուժերը [Նույն տեղում, 17]:

Խոսելով մասսայական կրթության տարածման գործում գրադարանային ու գրահրատարակչական գործի զարգացման մասին, հեղինակը նշում է, որ 1921-1930 թթ. գործել է 107 գրադարան, որոնցում թուրքալեզու գրքերի թիվը ավելացել է 82 անգամ, իսկ թուրք բաժանորդների թիվը՝ 45 անգամ [Նույն տեղում, 20]: Փաստացիորեն նշված ժամանակաշրջանում «նոր թուրքական այբբենով են անցել ոչ միայն բոլոր աստիճանի դպրոցները, այլև ամբողջ մամուլը, բոլոր պետական և հասարակական հիմնարկների գործավարությունը»: Ընդ որում, «1920-1929 թթ. թուրքական նոր այբբենով հրատարակվել է 841 անուն գիրք, միայն 1929-ին՝ 425 անուն գիրք՝ 1.509.500 օրինակով, իսկ 10 տարվա ընթացքում հրատարակվել են ընդամենը 3.445.759 օրինակ զանազան գրքեր [Նույն տեղում, 24]:

Այսպիսով, պատմա-տեղեկատվական և վիճակագրական համեմատական վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ Ա. Սուլթանովի գրքում հստակ պատկերացում չկա «բուն

Ադրբեջանի և ադրբեջանական մշակույթի գոյության մասին», այլ մշտապես խոսվում է թուրքականացված Ադրբեջանի և թուրք-ադրբեջանական մշակույթի զարգացման մասին: Մակայն հստակ է, որ շրջանցելով՝ նա չի հիշատակել հայ գրքի ու ազգային մշակույթի գոյության փաստը Լեռնային Ղարաբաղում:

Այնուհետև, 2003 թ. լույս է տեսնում Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի գրադարանային-տեղեկատվական և համապատասխան գիտակրթական կենտրոններին ու գործիչներին նվիրված ռուսալեզու գիրք-տեղեկատու [Библиотеки Южного Кавказа, 2003, 305], որում, հատկապես ադրբեջանական բաժնում, որի հեղինակն է Խ. Իսմաիլովը նույնպես խոսք չկա Արցախի (Լեռնային Ղարաբաղ) Հանրապետության **անգամ** Խորհրդային շրջանի գրադարանային գործի պատմության, հարյուրավոր ճանաչված գրադարանների ու գրադարանավարների մասին [Նույն տեղում, 10-103]: Ջարմանալի է, բայց փաստ, որ նման տեղեկատվություն արտացոլված չէ նաև հայկական մշակույթի ու քաղաքակրթության կենտրոն Շուշին:

Մեր խորին համոզմամբ, այդպիսի շրջանցումներով ու բացթողումներով հեղինակները թույլ են տվել հակապատմական, գրադարանային-մատենագիտական, կովկասագիտական և մշակութաբանական մեծ սխալ: Կամ՝ իրավացիորեն չեն դիտարկել Արցախը որպես Ադրբեջանի մաս՝ ըստ էության չխախտելով պատմականության սկզբունքը, «պատմության իմաստն ու նշանակությունը» [Яценец, 1991, 527]: Որովհետև Արցախում դարերով ստեղծված հայկական մշակութային (հոգևոր և նյութական) ժառանգությունը ամբողջովին կապված է հայկականության հետ: Մա պատմական ճշմարտություն է, որը հիմնավորվում է պատմա-համեմատական մեթոդով և պահանջվում է լուրջ քննարկում: Մեթոդաբանական այս լրջագույն խնդրի գիտակցումը գերկարևոր է ոչ միայն ազգային պետության, ազգային գրադարանների ու գրադարանային ֆոնդերի անվտանգությունը ապահովելու առումով [Соколов, 2019, №3, 231-247; Столяров, 2013, 473], այլև՝ գիտական հետազոտություններում, կրթական ու սոցիալ հաղորդակցական գործունեության մեջ գրադարանային-մատենագիտական լիարժեք և արժանահավատ տեղեկատվություն սպասարկելու նպատակով: Հետևապես, արդի «տեղեկատվական հասարակության և քաղաքակրթությունների զարգացման անվտանգության» ապահովումն էլ պետք է լինի գերխնդիր՝ անկախ ժամանակի և տարածության ընդգրկումներից [Урсул, 1990, №1, 28-39]:

Կարելի է եզրափակել, որ ազգային մշակույթի անբաժան մասը համարվող Արցախի հայկական մշակութային ժառանգության կորուստը և այդ կորուստը չվերականգնելը կամ բռնազավթած մշակույթը չփրկելը կարող են բացասական հետևանք թողնել Հայաստանում կրթական, գրադարանային-մատենագիտական և տեխնոլոգիական (թվայնացման) գործընթացների ապագա զարգացումների վրա: Լայն իմաստով՝ ճյուղային գիտությունների, դիցուք՝ «Հայաստանի պատմական աշխարհագրության», «Հայագիտական մատենագիտության», «Հայ գրքի, գրադարանների և պարբերական մամուլի պատմության» ընդգրկման սահմանները որոշելու համար:

Այս հիմնախնդիրը, մեր կարծիքով, ժամանակակից գրադարանագիտության և մատենագիտության տեսանկյուններից ունի սկզբունքային նշանակություն և պահանջում է համակարգային լուծում՝ ապահովելով տեսության և պրակտիկայի փոխադարձ կապերը:

SUMMARY

The Armenians of Artsakh and its famous center Shushi has always been and will continue to be the center of attention of Armenian and foreign Armenian scholars. From that point of view, the article made a scientific reference to the coverage of a number of important issues of contemporary importance: the statistics of Armenians who have permanently lived in Shushi and in Armenian Artsakh in general, the Armenian cultural heritage created in Artsakh for centuries as an integral part of Armenian national culture, the fate of the libraries and books endangered by the wars that took place in recent decades. For this

purpose, a comparative analysis of the used sources was performed, the results of which have historical, bibliographic, librarian and educational significance.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ալիշան Ղ. Արցախ: (Պատմա-աշխարհագր. նկարագրություն), Երևան, ԵՊՀ, 1993, 121 էջ:
2. Բարսեղյան Ա. Արցախի վանքերը / Մասնագիտ. խմբագիր՝ Սլավա Սարգսյան, Ստեփանակերտ, Պոլիգրաֆ, 2011, 80 էջ:
3. Հայաստանի գրադարանները 2021 թվականին: Աշխատանքների վիճակագրական վերլուծություն / Կազմ՝ Լ. Մուրադյան, Երևան, ՀԱԳ, 2022, 101 էջ:
4. Հայկական տպագրության 500-ամյակը (1512-2012): Գիրքը պատմամշակութային և տեղեկատվական հաղորդակցությունների համակարգում: Հանրապետական գիտաժողովի զեկուցումների ժողովածու (2010 թ. ապրիլի 15-16) / խմբ.՝ Ա.Վ. Գալստյան, Գ.Ա. Սուքիասյան, Երևան, Մանկավարժ, 2010, 132 էջ:
5. Շուշին՝ հայկական մշակույթի օջախ: Հայ գրատպության 500-ամյակին նվիրված միջազգային գիտ. կոնֆերանսի զեկուցումներ, Շուշի, Կաճառ գիտ. կենտրոն, 2014, 240 էջ:
6. Սուլթանով Ա. Ադրբեջանի կուլտուրական շինարարության 10 տարին, Բազու, Ադրպետհրատ, 1930, 28 էջ:
7. Սուքիասյան Գ. Հայկական գրատպության 510-ամյակը (1512-2022 թթ.) // Հայագիտական հանդես, Երևան, ՀՊՄՀ, 2022, № 1(55), էջ 15-30:
8. Սուքիասյան Գ. Գրադարանավարների միջազգային ֆորում Աստանայում // Հայաստանի Հանրապետ., 2012 հոկտ. 4, № 180, էջ 6:
9. Սուքիասյան Գ. Գրքագիտություն և հայ գրատպության պատմագրություն: Նվիրվում է հայկ. տպագրության 500-ամյակին, Երևան, Էդիթ Պրինտ, 2013, 160 էջ:
10. Սուքիասյան Գ. Նշվեց Շուշիի գրատպության 190-ամյակը // Մանկավարժական համալսարան, 2018. սեպտ. 14, № 11 (1028), էջ 5:
11. Տեր-Գասպարյան Ռ. Շուշու բնակչությունը 18-րդ դարից մինչև մեր օրերը // Տեղեկագիր (ՀՍՍՌ գիտությունների ակադեմիա, Հասարակական գիտություններ), Երևան, ՀՍՍՌ ԳԱ, Հրատ, 1963, № 9, էջ 67-76:
12. Библиотеки Южного Кавказа и кто есть кто в библиотечной сфере: Справочник / Под ред. К. Арабян, Ереван, Армянская библиотечная ассоциация, 2003, 305 с.
13. Брук Соломон Население мира. Этнодемографический справочник. Изд. 2-е, Москва, Наука, 1986, 832 с.
14. Драудин Т. Очерки издательского дела в СССР (с кратким историческим введением) / Под общей. ред. Н. Накаркивав, Москва, Л., 1934, 230 с.
15. Перинчек М. Армянский вопрос в 120 документах из российских государственных архивов, Москва, Лаборатория Книги, 2011, 256 с.
16. Сейранян П.А. Карабах и Россия. Страницы истории / П.А. Сейранян, Москва, Христианское издательство, 1997, 154 с.
17. Соколов А.В. Национальная безопасность и национальная библиотека // Библиотековедение, 2019, Том 68, № 3, С. 231–247.
18. Спорные границы на Кавказе / Под ред. Бруно Коптера, Москва, Весь мир, 1996, 227 с.
19. Столяров Ю. Н. Безопасность библиотечного фонда, Москва, Литера, 2013, 473 с.
20. Султанов М. Кязимов Р. и др. Книга, графика, плакат Азербайджана, Баку, Азербайджанское гос. изд-во, 1959, 70 с.
21. Урсул А.Д. Информационное общество и безопасность развития цивилизации // Соц.-психол. науки. Москва. 1990, № 1, С. 28–39.
22. Халафов А.А. Библиотечное дело в советском Азербайджане в 1920-1925 гг. // Библиотеки СССР. Опыт работы, Вып. 33, Москва, 1966, С. 16–27.

23. Шуша // Энциклопедический словарь Брокгауза и Эфрона, Т. 79, СПб, Изд. Брокгауза и Эфрона, 1904, С. 25–26.
24. Ясперс Карл Смысл и назначение истории, Москва, Изд-во «Политической литературы», 1991, 527 с.

<https://doi.org/10.52027/18294685-nag2023.2>

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՆԱԴԻՆԵ

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարան

ԳԻՐՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ
(ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ)

Բանալի բառեր՝ Հայ գիրք, մատենագիտություն, տպագիր մշակութային ժառանգություն, մշակույթ, հետազոտություն:

Keywords: Armenian book, bibliography, printed cultural heritage, culture, research.

Մատենագիտությունների այս շարքը ազգային մատենագիտության տարատեսակ է և կարևոր դեր ունի ՀՀ-ում տպագիր ժառանգության հավաքագրման, մշակման, պահպանման և սերունդներին փոխանցման գործում: Այն նաև մեծ դեր ունի տպագրության մշակույթի հանրայնացման գործում: Գիրքը ՀՀ-ում պետական մատենագիտության շարք է, որի կարևորությունը ընդգծելու, ինչպես նաև մատենագիտության կազմման նախադրյալները հասկանալու համար կատարենք հակիրճ պատմական ակնարկ: Հոդվածի նպատակն է լուսաբանել, հիմնավորել ու արժևորել մատենագիտության կարևորությունը և կենսունակությունը տեղեկատվական տեխնոլոգիաների արդի ժամանակաշրջանում: Հոդվածում խնդիր է առաջադրվել գրի, գրքի և գրատպության պատմության հոլովությունում ցույց տալ մատենագրության ու մատենագիտության զարգացման շարունակականությունը:

Գրի և գրքի վաղագույն ձևերը լայն տարածում են գտել քաղաքակրթության հնագույն օրրաններում՝ հիմք դառնալով մշակութային և գիտակրթական բազմաթիվ կենտրոնների ստեղծմանը: Հայ և օտարալեզու հազարավոր սեպագիր և ձեռագիր գրքերը հանդիսացել և հանդիսանում են ոչ միայն պատմական փաստերի ու իրադարձությունների եզակի և իրական նկարագրություն, այլև դրանցով է պայմանավորված «տեղեկատվական-հաղորդակցական համակարգերի» ծագումն ու զարգացումը, որոնց արդիական նշանակությունը տպագիր տեղեկատվության և տեխնոլոգիական միջոցների ստեղծումից հետո էլ մնում է անսահման մեծ: Գիրքը, անկախ ձևից ու բովանդակությունից, բոլոր ժամանակներում և այսօր էլ հանդիսանում է տեղեկատվության, ընթերցանության, կրթության, դաստիարակության ու գիտական իմացության հիմքը:

Աղբյուրները վկայում են, որ տպագրական արվեստի հետ հայերի ամենավաղ առնչությունը գալիս է դեռ 14-րդ դարից: Սակայն հայկական գրատպությունը ծաղկեց 16-րդ դ., երբ 1512 թ. Վենետիկում Հակոբ Մեղապարտը տպագրեց «Ուրբաթագիրքը»: Հակոբ Մեղապարտը հիմք դրեց հայկական գրատպության և տպագրական քաղաքակրթության սկզբնավորմանը: Այնուհետև մեկը մյուսի հետևից աշխարհի տարբեր ծայրերում սկսեցին ստեղծվել հայկական տպագրության կարևոր օջախներ՝ Կ. Պոլիս (1567), Հռոմ (1584), Լվով (1616), Միլան (1621), Փարիզ (1633), Մարսել (1672), Նոր Զուղա (1638) և այլն [Սուքիասյան, 2013, 18, 54, 68-70]:

Մատենագրությունը հիմնականում մինչև XVIII դ.ստեղծված այն ամենն է, ինչը գրառվել է մատյանի մեջ՝ աստվածաբանություն, պատմագրություն, իրավունք, քերականություն, ուղեգրություն, բժշկություն, մաթեմատիկա, տիեզերագիտություն, տոմարագիտություն, ավքիմիա, գեղարվեստական գրականություն, խրատական, ներբող, աղոթք, տեսիլ, նամակ, վավերագիր, բանք իմաստասիրաց, ախտարական և հմայական գրականություն և այլն:

Տպագրական գործի զարգացմանը և գրքի հանրահռչակմանը զուգահեռ զարգացավ նաև մատենագիտական աշխատանքը: Հայկական մատենագիտության պատմությունն ընդգրկում է հայ ժողովրդի ստեղծած նյութական և հոգևոր մշակույթի վերաբերյալ հայտնի գրավոր աղբյուրները: Մատենագիտություն բառը հայկական աղբյուրներում հանդիպում է 5-րդ դարից:

Մատենագիտությունը լայն իմաստով ամբողջությունն է այն գիտելիքների, որոնք վերաբերում են գրավոր աղբյուրներին և ուսումնասիրություններին:

Մատենագիտության նպատակը մատենագիտական տարբեր բնույթի ծանոթագրված և չծանոթագրված ցուցակների, ձեռագրացուցակների, քարտարանների, հայ ձեռագրերի, տպագիր գրքերի, պարբերականների և այլ հրատարակությունների հսկայածավալ զանգվածում կողմնորոշելն է: Հայկական մատենագիտությունը լայն առումով ներառում է նաև հայ գրքի պատմությունը:

Հայկական մատենագիտությունը պայմանականորեն բաժանում են զարգացման 4 շրջանի՝

1 հեթանոսական և վաղ քրիստոնեական՝ մինչև 5 դ.

2 հին և միջնադարյան՝ 5-17-րդ դդ.

3 նոր շրջան՝ 18-19-րդ դդ.

4 նորագույն շրջան՝ 20-21-րդ դդ. [Հայ գրատպություն և գրքարվեստ: Հանրագիտարան, 2015, 696-697, 699-700]:

19-րդ դարում և 20-րդ դարի սկզբում մատենագիտությունը Արևելյան Հայաստանում թույլ էր զարգացած: Կազմվում էին մեծամասամբ ցանկային բնույթի մատենագիտություններ՝ գրադարանային գրացուցակներ, ձեռագրացուցակներ: Տպագիր գրականության իսկական իմաստով մատենագիտություն, որպիսին ստեղծվեց Վենետիկում, Արևելյան Հայաստանում դեռ չկար:

Արդեն նախախորհրդային շրջանում հայկական գրեթե ողջ մատենագիտությունը կազմվում և հրապարակվում էր Հայաստանից դուրս, հայկական մշակութային կենտրոններում՝ Թիֆլիսում, Բաքվում, Պետերբուրգում, Մոսկվայում: Այդ ժամանակահատվածում Հայաստանում՝ Էջմիածնում, հրապարակվել են մի քանի ձեռագրացուցակներ, ինչպես նաև Շուշիում որոշ գրացուցակներ և Գ. Լևոնյանի «Հայոց պարբերական մամուլը» աշխատությունը՝ հրատարակված Ալեքսանդրապոլում:

Խորհրդային ժամանակաշրջանում հայ մատենագիտությունը աչքի ընկավ մի քանի առանձնահատկություններով՝

1. մատենագիտական աշխատանքը դարձավ պետական գործ, հատուկ պետական-գիտական հիմնարկներ սկսեցին զբաղվել մատենագիտական աշխատությունների կազմամբ,

2. հայ մատենագիտության ուղղությամբ կատարվող աշխատանքը հիմնականում կենտրոնացավ Մայր հայրենիքում,

3. մատենագիտությունը դարձավ մասնագիտություն,

4. հրատարակվեցին մի շարք մեծարժեք մատենագիտական աշխատություններ:

1921-1922 թթ. առաջին քայլերը կատարվեցին մատենագիտական աշխատանքը Հայաստանում նոր հիմքերով կազմակերպելու ուղղությամբ: Անհրաժեշտ է նշել, որ առաջինը հանրապետությունում Հայպետհրատը սկսեց գրքերի հետ միասին հրատարակել նաև լույս տեսած և տպագրության պատրաստվող գրքերի ցանկեր, որոնք սակայն մատենագիտական լրիվ տվյալներ չէին պարունակում:

1922 թ.-ին ստեղծվեց ՀԽՍՀ պետական գրապալատը (այսուհետ՝ Գրապալատ), որպես հայ ազգային մատենագիտության կենտրոն: Գրապալատի առաջնահերթ խնդիրն էր հավաքել ու սերունդների համար պահպանել հանրապետության տպագիր արտադրանքի նմուշները, գրքի ու պարբերական մամուլի մատենագիտական նկարագրությունների հիման վրա

հրատարակել պետական մատենագիտական օրգաններ՝ ժողովածուներ, տարեգրեր և գրքի տպագիր քարտեր:

Դեռևս խորհրդային ժամանակաշրջանում Գրապալատն իր որոշակի դերն ուներ հանրապետության ինչպես գրադատարակչական ոլորտի աշխատանքների կանոնակարգման, տպագիր մշակութային ժառանգության պահպանման բնագավառներում, այնպես էլ մամուլի և գրականության մատենագիտական տեղեկատվության ձևավորման գործում: Հանրապետությունում լույս տեսած ամեն կարգի հրատարակությունների և տպագիր նյութերի՝ գրքերի, թերթերի, ամսագրերի, նոտաների, գեղարվեստական ալբոմների, քարտեզների, գիտա-ժողովների նյութերի, թատերական և մշակութային միջոցառումների ազդագրերի, ծրագրերի, ցուցահանդեսների բուկլետների, հրավիրատոմսերի և այլն, պարտադիր անվճար օրինակների ստացմամբ Գրապալատում ձևավորվում և պահպանվում էին տպագիր արտադրանքի պետական անձեռնմխելի արխիվային հավաքածուները: 1990-ականների սկզբին անձեռնմխելի հավաքածուներում պահպանվող տպագիր նյութերի թիվը արդեն մոտենում էր մեկ միլիոնի շեմին: Դրանք մատչելի չէին զանգվածային օգտագործման համար և որպես ավանդադրված մշակութային արժեքներ, նախատեսված էին պահպանվելու ապագա սերունդների համար: Շնորհիվ այս հանգամանքի՝ Գրապալատում պահվող հայաստանյան հրատարակությունների անձեռնմխելի հավաքածուները հնարավորինս ամենաամբողջական էին հանրապետության գրադարանային նմանատիպ հավաքածուներից, և ոչ միայն առանձին գրքերի, մամուլի օգանների և այլ նյութերի առումով, այլև մեր մշակույթի պատմության համար առանձին պատմամշակութային փաստերի առումով:

Հավաքված տպագիր նյութերի հիման վրա Գրապալատում կազմվել է ընթացիկ հրատարակությունների պետական մատենագիտությունը, որ կոչված էր սպասարկելու հանրապետության (և ոչ միայն) գրադարաններին, գիտահետազոտական և մշակութային կազմակերպություններին և դրանցում աշխատող հետազոտողներին: 1925 թվականից Գրապալատը կազմում է հայ առաջին մատենագիտական պարբերականը՝ «Գրքի տարեգիր»-ը, որին հետևում են՝ «Ժողովրդային հոգիվածների տարեգիր»-ը (1939 թ.) և «Լրագրային հոգիվածների տարեգիր»-ը (1949 թ.) [Բեքմեզյան, 2017, 3]:

1970-ական թվականներից Գրապալատը սկսել է հանրապետությունում լույս տեսած գրքերի ընդհանուր հետադարձ մատենագիտության կազմումը: Այս բազմահատոր հրատարակության մեջ արտացոլվել են 1920-ական թվականներից հայկական ՍՍՀ-ում տարբեր լեզուներով լույս տեսած, ինչպես նաև Մոսկվայում, Թբիլիսիում, Բաքվում և միության այլ վայրերում հրատարակված հայերեն գրքերը:

Առաջին հատորը տպագրվել է 1978 թ. և կոչվել է «Գիրքը Սովետական Հայաստանում 1920-1930թթ.»։ Այն ընդգրկում է 1920-1930 թթ. ընթացքում լույս տեսած գրքերի ու գրքույկների մատենագիտական նկարագրությունները:

Մատենագիտության կազմման համար հիմք է հանդիսացել Գրապալատի արխիվը, ինչպես նաև օգտագործվել են գրողների անձնական գրադարաններ, հրատարակչական պլաններ, տարեգրեր և այլ աղբյուրներ:

Այդ տարիներին լույս է տեսել բազմապիսի գրականություն, սակայն հաշվի առնելով այն հանգամանքը, որ հանրապետության հրատարակչությունները ղեկավարվել են հրատարակչական քաղաքականության և մամուլի մասին կուսակցության կենտրոնական կոմիտեի ու սովետական կառավարության որոշումներով, ունենք հետևյալ պատկերը.

35 անուն (117.000 տպաքանակով)՝ մարքսիզմ-լենինիզմի կլասիկների երկեր,

18 անուն (53.000 տպաքանակով)՝ մարքսիզմ-լենինիզմի հիմնադիրների երկերի մասին գրականություն,

38 անուն (66.000 տպաքանակով)՝ փիլիսոփայական գրքեր,

193 անուն՝ տնտեսագիտական գծով,

217 անուն՝ պատմության գծով,

130 անուն՝ պետության և իրավունքի գծով,

277 անուն գյուղատնտեսական գիտությունների գծով և այլն:

Մատենագիտության մեջ չեն ներառվել նոտաները, ատլասները, լիբրետոները, ալբոմները, դիսերտացիաների ավտոռեֆերատները, հրավիրատոմսերը և այլ մանր նյութեր:

Մատենագիտության տարբեր հատորները կազմելիս մատենագիտական սկզբունքները կրել են որոշակի փոփոխություններ:

Առաջին հատորը կազմելիս մատենագիտական նկարագրությունները կատարվել են ըստ «Единые правила описания произведений печати в библиографических и информационных изданиях» (М, 1970) և «Особенности библиографического описания книг в ретроспективной общей библиографии произведений печати, изданных в союзных и автономных республиках СССР».

Մատենագիտության բոլոր բաժիններում սկզբում տրվում են հայերեն հրատարակված գրքերը, այնուհետև՝ ռուսերեն: Յուրաքանչյուր հայերեն գրքի նկարագրությունից հետո տրվում է նաև ռուսերեն համառոտ թարգմանություն:

Այլ լեզուներով (բացի ռուսերենից) հրատարակված գրքերը նկարագրված են հայերեն, նշված է հրատարակության լեզուն: Մատենագիտության մեջ նյութերը դասավորված են կարգային եղանակով՝ ըստ «Պետական մատենագիտության օրգաններում գրականության դասակարգման» սխեմայի 5-րդ հրատարակության (Մոսկվա, 1971): Յուրաքանչյուր բաժնի ներսում գրքերի նկարագրությունները դասավորված են այբբենական կարգով:

Մատենագիտության յուրաքանչյուր հատոր ունի իր համառոտ առաջաբանը, օժանդակ ցանկեր (անվանացանկ, վերնագրերի ցանկ, հրատարակության վայրերի ցանկ, մատենաշարերի ցանկ, հրատարակչությունների ցանկ, հրատարակություններն ըստ լեզուների) [Գիրքը Սովետական Հայաստանում: Մատենագիտություն, Հատոր 1, 1920-1930 թթ., 1978, 11-13]:

Ժողովածուն նախատեսված է մատենագետների, գրողների, գիտնականների, գրքասերների, գրադարանային աշխատողների համար:

Առաջօր լույս է տեսել հետադարձ մատենագիտության 9 հատոր:

Հ. 1 Գիրքը Սովետական Հայաստանում 1920-1930, 1978, 574 էջ

Հ. 2 Գիրքը Սովետական Հայաստանում 1931-1940, 1988, 953 էջ

Հ. 3 Գիրքը Խորհրդային Հայաստանում 1941-1950, 2003, 660 էջ

Հ. 4 Գիրքը Խորհրդային Հայաստանում 1951-1960, 2004, 1092 էջ

Հ. 5. Գիրքը Խորհրդային Հայաստանում 1961-1970

Ա 1961-1965, 2005, 716 էջ

Բ 1966-1970, 2005, 608 էջ

Հ. 6 Գիրքը Խորհրդային Հայաստանում 1971-1980

Ա 1971-1975, 2006, 667 էջ

Բ 1976-1980, 2007, 723 էջ

Հ. 7 Գիրքը Խորհրդային Հայաստանում 1981-1990

Ա 1981-1985, 2007, 652 էջ

Բ 1986-1990, 2008, 612 էջ

Հ. 8 1991-2000, 2009, 711 էջ

Հ. 9 Գիրքը Հայաստանի Հանրապետությունում 2001-2010

Ա 2001-2005, 2010, 780 էջ

Բ 2006-2010, 2012, 1104 էջ

8-րդ հատորում ներառված է 6238 մատենագիտական նկարագրություն՝

- 578 գրառում կրթության թեմայով
- 45 գրառում տնտեսագիտության թեմայով
- 330 գրառում իրավունքի թեմայով

- 278 գրառում արվեստի թեմայով և այլն Ցանկեր՝
- Անվանացանկ
- Հեղինակ չունեցող կամ հեղինակը չնշված գրքերի վերնագրերի այբբենական ցանկ
- Հրատարակչությունների և հրատարակող կազմակերպությունների այբբենական ցանկ
- Մատենաշարային հրատարակությունների այբբենական ցանկ
- Հրատարակություններն ըստ տեղերի
- Հրատարակություններն ըստ լեզուների [Գիրքը Հայաստանի Հանրապետությունում: Մատենագիտական ցանկ, հատոր VIII, 1991-2000, 2009, 585-586, 710]:

